



ԶՈՐՍ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ





ԶՈՐՍ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան
2022



ՀՏԴ 342.5
ԳՄԴ 67.400.6
Չ 767

Չորս պատմություն իշխանության մասին

Չ 767 Չորս պատմություն իշխանության մասին: Նահրա Մկրտչյան, Գևորգ Տեր-Գաբրիելյան, Վարսեր Կարապետյան, Արմեն Գրիգորյան.- Եր.: ԵՀՀ, 2022.- 224 էջ:

Խմբագիրներ և կազմողներ՝ Գևորգ Տեր-Գաբրիելյան, Վահրամ Մարտիրոսյան, Նահրա Մկրտչյան, Տաթևիկ Ղարիբյան, Իզաբելլա Սարգսյան, Դիանա Շահբազյան
Շապիկի դիզայնը՝ Տաթև Եսայանի
Էջադրումը և ձևավորումը՝ Նարինե Հովհաննիսյանի
Սրբագրիչ՝ Անժելա Ավագյան

Ժողովածուն ստեղծվել է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) կողմից «Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացնում է ԵՀՀ-ն «Հելսինկյան ասոցիացիա» և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ: Գրքում դիտարկվում են իշխանության բնույթը և զարգացումը, պետական իշխանության վերաբերյալ պատկերացումների զարգացման գործընթացը՝ անցում կատարելով մարդու նկատմամբ իշխանություն կիրառելու գաղափարից դեպի մարդու իրավունքների վրա հիմնված ժամանակակից իշխանական մոդելները: Ներկայացվում են պետության հասկացությունը և հատկանիշները, պետական համակարգի կազմակերպման ու գործունեության սկզբունքները, իրավունքի աղբյուրները, իրավական պատասխանատվության, հասարակական-պետական կարգի արդարության հարցերը: Յուրաքանչյուր հոդվածում ձևակերպված են իշխանության տարբեր դրսևորումներն ու տեսակները: Հոդվածների բովանդակությունը և արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և կարող են չհամընկնել Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կամ «Հելսինկյան ասոցիացիա» և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունների տեսակետներին:

ՀՏԴ 342.5
ԳՄԴ 67.400.6



Սույն տեքստը մաս է կազմում «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրատարակվող ձեռնարկների շարքի՝ «Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ» (ԿՊՄՄԱ) թեմայով: Շարքն ընդգրկում է զրույցներ չորս ծավալուն թեմաների վերաբերյալ.



Քննադատական մտածողություն (ՔՄ)



Պատերազմ և խաղաղություն (ՊԽ)



Քաղաքացիական հասարակություն (ՔՀ)



Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ)

ISBN 978-9939-896-46-5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5

ՆԱԻՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ. Մարդկային համակեցություն, արդարություն, իշխանություն, կամ ինչպե՞ս (հանգուցա)լուծել գոյության պարադոքսը 7

Սեղմագիր 7

Abstract 8

Օգտագործված աղբյուրներ 28

ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-ԳԱՐԻԵԼՅԱՆ. Իշխանություն / իշխ 29

Սեղմագիր 29

Abstract 30

1. Իշխանություն և իշխ. բուրգային համակարգ 32

2. Իշխի վերաբաշխումը 39

3. Հոբս և Լոք. օրենք, պայման, խախտում 42

4. Ահաբեկում և ապստամբություն 56

5. Ինֆրակառուցվածքային իշխ 59

6. Բարդ համակարգ 64

7. Միջազգային հարաբերություններ 68

8. Իրականության (և իշխի) սոցիալական կառուցումը 84

9. Ամփոփում 102

ՎԱՐՍԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. Ի՞նչ է պարտադիր իմանալ Հայաստանի օրենսդրական և իրավական համակարգի մասին 110

Սեղմագիր 110

Abstract 111

1. Պետություն և պետական մարմիններ 111

2. Իրավունք և նորմատիվ իրավական ակտեր 132

3. Իրավախախտում և իրավական պատասխանատվություն 143

4. Կարճ ամփոփում 150

5. Օգտագործված աղբյուրներ 151

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ. Պետական իշխանության և կառավարման մոդելները Վիշեգրադյան քառյակի քաղաքական էվոլյուցիայի համատեքստում	153
Սեղմագիր	153
Abstract	153
1. Նախաբան	154
2. Իշխանական ճյուղերի բաժանումը և կառավարման մոդելները	156
3. Վիշեգրադյան քառյակի երկրների փորձը. ժողովրդավարացում և բարեփոխումներ	162
4. Իշխանության այլ մակարդակներն ու ձևերը Վիշեգրադյան երկրներում	192
5. Ամփոփում	204
6. Օգտագործված աղբյուրներ	206
ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ / BIOGRAPHIES	210

ՆԱԽԱԲԱՆ

Գիրքը կազմվել է «Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է 2019-2022 թթ. Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) կողմից: Ծրագիրն ուղղված է քաղաքացիական հասարակության և զանգվածային լրատվամիջոցների կարողությունների հզորացման միջոցով դատաիրավական բարեփոխումների իրականացման մշտադիտարկմանը, համագործակցության հարթակներ ստեղծելուն:

Տասնյակ տարիների ընթացքում ԵՀՀ-ն բազմաթիվ ծրագրեր է իրականացրել քաղաքացիական հասարակության զարգացման և ամրապնդման նպատակով: Վաղուց արդեն պարզ էր դարձել, որ հայաստանյան հասարակությանն անհրաժեշտ է լրացուցիչ գիտելիք տրամադրել պետության, իշխանության բնույթի, կառավարման մոդելների և նման հարցերի վերաբերյալ:

Այս կարիքից ելնելով՝ մտահղացում է ծագել կազմել գիրք, որի հոդվածները հնարավորինս համալիր կերպով, հանրամատչելի և, այսպես ասած, «թռչնի թռչքի բարձրությունից» կներկայացնեն վերը նշված թեմաները, ինչպես նաև գիտելիք Հայաստանի օրենսդրական և իրավական համակարգի, իրավական ակտերի միջև տարբերությունների, դատական համակարգի և այլ նման հարցերի վերաբերյալ: Այս տեղեկատվությունն անհրաժեշտ է շահագրգիռ քաղաքացուն, որպեսզի վերջինս

ավելի լավ կողմնորոշվի օրենսդրական և իրավական դաշտում՝ որպես իր իրավունքները ճանաչող անձ:

Գրքի հոդվածները համալրում են միմյանց և փոխկապված են. Նաիրա Մկրտչյանի՝ համակեցության պարադոքսի վերաբերյալ էսսեն ներկայացնում է պետական-հասարակական կարգի նկատմամբ մտածողության զարգացումն անտիկ ժամանակներից մինչև այսօր: Գևորգ Տեր-Գաբրիելյանի ծավալուն էսսեն ներկայացնում է «իշխանություն / իշխ» հասկացությունը (power) և երևույթը բացատրող բազում մոտեցումներ: Վարսեր Կարապետյանն այդ հասկացությունները դիտարկում է Հայաստանի Հանրապետության պետականակառուցման համատեքստում: Արմեն Գրիգորյանի հոդվածը պետական կառավարման հավելյալ մոդելներ է ներկայացնում՝ քննարկելով Վիշեգրադյան քառյակի պետականությունների զարգացումը սոցիալիստական ճամբարի կոլապսից ի վեր:

Հեղինակները համոզված են, որ գրքի ընթերցողը նշանակալիորեն կընդլայնի իր պատկերացումներն իշխանության երևույթի և հասկացության և դրա արտահայտումների ու կազմակերպումների վերաբերյալ, ինչպես նաև՝ սեփական անհատական դերակատարության՝ իշխանության կոնտեքստում, և կստանա կոնկրետ գիտելիքներ, ինչպես նաև՝ մտքի նյութ: Գրքի հասցեատերն է հայալեզու հասարակությունը և հայաստանյան քաղաքացիական հասարակությունը: Ուսանողներն ու հետազոտողները նույնպես այն օգտավետ կգտնեն:

Հեղինակները և գրքի ստեղծողներն ուրախ կլինեն իմանալ կարծիքներ և ընդգրկվել բանավեճերի մեջ՝ գրքում արծարծված դրույթների վերաբերյալ:

Մարդկային համակեցություն, արդարություն, իշխանություն, կամ ինչպե՞ս (հանգուցա)լուծել գոյության պարադոքսը

ՍԵՂՄԱԳԻՐ

Հոդվածը գոյության պարադոքսալության (հանգուցա)լուծման տեսանկյունից արծարծում է մարդկային համակեցության հնարավորության հիմնահարցը՝ թեմականացնելով այն արդարության և իշխանության բներնույթների հետ սերտ առնչության մեջ: Մարդկային համակեցության հնարավոր ձևերի՝ ընտանիքի, համայնքի կողքին քննության կիզակետում է հայտնվում երրորդ ձևը՝ հասարակական-պետական կարգը: Մի կողմից մեկնարկելով սոցիալ-քաղաքական մտքի ականավոր ներկայացուցիչների՝ Արիստոտելի ու Թ. Հոբսի հայացքներից, մյուս կողմից՝ ասպարեզ բերելով ժամանակակից մի շարք տեսաբանական մշակումներ՝ հոդվածը նպատակ ունի ի ցույց դնելու մարդկային համակեցությանը ներհատուկ հակընդդեմ՝ կառուցողական ու քայքայիչ միտումների առկայությունը, հատկապես՝ բռնության խնդիրը և համակեցության՝ այն զսպելու ձևերի փնտրտուքը: Հոդվածը եզրակացնում է, որ մարդկային համակեցության վտանգվածությունն ու խոցելիությունը (իմա՝ մարդկային համակեցության գոյության պարադոքսալությունը) լավագույնս (հանգուցա)լուծվում են պատմականորեն, ավանդաբար առավել առաջադիմական համարվող, մարդուց որակապես այլ գծեր, հանձնառություններ ու կարողություններ պահանջող, որոշակի և արդար հորինվածք ենթադրող հասարակական-պետական կարգում:

Բանալի բառեր. Արդարություն, հասարակական կարգ, Արիստոտել, Ռոլս, Արենդթ, Դերիդա, պետություն, մարդկային համակեցություն, բռնություն, հասարակական-պետական կարգ

ABSTRACT

Human coexistence, justice, power or how to (re)solve the paradox of existence

The article raises the fundamental issue of the possibility of human coexistence, thematizing it in close relation with the phenomena of power and justice. The focus of the examination is the public–state order. Starting with the point of view of the prominent representatives of socio–political thought, Aristotle and T. Hobbes, and bringing to the fore a number of modern theoretical developments, the article aims to show the constructive and destructive tendencies inherent in human coexistence, and as a consequence its danger and vulnerability (that is: the paradox of human coexistence) which in the best way are (re)solved in that public–state order which is historically and traditionally deemed to be more progressive and demanding of qualitatively different characteristics, commitments and capacities from human beings, presupposing a certain, fair construction of a public–state order.

Key words: Justice, public order, Aristotle, Rawls, Arendt, Derrida, state, human coexistence, violence, public–state order.

*Պատմությունն առաջ է շարժվում
ոչ թե բացասմամբ և բացասման բացասմամբ,
այլ՝ ինդիհրները լուծելով և
տարբերությունները հաստատելով:
Ժիլ Դըլյուզ, Տարբերություն և կրկնում*

Որքան գործնական, առարկայական–շոշափելի, նույնքան տեսական հարթության մեջ *մարդկային համակեցությունը*, այլ կերպ ասած՝ *մարդկանց համատեղ գործելն ու ապրելը* ինչ–որ դյուրին բան չի ներկայանում, թեև միշտ գայթակղություն կա՝ «տեղավորելու» այն (երբեմն խիստ) պարզեցված սխեմաների մեջ: Վերջինիս համար անգամ բազմիցս փորձարկված ռազմավարություն էլ կա՝ երևոյթների բազմազանությունը հանգեցնել քիչ թվով իրողությունների ու դրանց միջև փոխհարաբերություններին: Սակայն իրերի դրության մեջ խորամուխ լինելու ձգտող հայացքն անգամ այդ դեպքում ի հայտ կբերի կողմեր, որոնք չեն կարող ի ցույց չդնել *մարդկային*

համակեցության ողջ բազմաբարդությունը: Ուրեմն՝ մնում է ի սկզբանե ընդունել, որ այն հայացքը, որ նետված է մարդկային համակեցությանը, հատկապես՝ կոնկրետ դեպքում, միշտ մասնակի է, ինչ-որ անկյան տակ: Միաժամանակ, հայացքի այդ մասնակիությանը ոչ այնքան պիտի վերաբերվել՝ որպես թերության ու սահմանափակության, որը բացառում է իրականության մեր ամբողջական ու ճշմարիտ իմացությունը, այլ, ճիշտ հակառակը, հնարավորության ու առավելության, քանի որ որոշակիացնում է, թե ինչի՞ հետ գործ ունենք և գուցե, ի վերջո, ինչի՞ համար:

Մարդկային համակեցությանը հայացք նետելու դիտանկյունները տարբեր են, երբեմն՝ արմատականորեն՝ տարբեր ու անհաշտ: Առանցքայինը, իհարկե, այն է, թե ի՞նչ կողմնորոշմամբ դիտարկել՝ ի ցույց ղնելու գլխավորը, վճռորոշը. նրանում գործող հիմնական ուժերի ու դրանց փոխհարաբերությամբ, (ինքնա)կազմակերպման ձևերի ու դրանց հաջորդման, ներքին կայունության ու փոփոխականությամբ, թե՛ այլ առումներով: Մի բան ակնհայտ է՝ տեսական հարթության մեջ ձևակերպված այս հարցերը, ի վերջո, գործնական նպատակների են ծառայում, և այն կերպը, որով որոշակիանում է մարդկանց համատեղ գործելն ու ապրելը, կանխորոշում է նաև գործնական լուծումներին վերաբերող առաջարկները:

Մի առիթով սոցիոլոգ Թ. Փարսոնսը գրել է, որ հասարակական կարգի հիմնախնդիրը փիլիսոփա Թ. Հոբսի հիմնախնդիրն է՝: Եթե այդ հիմնախնդիրը հարցադրմամբ ձևակերպելու լինենք, ապա պիտի շարադրենք՝ *ինչու և ինչպես է հնարավոր հասարակական կարգը*: Այլ կերպ ասած՝ ո՞ր պայմանների դեպքում է ինչ-որ մի անկարգ, քաոսիկ վիճակից հասարակական կարգն ի հայտ գալիս: Սա մի հարց է, որն ուղղակիորեն շոշափում է մարդկային համակեցության կենսագործունեությունը: Տիրապետող մտավոր ավանդույթի ուժով այն նախ և առաջ ու առավելապես կապում են հասարակության, պետության ներքին կազմակերպվածության՝ դրա առկայության կամ բացակայության հետ:

Թ. Փարսոնսի այս պնդումն անվերապահորեն ընդունելիս պիտի մտածեինք, թե միայն 17-18-րդ դարերից սկսած է, որ ակադեմիական ասպարեզում հասարակական կարգը խնդրականացվում է, այսինքն՝ դառնում է ուշադրության, քննության արժանի և լուծում պահանջող հարց: Այս համատեքստում Թ. Փարսոնսի պես ազդեցիկ գիտնականի

¹ Տե՛ս Parsons T. (1966). The Structure of Social Action: A Study in Social Theory with Special Reference to a Group of Recent European Writers. New York: The Free Press, էջ 94:

հետ համաձայնել-չհամաձայնելն իրականում էական չէ, իր պնդումն էլ հաստատապես հիմնավոր պատճառաբանություն ունի և արված է որոշակի ծիրում: Սակայն մարդկային համակեցության՝ որպես հասարակական-պետական կարգի հիմնախորքին հասնելու համար, այնուամենայնիվ, անհրաժեշտ է սոցիալ-քաղաքական մտքի պատմության ընթացքով, այդ թվում՝ նաև Թ. Հոբսի մտորումներից նշանակալիորեն հետ ու առաջ գնալ:

Իհարկե, մտորումների այս հանգրվանում Թ. Հոբսն այն մտածողն է, որն արդարացիորեն դառնում է «ուղեկցորդ», իսկ նրա ուսմունքը մարդկային համակեցության, մասնավորապես՝ նրա իրավաքաղաքական կողմերի խնդրականացման ճանապարհին՝ յուրահատուկ հենարան ու խարխիս: Ավելին՝ նրա հայացքները, երբեմն անտեսանելիորեն, սակայն այս տեքստում վկայակոչվող շատ հեղինակների մտորումներում էլ կան: Ի հեճուկս այս հանգամանքի՝ մարդկային համակեցության իմաստավորման հարցում փիլիսոփա Թ. Հոբսն իրեն նախորդող սոցիալ-քաղաքական մտքի առնվազն երկու հսկա ունի: Խոսքը հին հույն փիլիսոփաներ Պլատոնի և Արիստոտելի մասին է: Նրանց ուսմունքների միջև առկա տարբերություններով հանդերձ՝ երկու փիլիսոփաներն էլ առանձնահատուկ տեղ են հատկացնում *պետությանը* կամ *մարդկային համակեցության կազմակերպման ձև հանդիսացող հասարակական-պետական կարգին* և կարևորում այն: Ընդ որում՝ ակնհայտորեն իր լինելիության և շարունակականության համար այն պահանջում է որակապես այլ կարողություններ ու հանձնառություններ, քան կենթադրեին մարդկային համակեցության հնարավոր այլ ձևաչափեր՝ *ընտանիքը*, *համայնքը* և այլն:

Վերջինս այլ կերպ կարելի է մեկնաբանել նաև այսպես. եթե հասարակական-պետական կարգ հաստատելիս ու գործարկելիս հանկարծ առաջնորդվեն նույնաձևության սկզբունքով, հիմնավոր ու կազմավորիչ նմանություններ տեսնելով, հատկապես՝ *ընտանիքի* ու *պետության* միջև², ապա սա կարող է հանգեցնել նրան, որ պետականաստեղծման գործընթացում ամենայն հավանականությամբ լրջորեն բաց կթողնվեն պետության՝ որպես մարդկային համակեցության ձևի առանձնահատկությունները, և նույն հավանականությամբ կձախողվի որակական նոր մակարդակում մարդկային համակեցություն կազմակերպելու հնարավորությունը:

² Նման մեկնաբանության հնարավորություն ընձեռում են խնդրո առարկայի վերաբերյալ ինչպես Արիստոտելի, Թ. Հոբսի, այնպես էլ Թ. Հոբսից բացի սոցիալական պայմանագրականության մեկ այլ ակնանավոր ներկայացուցիչ Զ. Լոքի հայացքները:

Այնպես չէ, որ պատմականորեն, տեսական ու գործնական հարթություններում այդ կերպ չեն վարվել կամ վարվում: Եթե նման ձեռնարկը գոնե ինչ-որ կերպ հաջողում է, ապա լավագույն դեպքում կարելի է խոսել հասարակական-պետական կարգի մասին, ուր իրավաքաղաքական առումով պետության, նրա առաձին հատվածների կառավարումը խիստ կենտրոնացած, անձնավորված է, իշխանության փոխանցումը՝ ժառանգական, իսկ իշխանության ղեկին կանգնածը՝ ինչ-որ «քվազիհայր»: Վերջինս ունի գրեթե անսահմանափակ իրավունքներ, ենթակաները՝ անհամեմատ քիչ ու աստիճանակարգորեն նվազող իրավունքներով, հիմնական բարոյաքաղաքական առաքինությունն էլ իշխանություն մարմնավորողի հանդեպ աներկբա հավատարմությունն է: Այս էթոսը գոյաձևը, հայերենում դիպուկ համարժեք ունի՝ նահապետական, միջազգայնորեն՝ պատրիարքալ:

Սակայն անհրաժեշտ է վերադառնալ անտիկ փիլիսոփաներին ու Թ. Հոբսին: Թ. Հոբսի հայացքի հետ զուգահերման մեջ կարևոր է քննել Արիստոտելի սոցիալ-քաղաքական ուսմունքը: Արիստոտելը համոզված է, որ պետությունն ընտանիքի ու համայնքի կողքին և դրանցից բնականորեն առաջացող հաղորդակցության բարձրագույն ձևն է, որում առաջնային հաղորդակցությունները, ի վերջո, հասնում են իրենց բնույթի ավարտունությանը, այսինքն՝ իրենց զարգացման վերջնանպատակին, քանի որ հանգեցնում են գոյության ինքնաբավությանը: Եվ մարդն էլ իր բնույթը լիովին և լավագույնս իրացնում է հասարակական-պետական կարգում³: Հոբսի պարագայում բոլորի պատերազմը բոլորի դեմ բնական վիճակից անցումը դեպի խաղաղ քաղաքացիական (իմա՝ հասարակական-քաղաքական) վիճակի նշանակում է մարդու համար անվտանգության և զարգացման հեռանկարների ձեռքբերում⁴:

Սակայն հասարակական-պետական կարգի գոյությունն ընդհանրապես կարևորելը քիչ է: Այս երկու մտածողների համար ոչ պակաս կարևոր է նաև հասարակական-պետական կարգի ճարտարապետությունը, այն իրացնելու հստակ քայլերն ու դրանցում դրսևորվող հետևողականությունը: Ժամանակակից քաղաքական բառամթերքով ձևակերպված՝ *ի՞նչ հաստատություններ և կառուցակարգեր պետք է հիմնել ու հնարավորինս անխափան գործարկել՝ մարդկային համակեցությունն իր բարձրագույն ձևում*

³ Տե՛ս Аристотель (1984), Политика, Сочинения в 4 томах, т. 4, Москва, изд. «Мысль», էջ 376-379:

⁴ Տե՛ս Hobbes Th. Leviathan: Or the Matter, Forme and Power of a Commonwealth, Ecclesiasticall and Civil. Available at: <https://socialsciences.mcmaster.ca/~econ/ugcm/3ll3/hobbes/Leviathan.pdf> [Accessed 10.09.2021]:

իրացնելու համար: Ինչպիսի՞ն պիտի լինի հասարակական-պետական կարգի նախագծվող հորինվածքը: Սրանք շատ ընդհանուր հարցեր են, և դրանց շուրջ մտածելիս, մի կողմից, դեմ-հանդիման են գալիս զանազան (երբեմն՝ ուտոպիական) առաջարկներ, մյուս կողմից՝ պատմականորեն հաջողված ու ձախողված փորձառություններ:

Այստեղ միջանկյալ եզրակացությունը տեղին կլիներ՝ որպես մտքի հաջորդող (վերա)մեկնարկների համար մի յուրօրինակ ելակետ: Ուրեմն՝ ***պետությունը կամ հասարակական-պետական կարգը մարդկային համակեցության կազմակերպման բարձրագույն ձևն է, որին պիտի բնութագրի որոշակի «հորինվածք»՝ միմյանց հետ որոշակի կերպով փոխկապակցված ու փոխգործակցող հաստատություններ և կառուցակարգեր:***

Այս միջանկյալ եզրակացությունից ու ամրագրումից հետո ճիշտ է մի հետքայլ անել դեպի բուն մարդկային համակեցություն՝ իր ամենավերացական ու ամենաընդհանուր իմաստով: Այդ դեպքում գուցե հնարավոր կլինի ըմբռնել, թե ինչո՞ւ է հասարակական-պետական կարգի ձևով մարդկային համակեցության կազմակերպումը դառնում կենսական:

Ի՞նչն է պայմանավորում, եթե կուզեք, ի ներառում՝ նաև դրդում մարդկանց համատեղ գործել և ապրել. ի սկզբանե տրված բնական դրվա՞ծքը, ներքին հակվածությունները, մղումները, գիտակցված կարիքների ու դրանց բավարարմանը կոչված անհատական կարողությունների միջև անհամաչափությունը, թե՞ ինչ-որ այլ հանգամանքներ: Դրանք անարգել կերպով գերակա՞ են, թե՞ ի չիք կարող են դառնալ հակընդդեմ իրողություններով: Կա՞ն մարդկային համակեցության հնարավորությունն ինչպես իրականություն դարձնող, այնպես էլ լրջորեն վտանգող պայմաններ: Իսկ գուցե այն, ինչ հնարավոր է դարձնում, միաժամանակ կարող է այն նաև ի չիք դարձնել: Հարցադրումները կարծես միտում են մարդկային համակեցության գոյությունն իր արմատում պարադոքսալ համարել: Համենայն դեպս սոցիալ-քաղաքական մտքի պատմությունը, – իսկ հարցադրումները դրա շրջանակում են, – ինչպես նաև իրական փորձառություններն ավելի շուտ առաջնորդում են նման մի ճանապարհով:

Վերջին երկու և կես հազարամյակում այս հարցերը պատասխաններ են ստացել, երբեմն՝ արմատականորեն տարբեր, բայց հաճախ յուրաքանչյուրն իր հերթին՝ հիմնավորված: 20-րդ դարում հոգեվերլուծաբան Զ. Ֆրոյդը նախևառաջ՝ մարդկային բնույթին, ապա՝ մարդկային համակեցությանը ներհատուկ հակընդդեմ՝ կառուցողական և քայքայիչ միտումների

երկվության ու հակասականության հայտնագործումն արեց⁵: Նրա շնորհիվ մարդկությունը բացահայտեց իր իսկ էության ի սկզբանե դրամատիկ բնութագիրը: Ուշագրավ է, որ այս մտայնությունը երևան է եկել փիլիսոփայական մտքի սկզբնավորման պահից՝ որպես բոլոր ասպարեզները ներառող, ողջ գոյության հիմքում ընկած երկու հակընդդեմ ուժերի գործարկում⁶: Հետո այն կարծես մոռացվել է կամ մի կողմ դրվել: Իսկ ժամանակի ընթացքում առավել ցայտուն են դարձել երկու մտայնություն. մեկը, պայմանականորեն ասած, Արիստոտելի ուսմունքից սերող մտայնությունն է, որն առաջնահերթում է համերաշխության ու սիրո, ասել է թե՛ կառուցողական միտումը՝ որպես շարունակություն՝ մարդկային համակեցությունն իր բարձրագույն ձևում (իմա՝ պետության մեջ) դարձնելով ինքնին նպատակ, ինքնին՝ կարևոր, ուր միայն իր նմանների մեջ ու նրանց հետ մարդը՝ որպես այդպիսին, կարող է ինքնադրսևորվել և կատարելագործվել: Երկրորդն սկզբնավորվում է Թ. Հոբսի ուսմունքից. թշնամությունն ու ատելությունը լծորդված են մարդու՝ ի բնե Եսասիրությանը և դրսևորվում են բնական վիճակում: Վերջինից անցումը մարդկային համակեցության հասարակական-պետական ձևին, ուր բռնությամբ արտահայտվող այդ թշնամությունն ու ատելությունը, ըստ էության, «ընտելացվում», սահմանափակվում և կարգավորվում են, փոխշահավետ ձեռնարկ է՝ դրանից բխող բոլոր հետևանքներով⁷:

Այսպիսով, անխուսափելի է մարդու՝ իր նմանների հետ համատեղ գործելու և ապրելու նախադրյալներին ու նպատակներին, դրանց բարոյաէթիկական կողմին վերաբերող հարցերի ու լուծումների անմիօրինականությանն առերեսելը: Բայց անգամ կամ արիստոտելյան, կամ հոբսյան գծերին նախապատվություն տալիս, միևնույն է, ստացվում է, որ մարդկային համակեցության (ինքնա)կազմակերպումը

⁵ Տե՛ս Freud, S. (1990). Beyond the Pleasure Principle. New York, London: W. W. Norton & Company:

⁶ Հին հույն փիլիսոփա Էմպեդոկլեսը համոզված էր, որ իրերը բաղադրված են չորս տարրերից՝ հողից, ջրից, կրակից և օդից: Աշխարհում գործում են երկու հակադիր ուժեր՝ Սիրո, որի ազդեցությամբ այս տարրերը միավորվում են, և Թշնամության, որի ազդեցությունը հանգեցնում է քայքայման ու ոչնչացման, տե՛ս *Философия древности и средневековья* (1969), Эмпедокл, Антология мировой философии в четырех томах, т. 1 ч. 1. Москва, «Мысль», էջեր 299-308:

⁷ Գրեթե բոլոր փոխշահավետ ձեռնարկները ենթադրում են ինչ-որ զիջումներ և սահմանափակումներ հանուն առավել կարևոր նպատակների: Թ. Հոբսի և ընդհանրապես սոցիալական պայմանագրականության հոսանքում, որի ականավոր ներկայացուցիչն է Թ. Հոբսը, բնական վիճակից հասարակական-պետական վիճակին անցնելիս բացարձակ ազատությունը սահմանափակվում էր, իսկ անհատական իշխանությունը՝ զիջվում հանուն անվտանգության, տե՛ս Hobbes, op. cit.:

հաջողելու համար լուծումներ են պետք: Եթե սրացնում ենք դրությունը և հայտարարում մարդուն ու մարդկային համակեցությանը միաժամանակ ներհատուկ հակընդդեմ միտումների գոյության մասին, ապա մարդկային համակեցությունը կարծես ծավալվում է իրարամերժ ազդակների՝ համերաշխության ու թշնամության, սիրո ու ատելության մթնոլորտում: Եվ այս հանգամանքն այդ գոյաձևն անխուսափելիորեն տեղակայում է բախման և ներդաշնակության միջակայքում, ուր, ինչպես սոցիալական պատմությունն է ցույց տալիս, հավասարապես կործանարար են թե՛ բացառապես բախման, թե՛ կատարյալ ներդաշնակության վիճակները: Առաջինը՝ արագ, երկրորդը՝ համեմատաբար ավելի դանդաղորեն, բայց հանգեցնում են միևնույն հանգրվանի՝ վերացման: Չկան նաև ամուր, անսասան երաշխիքներ, թե բախման ու ներդաշնակության ինչ-որ հավասարաչափ համամասնություն կարող է այդ համակեցությունը հնարավոր դարձնել: Ընդ որում՝ այս դեպքում արդեն այնքան էլ էական չէ՝ խոսքը մարդկային համակեցությանը ներունակ, ներքի՞ն (բուն մարդկային՝ սոցիալական հարաբերություններից բխող), թե՞ արտաքին (բնության կողմից՝ «ոչ մարդկային» ազդակներից, ինչու չէ, նաև այլ համակեցություններից բխող) տիրույթը շոշափող իրողությունների մասին է: Երկուսի դեպքում էլ մարդկային համակեցությունը խիստ «զգայուն» է, կարելի է պնդել՝ խոցելի, երբեմն՝ կրկնակիորեն խոցելի, հատկապես երբ արտաքինն ու ներքինն օրգանապես միահյուսվում և դառնում են մեկը մյուսի շարունակությունը:

Ուրեմն՝ այս ծիրում ***մարդկային համակեցությունը ներկայանում է մի կողմից՝ որպես մշտապես վտանգված, քան թե՛ մեկընդմիջտ հուսալիորեն երաշխավորված, մյուս կողմից՝ որքան ինքնին ենթադրելի ու բնական, նույնքան զարմանք հարուցող ու ժամանակի ընթացքում ի հայտ եկող, հարափոփոխ գոյաձև:*** Ուստի այս վտանգվածությունը, խոցելիությունը, այս հակասականությունը, որ վկայում է նրա իսկ հեռանկարների ու հնարավորությունների փխրունության մասին, սահուն կերպով վերաճում է գոյության պարադոքսալության: Վերջինս պահանջում է ինչ-որ (հանգուցա) լուծում⁸, ըստ ամենայնի՝ (հանգուցա)լուծումներ, քանի որ վերջիններս չեն կարող պատմական չլինել, այսինքն՝ տեղից ու ժամանակից անկախ չեն: Չէ՞ որ հարափոփոխությունն այս գոյաձևի միաժամանակ չափումն է ու մարտահրավերը: Հետևաբար՝ ինչպե՞ս է մարդկային համակեցությունն առերեսում հարափոփոխության իր իսկ չափմանը, իր իսկ

⁸ Այս համատեքստում «պարադոքսի կամ պարադոքսալության (հանգուցա)լուծում» ձևակերպումը նշանակում է կնճռոտ, դժվարին խնդրի հաղթահարում:

մարտահրավերին, որն անորոշությունների նշանակալի տիրույթ է բացում: Ինչպե՞ս է (հանգուցա)լուծում սեփական գոյության պարադոքսալությունը թեկուզ ժամանակավոր՝ փորձառելով ի՞ր իսկ խոցելիությունը, ի՞նչ ձևեր ու եղանակներ հորինելով և ի՞նչ կարողություններ բանեցնելով:

Սրանք ակնհայտորեն դյուրին հարցեր չեն, թեև վերը, ի դեմս հասարակական-պետական կարգի ու նրա որոշակի հորինվածքի անհրաժեշտության՝ մի պատասխանը, ընդ որում՝ գլխավորը, ընդհանուր առմամբ արդեն հնչել է. պատմականորեն այն հիմնական և կազմավորիչ պատասխանն է: Մեծ հաշվով, դրանից են արտածվում մնացած բոլորը: Սակայն եթե մտադիր ենք չսահմանափակվելու մակերեսին հասու ընդհանուր ձևակերպումներով և հետամուտ ենք առավել համբերատար կերպով խորամուխ լինելու իրերի դրության մեջ, ապա պիտի ընդլայնենք և վեր հանենք հիմնախնդրի նորանոր կողմեր: Այս ընթացքում օգնության կգան նոր մտածողներ, որոնք յուրօրինակ կերպով տեսականորեն բյուրեղացրել են որոշակի փորձառություններ:

Մարդկության պատմությունը հասարակական-պետական կարգերի մի ողջ փունջ է տրամադրում. ինչ-որ առումով մեկը մյուսից տարբեր, ինչ-որ առումով՝ նման, հատկությունների ինքնատիպ զուգակցումներով, որոնք համեմատությունը դարձնում են մի կողմից՝ հնարավոր, մյուս կողմից՝ անհնար: Բայց անգամ կոնկրետ պատմական իրադարձությունների ոսպնյակով այդ այլազան կարգերը քննելիս բռնությանը, ուժին ու իշխանությանը, օրենքին ու իրավունքին, (ան)արդարությանն առնչվող հարցերն անխուսափելիորեն հայտնվում են կիզակետում: Ուրեմն՝ մարդկանց համատեղ գործելն ու ապրելը, մասնավորապես՝ հասարակական-պետական կարգում, ուղղակիորեն լծորդված են դրանց և, ըստ ամենայնի, ենթադրում են պատասխանն այն հարցին, թե ինչպե՞ս է մարդկային համակեցությունը (հանգուցա)լուծում սեփական գոյության պարադոքսալությունը՝ հաշվի առնելով հակընդդեմ միտումների գործարկումը:

Ակադեմիական ավանդույթը ենթադրում է, որ անհրաժեշտ է ասպարեզ բերել հիմնախնդրի նախ նորմատիվ կողմը. *ինչպիսի՞ն պիտի լինի հասարակական-պետական կարգը*: Այս «պիտի»-ն կարծես ենթադրում, հուշում է, որ գործնականում իրականության և իդեալի միջև արդեն իսկ ճեղք, հեռավորություն, լարում կա, որն ինչ-որ կերպ լցվելու, կրճատվելու, հաղթահարվելու կարիք ունի: Սոցիալ-քաղաքական մտքում բազմաթիվ են իդեալական կարգի մասին առաջարկները՝ Պլատոնից մինչև Թ. Մոր, Կ. Մարքսից մինչև Մ. Նուբաում և այլն: Սակայն անգամ

տարբեր մշակութային հետնախորքերի, առաջարկվող մոդելների պարագայում կարծես ամրագրված մի փոխհամաձայնություն կա. իրենց կենսագործունեության այս կամ այն փուլում տարբեր հասարակական-պետական կարգերն ընդհանուր առմամբ նախ գնահատել «արդար-անարդար» սանդղակի սահմաններում: Այն ցույց է տալիս, թե ինչպես են կառուցված ու փոխդասավորված հասարակական-պետական կարգի առանցքային բաղադրիչները, իրենց գործառույթյամբ ի՞նչ հետևանքներ են ծնում, և վերջապես, այդ կարգում ներառվածներն այդ հորինվածքը գործնականում փորձառելիս ինչպիսի՞ վերաբերմունք ունեն դրա հանդեպ՝ իրենք ինչպես են «արդար-անարդար» սանդղակի սահմաններում գնահատում խնդրո առարկա հասարակական-պետական կարգը: Ուրեմն՝ **(ան)արդարությունն արտահայտում է իր ամբողջության մեջ հասարակական-պետական կարգում մարդկային համակեցության կազմակերպման նորմատիվ կողմը՝ ինչպիսին այն պիտի լինի կամ ինչպիսին՝ ոչ:**

Արդարության՝ գաղափարը ծնունդ է առել դեռևս հին աշխարհում դիցաբանական աշխարհայացքի շրջանակում: Նրա նախնական իմաստը բարոյաիրավական է և ենթադրել է ըստ արժանվույն հատուցում լավ ու վատ արարքների համար, իսկ վերջնարդյունքում՝ խաթարված տիեզերական (աստվածային) կարգի վերահաստատում: Փիլիսոփայության սկզբնավորմամբ այս իմաստը հասունանում, ընդլայնվում և ձեռք է բերում նաև քաղաքական նշանակություն: Ուստի բնական է՝ հասարակական-պետական կարգի արդար/անարդար լինելու մասին խոսելիս, նախ և առաջ դիտարկել այն որպես իրավաքաղաքական կազմակերպվածություն, այսինքն՝ մի կազմակերպվածություն, որի առանցքում մի կողմից՝ մարդկային համակեցության մեջ հարաբերությունների կարգավորման համար անհրաժեշտ օրենքի/իրավունքի ունեցած տեղն ու դերն է⁹, մյուս կողմից՝ իշխանության առարկայացման, ձևավորման և բանեցման եղանակներն

⁹ Հայերենում «արդ» արմատն ամենաընդհանուր իմաստով նշանակում է ձև, կարգավորություն, սարք, որից էլ ծնվում է շտկելու, ուղղելու, կանոնավորելու ներիմաստը: Այդ արմատից կազմավորվող «արդար» բառը նշանակում է ուղիղ, շիտակ, ճշմարիտ, հավատարիմ, իրավ, տես Աճառեան, Հր. (1926), Հայերէն Արմատական Բառարան: Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., էջ 306-308:

¹⁰ Դեռևս հին աշխարհում պետության մեջ մարդկանց կողմից ստեղծված օրենքների լավ ու վատ, արդար ու անարդար լինելու հարցը նույնքան կարևոր էր, որքան այսօր: Ավանդաբար, դրանց վատ և անարդար լինելը կապել են մարդու անկատարության հետ, քանի որ ի տարբերություն դրանց՝ բնության (Տիեզերքի) օրենքները համարվում էին կատարյալ: Վճռորոշ էր նաև (և այսօր էլ այդպես է), թե պետության մեջ ընդունված օրենքներն ուն օգտին էին ծառայում. տես Аристотель (1984), Никомахова Этика, Сочинения в 4 томах, т. 4. Москва, изд. «Мысль», էջ 147:

ու միջոցները: Այս երկու կողմերը միմյանցից մեկուսի չեն: Այն հարցերը, թե՛ ա) (բարձարգույն) պետական իշխանության կրողի և իրականացնողի գործողությունները սահմանափակված են օրենքով, թե օրենքից դուրս են, բ) սահմանափակվելու պարագայում, եթե խախտումներ ի հայտ գան, ապա ինչպիսի՛ հետևանքներ կառաջանցեն, գ) օրենքներն ու իրավունքներն են կարգավորում իշխանության ձևավորումն ու բանեցումը, թե՛ ոչ և այլն, ի ցույց են դնում այն ներքին, էական կապերը, որ առկա են իրավաքաղաքական կազմակերպվածության ներսում:

Ջ. Ռոլսը գրում է. «Շատ տարատեսակ բաներ են հայտարարվում արդար և անարդար. ոչ միայն օրենքները, հաստատությունները կամ սոցիալական համակարգերը, այլև՝ տարատեսակ հատուկ գործողությունները՝ ներառյալ որոշումները, դատողությունները, մեղադրանքները: Մենք արդար և անարդար ենք անվանում նաև դիրքորոշումներն ու անձանց հակվածությունները և անձանց նույնպես»¹¹: Սակայն հատկապես մարդկային համակեցության հասարակական-պետական հորինվածքի (ան)արդարությունն է ի հայտ բերում դրա ամրությունն ու խոցելիությունը, դիմակայությունն ու վտանգվածությունը, ինչպես նաև այդ խոցելիության ու վտանգվածության հետ գործ ունենալու կարողությունները: Այս մասին գիտեին դեռևս հին աշխարհում. առաքինությունների և արատների՝ խնամքով արված երևութական քննության մեջ Պլատոնն ու Արիստոտելն առանց երկմտանքի հայտարարում էին. ո՛ր առումով էլ դիտարկելիս լինենք՝ պետության թե անհատական գծերի, արդարությունն առաջնային նշանակություն ունի մնացած բոլոր առաքինությունների համեմատ¹²: Այս մասին գիտեն նաև նրանցից քսանչորս դար անց, երբ ազդարարում են. «Արդարությունը հասարակական հաստատությունների առաջնային առաքինությունն է [...]: [...] Կարևոր չէ՝ որքանով են արդյունավետ և ճարտարակերտ օրենքներն ու հաստատությունները, դրանք պետք է բարեփոխվեն կամ վերացվեն, եթե անարդար են»¹³:

Արիստոտելը համոզված էր, որ ընդհանուր առումով (քանի որ մասնակի էլ կա) արդարությունը հարաբերվում է օրենքի, օրինականության և առաքինության, իսկ անարդարությունը՝ համապատասխանաբար,

¹¹ Rawls, J. (2005). A Theory of Justice. Cambridge, London: The Belknap Press of Harvard University Press, p. 7.

¹² Стен Платон (2006), Государство, Избранное. Москва, изд. АСТ, էջ 165, Аристотель (1984), Никомахова Этика, էջ 147:

¹³ Rawls, J. (2005). A Theory of Justice, p. 3.

օրինախախտության, անօրինականության և արատի հետ¹⁴: Ուրեմն՝ եթե այս հանգրվանում կարևոր ամրագրում անել, ապա տրամաբանորեն պիտի բխեցնել, որ **կարգը (իմա՝ կազմակերպվածությունը), արդարությունն ու օրենքը/իրավունքը որոշակի տեղում համընկնում են**: «Արդարությունը հասկացությունը կապված է պետության մասին պատկերացման հետ, քանի որ արդարության չափ/անիշ հանդիսացող իրավունքը քաղաքական հաղորդակցությունը կարգավորող նորմն է»,– պնդում է Արիստոտելը¹⁵: Իսկ վերոնշյալ համընկնման տեղը մարդկային համակեցության գոյության պարադոքսալության հանգուցալուծման կետն է, ուր խաղի մեջ են մտնում սահմանափակումների, ընտելացումների և փոխակերպումների գործընթացներ:

Կարծես անխուսափելի է դառնում ժամանակ առ ժամանակ անկարգությանը, կարգի խափանմանն առերեսվելը, սեփական վտանգվածության ու խոցելիության, անորոշության, հեռանկարների ու հնարավորությունների փխրունության նորովի փորձառումը, հետևաբար՝ գոյության պարադոքսալության (հանգուցա)լուծման նոր հրամայականը: Գուցե վերջինս այնքա՞ն էլ սարսափելի չէ, որքան կարող է թվալ: Գուցե դրան պիտի վերաբերվել որպես ստեղծագործական վիճակի՞: Այս հարցերի մասին մտորելիս է, որ տեղին կլինի արդարության և արդարության ու օրենքի/իրավունքի փոխհարաբերության խնդիրը մի այլ կողմից շոշափելը:

ժ. Դերիդան արդարության, արդարության ու օրենքի/իրավունքի փոխհարաբերությունն անսովոր անկյան տակ է բացահայտում՝ իր հայացքներին բնութագրական կազմաքանդական մոտեցմամբ, ուր ապորիաները, պարադոքսները, անհարթությունները վճռական նշանակություն ունեն: Ֆրանսիացի փիլիսոփան առաջարկում է արդարությունն ըմբռնել իրականում միմյանց փոխկապակցված երկու իմաստով: Առաջինը՝ լայնորեն տարածվածը և քաջածանոթը արդարությունն է՝ որպես օրենք, իրավություն, ինչպես ինքն է պնդում՝ հաշվարկելի ու բաշխիչ, ուր կիզակետում «(փոխ)հատուցման հաշվարկն է, վրեժխնդրության, պատժի տնտեսությունը»¹⁶, որը համաչափեցնում և համաժամանակեցնում է սուբյեկտների կամ օբյեկտների հաշվետվողականությունն ու մեղսագիտակությունը: Սա մի ըմբռնում է, որը մինչ այժմ այս շարադրանքում մարդկային համակեցության՝ որպես

¹⁴ Տե՛ս Արիստոտել (1984), *Никомахова Этика*, էջ 147:

¹⁵ Արիստոտել (1984), *Политика*, стр. 380.

¹⁶ Derrida, J. (2006). *Specters of Marx: The State of the Debt, the Work of Mourning and the New International*. London, New York: Routledge, p. 26.

հասարակական-պետական կարգի առանցքում է:

Սակայն արդարության երկրորդ ըմբռնումն է, որ Ժ. Դերիդայի հայացքներն ընթերցողների աչքին անսովոր է դարձնում. մտածել արդարությունն ընծայի հենքի վրա՝ իրավունքից, հաշվարկից, առևտրից անդին, մի առիթով ձևակերպում ստացած՝ «արդարությունը՝ որպես ընծայի անհաշվարկելիություն և այլոց նկատմամբ ոչ տնտեսական առաջա-դրում»¹⁷: Սա մի ըմբռնում է, որն արդարության և օրենքի միջև խրթին ու անկայուն տարբերակում է առաջացնում. արդարությունը՝ որպես «անսահման, անհաշվարկելի, կանոնի հանդեպ ապստամբական և համաչափության հանդեպ օտար, տարասեռ ու տարատեղ»¹⁸, իսկ որպես կիրառված օրենք կամ իրավունք՝ «կայունացնելի և օրենքով սահմանված, հաշվարկելի, կարգավորված ու ծածկագրված հրամանների համակարգ»¹⁹: Արդարության ու օրենքի/իրավունքի միջև այս հակադրությունը միաժամանակ փոխադարձ կարիք է, ուր «օրենքը պահանջում է իրեն կիրառել արդարության, իսկ [...] արդարությունը հաստատել իրեն՝ օրենքի անունից, որը պետք է հարկադրվի»²⁰: Այս իրադրության մեջ են սկզբնավորվում ապորիաները՝ անմիջապես, հատելով-կտրելով, առանց ինչ-որ երաշխավորության ազատ որոշում կայացնելու և օրենքի տառին հետևելու միջակայքում:

Արդարության և օրենքի/իրավունքի, ուրեմն՝ նաև մարդկային համակեցության հանդեպ այս հայացքը հարցականի տակ է դնում Հեգելի փիլիսոփայությանը, ինչպես նաև նրա մի շարք հետևորդներին բնորոշ ուսանյակը, այն է՝ դրանք (այսինքն՝ արդարության և օրենքի/իրավունքի փոխհարաբերության, մարդկային համակեցության ներսում տեղի ունեցող փոփոխությունները) դիտել հակասությունների և վերջիններիս հաղթահարման անկյան տակ, երբ ի հայտ եկող տարբերություններն ի վերջո վերառնվում են նույնության (իմա՝ կարգի, կայունության) մեջ:

Ժ. Դերիդայի և նրա հետևորդների համար կարևոր է ցույց տալ, որ իրականությունը սկզբունքորեն այլ է՝ պարբերաբար առաջացող անորոշություններով և պարադոքսներով լի, հետևաբար՝ բարդ ու պատահականությունների առջև դռնբաց: Միաժամանակ պետք է ինչ-որ կերպ դրանց հետ գործ ունենալ՝ հաշվի առնելով, որ մարդկային

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Derrida, J. (1992). Force of Law: The “Mystical Foundation of Authority.” Cornell, D., Rosenfeld M., Carlson, D. G. (ed.) (1992). Deconstruction and the Possibility of Justice. New York, London: Routledge, p. 22.

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում:

համակեցության համար կարգի, կազմակերպվածության հաստատումը կենսական է: Ուրեմն ինչպե՞ս (հանգուցա)լուծել անորոշություններն ու պարադոքսները, հնարավորությունների ու հեռանկարների փխրունությունը: Հարցի պատասխանը **որոշում կայացնելու** տիրույթում է, որն այլ կերպ, քան էթիկաքաղաքական միջամտություն, կատարողական ակտ, համարել չես կարող: Սա այն տեղն է, ուր ոչ թե ի սկզբանե գործում է որոշակի տրամաբանությամբ ծավալվող գործընթացների մեջ դրսևորվող անբեկանելի անհրաժեշտությունը, այլ անորոշելի տրամաբանությամբ այլընտրանքներն ու անկանխատեսելիությունը: Եվ քանի որ էթիկաքաղաքական որոշումն է հանգուցալուծում գոյության պարադոքսալությունը, այսինքն՝ ամբողջովին «շահագործում է» նրա ընձեռած ստեղծագործական ներուժը, ապա օրինաչափորեն **իշխանությունը** դառնում է այն ատյանը, որը (մարդկային համակեցության համար՝ ընդհանրապես, իսկ հասարակական-պետական կարգի դեպքում՝ մասնավորապես) ստանձնում է կազմավորիչ դեր. պարզ և կոպտացված ձևակերպմամբ՝ *իշխանությունն իրականության առանցքային կերտողն է, իսկ քաղաքականը/քաղաքականությունը՝ դրա իրականացման գլխավոր ասպարեզը*²¹: Ուրեմն՝ հասարակական-պետական կարգում քաղաքականության ասպարեզի և իշխանության հիմնարար դերակատարությունն անկասկածելի է:

Քաղաքականին, քաղաքականությանն առնչվող ոչ մի բներևույթ այնքան ուշադրության չի արժանացել, բուռն քննարկումների առարկա դարձել, որքան՝ իշխանությունը: Ըմբռնումների և սահմանումների պակաս չկա մի բներևույթի մասին, որը կարծես ինչ-որ մոգականություն է պարունակում, երբեմն հմայելու հետ հակասական՝ ատելության, ընդդիմանալու և միաժամանակ սիրո, կամավոր հնազանդվելու երանգավորմամբ դող առաջացնում իր, այսպես կոչված, կյանք տալու և կյանքից զրկելու զորությամբ:

«Կյանք տալու և կյանքից զրկելու զորություն» արտահայտությունը կարող է երկմտանք առաջացնել: Սակայն պատահական չէ, որ հին

²¹ Հետմարքսիստ մտածող Շանթալ Մուֆֆն այս առիթով գրում է. «[...] Հասարակական օբյեկտիվությունը կազմավորված է իշխանական գործողություններով: Սա նշանակում է, որ ցանկացած հասարակական օբյեկտիվություն վերջիվերջո քաղաքական է [...]» Ցանկացած քաղաքական կարգ հեգեմոնիայի, իշխանական հարաբերությունների առանձնահատուկ նմուշի արտահայտությունն է [...]», տե՛ս Mouffe, Ch. (2000). *The Democratic Paradox*. London, New York: Verso, էջ 99: Կարգի, հասարակական օբյեկտիվության և իշխանության հիմնարար փոխհարաբերությունների մասին հղացական այս անկյան տակ առավել մանրամասն տե՛ս նաև Laclau, E. and Mouffe, Ch. (2014). *Hegemony and Socialist Strategy: Towards a Radical Democratic Politics*. London, New York: Verso:

հունարենում «իշխանություն» բառն ունի երկու համարժեք՝ «arche», որ թարգմանաբար նշանակում է սկիզբ, հիմք, առաջնապատճառ, ծագում, և «kratos» ուժ, զորություն: Այս առումով քաղաքական իշխանության բներևույթը կարող է լինել ինչպես մարդուն վայել, արժանապատիվ կյանքի համար միջավայրի ստեղծող (օրինակ՝ ի դեմս բարենպաստ սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կառույցների և հաստատությունների), այնպես էլ՝ ոչ լիարժեք կյանքի, գոյատևման պարզագույն ռեժիմի կազմավորող²²:

Ուրեմն՝ մարդկային համակեցության կենսագործունեության մեջ իշխանության ունեցած նշանակության վերաբերյալ երկմտանքի տեղ չի կարող լինել: Սակայն արդյոք չպե՞տք է հարցադրել, թե ի՞նչ է քողարկված այս իրականությունը կազմավորելու, կյանք տալու և կյանքից զրկելու զորության հետևում կամ թերևս հենց նրա ներսում, որ թե՛ մի, թե՛ մյուս դեպքում հաճախ դիմադրություն է առաջացնում²³: Արդյոք չպե՞տք է խոսել իշխանության այսպես կոչված «սովերային» կողմերի մասին՝ հաշվի առնելով մարդկային համակեցության համար նրա նշանակությունը: Սրանք հարցեր են, որոնք, ուզած թե չուզած, իշխանության խնդիրը բերում-կապում են բռնության խնդրին: Եվ սա մի անխուսափելի անցում է, որին քաղաքական մտքի որոշ ներկայացուցիչներ յուրովի են առերեսվել:

Առերեսման այդ փորձերը քննելիս մի պահ պիտի կանգ առնել Հ. Արենդթի մոտեցման վրա: Առաջին հայացքից թվում է, թե հղացական առումով այն դժվար է տեղավորվում վերոշարադրյալի տրամաբանության մեջ, քանի որ սկզբունքորեն առանձնանում է իշխանության և բռնության փոխհարաբերության շուրջ ասպարեզում եղած հիմնական մոտեցումներից: Սակայն հենց այս հղացական այլությունն է, որ դրդում է բաց չթողնել և հակիրճ ներկայացնել այն: «Բոլոր քաղաքական հաստատությունները իշխանության դրսևորումներ և նյութականացումներ են: Դրանք կարծրանում ու քայքայվում են, հենց որ ժողովրդի կենդանի

²² Չպետք է մոռանալ նաև, որ անցյալում ամենուր, իսկ մեր օրերում՝ դեռ որոշ վայրերում, միանգամայն լեգիտիմ է համարվում ծանրագույն հանցանքի համար (ինչպես որ այն ձևակերպված է տվյալ իրավակարգում) կյանքից զրկելը: Ուշագրավ է նաև, որ գերմանացի մտածող Կ. Շմիդտը, քննադատելով ազատականությունը որպես ապաքաղաքականացման հանգեցնող միտք, նկատում է, որ թշնամու հետ առճակատման ժամանակ իսկական քաղաքական միությունը ոչ միայն կարող է, այլև պետք է պահանջի կյանքի զոհաբերում, տե՛ս Schmitt, C. (2007). *The Concept of the Political*. Chicago, London: The University of Chicago Press, էջ 46:

²³ Ֆրանսիացի փիլիսոփա Մ. Ֆուկոն, որն իշխանությունը սահմանում է որպես ուժերի հարաբերություն(ներ), համոզված է, որ «որտեղ կա իշխանություն, այնտեղ կա դիմադրություն», այսինքն՝ իշխանությունն այդպիսին է դառնում նաև դիմադրության շնորհիվ, տե՛ս Foucault, M. (1978). *The History of Sexuality, Vol. I: An Introduction*. New York: Pantheon Books, էջ 92-95:

իշխանությունը դադարում է աջակցել դրանց»,- գրում է Հ. Արենդթը²⁴: Հրեական ծագմամբ գերմանա-ամերիկյան հանրահայտ այս մտածողը համոզված է, որ իշխանության և բռնության միջև փոխապայմանավորման կամ փոխարդյունավորման ոչ մի հարաբերություն չկա: Դրանք միանգամայն տարբեր են: «Իշխանությունը համապատասխանում է ո՛չ թե պարզապես մարդու գործելու կարողությանը, այլ գործելու համաձայնեցված: Իշխանությունը երբեք մեկ անհատի սեփականությունը չէ, այն պատկանում է որևէ խմբի և գոյատևում է միայն այնքան ժամանակ, քանի դեռ պահպանվում է խումբը: Երբ մենք ասում ենք, որ ինչ-որ մեկն «իշխանության մեջ է» (in power), ապա իրականում նկատի ունենք, որ նրան իշխանագործել են որոշակի թվով մարդիկ՝ գործելու իրենց անունից [...]: [...] Բռնությունը [...] տարբերվում է իր գործիքային բնույթով: Երևութականորեն այն մոտ է ուժին, քանի որ բռնության կիրառումները, ինչպես բոլոր այլ գործիքներինը, նախագծված են և օգտագործվում են բնական ուժը բազմապատկելու նպատակով, քանի դեռ իրենց զարգացման վերջնական փուլում դրանք կարող են փոխարինել այն»²⁵:

Հ. Արենդթի մոտեցման հետ կարելի է համաձայնել, մերժել այն կամ էլ համաձայնել մասնակիորեն՝ նրա ըմբռնումներում խնդիրներ նկատելով և այլն: Բայց իշխանության և բռնության միջև այսպիսի տարանջատումը, որում քաղաքական իշխանության կազմավորման ու բանեցման մեջ բռնությունն սկզբունքորեն տեղ չպիտի ունենա, Հ. Արենդթին թույլ է տալիս այլ, շատ կարևոր հղացումներ առաջադրել և քաղաքականությունը փրկել 20-րդ դարի սարսափներն ապրած մարդկության աչքերում վերջնական վարկաբեկումից ու գործիքայնացումից: Հ. Արենդթի այս ձևակերպումները ողջ շարադրանքի համատեքստում և մասնավորապես՝ իշխանության ու բռնության փոխներհյուսման հետնախորքում յուրովի հակակշռող դրոյթներ կլինեն, քանի որ ամեն ինչ այնքան էլ դյուրին չէ այս հարցում:

Պետք է ասել, որ իշխանության և բռնության փոխհարաբերության, հատկապես՝ նրանց միջև փոխապայմանավորման և փոխարդյունավորման պնդումը եղել է ինչպես Հ. Արենդթից առաջ, այնպես էլ՝ հետո: Հ. Արենդթն ինքն է այս խնդիրն անդրադարձել, երբ առաջադրել ու հիմնավորել է դրա շուրջ իր տեսակետը: Այսպես՝ կամ իշխանությունը համարվել է մեղմացված, հիմնարկված բռնություն, կամ էլ բռնությունը՝ իշխանության

²⁴ Arendt, H. (1970). On Violence., San Diego, New York: A Harvest/ HBJ Book, p. 41.

²⁵ Նույն տեղում, էջեր 44-46:

ծայրահեղ դրսևորում²⁶: Մեկը մյուսին ագուցելու այս մտայնությունը, ըստ էության, հենվում է այն կանխադրույթի վրա, որ իշխանությունը ազդեցություն գործելու կամ ունենալու (իմա՝ փոփոխության հասնելու) կարողության վկայությունն է, իսկ այդ կարողությունը ոչ այլ ինչ է, քան հենց ուժը/բռնությունը, որն ունակ է նաև վնասել, ոչնչացնել, վերացնել: Ավելին՝ ինչ-որ հարցում արմատական փոփոխության հասնելը կարծես գոնե երբեմն ենթադրում է եղածի ոչնչացում/վերացում՝ նորի կառուցման համար: Ուրեմն ինչ-որ ազդեցության (իմա՝ փոփոխության) հասնելու, ուժի/բռնության բանեցման և դրա հետևանքով վնաս հասցնելու, անգամ ոչնչացնելու/վերացնելու փոխհատման տեղում են իշխանությունն ու բռնությունը սերտաճելու, փոխարդյունավորվելու կամ հենց նույնանալու հնարավորություն ստանում: Վալտեր Բենյամինն իր հանրահայտ «Առ բռնության քննադատություն» գրության մեջ պնդում է, որ բռնությունը (Gewalt)²⁷ իրավաստեղծ (rechtsetzende) և իրավապահպան (rechtserhaltende) նշանակություն ունի²⁸: Այսինքն՝ բռնությունը ցանկացած իրավակարգի սկզբնավորման ակունքում է²⁹, որն այդ նույն իրավակարգի հաստատման ակտից հետո գործի է դրվում նրան իսկ հնարավոր ոտնձգություններից պաշտպանելու համար: Ուրեմն օրենքն ու իրավունքը, որ կոչված են կանոնակարգելու մարդկային համակեցության ներսում ծավալվող հարաբերությունները, այդ թվում՝ նաև բացառելու բռնության, մասնավորապես՝ անհատական կիրառումները, ծայրեիծայր իրենց ներսում ուժ/բռնություն են ենթադրում. մի դեպքում՝ որպես նախորդ (հնարավոր իրավաքաղաքական) վիճակից արմատական խզում, ոչ մի բանով նախորդից չբխող նորի հիմնադրում, մյուս դեպքում՝ որպես ստեղծվածի գործադրում/պահպանում:

²⁶ Նույն տեղում, էջեր 35–38:

²⁷ Գերմաներենում «Gewalt» բառն ունի և՛ բռնություն, և՛ լեզվաբանական իշխանություն, հանրային ուժ իմաստները:

²⁸ Տե՛ս Benjamin, W. (1999). Zur Kritik der Gewalt, *Gesammelte Schriften*. vol. II.1, Frankfurt a.M.: Suhrkamp, էջեր 186–187:

²⁹ Փիլիսոփա Լեո Շտրաուսի՝ վերը վկայակոչված Կ. Շմիդտի առանցքային աշխատությանը՝ «Քաղաքականի հղացքին» նվիրված՝ «Գրառումներ քաղաքականի հղացքի մասին» գործում հեղինակը, բնական վիճակի և քաղաքացիական վիճակի մասին Թ. Հոբսի հայացքները համեմատելով Կ. Շմիդտի քաղաքականի ըմբռնման հետ, եզրակացնում է, որ, ըստ Կ. Շմիդտի, քաղաքականը, որը հենց բնական վիճակն է՝ թշնամության, հետևաբար բռնության ոգով տոգորված, ընկած է ցանկացած մշակույթի հիմքում, տե՛ս Strauss, L. (2007). Notes on Carl Schmitt, the Concept of the Political. Schmitt, C. (2007). The Concept of the Political. Chicago, London: The University of Chicago Press, էջ 105: Պատահական չէ, որ, ավանդաբար, հեղափոխություններն ուղեկցվել են բռնության ծայրահեղ դրսևորումներով, իսկ, ինչպես հայտնի է, իսկական հեղափոխությունները ենթադրում են հասարակական-քաղաքական կարգի արմատական փոփոխություն:

ժ. Դերիդան ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ օրենքն «ինքնին, ապրիորի, իր հղացքի վերլուծական կառուցվածքում»³⁰ ենթադրում է ուժով կիրառված լինելու հնարավորությունը, ինչպիսին էլ այդ ուժը լինի՝ ուղիղ թե անուղղակի, ֆիզիկական թե սիմվոլիկ, արտաքին թե ներքին և այլն: Հիմնահարցի շուրջ մեկ այլ ֆրանսիացի փիլիսոփայի՝ Մ. Մոնտենի մոտեցումը պարզորոշելիս էլ նա նկատում է, որ օրենքների ենթարկվում են «ո՛չ այն պատճառով, որ դրանք արդար են, այլ այն պատճառով, որ իշխանություն/հեղինակություն (authority) ունեն»³¹: Ամրագրումների այս շղթան մղում է հարցնելու, թե *կարելի՞ է ենթադրել, որ օրենքի և իրավունքի այլակերպված բռնությունը/ուժը/իշխանությունն ինքն իրեն սահմանափակում, միևնույն ժամանակ ինքն իրեն պահպանում է*: Այս մտահորիզոնում կարծես՝ այո, և այս իրողության հետ անհնար է հաշվի չնստել, երբ խոսքը մարդկային համակեցության, հատկապես՝ նրա կազմակերպման հասարակական-պետական ձևի մասին է³²:

Բռնության հարցը զգայուն հարց է: Ժամանակի միտումն այնպիսին է, որ այսօր մարդկության մի զգալի մասը քննարկում է դրա դրսևորումները մարդու գոյության բոլոր հնարավոր չափումներում՝ ֆիզիկական, հոգեբանական, արժեքային-սոցիալական, անգամ՝ իմացական: Ուստի՝ ազդեցություն ունենալու կամ գործելու, ուժ բանեցնելու մտադրությունը, եթե անգամ առաջին հայացքից վերաբերում է միայն մեկ կոնկրետ ասպարեզի, ավելի հաճախ է դուրս գալիս այդ ասպարեզի սահմաններից և հետևանքների տեսանկյունից ընդգրկում նորերը: Այս շրջարկը բնականորեն հարց է առաջացնում. իսկ, կախված հետապնդվող նպատակ(ների)ից, կարո՞ղ է արդարացվել, հիմնավորված լինել բռնության/ուժի գործադրումը: Օրենքի և իրավունքի արդի համակարգերը կարծես այդ հնարավորությունն ընձեռում են: Մինչև

³⁰ Derrida, J. (1992). Force of Law: The “Mystical Foundation of Authority,” p. 6.

³¹ Նույն տեղում, էջ 12: Հայերենում պատահական չէ «օրենքի կամ իրավունքի ուժով» լայնորեն կիրառվող ձևակերպումը, ինչը նշանակում է, որ հայերեն լեզվամտածողության մեջ նույնպես ուժը/բռնությունը/իշխանությունն ապրիորի ենթադրվում են օրենքի կամ իրավունքի ըմբռնման մեջ:

³² Այս առիթով, իշխանության/բռնության չարաշահման, ուստի դրա(նց) կիրառության վերահսկման կարիքի անկյան տակ, ուշագրավ կարող է լինել նաև քաղաքական տեսաբան Զ. Շկլարի մոտեցումը, որն ստացել է «վախի ազատականությունը» խորագիրը: Անձի, նրա կյանքի հանդեպ զանազան ոտնձգությունները, մասնավորապես՝ մասնավոր կյանք հանրային/պետական իշխանության ներխուժումը, անհատական ազատության վրա հանրային ճնշումը, կառավարող մարմինների ձեռքում առկա ռազմական լծակները, իշխանության անհավասարաչափ բաշխումն անխուսափելի են դարձնում անձին հասցվող վնասի հանդեպ վերահսկողություն սահմանելու անհրաժեշտությունը, տե՛ս Shklar, J. N. (1989). Liberalism of Fear. Rosenblum, N. L. (ed.) (1989). Liberalism and the Moral Life. Cambridge, Mass.: Harvard University Press, էջեր 21-38:

որտե՞ղ և ինչքա՞ն է թույլատրելի բռնության կիրառումը, կամ ինչպիսի՞ բռնության/ուժի գործադրումն է լեգիտիմ՝ հաշվի առնելով, որ բացի ապագործառական, կործանիչ հետևանքներից՝ այն նաև գործառական, կառուցողական հետևանքներ կարող է մակաբերել: Ակնհայտ է, և այդ մասին այս շարադրանքում քանիցս նշվել է, որ իրավակարգը բռնությունն ընտելացնելու, սահմանափակելու՝ մինչ այժմ ստեղծված գլխավոր ռացիոնալ հաստատությունն է: Եթե հարցադրումը փոխենք՝ իսկ հնարավոր է բռնության/ուժի ինչ-որ մի տեսակի գործադրմամբ, որն առավել ընդունելի կարող է լինել, կանխել մեկ այլ՝ բռնության անցանկալի տեսակի առաջացումը: Այս հարցի պատասխանն էլ է նախորդիվ հնչել, բայց դրան կարելի է նայել մեկ այլ դիտանկյունից ևս:

Բռնության երևույթին այսպես մոտենալու տարբերակ է առաջարկում հետմարքսիստ մտածող Շ. Մուֆը: Այս դեպքում սահմանափակել, մեղմել բռնությունը նշանակում է հնարավորություն ընձեռել՝ բոլոր տարածայնություններին, ազատության և հավասարության սկզբունքների վերաբերյալ գոյություն ունեցող տարբեր մոտեցումներին ու մեկնաբանություններին քաղաքակիրթ ճանապարհով դրսևորում և արտահայտում գտնելու համար: Հնարավոր չէ այդ տարածայնությունները մեկընդմիջտ հաղթահարել. հասարակական-պետական միավորման մեջ միանգամայն բնական պիտի համարել այսպես կոչված «մենք/նրանք» տարանջատումը: Սակայն ժողովրդավարական քաղաքականությունը, հաստատություններն ու պրակտիկաները «մենք/նրանք» տարանջատման հետևանքով ի հայտ եկող թշնամուն պիտի փոխակերպեն «ախոյանի».
«այսինքն՝ մեկը, ում գաղափարների դեմ պայքարում ենք, բայց այդ գաղափարները պաշտպանելու նրա իրավունքը հարցականի տակ չենք դնում: [...] Այդ գաղափարների պաշտպաններին վերաբերվում ենք որպես լեգիտիմ ընդդիմախոսների»³³: Միաժամանակ, հասարակական-պետական կարգը կլինի հեգեմոնիկ, այսինքն՝ ժամանակավորապես գերիշխանություն ձեռք կբերեն ազատության և հավասարության սկզբունքների որևէ մի խմբի մեկնաբանությունները: Այսպիսով Շ. Մուֆն ընդունում է, որ բռնությունը/ուժն անխուսափելի է: Սակայն դրա ծայրահեղ, անընդունելի և անկառավարելի հետևանքներն ի չիք դարձնելու նպատակով անհրաժեշտ է թույլատրել «սիմվոլիկ բռնություն», ինչին ի հավելումն՝ քաղաքականությունը միշտ կմնա եռուն, հակասություններն ի հայտ բերող և դրանք քաղաքակիրթ հուն գցող ասպարեզ:

³³ Mouffe, Ch. (2000). The Democratic Paradox, p. 102.

Փորձառությունների այն բազմազանությունը, որն ի հայտ է գալիս մարդկային քաղաքակրթության ընթացքը դիտարկելիս, կարծես իշխանության, բռնության, ուժի, դրանց տարանջատման հարցերը պրակտիկայում լավագույնս լուծելու տարբերակների վերաբերյալ լավատեսության քիչ հիմք է տալիս: Մի առիթով Ժ. Դերիդան, ամրագրելով օրենքի՝ ուժով կիրառվելու անխուսափելիությունը, հարց է տալիս. «Ինչպե՞ս պիտի մենք տարանջատենք օրենքի այս ուժը [...] և բռնությունը, որ միշտ համարում են անարդար: Ի՞նչ տարբերություն կա *մի կողմից* ուժի, որ կարող է լինել արդար կամ ցանկացած պարագայում համարվել լեգիտիմ (ոչ միայն՝ որպես օրենքին ծառայեցվող գործիք, այլ *droit*³⁴ պրակտիկա և նույնիսկ իրականացում, էություն) և *մյուս կողմից՝* բռնության միջև, որ միշտ համարում են անարդար: Ո՞րն է արդար ուժը կամ ոչ բռնի ուժը»³⁵: Թերևս, մի կողմից այս դժվարությունը, մյուս կողմից՝ արժանապատիվ կյանքի, ամենատարբեր՝ ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական, իմացական և այլ առումներով բռնությունը բացառող կյանքի հանդեպ ձգտումն է, որ այսօր այժմեական է դարձրել հակաբռնության (anti-violence) ու ոչ-բռնության (nonviolence) մոտեցումների ծայրահեղ ակտուալացումը:

Առաջինի՝ հակաբռնության գաղափարի հետևողական ջատագովը մտածողներից Է. Բալիբարն է, որը «քաղաքավարություն» (civility) հասկացության ներքո, ինչը նույնացնում է հակաբռնության հետ, ժողովում է «քաղաքական ռազմավարությունների (և քաղաքականության հնարավորության պայմանների) ողջ հավաքակազմը, որն արձագանքում է այն իրողությանը, որ բռնությունն իր տարբեր ձևերում միշտ սահմանազանցում է նորմալությունը»³⁶: Ֆրանսիացի մտածողի համոզմամբ այս քաղաքավարությունն ավելին չէ, քան հարց, որն իր վերջին սահմանում անպատասխան կմնա, և ավելի շուտ քաղաքավարության աննախադեպ ռազմավարությունների և՛ տեսական, և՛ գործնական որոնում է՝ «զուգակցված (հետազգային, հետգաղութային, հետկապիտալիստական, հետգիտակարգային, հետնահապետական) քաղաքացիության հայտնագործություններին»³⁷:

³⁴ Այս բառը ֆրանսերենում միավորում է «իրավունք» և «ճիշտ լինել» իմաստները, ճիշտ ինչպես անգլերենում՝ right կամ ռուսերենում՝ право: Հայերենում նույնպես այդ երկու իմաստները կապակցված են. իրավ-ունք՝ իրավ լինել (ներառյալ՝ հայերենում կա նաև «իր» «իրականություն» բառի արմատը, այսինքն՝ իրականությունը, իրավունքն ու ճշմարտությունը իդեալում միավորված են):

³⁵ Derrida, J. (1992). Force of Law: The “Mystical Foundation of Authority,” p. 6.

³⁶ Balibar, E. (2015). Violence and Civility: On the Limits of Political Philosophy. New York: Columbia University Press, p. 65.

³⁷ Նույն տեղում:

Երկրորդը՝ ոչ-բռնությունը, Զ. Բաթլերի մտավորական անդրադարձի կենտրոնում է. Բաթլերի համար այն նախ և առաջ ենթադրում է կրոնական, ռասայական, դասակարգային և գենդերային տարբերություններից բխող անհավասարությունները բացառող *արմատական հավասարություն*: Այն, իր հերթին, պիտի վերաճի համակեցության մեջ սոցիալական կապերի վերախմաստավորման. մի համակեցություն, որտեղ սոցիալական փոխկախվածությունն է կյանքի բնութագիրը, իսկ բռնությունը հավասարապես ոտնձգություն է թե՛ այդ փոխկախվածության, թե՛ նրանում գտնվող անձանց դեմ: Գործնականում ոչ-բռնությունը նախ և առաջ քաղաքացիական անհնազանդության ձևերն են, որոնք, սակայն, չպետք է տարանջատ լինեն բռնության քննադատությունից՝ բռնությունը սահմանող, տիպաբանող, դրա կիրառումը արդարացնող կամ, հակառակը, չարդարացնող շրջանակների (frameworks) կանխադրույթների, դրանց պատմական ակունքների հարցադրումից և խնդրականացումից³⁸:

Ուրեմն՝ այսպես թե այնպես, բռնության և ոչ-բռնության/արդար ուժի տարանջատման կենսական խնդիրը ենթադրում է, պահանջում մարդկային համակեցության կազմակերպման հիմքում ընկած, տեսականորեն և գործնականորեն փոխկապակցված ձեռնարկ, որն այսպես թե այնպես՝ իր հերթին, ասպարեզ է բերում հասարակական-պետական կարգին, իշխանությանը, իրավունքին և արդարությանը վերաբերող հարցերը: Ավելին. ըստ էության՝ հենց այդ տարանջատման կարիքի իրականացում(ներ)ն են ուղի հարթում ժամանակակից աշխարհի տեղային և գլոբալ խնդիրների լուծման համար: Սակայն միայն այս հանգամանքը չէ, որ ողջ մարդկությանը պիտի արթուն պահի՝ չկորցնելու բռնության և ոչ-բռնության/արդար ուժի՝ հասարակական-պետական կարգում, իշխանության, իրավունքի և արդարության գործառնական ասպարեզներում արտահայտվելու ձևերի հանդեպ գործնական և տեսական հետաքրքրությունը: Մարդկայինի և մարդկության հեռանկարների մշտնջենական հարցն է սա ինքնին, որ հարկադրում է դրանց նկատմամբ հետևողականորեն և անընդմեջ զգայուն և զգոն մնալ:

³⁸ Առավել մանրամասն տե՛ս Bulter, J. (2020). *The Force of Nonviolence: An Ethico-Political Band*. London, New York: Verso:

Օգտագործված աղբյուրներ

1. Աճառեան, Հր. (1926), Հայերէն Արմատական Բառարան: Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ.:
2. Arendt, H. (1970). On Violence. San Diego, New York: A Harvest/ HBJ Book.
3. Balibar, E. (2015). Violence and Civility: On the Limits of Political Philosophy. New York: Columbia University Press.
4. Bulter, J. (2020). The Force of Nonviolence: An Ethico-Political Band. London, New York: Verso.
5. Derrida, J. (2006). Specters of Marx: The State of the Debt, the Work of Mourning and the New International. London, New York: Routledge.
6. Derrida, J. (1992). Force of Law: The “Mystical Foundation of Authority.” Cornell, D., Rosenfeld M., Carlson, D. G. (ed.) (1992). Deconstruction and the Possibility of Justice. New York, London: Routledge.
7. Foucault, M. (1978). The History of Sexuality, Vol. I: An Introduction. New York: Pantheon Books.
8. Freud, S. (1990). Beyond the Pleasure Principle. New York, London: W. W. Norton & Company.
9. Hobbes Th., Leviathan: Or the Matter, Forme and Power of a Commonwealth, Ecclesiastical and Civil: Available at: <https://socialsciences.mcmaster.ca/~econ/ugcm/3ll3/hobbes/Leviathan.pdf> [Accessed 10.09.2021].
10. Laclau, E. and Mouffe, Ch. (2014). Hegemony and Socialist Strategy: Towards a Radical Democratic Politics. London, New York: Verso.
11. Mouffe, Ch. (2000). The Democratic Paradox. London, New York: Verso.
12. Parsons, T. (1966). The Structure of Social Action: A Study in Social Theory with Special Reference to a Group of Recent European Writers. New York: The Free Press.
13. Rawls, J. (2005). A Theory of Justice. Cambridge, London: The Belknap Press of Harvard University Press.
14. Schmitt, C. (2007). The Concept of the Political. Chicago, London: The University of Chicago Press.
15. Shklar, J. N. (1989). Liberalism of Fear. Rosenblum, N. L. (ed.) (1989). Liberalism and the Moral Life. Cambridge, Mass.: Harvard University Press.
16. Benjamin, W. (1999). Zur Kritik der Gewalt, *Gesammelte Schriften*, vol. II.1. Frankfurt a.M: Suhrkamp.
17. Аристотель (1984), Никомахова Этика, Сочинения в 4 томах, т. 4. Москва: изд. «Мысль».
18. Аристотель (1984), Политика, Сочинения в 4 томах, т. 4. Москва: изд. «Мысль».
19. Философия древности и средневековья (1969), Эмпедокл, Антология мировой философии в четырех томах, т. 1 ч. 1. Москва: изд. «Мысль».
20. Платон (2006), Государство, Избранное. Москва: изд. АСТ.

Իշխանություն / իշխ

ՍԵՂՄԱԳԻՐ

Տեքստը ստեղծվել է «Իշխանություն» տեսանյութի սղագրության հիման վրա: Փորձ է կատարվում համայնապատկերել իշխանության (իշխի) դրսևորումները և դրանց առնչվող խնդիրները: Անդրադարձ է կատարվում «իշխանություն» հասկացությանը, իշխի բուրգային համակարգին, իշխի բազմապիսի դրսևորումներին, մոտեցումներին, միջազգային հարաբերություններին, «անվտանգության դիլեմային» և այլն: Ներկայացվում են իշխի բռնության, հարկադրանքի վրա հիմնված տարատեսակներից դեպի ավելի մասնակցային տեսակները: Ջոն Լոքը և Թոմաս Հոբսը հիմնադրեցին իշխի երկու գլխավոր և հակադիր մոտեցումները, որոնցով մենք մինչև այսօր առաջնորդվում ենք: Ըստ Հոբսի՝ պետությանն ու օրենքին բոլորը պարտավոր են ենթարկվել, անկախ այն հանգամանքից՝ օրենքը ճիշտ է, թե ոչ: Լոքը դիտարկում է պետություն և հասարակություն հարաբերությունը սոցիալական պայմանագրի շրջանակներում, երբ կողմերը պայմանավորվում են, թե ի՞նչ է օրենքը, ինչպե՞ս է իշխը ձևավորվում և այլն: Ժողովրդավարական, ինֆրակառուցվածքային իշխի վրա հիմնված զարգացած ժամանակակից համակարգն ամենաբարձրն է: Այն պարունակում է իշխի բոլոր տեսակի դրսևորումները՝ տարբեր մակարդակներում: Որոշ ինստիտուտներ կլոր սեղանի սկզբունքով են աշխատում, որոշները՝ բուրգի, որոշները, կրկնելով պետական իշխի սկզբունքը, ավելի փոքր մասշտաբով՝ ռեֆերենդումային տարբերակով և այլն: Այս համակարգը հենց իր բարդությամբ է ճկուն և հարմարվող: Այդ է պատճառը, որ այն շատ դժվար է քանդել: Մենք ամբողջ օրն ընկղմված ենք իշխի մեջ, որոշումներ ենք կայացնում, բանակցում ենք իշխերի հետ՝ մեր սեփական իշխի, մեր մերձավորների իշխի, պետության, հասարակության իշխի, սոցիալական այդ իշխի՝ այդ ճնշող, տաբուազնող իշխի: Իշխի հետազոտման ավանդական մոտեցումը մեծ մասամբ սահմանափակվում է կամ ներկայացնելով բուրգայինը, կամ խունտան, կամ ժողովրդավարությունը, առանց բացատրելու դրանց միջև իմաստային կապերը՝ իշխի հոսքը կառավարման մի ձևից մյուսին: Իսկ այս տեքստում

տրվում է «իշխ» երևույթի պարադիգմատիկ, արստրակտ-իդեալական, որոշակի իմաստով՝ օնթոլոգիական պատկերը: Իրականության սոցիալական կառուցման հղացքը նոր հնարավորություններ է ընձեռում՝ հասկանալու իշխի էությունը: Բացահայտվում են այնպիսի հասկացություններ, ինչպես «կառուցվածքային իշխ» և «կառուցվածքային բռնություն»:

Բանալի բառեր. իշխանություն, իշխ, կամք, ազատություն, Թոմաս Հոբս, Ջոն Լոք, Միշել Ֆուկո, power, pouvoir, բռնություն, բռնի, ուժ, անվտանգության դիլեմա, միջազգային հարաբերություններ, Գուլագ, ժողովրդավարություն, լեգիտիմություն, ապստամբություն, բուրգ, լեգիզմ, խունտա, ինֆրակառուցվածքային իշխ, թափանցիկություն, ադապտացիա, որոշումների ընդունում, հրաման, բանակցություն, փափուկ ուժ, ազդեցություն, պարտադրանք, միջազգային հարաբերություններ, ճանաչում, չճանաչված պետություններ, անվտանգության դիլեմա, իրականության սոցիալական կառուցում, մարդու իրավունքներ, իրավունքահեն մոտեցում, լիբերալիզմ, մտագործունեություն, կառուցվածքային իշխ, կառուցվածքային բռնություն:

ABSTRACT

Power

The text is based on the transcript of a video presentation entitled “Power”. An attempt is made to survey the manifestations of power and the problems related to them. Reference is made to the concept of “power”, the pyramid system of power, power’s various manifestations, approaches to it, international relations, “security dilemma”, etc. Various types of power are presented, from the ones based on violence and coercion to the more participatory types. John Locke and Thomas Hobbes established the two main opposing approaches to power, which we are still guided by. Hobbes notes that everyone is obliged to obey the state and the law, regardless of whether the law is right or not. Locke considers the state-society relationship within the framework of a social contract, when the parties agree on what the law is, how power is formed, and so on. The modern system of power, developed on the basis of democracy and infrastructural power, is a most complex one. It contains all kinds of manifestations of power

at different levels. Some institutions work on the round table principle, some on a pyramid principle, some by duplicating the principle of state power on a smaller scale, by referendum, etc. Due to its complexity, this system is flexible and adaptable. That is why it is very difficult to destroy it. We are immersed in power all day, we make decisions, we negotiate with powers, with our own power and that of others, with state and social power – the power which ‘oppresses’ our freedoms and imposes taboos. The usual description of power is largely limited to either representing it as a pyramid, or a junta, or as a democracy, etc., without explaining the semantic connections between them, transformation of one type of power to the other. But in this text a paradigmatic, abstract-ideal, and, in a sense, an ontological image of “power” is set out. The concept of social construction of reality creates new opportunities to comprehend the essence of power. Concepts like “structural power” and “structural violence” are explained.

Key words: power, willpower, will, freedom, Thomas Hobbes, John Locke, Michel Foucault, power, pouvoir, violence, violent, force, security dilemma, international relations, Gulag, democracy, legitimacy, rebellion, pyramid, legalism/legism, junta, infrastructural power, transparency, adaptation, decision making, soft power, influence, coercion, order, negotiation, international relations, recognition, non-recognized states, social construct of reality, human rights, rights-based approach, liberalism, systemic thought activity, structural power, structural violence.

Այս տեքստն «Իշխանություն» տեսանյութի սղագրության ընդլայնված և մանրամասնած տարբերակն է:

Տեսանյութը տե՛ս այստեղ.

<https://www.youtube.com/watch?v=dnXFOooHA9k&t=14s>

Սա փորձ է համայնապատկերել իշխանության (իշխի) դրսևորումները և դրանց առնչվող խնդիրները: Տեքստը չի հավակնում ճշգրիտ և անխոցելի գիտականության, թեև մի շարք դեպքերում օգտագործվել են մտագործունեության մեթոդաբանության կիրառումները:

*Բռնությունն առկա է, երբ մարդիկ այնպիսի՝
ազդեցության են ենթարկվում, որը հանգեցնում է իրենց
ներուժից ցածր սոմատիկ և մտավոր իրացումներին:
Բռնությունն այդ չիրացման կետի և ներուժի միջև ընկած
հեռավորությունն է և այն ամենը, ինչը խոչընդոտում է այդ
հեռավորության վերացմանը:*

Յոհան Գալտունգ

1. Իշխանություն և իշխ. բուրգային համակարգ

Եկեք քարտեզագրենք «իշխանություն» հասկացությունը: Պետք է խորանալ, ռեֆլեքսիա անել: Դրա կարիքը կա ոչ միայն մեզանում՝ դա համաշխարհային խնդիր է, որովհետև «իշխանություն» հասկացությունը շատ դեպքերում աղավաղված է մեկնաբանվում: Մարդիկ չեն հասկանում՝ դա ինչ է: Գիտնականները, նույնիսկ միջազգային ասպարեզի գիտնականներն ամբողջությամբ չեն հասկանում այդ հասկացության կոնտեքստը: Եթե բացենք գուգլը (google) և հավաքենք «power» բառը, կտեսնենք, որ այնտեղ չկա մեկ միասնական ձևակերպում: Կա մի քսան տարատեսակ, մեկը՝ միջազգային հարաբերությունների դեպքում, մեկ այլը՝ էլեկտրական հոսանքի դեպքում և այլն: Այդ հասկացության մի միասնական ձևակերպում գոյություն չունի:

Ես արդեն նշեցի անգլերեն բառը՝ «power»: Ֆրանսերենի «pouvoir» բառից է, նշանակում է կարողություն, զորություն, հզորություն, «զորք»: Եթե ռուսերենը վերցնենք՝ «власть», առաջացել է «воласть» բառից, որն իր հերթին «воля» արմատից է, ծագում է կրկին լատինական «volition»՝ ցանկություն հասկացությունից: Եթե անգլերենում ու ֆրանսերենում բոլոր գլխավոր հասկացություններն այս մի բառով են արտահայտվում, ապա ռուսերենում արդեն կիսվում է: Մյուսը «держав»-ն է, որն էլ, բնականաբար, «держать» բառից է: Պահել, պինդ պահել:

Հայերենում վիճակն է՛լ ավելի դժվար է. կա «իշխանություն» հասկացությունը, որը մոտավորապես համապատասխանում է «власть»-ին, բայց բացարձակապես չի պարունակում «միավոր» իմաստը, «պետություն» իմաստը, ինչպես держава-ն է կամ power-ը, որն առնվազն այդ երկու իմաստը և բազում այլ իմաստներ արտահայտում է: Եթե այդ միասնականությունը չի հասկացվում, առաջանում է խնդիր: Նույնն է, որ «բան» բառը հասկանանք միայն որպես «բառ», չհասկանանք որպես «բան»,

«գործ», «բանվոր», չհասկանանք որպես «բան-միտք» և այլն, այսինքն՝ միայն մի տիրույթն ընկալենք:

Բառեր հորինելու ցանկությունն ինձ չի «ուտում», բայց վերը նշված պատճառով որոշեցի առաջարկել «իշխ» հասկացությունը: Այն լեզվաբան է. «իշխել» բառի արմատը «իշխն» է: Այն կարող է որպես գոյական օգտագործվել, որ այդ ամբողջությունն արտահայտի: Ես չեմ պարտադրում սա, չեմ կապում Լեզվի կոմիտեի, պարոն Գյուրջիսյանի հետ և ասում. «ընդգրկե՛ք սա բառարաններում»: Երբ որ պետք է ու հարմար է՝ կարելի է «իշխ»-ն օգտագործել, քանի որ երբեմն իրադրություններ կան, երբ «իշխանությունը» չի բավարարում:

Անցնենք մտածելուն, թե դա ի՞նչ է: Ես սիրում եմ սկսել սկզբից, երբ որ ինչ-որ հասկացություն ենք քարտեզագրում (գիտեք կոնտեքստի ընդլայնումը¹): Հասկանում ենք, որ իշխը, իշխանությունն ազդեցության մասին է, բայց, բնականաբար, մարդկանց միջև փոխազդեցությունների մասին է: Բայց չէ՞ որ կա «ոչ մարդկային» աշխարհը, ֆիզիկական աշխարհը՝ «մարդուց դուրս», որտեղ նույնպես կան փոխազդեցություններ: Այս հասկացության մասին մտածելն առաջարկում եմ սկսել ֆիզիկական աշխարհի մարմինների փոխազդեցություններից: Դրանք, հայտնի է, արտահայտվել են Իսահակ Նյուտոնի երրորդ օրենքի ձևակերպմամբ. «F = -F»: Ցանկացած մարմնի՝ ուրիշ մարմնի վրա ազդելիս, մեկի ուժը (սա ուժի ձևակերպումն է ֆիզիկայում, նյուտոնյան մեխանիկայում) մյուսին հավասար է²: Բա ո՞նց է լինում, որ մարմիններն իրար վրա ազդում են: Եթե անկենդան մարմինը քարը, ընդհարվեց մեկ այլ քարի, երկուսն էլ բախման արդյունքում ինչ-որ ազդեցությունների են ենթարկվում, քերծվածքներ, ճաքեր ստանում: Բայց ո՞նց է, որ եթե մեծ քար է, փոքր քարին խփում-գցում է մի կողմ, ինչո՞վ է դա բացատրվում: Բնականաբար, ֆիզիկական այլ գործոններով, որոնց մեջ կարող է լինել նայած ո՞ր դեպքում՝ ո՞րը. տվյալ մարմնի մասսան, նախ և առաջ, իհարկե. կարող է լինել պտույտի մոմենտը և այլն: Ինչո՞ւ է սա կարևոր. որովհետև այստեղ F նշանի կողքին, պիտի լինի «+» (պլուս) ինչ-որ բան, որ ազդեցությունն ավելի միակողմանի լինի: Եվ եթե մենք հիմա խորանայինք, թե ի՞նչ է մասսան, գրավիտացիոն ուժը և այլն, մենք արդեն չէինք տեղավորվելու նյուտոնյան ֆիզիկայի սահմաններում և պիտի գնայինք այնչթայնյան ֆիզիկային, սև խոռոչներին

¹ Տե՛ս «Կոնտեքստի ընդլայնում» դասախոսությունն այստեղ. (Jam Session 38) <https://epfarmenia.am/hy/video/context-expansion>

² Դրա վրա է հիմնված ռեակտիվ ուժի գործողությունը, օրինակ, ինքնաթիռների և հրթիռների դեպքում:

և այլն, բայց այստեղ կանգ առնենք, որովհետև, նախ, ես դրա մասնագետը չեմ, չնայած՝ շատ հետաքրքիր ասպարեզ է, և երկրորդ՝ մենք ի վերջո ուզում ենք քննարկել այս փոխազդեցության հարցը մարդկանց միջավայրում:

Մարդկանց միջավայրում այս փոխազդեցության հարցը ձևակերպվել է բավական լավ, ամենա-, այսպես, սեղմ սահմանմամբ. **«իշխանությունը (կամ, տվյալ դեպքում ես կօգտագործեմ՝ իշխը) այն իրադրությունն է, երբ մի սուբյեկտ (նկատի ունեն մարդ կամ մարդկանց խումբ), մի ամբողջություն ազդում է մեկ այլ սուբյեկտի վրա այնպես, որ այդ երկրորդ սուբյեկտն անում է այն, ինչ նա այլապես չէր անի»:** Սա է իշխի ամենագեղեցիկ ձևակերպումը:

Այժմ տեսնենք, թե ի՞նչ ձևեր կան, ինչպե՞ս է իշխն արտահայտվում: Ես պատմական էքսկուրս չեմ անում: Սա լինելու է զարգացող պարադիգմատիկ հայացք, կամ՝ սինխրոն հայացք: Պատմության տարբեր ժամանակներում տարբեր ճիշտ և սխալ մոտեցումներ են ցուցաբերվել. երբեմն պատմությանը հղումներ կանեմ, բայց ընդհանուր առմամբ ես քարտեզագրում եմ «իշխ» հասկացության տիեզերքի սինխրոն տարբերակի մի փոքրիկ մաս: Իհարկե, դա էլ չեմ սպառի:

Առաջին պրիմիտիվ, պարզ, պարզունակ տարբերակը, որով «իշխ» հասկացությունը մեկնաբանվում է, մեզ հայտնի բուրգի տարբերակն է: Ինչպե՞ս է դա մեկնաբանվում:

Մինչև հիմա էլ շատ, այսպես կոչված, արխայիկ ուղեղներում³, կամ ոչ էլ շատ արխայիկ, հա՞, բայց՝ մտածելուն շատ զուռ չտվող մարդկանց, հավանական է, որ այս պատկերացումն արտահայտվի: Մանավանդ երբ խոսում ենք դավադրապաշտության մասին, պետք է նկատի ունենալ, որ դավադրապաշտները⁴ հաճախ հակված են իշխի ազդեցության մոտավորապես հենց այս պատկերն իշխի միակ ձևը համարել:

Ո՞րն է այդ պատկերը. իբր, կա *ալֆա որձը*, նա ներքև է իջեցնում հրամաններ: Այս բուրգում փաստորեն բոլորը տարբեր մակարդակի ստրուկների կարգավիճակ ունեն: Եվ այդ «ստրուկներն» առանց խեղաթյուրելու կամ աղավաղելու կատարում են այդ հրամանները: Եթե չկատարեցին, ալֆա որձը ֆիզիկական ուժով ստիպելու է կամ պատժելու՝

³ Տե՛ս «Արխայիկ մտածողություն» տեսանյութը և տեքստը այստեղ. մաս 1. <https://epfarmeria.am/hy/video/archaic-thinking-part-1>, մաս 2. <https://epfarmeria.am/hy/video/Archaic-thinking-part2>

⁴ Տե՛ս «Դավադրությունների տեսություն» տեսանյութը և տեքստը այստեղ. մաս 1. <https://epfarmeria.am/hy/video/conspiracy-theory-part-1>, մաս 2. <https://epfarmeria.am/hy/video/conspiracy-theory-part-2>, Դավադրության տեսությունների մասին փողքասյթը այստեղ. <https://epfarmeria.am/hy/news/gevorg-ter-gabrielyan-speaks-about-conspiracy-theories>

շնորհիվ իր ունեցած անվտանգության ուժերի, ոստիկանության և այլն:

Ըստ այս մոտեցման, հրամանին վերևից ներքև նույնությամբ ենթարկվում են հիմնականում բոլոր ստրուկները: Հրամանը վերևից ներքև իջնում է, հասկացվում է ճիշտ այնպես, ինչպես ալֆա որձը նկատի ուներ, կատարվում է ճիշտ այնպես, ինչպես նա կուզենար, որ կատարված լիներ, և այս մեխանիզմն այդպես «աշխատում է»:

Բնականաբար, հարց է ծագում, ինչու՞ է նա դա անում: Կա առնվազն երկու խոշոր պատճառ. մեկը՝ «կայֆից ելնելով». լավ է լինել ամենաուժեղը: Երկրորդը՝ շահույթի համար: Եթե այդ «կայֆը» մի պահ փակագծերի մեջ վերցնենք, ապա նրա հիմնական նպատակը կորզելն է, շահագործելն է: Նա կուտակում է: Բուրգի գագաթին մոտ նա քսակ ունի, և այստեղ կուտակվում է բարիքը. նա հրամաններ տալով ստիպում է, որ մարդիկ իրենց աշխատածի, իրենց արդյունքի մի խոշոր մասը տան իրեն:

Բնականաբար, աշխարհում այսպիսի հստակ տարբերակ երբևէ ոչ մի տեղ գոյություն չի ունեցել: Բայց դրան մոտ տարբերակներ եղել են: Օրինակ՝ խորհրդային Գուլագը⁵, որտեղ «մերկ», անսքող բռնության վրա հիմնված հարաբերություններ էին. ճամբարի շեֆը, փաստորեն, իր «վերտոխայ»-ների միջոցով իրագործում էր հենց այսպիսի շահագործման մոդել: Այժմ կարևոր խոսակցություն կա, որ, ասենք, Գուլագը և նացիստական ճամբարները չի կարելի իրար համեմատել: Այսինքն Ռուսաստանում նոր օրենք է ընդունվել, որ չի կարելի նացիզմը և խորհրդային պատմությունն իրար համեմատել, դա օրենքով այլևս արգելված է: Չի կարելի նրանց միջև հավասարության նշան դնել: Բայց երբ նայում ենք նացիստական մահվան ճամբարին և Գուլագի ճամբարին, տեսնում ենք մի հստակ սկզբունքային տարբերություն, իրոք «հօգուտ» Գուլագային ճամբարի: Նացիստական ճամբարների խոշոր մասը՝ մահվան ճամբարները, մարդկանց ոչնչացնելու համար էին ստեղծված: Այնտեղ գաղափարախոսությունը և նպատակը համընկնում էին, թեև էլի մի քիչ թաքուն էր պահվում, բայց հստակ էր վերևից եկող հրամանը, որ «դու պիտի ոչնչացնես», փոքրացնես այս բուրգը, ոչնչացնես «ավելորդ» մարդկանց՝ «թերմարդկանց»: Այսինքն կենդանի մարդկանց աշխատանքը շահագործելն ավելի քիչ շահավետ էր համարվում, քան նրանցից ստացվող ոսկե ատամները, մազերը, ոսկորների մոխրից ստացվող պարարտանյութը

⁵ «Բռնության մշակույթը. գողականություն և հարակից երևույթներ. ետխորհրդային փուլի ավարտը Հայաստանում» հարցազրույցի երրորդ մասը հասանելի է այստեղ. <https://epfarmeria.am/hy/news/culture-of-violence-interview-with-gevorg-ter-gabrielyan-part-3>

և այլն: Մինչդեռ Գուլագում երբեք չի եղել հատուկ նպատակադրում՝ մարդկանց ոչնչացնել: Այստեղ նպատակադրումը եղել է մարդկանց աշխատեցնել: Նախևառաջ նպատակադրումը նրանց մեկուսացնելն էր այս կամ այն նպատակով: Երկրորդը՝ բնակեցնել որոշակի տարածքներ, և երրորդը՝ աշխատեցնել: Եվ հիմնականում, քանի որ ստրկատիրական աշխատանքը ոչ էֆեկտիվ աշխատանք է, այդ աշխատանքը բավարարում էր միայն տեղական ճամբարի ղեկավարին՝ իր «դաշան» կառուցելուն, իր կնոջ կարիքներին և այլն: Այսինքն Գուլագում մարդիկ կատարում էին ծանր աշխատանք, բայց մեծ մասամբ՝ տուֆտա⁶: Պարզապես ճամբարը շատ դաժան տեղ էր ուտելիքի պակասի, եղանակի, հյուծիչ և անհմաստ աշխատանքի և մարդկային համարյա գազանային հարաբերությունների պատճառով: Ճամբարի ղեկավարի կարիքները բավարարելու ֆունկցիան էր առաջին տեղում, ինչպես նաև՝ մյուս «ղեկավարիկների»։ բուրգի ամեն մի ստորին մակարդակում կային էլի «կարևոր» «ղեկավարիկներ»՝ վերից վար, ներառյալ դատապարտյալների՝ զեկերի մակարդակը. իրենց մեջ էլ էին շարունակվում-ստեղծվում այդ հիերարխիաները: Եվ ամենը հիմնված էր բռնի ուժի վրա: Իհարկե, մարդասիրության դեպքեր նույնպես կային: Դրանք կային և նացիստական ճամբարում, բայց մինչև... մինչև հնոցն ընկնելը, հա՞: Հնոցի մեջ մտնելու պահից բոլորը հավասար են, բացի դրսում մնացած վերտուխայից:

Ուրեմն եղել են աշխարհում այսպիսի դեպքեր: Եվ դրանք եզակի չեն: Պոլ Պոտը⁸ և Յենգ Սարին⁹ Կամպուչիայում, գուցե արել են նույնը: Մառ Ձե Դունը⁷ Չինաստանում (այսպես կոչված «կուլտուրական հեղափոխությունը»): Երիտթուրքերը՝ հայերի հետ: Բռնության բուրգի այդ ամենամաքուր տարբերակներից է, իհարկե, ցեղասպանությունը, երբ բուրգն ինքն իրեն կոտորել է սկսում: Հին դարերում նույնպես եղել է, անտարակույս, երբ մոտավորապես այս իդեալին է մոտեցել իշխական համակարգը, երբ բռնի ուժի վրա հիմնված ալֆա որձը իր զինված ուժի, իր զորքի, իր «power»-ի,

⁶ «Տուֆտա» բառի բացատրությունը տե՛ս այստեղ. «Բռնության մշակույթը. գողականություն և հարակից երևույթներ. ետխորհրդային փուլի ավարտը Հայաստանում» հարցազրույց, առաջին մաս. <https://epfarmenia.am/hy/news/Culture-of-Violence-Interview-with-Gevorg-Ter-Gabrielyan>

⁷ Գուլագային բարքերը և դրանց կապն այսօրվա Հայաստանի հետ արտացոլվել են Գևորգ Տեր-Գաբրիելյանի Armenia 3.0 գործում (անգլերեն), 2020. <https://epfarmenia.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia> ինչպես նաև Գայանե Հովակիմյանի և Գևորգ Տեր-Գաբրիելյանի «Բռնության մշակույթը. գողականություն և հարակից երևույթներ. ետխորհրդային փուլի ավարտը Հայաստանում» զրույցում այստեղ. Բռնության մշակույթը Հայաստանում, 2020. <https://epfarmenia.am/hy/document/Culture-of-Violence-in-Armenia>

⁸ Տե՛ս Պոլ Պոտի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Pol_Pot

⁹ Տե՛ս Իենգ Սարիի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Ieng_Sary

իր իշխի միջոցով իշխել է ստրուկների վրա այնպես, որ իր հրամանը հավասարազոր է եղել ստրուկի գործողությանը: **Եվ դա շատ կարևոր է, որ խոսքը գործի է վերածվում.** այսինքն բռնի ուժը հիմնականում սպառնալիքն է, ինչ-որ իրադրության մեջ՝ վանդակի մեջ, հպատակվելուն ետ բերելու նպատակ ունի, եթե մեկն ապստամբեց, կամ դրա գուցե թվացյալ սպառնալիքը նկատվեց: Բայց հիմնականում խոսքով է բռնի այդ իշխան իրագործվում: Իսկ **ստրկային այդ մոդելը լավ չի աշխատում մարդկանց ազատության պատճառով. հրամայողի խոսքը գործի չի վերածվում ճշգրտորեն:**

Հավելյալ փիլիսոփայական մոտեցում

Դարերի ընթացքում իշխը քննարկվել է շատ տարբեր տեսանկյուններից: Մենք սկսեցինք այն քննարկել ֆիզիկական բախման երևույթից: Սակայն չմոռանանք, որ իշխը նաև անմիջականորեն կապված է տիրապետելու երևույթի հետ: Հենց power բառը երբ օգտագործվում է որպես պետության նիշ՝ «տիրապետություն» կամ «տերություն» հասկացությունները կարող են լինել լավ հոմանիշ: Բայց չէ՞ որ տիրապետելը՝ տիրելը, տարածվում է շատ տարբեր երևույթների վրա: Մարդ նախ և առաջ տիրում-տիրապետում է ինքն իրեն՝ իր մարմնին և օրգաններին: Նաև՝ իր մտքերին և հոգեբանությանը, թեև և՛ մարմինը, և՛ հոգեբանությունն ամբողջությամբ չեն ենթարկվում իր գիտակցությանը. դրանց գործունեության մի խոշոր մասը տեղի է ունենում անգիտակից և / կամ ավտոմատացված կերպով: Մարդը, սակայն, անհայտ պատճառով օժտված է նաև իր մարմնից բացի այլ սեփականություն ունենալու ձգտումով: Գուցե նախնական պատճառը եղել է մարմնի, ինքնության պաշտպանության համար ռեսուրս կուտակելը: Մարդը սովորաբար պիտի ունենա հագուստ, տանիք և ուտելիք, նաև՝ ջերմ միջավայր, որպեսզի իրեն զգա առողջ և լինի գործուն: Իհարկե, այդ ամենը կարող է իրեն չպատկանել, սակայն ապահովության կարիքը, երևի, ազդում է, որպեսզի մարդը ցանկանա հենց սեփական հագուստ և տանիք ունենալ («տանիք» ասելով, իհարկե, ծածկից ավելին պիտի հասկանանք՝ գոնե կացարան, եթե ոչ բնակարան կամ նույնիսկ տուն – նաև ջերմ միջավայրը կազմակերպելու համար): Ուտելիքը, նույնիսկ եթե իրենը չէ, երբ մարդը կերակրվում է՝ դառնում է իրենը (թեև եղել են դեպքեր, երբ մարդուն ստիպել են կերածը ետ տալ, պատճառաբանելով, որ իրենը չէր): Այսպես, գուցե պարզ կարիքներից սկսվում է սեփականության «պարը», որը դառնում է հետզհետե ծավալվող իշխի նախնական և բաղկացուցիչ մասերի շարան: Զերմությունն ապահովելու համար վառելիք է պետք, ուտելիքն ապահովելու համար՝ գոնե բնության բարիքներ, տան համար՝ շինանյութ: Սեփականության երևույթը շատ խորքային նշանակություն ունի մարդու ինքնության համար. ուշադրություն դարձնենք լեզվի մեջ սեռական հոլովի դերին և արտահայտած իմաստների փնջին: Սեփականության երևույթը

գնալով ծավալվում է. կան մարդիկ, որոնք հսկայական սեփականություն ունեն՝ բազում ձևերի: Նրանք տիրում-տիրապետում են շատ բաների: Նրանք կարող են տարբեր կերպ վարվել իրենց ունեցածի հետ, գուցե՝ ոչ լրիվ ազատորեն (ասենք, նույնիսկ քո լեզվի սեփականությունը ոչնչացնելը կարող է պատասխանատվության պատճառ դառնալ), սակայն՝ ավելի ազատորեն, քան՝ ուրիշների կամ հանրային սեփականության հետ: Այսպիսով, կարելի է ասել, որ **իշխը նաև սուբյեկտի ինքնության անընդհատ կառուցման, ճառագելու և տարածման ձգտումն է. ունենալով «բաներ», մարդն ամրապնդում է իր ինքնությունը:** Այդ «բաները» կարող են լինել և ոչ նյութական, ասենք՝ ճգնափորը կարող է բավարարվել իր ներսի՝ հոգեբանության, մտածմունքի հարստությամբ: Սակայն իր տիրապետության սահմանները՝ իր «տիեզերքը» տարածելը, դրան ձգտելը հատուկ է մարդուն, և դա է, որ կարգավորվում է հանրային **ինստիտուցիաներով** (տես նաև հետո), որպեսզի բազում այդպիսի ձգտումները գոնե որոշ չափով միմյանց հաշվի առնեն, և անընդհատ կոնֆլիկտ չլինի: Ինստիտուցիաներն այստեղ պարտադիր չէ հասկանալ որպես արդար պայմանավորվածություններ: Ի վերջո, բիրտ գերակշիռ ուժին ենթարկվելը, պայմանավորված՝ մարդու ֆիզիկական հնարավորությունների սահմանափակությամբ, նույնպես կարող է վերածվել ինստիտուցիայի այն առումով, որ բազում անգամ քեզնից ուժեղի դեմ կռվի դուրս գալու փոխարեն կարող է ընտրես ենթարկվելը: Կամ՝ ընդվզես, չնայած պարտության՝ հաշվարկելի մեծ շանսին – և այդ դեպքում կգործի ընդվզման ինստիտուցիան (տես այդ մասին ասված նաև հետո): Իհարկե, ֆիզիկական հնարավորությունները վերջնական սահմանը չեն. հոգեբանական, հոգեկան, տեխնոլոգիական, տեխնիկական, մտավոր, ցանցային, ծագումնաբանական, առողջական, սոցիալական, արտիկուլացիոն և այլ բազում չափումներ կան, որոնք որոշում են մարդու կամ ավելի բարդ սուբյեկտի իշխի չափը և այլ իշխերի հետ հարաբերվելու դեպքում՝ ստացվող արդյունքը: **Տիրապետությունը, սեփականությունը, կարողությունը և կամ իշխը կիսելը, դրանից բաժին հանելը, «համիշխելը», ուրիշի իշխին մասնակցելն այն միջոցներն են, որոնցով մարդը, այս մոտեցման տեսակետից, փորձում է լուծել անհատական ինքնության սահմանափակ լինելու խնդիրը (ինչը չլուծելու հետևանքը երևի կլիներ մարդկային քաղաքակրթության բացակայությունը) և հիմնել բարդ սուբյեկտներ, լինի դա կոլեկտիվ, թիմ, սեր, ազգ, կազմակերպություն, ընտանիք, երկիր, ցեղ, հասարակություն, տոհմ, պետություն թե համամարդկային քաղաքակրթություն:** Եթե նույնիսկ տարածության մեջ (առայժմ հիմնականում Երկրագնդի սահմաններում) անհատի իշխի տարածումը բավական անսահմանափակ է, ժամանակի մեջ այն սահմանափակված է մարդու կյանքի տևողությամբ:

Սակայն կա և հակառակ մոտեցումը՝ այն պնդումը, թե անհատական մարդն ամբողջությամբ ձևավորվում է հասարակական գործընթացների արդյունքում: Այդ մոտեցումը վերը բերված պատկերը համարում է չափազանց

անհատակենտրոն՝ լիբերալիզմի ինդիվիդուալիստական տարատեսակ: Մենք մանրամասն չենք քննարկելու այդ հակառակ մոտեցման ռադիկալ տարբերակը, որը համարում է, որ մարդը չունի ինքնակա «ներքին» ազատություն: Վուլգար սոցիալիզմի, նացիոնալիզմի, կրոնական մոտեցման, օբյեկտիվ իդեալիզմի կամ պոստմոդեռնիզմի պարադիգմներում հնարավոր է երբեմն հանդիպել նման պնդումների էլ: Սակայն ավելի հավասարակշռված, փաստարկվելի տարբերակները, կամ՝ այդ մոտեցման «ռացիոնալ հատիկները», կքննարկվեն ստորև:

Չայն դահլիճից

Այս իշխը կարող է դրական սահմանում ունենալ: Որովհետև ընդհանուր կոնոտացիան բացասական է: Եթե, օրինակ, վերցնենք ձեր նկարագրած գործընթացը՝ իշխի կամ ուժի գործադրման կամ ինչ-որ պրոցեսի միջոցով, էդ պրոցեսը կարող է հավասար պայմաններ ապահովի, կարող են կրիտերիաներ սահմանվել և այլն: Այսինքն իրադրությունը կարող է զարգանալ նորմալ ընթացակարգով կամ ուժի գործադրմամբ: Այս համատեքստում եմ ես հիմնականում նայում իշխանությանը, իշխին, իսկ ձեր ներկայացրածով այն միայն բացասական երանգ է ունենում:

2. Իշխի վերաբաշխումը

Ես պատմությունը նոր եմ սկսել, մենք հիմա կդիտարկենք իշխի շատ տարբեր դրսևորումներ, տարբերակներ: Եթե վերադառնանք բուրգին, սակայն հիշենք Նյուտոնի երրորդ օրենքը՝ չենք մոռանա, որ իշխ բոլորն են դրսևորում, ո՛չ թե միայն ալֆա որձը: Նա պարզապես այդ «մասսան» է, այդ հավելյալ «պլյուս»-ն է կուտակել, ինչու և իր ազդեցությունն ամենաակնառուն է: Բայց բոլոր մյուս վերևիները ներքևների վրա, նույնիսկ ներքևները վերևների վրա ունեն ազդեցություններ: Նրանք ունեն ցանկություններ, նրանք ունեն կարիքներ, եթե նրանք ունեն ուժ՝ ինչ-որ բան նույնպես պարտադրելու, դա կանեն: Այսինքն՝ ինչպես գրավիտացիոն ուժը՝ անկենդան մարմիններին (որպես ֆիզիկայի ուժ գումարած մասսա, ազդակ և այլն), իշխը հատուկ է կենդանի մարմիններին, ներառյալ՝ ոչ մարդկային կենդանի խմբերին: Մարդկայինի դեպքում ավելանում է խոսքը՝ մեկ, և երկրորդը՝ «ազատություն» հասկացությունը՝ կամքը: Որովհետև ոչ մարդկայինի դեպքում մենք չգիտենք, ազատության գործոնը գոյություն ունի, թե ոչ: Բայց հենց որովհետև իշխը նշանակում է կամք՝ воля, – իսկ воля-ն, ինչպես գիտենք, երկու իմաստ ունի ռուսերեն. կամք և ազատություն՝

вольная воля, – ուրեմն մարդն ունի կամք և ունի ազատություն, և դրանք, ըստ երևույթին, իրար ուղիղ համեմատական են. նա ցանկանում է ավելացնել իր ազատության տիրույթները, այսինքն՝ լինել որքան հնարավոր է ազատ: Դրա համար էլ կամայականություն բառը վոլյունտարիզմ, նշանակում է չափազանցված, չպատճառաբանված, չհիմնավորված, առանց պատճառի ազատություն: Հենց դա է բռնի ուժի չվերահսկված էությունը: Եվ կամավորն ավելի արժեքավոր է (հղեալում), քան վարձու աշխատողը, քանի որ ազատորեն է աշխատում, ո՛չ կարիքից դրդված: Սոցիալական ազատությունը, ուրեմն, եթե չափազանցված է՝ հանրության, շրջապատի կողմից չսահմանափակված, ապա այլևս իրավասու ազատություն չէ: Այսինքն կա ազատության «ոսկե տիրույթ»:

Ուրիշների շատ ազատություններ ճնշելով՝ ոմանք աշխատում են իրենց ազատությունը հաստատել որքան կարելի է լայն տիրույթի վրա: Եվ այդ այլասերված ազատությունն ինչպե՞ս է որոշվում. հենց իշխի ձևակերպմամբ. որքան դու ավելի, թվում է, երևութաբար, փոքր ես և քիչ ես, և որքան ավելի խոշոր ու մեծ է մարդկանց այն քանակը, որոնց նկատմամբ դու կարող ես իշխել կիրառել, այսինքն՝ ստիպել նրանց անել այն, ինչ նրանք այլ դեպքում չէին անի՝ այնքան իշխող մեծ է. մեծ է, ինչքան որ քո կամքն ու ազատությունն ավելի է գերակշռում շատերին, և որքան կարելի է՝ ավելի շատերին: Որովհետև «սովորական» տարբերակը մենամարտը կլիներ, չէ՞. դուք իրար հետ կմենամարտեիք, ով հաղթեց՝ հաղթեց. մեկը մեկի դեմ, ինչպես Հայկն ու Բելը: Բայց եթե դու կարողանում ես որքան կարելի է շատ մարդու իշխես, դու, ուրեմն, ավելի խոշոր ես, ազատ, ուժեղ կամքով և այլն:

Երկրորդ տարբերակը: Ես այս վերջերս էլի եմ սրա մասին պատմել¹⁰, այստեղ մի քիչ ավելի մանրամասն եմ պատմում որոշ մասեր, մյուս մասերը՝ ավելի քիչ մանրամասն. չէ՞ որ իշխի բաշխման այս տարբերակները շատ հայտնի բաներ են: Ի՛նչ է այստեղ տեղի ունենում: Նախ՝ կա երկու վտանգ՝ բուրգային համակարգին սպառնացող: Մեկը՝ ներսից, մյուսը՝ դրսից: Դրսից հարձակվում են, որ քեզ քանդեն, ներսից՝ ապստամբում են: Այս կամ այն չափի կոպիտ ձևով: Այս կամ այն չափի բռնի ձևով. դիմադրում են, ապստամբում են և այլն:

Բայց ի՛նչ է տեղի ունենում. եթե բուրգի ստեղծվելուց հետո մի քիչ ժամանակ այն ստացիոնար, կայուն բնույթ է կրում՝ այս համակարգը, այս ալֆա որձը սկսում է կուտակել: Իր «քսակը» մեծանում է: Եվ որքան

¹⁰ Տե՛ս «Մասնակցայնություն և թափանցիկություն» ելույթը և տեքստը այստեղ. <https://epfarmenia.am/hy/video/Gevorg-Ter-Gabrielyan-Participatory-Transparency-31May-2021>

իր «քսակը» մեծանում է, այնքան իր ստորին, իրենից անմիջապես ներքև գտնվող «վերինների» «քսակիկները» նույնպես մեծանում են: Այսինքն՝ որքան էլ ամբողջ հասարակությունը շահագործման ենթարկվի, եթե քիչ թե շատ ստաբիլ ժամանակաշրջան է ապրում, սկսում է բարիք կուտակել: Որը «ծորում է» նախ և առաջ դեպի վեր, բայց դեպի վեր գնալով, ուզած-չուզած՝ այն նաև ճանապարհին մի քիչ «նստվածք է տալիս» կամ «կաթում է» ներքև: Եվ երկրորդ մակարդակում ստեղծվում են «քսակիկներ»:

Իրենք, օրինակ, օլիգարխներն են: Իրենք փաստորեն նրանք են, ովքեր նախևառաջ ալֆա որձի հրամանները կատարող են, բայց արդեն մի քիչ չափից դուրս շատ ուժեղ են: Եվ մենք գիտենք, որ ալֆա որձը սովորաբար, պատմականորեն շատ ավելի է վախենում պալատական հեղաշրջումից, քան ապստամբությունից: Որովհետև ապստամբությունը մեծ մասամբ օլիգարխներին էլ ձեռնտու չէ, իսկ պալատական հեղաշրջումը շատ հաճախ նրանց ինչ-որ չափով ձեռնտու է, որովհետև մտածում են. «Այս ամենամեծ քսակը (ներառյալ իշխը) վերցնենք՝ մեր միջև բաշխենք»:

Մյուսը դրսից հարձակումն է: Դա էլ շատ թանկ միջոցառում է՝ պաշտպանվել դրսից հարձակումներից, շարունակելով պահպանել քո շահագործողական համակարգը: Ի՞նչ է անում խելոք ալֆա որձը: Այսինքն՝ անխելքը ոչինչ չի անում, արդյունքում օլիգարխներն իրեն «զցում են», և ամեն դեպքում ստեղծվում է իշխի բաշխման հաջորդ մակարդակը, որը կարելի է անվանել «կլոր սեղան» կամ խունտա (хунта): Եթե իրեն զցեցին՝ իրենք գալիս են նստում են այդ «սեղանի» շուրջ. իրենք են խունտան: Եթե ինքը խելոք գտնվեց՝ ինքը բարի կամքով համակարգը դարձնում է, կուպիտ ասած, սահմանադրական միապետություն: Այսինքն՝ իր իշխի մի մասը տալիս է ընտրյալների մի խմբի, բաշխում է իշխը նրանց միջև, ինքը շարունակում է մնալ նախագահ, կամ ինչ-որ մեկը դառնում է նախագահ: Եվ ահա այս համակարգը դառնում է ամենամանարդար իշխի՝ դեպի արդարություն վերաբաշխման առաջին մակարդակը: Իշխի վերաբաշխման առաջին մակարդակը քիչ քանակությամբ բայց մեկից ավելի սուբյեկտների՝ իշխ ունենալն է: Մնացածները բուրգի ներքևում, էլի տարբեր ձևի են դասավորվում: Ոմանք իշխ կունենան՝ շատերը չեն ունենա: Գուցե շահագործողական համակարգը մնա համարյա նույնը, կամ գուցե ավելի «բարի» դառնա, բայց ընդհանուր առմամբ սա արդեն պրոգրեսիվ զարգացում է:

Բնականաբար, իշխի վերաբաշխման արդեն հաջորդ մակարդակը ժողովրդավարության այս կամ այն տարբերակն է, երբ ընտրական իրավունք են ստանում, գոնե չափավոր: Ընտրական իրավունքը սկզբում

բոլորին չի տրվում՝ բոլոր նրանց, ովքեր այսօր, ասենք, ըստ ինչ-որ հումանիստական սկզբունքների պիտի ընտրական իրավունք ունենան: Որոշում ընդունողների այս քանակը կամաց-կամաց է մեծանում: Սկզբում դուրս էին մնում ոչ միայն նրանք, ովքեր չունեն այդ իրավունքը տարբեր պատճառներով, ասենք՝ հանցագործները, երեխաները կամ հոգեբուժական հիմնարկներում գտնվողները: Այս արտոնությունը՝ ընտրական իրավունքը, դանդաղ է ընդլայնվել: Հիշեցնեմ, որ մինչև 1975 թվականը կանայք Շվեյցարիայում չունեին ընտրության իրավունք: Սակայն կամաց-կամաց իրավունք ունեցողների քանակը մեծանում է: Ավելի շատ մարդ է ընտրում իր իշխը, այսինքն ձևավորում է «նախագահ», այսինքն՝ ժամանակավոր իշխան կամ ժամանակավոր իշխանություն:

Հաջորդ խնդիրներն են առաջանում, որոնք հիմա Հայաստանի առջև էլ կան արդեն. խնդիր, որ Շվեյցարիան է լուծում, Էստոնիան է լուծում, Իսլանդիան է լուծում այսօր. էլ ավելի մասնակցային իշխը, երբ ավելի ու ավելի շատ հարցերի վերաբերյալ որոշումների ընդունմանը ռեֆերենդումով կամ էլեկտրոնային քվեարկությամբ սկսում են մասնակցել բոլոր ընտրողները:

Սակայն համացանցային աշխարհի գալույժ իրադրությունը մի առումով չի փոխվել. նույնիսկ էլեկտրոնային աշխարհում, եթե մարդիկ երկար ժամանակ չեն մասնակցում որոշումների ընդունմանը, ապստամբում են՝ գործով կամ խոսքով: Այսօր նրանք արդեն ակտիվորեն արտահայտում են կարծիքներ սոցիալական ցանցերում: Դա նրանց իշխի արտահայտումն է: Իսկ երբ մարդ արտահայտում է կարծիքներ՝ ճիշտ, թե սխալ, հաճելի թե տհաճ՝ իշխը, որն ուզում է ընտրությունների միջոցով վերարտադրվել, պիտի այդ կարծիքներին ականջալուր լինի: Այդպես առաջանում է նաև այն, ինչն այսօր կոչվում է **պոպուլիզմ**:

3. Հոբս և Լոք. օրենք, պայման, խախտում

Չնայած պարզ է, որ իմ նկարագրած առաջին դեպքը՝ «կատարյալ» բուրգը, բռնատիրական համակարգ է, նույնիսկ տոտալիտար համակարգ է, բայց ես չեմ չարաշահի այստեղ այդ տերմինները՝ «ավտորիտար», «տոտալիտար» (ամբողջատիրական), որովհետև դրանք հաճախ խանգարում են հասկանալ իշխի համակարգային բնույթը, այսինքն՝ այն, թե ինչով են տարբերվում իշխի այս ստադիաները (իշխի՝ բուրգից դեպի ավելի հորիզոնական բաշխում) միմյանցից:

Ինչպես գիտենք, անտիկ Հունաստանում արդեն կար Աթենքի ստրկատիրական դեմոկրատիան: Դա խունտայի պես մի բան էր, բնակիչների մի խոշոր մաս չուներ իրավունք, բայց Աթենքի քաղաքացու ստատուս ունեցողն ուներ որոշում կայացնելու իրավունք: Կար նաև ֆորումային դեմոկրատիա, որի աղճատված ձևերը հենց այսօր մեր պոպուլիստական իրադրությունների մեջ ենք գտնում, երբ առաջնորդը դուրս է գալիս և գոռում է՝ «համաձայն եք», և հարյուր հազարանոց ժողովուրդը գոռում է՝ «համաձայն ենք»: Այդպես, իբր, «ռեֆերենդումը» կատարվեց:

Որոշումների ընդունման տարատեսակները և բանակցություններ

Այստեղ կարևոր է նաև հաշվառել որոշում ընդունելու տարբերակները¹¹: Բնականաբար, վերևից ներքև հրամանի լեգիտիմությունը որոշվում է կամ բիրտ ուժի առկայությամբ, կամ լեգիտիմության դաշտից ելնող այլ լեգիտիմությամբ, ասենք՝ ընտրված իշխի հրամանով: Այդ դեպքում էլ, եթե հրամանը կամայականության տպավորություն է թողնում, խնդիր է առաջանում: Ավելի մասնակցային, կոլեկտիվ որոշումների ընդունման դեպք է խունտայի կողմից կամ կլոր սեղանի կողմից դրանք ընդունելը. այս դեպքում կարող է կիրառվել քվեարկությունը՝ բաց կամ փակ, կամ, ասենք, կոնսենսուսի հասնելը, վետոյի իրավունքը, կամ էլ այլ, ավելի բարդ դեպքեր, ասենք՝ «կոնսենսուս հանած մեկ» կամ նախագահողի՝ մեկից ավելի ձայն ունենալը, և այլն: Որոշ խունտաների անդամներ ընտրված են կամ իրենց դերն այլ կերպ է լեգիտիմացված, նրանք «ներկայացուցիչ» են, պատվիրակված են, «դեսպան» են իրենց «ընտրախավի», նրա «շոշափուկ». նրանք ոչ թե իրենց անձնական՝ այլ իրենց պատվիրակածի մոտեցումն ու կարծիքն են արտահայտում:

Խունտայի բարձրագույն օրինակ է ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը:

Քվեարկությունը կիրառվում է նաև էլ ավելի լայն մասսաներին որոշում ընդունելու գործընթացի մեջ ընդգրկելու դեպքում: Քվեարկության տարբերակ է նաև հանրաքվեն: Կան նաև որոշում ընդունելու ավելի բարդ, քիչ տարածված ձևեր, ինչպես, օրինակ, «ադիզական կոնսենսուսը»: Ըստ ավանդույթի, ադիզների տղամարդիկ՝ ամբողջ ցեղից, բաժանվում էին եռյակների: Որոշման նախագիծը սահմանվում էր այնպես, որ լինի միայն երկու պատասխան. այո կամ ոչ: Ամեն նախնական եռյակ քվեարկում էր: Երկուսի (մեծամասնության) համաձայնությունը տվյալ եռյակի պատասխանն էր: Եռյակների պատվիրակները հավաքվում էին հաջորդ մակարդակի եռյակներում և

¹¹ Որոշումների ռացիոնալ ընդունման վերաբերյալ գոյություն ունի մի ամբողջ հարացույց «խաղերի տեսությունը»: Այստեղ չքննարկենք այդ մոտեցումը, քանի որ այն ելնում է հաշվարկային մոդելներից, սակայն թեկուզ որպես մետաֆոր՝ երբեմն այն շատ օգտակար է մարդկային որոշումների վերաբերյալ մոտեցումների ձևավորումը հասկանալու համար: «Բանտարկյալների տեսությունը» կամ «ատամն ընդ ատաման-ը» (tit for tat) շատ հայտնի և օգտագործելի առակներ են:

քվեարկում այնպես, ինչպես քվեարկել էր իրենց եռյակը: Այս նոր մակարդակի պատասխանների արդյունքը տեղափոխվում էր նոր եռյակներ՝ հաջորդ մակարդակում: Եվ այդպես, մինչև որ մնում էր երեք տղամարդ, և ինչպես նրանք քվեարկեին՝ այնպիսին էլ կլինեին որոշումը: Այս գեղեցիկ ավանդույթն օրինակ է որոշում ընդունելու արտասովոր տարբերակի, որը, իհարկե, այսօր չի կիրառվում: Այն ունի դրական և բացասական կողմեր, դրական է մասնակցայնությունը, բացասական է այն, որ, ի վերջո, վերին մակարդակի եռյակում քվեարկողը կարող է խաբել և քվեարկել ոչ այնպես, ինչպես իր եռյակն է քվեարկել: Այդպիսի դեպքն անհանգստացնում է, ինչպես գիտենք, ԱՄՆ քաղաքացիներին, որոնք հատուկ քվեարկողների են պատվիրակում իրենց նահանգի քվեի վավերացումը: Բացասական է, իհարկե, նաև կանանց չմասնակցելը: Ադիգական կոնսենսուսի մյուս խնդիրն այն է, որ որոշումները միայն «այո/ոչ» պարադիգմում գտնվող հարցերի վերաբերյալ կարող են լինել: Սա նաև վերաբերում է քվեարկության այլ դեպքերին: Լավագույն ձևը, իհարկե, կոնսենսուսն է, սակայն գոյություն չունի կոնսենսուսի հասնելու՝ համընդհանուր կերպով ընդունված տեխնոլոգիա՝ ալգորիթմ. սովորաբար այն կամ ստացվում է, կամ՝ ոչ, և կոնսենսուսով որոշում ընդունելը նույնն է, փաստորեն, ինչ վետոյի իրավունք ունենալը¹²: Այստեղ էլ կարող են տարբերակներ լինել, օրինակ՝ վետոյի իրավունքից բացի կարող է լինել նաև «ձեռնպահ»-ի այնպիսի իրավունք, որի դեպքում որոշումը պարտադիր է դառնում բոլոր նրանց համար, ովքեր դրան համաձայն են, և ոչ պարտադիր՝ ձեռնպահ քվեարկողի համար: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, ինչպես գիտենք, հիմնված է կոնսենսուսի (կամ վետոյի) սկզբունքի վրա, այդ է պատճառը, որ շատ նախագծված-առաջարկված որոշումներ այնտեղ չեն ընդունվում, մերժվում են: Այդ մասին կխոսենք նաև միջազգային հարաբերությունները քննարկելիս: Կոնսենսուսի հասնելը, մանավանդ կոնֆլիկտային հարցի շուրջ՝ կոմպրոմիսային կոնսենսուսը, շատ դժվար գործ է. այն պահանջում է որոշակի նախնական աշխատանք, որը հաճախ անվանվում է «Ֆասիլիտացիա» (դյուրարարություն). ֆասիլիտացիան¹³ կիրառվում է նաև ոչ որոշում ընդունելու կարիքի դեպքում, պարզապես մարդկանց կազմակերպելու, ուսուցանելու նպատակով, երբ խոսքը ոչ թե որոշման հանգելու մասին է, այլ՝ միասին ինչ-որ բան պլանավորելու: Սակայն միասին ինչ-որ բան պլանավորելն ու հետո նաև իրագործելն արդեն բազում համաձայնության որոշումներ են իրենց մեջ պարունակում, այնպես

¹² Բանակցությունների տեսություններն առաջարկում են կոնսենսուսի (համաձայնության) գալու տարբեր մոտեցումներ: Օրինակ՝ տարազատել այն, ինչի շուրջ ավելի հեշտ է համաձայնել, և համաձայնել դրա շուրջ, եթե դա չի խանգարում և, ընդհակառակը, նպաստավոր մթնոլորտ է ձևավորում հետագայում խնդրի ավելի դժվար մասերի շուրջ համաձայնության գալու համար (տե՛ս բանակցությունների վերաբերյալ նաև ստորև):

¹³ Տե՛ս «Ֆասիլիտացիա» տեսաելույթն ու տեքստն այստեղ. <https://epfarmeria.am/video/GTG-facilitation>
տե՛ս նաև «Ֆասիլիտացիոն հմտություններ» տեսաելույթն ու տեքստն այստեղ. <https://epfarmeria.am/hy/video/facilitation-skills-Gevorg-Ter-Gabrielyan>

չէ: Բացահայտ թե իմպլիցիտ՝ ներակա: Դա նշանակում է, որ մենեջմենթը¹⁴ մարդկանց կազմակերպելը, նույնպես որոշումներ ընդունելու և ընդունեցնելու ձև է: Սակայն եթե ֆասիլիտացիան որոշումներ ընդունելու և ընդունեցնելու ձև է կոնսենսուս կառուցելու լեգիտիմության հիմքով, ապա **մենեջմենթը, թեև էլի կարող է որոշման վերաբերյալ համաձայնության բերելու միտված արարքների կարիք ունենալ, արդեն լեգիտիմացված որոշում ընդունողի առաջնորդության տարբերակներից է:** Ֆասիլիտացիան կոնսենսուս ձևավորելու նպատակով, ինչպես ասացի, շատ աշխատանք կարող է պահանջել. դա նշանակում է որոշման ձևակերպումները և դրանից հետևող գործողություններից երևակվող արդյունքները ձևակերպել այնպես, որ բոլոր շահագրգիռ կողմերը համաձայնեն: Նույնիսկ քվեարկության դեպքում ֆասիլիտացիան անհրաժեշտ է որպես նախնական աշխատանք. կարևոր է, թե ինչպես է ձևակերպվել որոշման նախագիծը: Որքան ավելի լայնորեն և հանգամանալից են նախագծի ձևավորմանը մասնակցել շահագրգիռ կողմերը՝ այնքան հավանական է, որ նրանք կընդունեն առաջարկվող որոշումը (եթե, իհարկե, իրավահավասար են, և ճնշում չկա): Սակայն կոնսենսուսով որոշումների նախագծերը հաճախ դառնում են ավելի «լողզված» և ոչ ռադիկալ: Նաև մեծ խմբերի կոնսենսուսի կամ քվեարկության հասնելը ժամանակ է պահանջում: Այդ է պատճառը, որ մեծ խմբերի որոշումների ընդունումը հաճախ նկարագրվում է որպես դանդաղ և ոչ էֆեկտիվ: Բնականաբար, միանձնյա որոշումը, որին ենթարկվում են, ավելի արագ է և էֆեկտիվ, իսկ մեծ խմբի որոշումը՝ ավելի լեգիտիմ, թեև կարող է դանդաղ լինել և ոչ շատ արդյունավետ՝ հարցը սկզբունքորեն լուծելու հնարավորության տեսակետից: Հատկապես կոնֆլիկտին վերաբերող որոշումները կարող են լինել այդպիսին, օրինակ՝ նախնական պայմանավորվածությունները՝ բանակցությունների ընթացքի փուլերի մասին: Այդպիսի դեպքերը կոչվում են «կառուցողական երկիմաստություն»: Օրինակ, Արցախյան հակամարտության հարցում Մադրիդյան սկզբունքները կառուցողական երկիմաստություն էին պարունակում. անհասկանալի էր (կամ համաձայնեցված չէր), թե երբ պիտի արվի հանրաքվեն (մինչև գրավյալ/ազատագրված տարածքների հանձնումը և փախստականների վերադարձը, թե՛ հետո) և ո՞ր ֆորմատով. միայն Արցախում, թե ամբողջ Ադրբեջանում, և ինչպես կձևակերպվի հանրաքվեի հարցը: Այս դեպքում ընդհանուր հայտարարի հանգել չհաջողվեց, իսկ, ասենք, Հյուսիսային Իռլանդիայի «Բարի ուրբաթի» համաձայնագրի դեպքում՝ ստացվեց, թեև տեքստն էլի երկիմաստ էր, և ապագան՝ անհայտ, մինչև հիմա էլ լրիվ հայտնի չէ: Ստացվեց, քանի որ կողմերը սկզբունքորեն համաձայն էին հաշտության: Եվ նույնիսկ Բրեքզիտը լրջորեն չսասանեց հաշտությունը, թեև կարող էր. ձև գտնվեց, որ խախուտ խաղաղությունը չխախտվի: Ինչպես տեսնում ենք, որոշումների ընդունումն ու բանակցությունները միմյանց

¹⁴ Տե՛ս «Ծրագրերի կառավարում» տեսաելույթն այստեղ. մաս 1՝ <https://epfarmenia.am/hy/video/GTG-project-management-part-1> և մաս 2-3՝ <https://epfarmenia.am/hy/video/GTG-project-management-part-2-3>

կապված ոլորտներ են: Դա իսկույն կապում է այս ոլորտը նաև կոնֆլիկտների լուծման, կոնֆլիկտների տրանսֆորմացիայի¹⁵, կոնֆլիկտների մենեջմենթի, դիվանագիտության և խաղաղարարության¹⁶ ոլորտներին¹⁷: Նշանակում է, բանակցությունների ընդունված տարբերակները՝ միջնորդություն, արբիտրաժ, անմիջնորդ երկխոսություն, «մակույկային դիվանագիտություն», «բարի տեղանք» (good offices) և այլն, նույնպես որոշումների պատրաստման և իրագործման մեթոդներից են: Նույն կերպ էլ՝ խորհրդակցությունները, որոնց արդյունքում միանձնյա որոշում է ընդունվում, սակայն՝ «խաղացողների» կարծիքները հաշվի առնելով, եթե ոչ բուն որոշման ձևակերպման մեջ, ապա գոնե այն իմաստով, որ որոշում ընդունողն այդ կարծիքներից տեղյակ է և ռիսկերը հաշվառում է, եթե «ոչ պոպուլյար» որոշում է ընդունում¹⁸: Իհարկե, պետք է այդ ցուցակի մեջ ընդգրկել նաև որոշումների ընդունումը դատավորի կողմից¹⁹, որը հիմնված է ա) օրենքի, և բ) տուժածի ու գ) կասկածյալի կողմերի (կամ այլ երկու կողմերի՝ վիճաբանող կողմերի) փաստարկները լսելու վրա: Դատավորի իշխը հատուկ իշխ է, և, նայած մշակույթի, այն կարող է լինել ավելի «կամայական» (իր հեղինակության վրա հիմնված) կամ՝ մինչ այդ արդեն ֆիքսված օրենքից չափազանց կախված²⁰:

Որոշումների ընդունման նախապատրաստումն իշխ է: Հասկանալի է՝ նայած, թե ինչպես է ձևակերպված որոշման նախագիծը՝ այն ավելի կամ պակաս ընդունելի է, ավելի կամ պակաս արդար և կամ հաջող է լինելու: Այդպիսով, որոշում ընդունողներին օգնողներն ունեն հսկայական իշխ: Դա նաև բյուրոկրատիայի իշխն է, հաճախ՝ իրավաբանների՝ նախապատրաստել որոշումների նախագծեր և փաստարկներ, թե ինչու՝ որոշումը պիտի լինի հենց այսպիսին: Ինչպես հայտնի է, հենց բյուրոկրատիայի այդ կարողությունը՝ իմաստը կորցնել, թաղել բազում որոշումների և ենթաորոշումների թղթաբանության և փաստաթղթաշրջանառության մեջ, իրադրությունը մղել դեպ «զեշ անվերջություն», հիմք է դարձել բազում ստեղծագործությունների՝ Դիքքընզից, Գոգոլի «Շինելից», Դոստոևսկու «Խեղճ մարդիկ» վեպից պայմանականորեն սկսած, շարունակած Սալտիկով-Շչեդրինի, Չեխովի ստեղծագործությամբ՝ մինչև Կաֆկա («Դատավարություն» կամ «Ամրոց»),

¹⁵ Տե՛ս «Կոնֆլիկտների տրանսֆորմացիա, գաղափարների պատմություն» տեքստն այստեղ. <https://epfarmenia.am/hy/document/conflict-transformation-ideas-GTG-July-2018> Տե՛ս նաև «Ներածություն կոնֆլիկտների տրանսֆորմացիայի» տեսաելույթն ու տեքստն այստեղ. <https://epfarmenia.am/hy/video/conflict-transformation-introduction>

¹⁶ Տե՛ս «Խաղաղարարություն» ելույթն ու տեքստն այստեղ. <https://epfarmenia.am/hy/video/Peacebuilding-Gevorg-Ter-Gabrielyan>

¹⁷ Մի շարք ոլորտների կապը միմյանց ներկայացված է այստեղ. <https://epfarmenia.am/hy/document/MSTA-Creative-Game>:

¹⁸ Տե՛ս այդ մասին Վարսեր Կարապետյանի հեղինակած՝ սույն գրքի հաջորդ նյութում՝ հանրային քննարկումների վերաբերյալ:

¹⁹ Տե՛ս դատական իշխանության մասին ավելի մանրամասն՝ Վարսեր Կարապետյանի հեղինակած՝ սույն գրքի հաջորդ նյութում:

²⁰ Սույն նյութի հեղինակի՝ օրենքի փիլիսոփայության վերաբերյալ հարցազրույցը հասանելի է այստեղ. <https://www.youtube.com/watch?v=OLlo6XZssBc> Հանրային հեռուստաընկերության եթերում նույն թեմայով զրույցը հասանելի է այստեղ. <https://www.youtube.com/watch?v=3Xxy2kux-gk&t=1s>

Հաշեկ, Մուզիլ և ուրիշներ, ինչպես նաև՝ աբսուրդի թատրոն և ուշ-խորհրդային գրականություն (տե՛ս, օրինակ, թեկուզ միլիցիոնների տրագիկոմիկ կերպարը «Մենք ենք, մեր սարեր»-ում)։ Իմաստի կորստյան այդ գործընթացը ներկայացվել է և՛ որպես ողբերգություն, և՛ որպես կատակերգություն, և՛ որպես տրագիկոմեդիա։ Իհարկե, բյուրոկրատիայի այդ ուռճացման շնորհիվ անձնական և կոլեկտիվ մեղքի թոթափումը թղթային ձևակերպումների տոննաներում հանգեցրել է նաև այնպիսի իրադրությունների, ինչպիսին նացիզմն էր մահվան իր ճամբարներով (Էյխմաննի ֆենոմենը) և խորհրդային Գուլագը։ Բյուրոկրատիայի դրական դերը, այն, որ բյուրոկրատիան պետականության հիմնասյունն է, դիտարկել է Մաքս Վեբերը²¹, սակայն այդ «հիմնասյան» հնարավոր այլասերումը նույնպես պետք է հաշվի առնել։

Այդ իշխը մաս է **իրականության սոցիալական կառուցման**, ինչը մենք կդիտարկենք ստորև, և նրա մի քանի դեպքերն ունեն անուններ։ Օրինակ, կա «**շրջանակը ձևակերպելու**» իշխ. այն դեպքն է, երբ որոշումների տարբերակները կարող են դիտարկվել միայն որոշակի շրջանակի ներսում, բայց ոչ դրանից դուրս։ Օրինակ, եթե պիտի որոշվի՝ հին արժեքավոր շենքը քանդել, թե ոչ, հաշվի են առնվում, ասենք, այդ շենքը նորոգելու հետ կապված ծախսերը՝ վերսուս դրա տեղում նոր շենք կառուցելուց սպասվող եկամուտը, իսկ քաղաքային պլանավորման, ժողովրդի հիշողության և նման խնդիրները դուրս են մնում շրջանակի սահմաններից։ Նույն կերպ, գոյություն ունի «**օրակարգը ձևավորելու**» իշխ, երբ, օրինակ, այն պահին, երբ թշնամին հարձակվում է՝ փոխանակ քննարկեն, թե ինչ անեն այդ առիթով, քննարկում են մի որևէ անկարևոր հարց, ասենք՝ արդյոք հատուկ թռչակ նշանակել վաստակավոր վարորդներին, թե ոչ։ Քանի որ օրակարգը ձևավորվել է ըստ աշխատակարգի՝ այն ձևավորողն իշխ ունի և որոշում է՝ ընդգրկել հավելյալ կամ կարևոր հարցեր նրա մեջ, թե ոչ, - իսկ մնացյալները, հետևելով աշխատակարգին, ռիսկ չեն անում այն խախտել, եթե միայն «շեֆն» ինքը դա չի անում։ Սրանք իշխի բավական անտեսանելի և, թվում է, լեգիտիմ ձևեր են, դրանք հաճախ արդարացվում են օրենքը, ավանդույթը պահպանելու նպատակով, կարիքով, իշխի՝ պետության և այլն հեղինակությամբ, ինչպես նաև՝ այն էֆեկտով, երբ «թագավորին խաղում է շրջապատը», այսինքն շրջապատը վարվում է «պապից ավելի կաթոլիկ» կերպով՝ ստրկամտորեն (կամ շահից ելնելով) ենթարկվելով «թագավորին» նույնիսկ ավելի մեծ հարցերի շրջանակում, քան պարտավոր է, նույնիսկ եթե «թագավորը» «մերկ է»։ Այս երևույթն արտահայտվում է, օրինակ, նաև նրանում, որ, երբ քննարկում են, թե ինչու՝ Նիկոլ Փաշինյանի ուժը ստացավ մեծամասնություն պառլամենտական ընտրություններում 2021 թ. հունիսին, 44-օրյա պատերազմը տանուլ տալուց հետո, բազում գործոններ հաշվի առնելով հանդերձ հաշվի չեն առնում **պարզապես իշխի գործոնը**։ Օրինակ, հաշվի են առնում, այսպես կոչված, **ադմինիստրատիվ ռեսուրսը**՝ իշխի օգտագործումը մինչև ընտրարշավը կամ ընտրությունների ընթացքում՝ որոշ

²¹ Տե՛ս Մաքս Վեբերի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Max_Weber

մարդկանց դրդելով շահից ելնելով (կամ շահը՝ աշխատանքը, եկամուտը կորցնելու վախից ելնելով) քվեարկել իրենց օգտին: Հաշվի են առնում **բացասական քվեարկումը**²²՝ այն, որ մյուս խոշոր մրցակիցները չունենին բավարար չափով հեղինակություն: Սակայն հաշվի չեն առնում պարզապես իշխի գործոնը. այն, որ ցանկացած երկրում որոշակի իշխ հավանական է, որ քվեների որոշ տոկոս ստանա՝ պարզապես քանի որ այն իշխն է: Այսինքն ժողովրդի մի մաս քվեարկելու է հօգուտ ցանկացած ներկայիս իշխի, եթե այն ընդհանրապես մասնակցում է ընտրությունների, պարզապես որովհետև իշխն ունի հիպոնոսացնելու և որոշ մարդկանց իրեն սիրեցնելու հատկանիշ, նույնիսկ եթե այդ մարդիկ այդ իշխից ոչ մի անձնական օգուտի սպասելիք չունեն: Թե որպիսին է այդ տոկոսը՝ անհայտ է, սակայն կարող է հետազոտվել: Գուցե դրա պատճառը հպատակությանը սովոր լինելն է, գուցե՝ ժողովրդավարության էությունը չհասկանալը (ինչպես կարող է լինել, որ տվյալ անձը երեկ «թագավոր» էր, այսօր՝ դառնա «ոչ ոք»), գուցե՝ պետականությունն ամուր պահելու ցանկությունը: Ինչևէ:

«Շրջանակային» իշխը, «օրակարգը ձևավորելու» իշխը և այլ նման լեգիտատական (տե՛ս այս հասկացությունը բացատրված հետո) մախիանցիաները հաճախ հաշվի չեն առնվում դիտորդի կամ «հպատակի» կողմից, մինչդեռ հավելյալ իշխ են տալիս որոշելու համար՝ ինչպիսին կլինեն որոշումները և, դրանից ելնելով, հասարակության կամ որոշմանը ենթակաների ապագան:

Իրականում, ավաղ, արդար որոշումների ընդունման և, այդպիսով, լեգիտիմացման տարբերակները, ինչպես վերը տեսանք, շատ չեն: Եվ նրանք ունեն թերություններ: Օրինակ, մեծամասնական քվեարկությունը, հայտնի է, դուրս է թողնում փոքրամասնությանը, եթե փոքրամասնության շահերը հատուկ կերպով հաշվի չեն առնվում: Նաև քվեարկությունը կարող է ճիշտ որոշումը խափանել: Ինչպես հայտնի է, այդպես, ժողովրդավարական պրոցեդուրաների և ներիշխական կոմպրոմիսների միասնական գործարկման արդյունքում, ժամանակին իշխի եկավ Հիտլերը:

Եթե մարդիկ կարողանան որոշումների լեգիտիմացման այլ տարբերակներ հայտնագործել, մարդկության զարգացմանը հստակորեն հավելյալ զարկ կտրվի: Գուցե փորձենք: Սա կարող եք դիտարկել որպես ստեղծագործական առաջադրանք:

Տարբեր դեպքեր են եղել տարբեր ժամանակներում: Սակայն, ի վերջո, միայն միջնադարից հետո՝ լուսավորչական դարաշրջանում իշխի վերաբերյալ ստեղծվեց տեսական ավելի խորը բացատրությունը, այն, ինչ ես հիմա պատմում եմ: Ես պատմում եմ, իհարկե, էլի քիչ թե շատ ժամանակակից լեզվով վերաձևակերպված, բայց ասածիս ակունքում Ջոն Լոքի²² և Թոմաս Հոբսի²³ պատկերացումներն են: Այս երկուսը հիմնադրեցին

²² Տե՛ս Ջոն Լոքի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/John_Locke

²³ Տե՛ս Թոմաս Հոբսի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Thomas_Hobbes

իշխի ժամանակակից հասկացությունը և նրա գլխավոր լծակներից մեկի՝ նոմոսի՝ խոսքի և օրենքի, որոնք իրար շատ ուժեղ կապված են, խոսքի և կանոնի՝ իշխին առնչվող ժամանակակից պատկերացումները:

Նրանք հիմնադրեցին իշխի՝ իմ նշած տարատեսակների և նրա գլխավոր լծակի՝ օրենքի նկատմամբ երկու գլխավոր և հակադիր մոտեցումները, որոնցով մենք մինչև այսօր առաջնորդվում ենք, որոնց մեջ մենք «լողում» ենք, որոնց վերաբերյալ հենց հիմա աշխարհով մեկ անընդհատ դեբատներ են տեղի ունենում: Մարդիկ գուցե չեն էլ պատկերացնում, որ իրենք դրա մասին են խոսում, դա են քննարկում, բայց փաստը մնում է փաստ:

Շատ պարզեցված՝ ի՞նչ նկատի ունի Թոմաս Հոբսը, երբ ասում է, որ սկզբում կար, այսպես ասած, «բնական» իրադրություն, երբ բոլորը բոլորի դեմ պատերազմի մեջ էին... Եվ դա գալիս է նաև վերը հնչած հարցին մի քիչ ի պատասխան. որովհետև իշխը միշտ արդարացվել է հենց դրանով, որ, համենայն դեպս, կարգավորված վիճակ է, կազմակերպված վիճակ է պահպանում, բոլորը բոլորի դեմ պատերազմի վիճակում չեն: Մարդիկ իրար չեն ուտում, իրար չեն հոշոտում փողոցում հանդիպելիս:

Թոմաս Հոբսն ասում է, երբ «բոլորը բոլորի դեմ» պատերազմի վիճակը վերացավ, որովհետև ալֆա որձը բոլորին հաղթեց և ի՞նքը դարձավ գլխավորը՝ ստեղծվեց Լևիաֆանը՝ Ղեբիափանը: Այսինքն՝ պետությունը - իր բոլոր ծառայողներով, որոնք այդ Ղեբիափանի շոշափուկներն են, որ ամեն տեղ տարածվում են: Դա բյուրոկրատիան է և պետական ապարատի՝ իշխի ամեն ելուստը, ներառյալ՝ օրենքը, որ ամեն տեղ հասնում է, ողջ երկրի, ողջ հասարակության ամեն ծակուծուկ: Հոբսն ասաց. ինչը որ օրենքն է՝ ճիշտ է. դուք պարտավոր եք ենթարկվել այն օրենքին, որը կա: Եվ դա ասվում է ո՛չ միայն բռնատիրական հասարակարգի մասին, որովհետև Հոբսի համար այդքան կարևոր չէ, Ղեբիափանը բռնատիրական է, թե՛ ոչ. Հոբսն ուրախանում է, ցնծում է, որ վերջապես մարդիկ դուրս են եկել այդ «բնական վիճակից»: Դա ասվում է ընդհանրապես. եթե օրենքը կա՝ կապ չունի, արդար է, արդար չէ, քեզ դուր է գալիս, թե դուր չի գալիս, - պիտի ենթարկվես:

Իսկ ի՞նչ է ասում Ջոն Լոքը: Ինչպես նաև, ասենք, դը Թոքվիլը, Ռուսոն և այլք: Նրանք ասում են. մարդիկ կնքում են (իրականում թե իրենց պատկերացումներում, էքսպլիցիտ թե իմպլիցիտ) «սոցիալական կոնտրակտ», պայմանագիր. նրանք պայմանավորվում են, թե ի՞նչ է օրենքը, ո՞րն է այն, թե ո՞նց է իշխը կազմավորվում և այլն:

Պետք է լավ հասկանալ, որ մենք ապրում ենք պայմանական (կոնվենցիոնալ), պայմանավորվածությունների վրա հիմնված աշխարհում: Օրինակ, ժամանակն ավանդաբար, շումերա-բաբելոնյան ժամանակներից, չափվում է վայրկյաններով, իսկ թե ինչ է վայրկյանը, և ինչպե՞ս է այն չափվում ֆիզիկական աշխարհում՝ գիտնականները հավաքվում և որոշում են. վերջերս նրանք փոխել են այդ չափումը, այսինքն ոչ թե վայրկյանի չափը, այլ ֆիզիկական այն երևույթների վրա հիմնվելը, որոնց այն համապատասխանում է: Գրեթե ոչ ոք չի ստուգելու անձամբ, որ երկրագունդը կլոր է, սակայն մենք պայմանավորվել ենք դրան հավատալ: Եվ երբ դրան չհավատալու շարժում է սկսվում՝ հեշտ չէ նրա մասնակիցներին համոզել, որ այն, այնուամենայնիվ, գնդաձև է, թեկուզև ոչ համաչափորեն կլոր, սակայն՝ փոքր-ինչ ձվաձև:

Եթե այդ սոցիալական կոնտրակտը խախտվում է (բայց նայած ում տեսակետից, հա՞), ապա մարդը՝ քաղաքացին, իրավունք ունի փոխելու սոցիալական կոնտրակտը: Դա նշանակում է, ասենք, դուրս անել վատ իշխողներին: Դա նշանակում է, – եթե ընտրությունների համակարգը չկա կամ չի աշխատում, – ապստամբության իրավունք: Եվ ի վերջո դրան հղում է կատարվում Մարդու իրավունքների հռչակագրի տեքստում: Ոչ որպես հողված, բայց, թեկուզ մի քիչ անորոշ, դա արտահայտվեց նախաբանում՝ պրեամբուլում: Ընդ որում՝ էլի քաղաքական պատճառներով. որովհետև ապագադուրացման պրոցեսներն էին տեղի ունենում, և հռչակագիրն ընդունողներն ուզում էին, որ այն վավերացվի, ընդունվի նաև այդ նորաստեղծ պետությունների կողմից:

«...նկատի առնելով, որ անհրաժեշտ է, որպեսզի մարդու իրավունքները պաշտպանվեն օրենքի ուժով, նպատակ ունենալով ապահովել, որպեսզի մարդը հարկադրված չլինի դիմելու բռնության ու ճնշման դեմ ուղղված ապստամբության՝ որպես վերջին միջոցի ... Գլխավոր ասամբլեան հռչակում է մարդու իրավունքների սույն համընդհանուր Հռչակագիրը որպես նշաձող, որին պետք է ձգտեն բոլոր ժողովուրդներն ու պետությունները...»:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

Օրենքի հանդեպ Հոբսի և Լոքի մոտեցումներում կա սկզբունքային տարբերություն: Մեկն ասում է. ինչպիսի օրենք էլ լինի՝ դու պարտավոր ես ենթարկվել, այլապես «կստիպենք»: Ղեբիափանը կստիպի և ճիշտ կանի: Մյուսն ասում է. եթե օրենքն անարդար է՝ դու իրավունք ունես այն փոխել, և եթե, այսպես ասած, պաշտոնական մեխանիզմներով հնարավոր չէ,

դու իրավունք ունես ապստամբության, դու իրավունք ունես ուժի դիմելու՝ օրենքի տառը «խախտելու» հանուն էության: Չէ՞ որ օրենքը խոստանում է լինել էությանը՝ արդար:

Մեր կյանքում ինչպե՞ս է դա տեղի ունենում: Կան օրենքներ, որոնց մենք ենթարկվում ենք հաճույքով: Կան օրենքներ, որոնց համաձայն չենք, բայց ենթարկվում ենք: Կան օրենքներ, որոնց դեմ մարդիկ պայքարում են լեգիտիմ միջոցներով՝ որպեսզի փոխեն: Եվ կան օրենքներ, որոնց դեմ մարդիկ պայքարում են «ոչ լեգիտիմ (կամ լեգիտիմության՝ տվյալ արժեքային շրջանակից դուրս գտնվող)» միջոցներով դրանք փոխելու համար, ասենք՝ ահաբեկչությամբ, ապստամբությամբ և այլն: Եվ այդ քննարկումը, կոմպրոմիսի հասնելու այդ ջանքը մարդկանց ուղեղի մեջ անընդհատ, ակտիվորեն տեղի է ունենում. դու համաձայն ես հիմա ենթարկվել, թե՞ դու ապստամբելու ես:

Ե՞րբ են մարդիկ ապստամբում: Բուրգային շահագործողական համակարգի պարադիգմի մեջ մնալով ասեմ, որ համարվում է, որ եթե մարդիկ չեն ապստամբում, ուրեմն ամեն ինչ կարգին է: Իրենք գոհ են, համաձայն են այդ կոմպրոմիսին (փոխզիջմանը), հարմարված են, ադապտացված են: Այսինքն՝ ի՞նչ վիճակի դու պիտի հասցնես մարդկանց, որ նրանք ապստամբեն: Նրանք չեն ուզում ապստամբել, որովհետև դա ստաբիլության բացակայություն է նշանակում, անդրադառնում է եկամտի վրա, ֆիզիկապես վտանգավոր է և այլն: Ուրեմն ի՞նչ աստիճանի պիտի նեղես, որ իրենք որոշեն ապստամբել:

Այսինքն՝ ապստամբությունը քիչ պատահող դեպք է: Եվ այդ առումով, մեծ մասամբ, օրենքը լավն է թե վատ՝ մարդիկ ենթարկված են: Բայց եթե մարդկանց մեծամասնության տեսակետից այդ վատ օրենքների քանակը շատանում է, իրենք որոշում են ընդվզել: «Վատ» օրենք, ընդամին, կարող է լինել ինչպես թղթի վրա «լավ»-ը թվացող օրենքը, որը չի աշխատում, այդպես էլ պաշտոնապես ձևակերպված և աշխատող անարդար օրենքը:

Սա է Հոբսի և Լոքի մոտեցումների գլխավոր տարբերությունը. ինչպե՞ս է մարդը կողմնորոշվում օրենքներում: Նույնը՝ նաև միկրո մակարդակում: Ասենք՝ գիշեր է, կարմիր լույս է, դու կանգնում ես, դատարկ է փողոցը, չկա տեսախցիկ, մարդ, ոչ մի ոստիկան չի տեսնելու՝ դու կանգնելու՞ ես, թե անցնես: Կամ՝ աղբը դուրս գցելը՝ սխալ տեղում: Կամ ամրագոտին (չ)ամրացնելը: Կամ, ասենք, կատուների, շների նկատմամբ դաժան վերաբերմունքը: Այդ բոլոր հարցերը մարդու ուղեղի մեջ այդ որոշման հետ են կապված. նա ընդունում է օրենքը, ի՞նչ աստիճան, մինչև ե՞րբ, որքա՞ն պետք է ենթարկվել, որքա՞ն ոչ:

«Ետաքրքիր ֆենոմեն է, որ երբ Ազգային ժողովում ընդունվեց «Նաիրա Զոհրաբյանի օրենքը» կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի մասին, իմ տպավորությամբ մարդկանց մի խոշոր մասի կոպիտ, դաժան, բռնի վերաբերմունքը դեպի անտուն կենդանիները դադարեց: Թեև այն օրվանից (2019 թվականին ընդունվեց) մինչև այսօր (2021 ամառ), որքան գիտեմ, այդ նորմով, որը քրեականացնում է դաժան վերաբերմունքը դեպի կենդանիները, ոչ մեկը չի դատապարտվել: Բավական էր, որ այդ նորմն ընդունվի, և մարդկանց վարքը փոխվեց: Ես դա նկատել եմ մեր բակում: Մարդիկ շարունակեցին բողոքել, որ «շատ են այս կատուները, շները», բան, դես-դեն, – բայց նրանք այլևս վախենում էին քացով տալ, թունավորել և այլն:

Պարտադիր չէ, որ ամեն անգամ այդպես լինի, որ միայն սպառնալիքն ազդի մարդկանց վարքի վրա: Բայց դա կարևորագույն հարցերից մեկն է, որ ամեն մարդ տալիս է: Նաև՝ աշխատանքային պայմաններում, ասենք՝ շահերի բախումը²⁴: Նաև, չգիտեմ, «նապաստակի ֆենոմենը»։ «հիմա եթե կարող եմ՝ գուցե ձրի՞ օգտվեմ»: Գիտեք, որ Եվրոպայում շատ տրանսպորտային համակարգեր կային, որտեղ տոմսերը չէին ստուգում, որովհետև համարվում էր, որ մարդկանց մեծամասնությունը, բացի ինչ-որ արտակարգ իրադրություններից, միշտ կունենա տոմս: Նրանք ելնում էին մարդկանց վարքին, վարքային մշակույթին, արժեքային համակարգին վստահելու դրույթից: Բայց, բնականաբար, երբ հետպատերազմյան՝ Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած՝ տնտեսական վերելքի տարիներն անցան, մեծ քանակությամբ մարդիկ դադարեցին տոմս գնել: Միայն իրենց հարգող մարդիկ, հիմնականում՝ միջին դասն ու միջին տարիքն էր շարունակում տոմս գնել. այդ դասի / տարիքի մարդիկ ուղղակի կամաչեին «նապաստակություն» անել, բռնվեին՝ շատ ամոթ էր, բայց չբռնվեին էլ՝ իրենց խղճից կամաչեին: Նույնիսկ այն մտքից, որ կողքի ուղևորը կարող է կասկածել, որ իրենք տոմս չունեն, իրենց շատ վատ կզգային: Որոշ դեպքերում մշտական տոմս ունեցողները, մտնելով տրանսպորտ, այն հանում-ցույց են տալիս մյուս ուղևորներին և ասում. «Մշտական է»: Կամավոր կերպով՝ հասարակությանն են դարձնում իրենց հսկիչը:

²⁴ Շահերի բախումը մեկ մարդու ուղեղում տեղի ունեցող բախումն է իր հիմնարկի / ինստիտուցիայի (որի անդամ է, որում ներգրավված է ինքը) արժեքների և իր անձնական շահի միջև: Այդ բարդ երևույթը գրեթե չի հասկացվում Հայաստանում այսօր: Դրա վերաբերյալ ԵՀՀ-ն շուտով կիրապարակի հատուկ տեքստ: Առայժմ կարելի է ծանոթանալ հետևյալ հրապարակման մեջ շահերի բախման քննարկմանը. <https://youtu.be/mj6Y9bk1S1U>

Իսկ երիտասարդությունը, ուսանողությունը, բոհեմը, միգրանտները, փախստականները և այլք պարզապես դադարեցին տրանսպորտի տոմս գնել: Երիտասարդների այդ վերաբերմունքը նաև պայմանավորված էր պետության նկատմամբ վստահության անկմամբ. նրանք այլևս չէին ցանկանում իրենց փողը տալ պետությանը, քանի որ վստահ չէին, որ այն ճիշտ է ծախսում այդ եկամուտը: Մասսայական այդ «նապաստակության» պատճառով սկսեցին տրանսպորտային ճգնաժամեր առաջանալ: Կամաց-կամաց սկսեցին ստուգիչ սարքեր տեղադրել, որովհետև այնքան շատ էին «նապաստակները», որ տրանսպորտի շահույթն այլևս չէր հերիքում, և տրանսպորտի անվտանգության խնդիր էր ստեղծվում:

Մեր ամբողջ հասարակությունը (նկատի ունեմ՝ Արևմուտքն էլ, մենք էլ, շատ ուրիշներն էլ) հիմա շարժվում է դեպի անվտանգության խնդրի ավելի ընդգծումը²⁵, ինչը նշանակում է ավելի քիչ վստահություն²⁶, և հակառակը. ավելի քիչ վստահության պատճառով ավելի է սրվում անվտանգության հարցը, այն դառնում է թանկ, և որպեսզի այն էժանացնեն՝ բոլորի՛ն են դադարում վստահել, ո՛չ թե միայն հատուկեներին, ինչը փոխում է վստահության արժեքի ուժգնությունը, քանի որ եթե քեզ չեն վստահում՝ դու է՛լ չես վստահում:

Ձայն դահլիճից

Կենդանիների հանդեպ դաժան վերաբերմունքի մասին օրենքի հետ կապված. դուք ասում եք, որ, չնայած այն չի կիրառվում, բայց, կարծես, հասարակությունը որոշակի չափով փոխեց իր վարքագիծը. ինձ թվում է, նաև օգնեցին հասարակական քննարկումները, դիսկուրսը, որ սկսեց ծավալվել այդ թեմայի շուրջ: Սկսեցին քննարկել, որքանով է նորմալ այդ վարքագիծը, որքանով՝ ոչ, դա նույնպես ազդում է, որ մարդը ձեռնպահ մնա ինչ-որ բան անելուց: Այդ առումով քննարկումները կարևոր են:

Անպայման: Իհարկե, հասարակական փոփոխությունների վրա դու տարբեր ձևերով ես ազդում: Բայց, ասենք, մեր բակի դեպքում ինձ չի թվում, որ այդ մարդիկ, որոնք կոպիտ էին վարվում կենդանիների հետ, շատ են ֆեյսբուք նայում: Միանգամից դադարեցին կոպիտ վարվել:

²⁵ Տե՛ս դա քննարկված նաև սույն գրքի՝ Նաիրա Մկրտչյանի հեղինակած նախորդ տեքստում՝ վերահսկողության խնդրի առնչությամբ:

²⁶ Վստահության ճգնաժամի մասին տե՛ս նաև «Ինչպե՛ս դիմակայել ինֆորմացիոն հոսքի տարափին» տեսակյութն ու տեքստն այստեղ. <https://epfarmeria.am/hy/video/how-to-withstand-information-flow> ինչպես նաև «Պետությունը թվային աշխարհում» տեքստը (գլուխ 3, էջ 8) այստեղ. <https://epfarmeria.am/hy/document/Creative-Game-State-in-the-Digital-World-2021>

Շատ զարմանալի էր: Չդադարեցին, ասենք, վատ վերաբերվել նրանց, ովքեր խնամում են այդ կենդանիներին: Որ կեր ես բերում և այլն հայհոյում են, ասում են՝ «շալակի՛ քո այդ կեղտոտ բաներին ու գնա՛ ստեղից», բան, բայց կենդանիներին այլևս ձեռք չեն տալիս: Շատ հետաքրքիր է:

Իհարկե, պետք է միշտ հասկանալ, թե ի՛նչ պատճառով, ինչպե՛ս, ե՛րբ, ո՛նց է լինում օրենքի, խաղի կանոնի այդ ընդունումը: Եվ կարող է հիմա դա հետ «ֆռալ» նույնպես: Ասենք, ամրագոտիների պատմությունն ապացուցեց, որ օրենքին հետևելը կարող է լինել ժամանակավոր: Աշխարհում բազմիցս ցույց է տրվել, որ օրենքին հետևելը կարող է նահանջել: Ուրեմն՝ մի բան սխալ է այդ ամբողջ պատմության մեջ՝ ամրագոտին կոճկելը պահանջելու: Որովհետև եթե մարդաստեղծ օրենքը՝ պետության կողմից ձևակերպված, չի աշխատում՝ ուրեմն այն հակասում է մեկ այլ օրենքի, ասենք՝ հասարակական պատկերացումների, սովորույթների, վարքային մշակույթի, և եթե այն չի զինված պարտադրանքի հստակ մեխանիզմով՝ պիտի փոխվի: Նույն սկզբունքն է գործում, օրինակ, որոշ հակակոռուպցիոն ծրագրերի դեպքում. ո՛չ թե փոխել մարդկանց արժեքային համակարգը, ինչը շատ բարդ է, կամ հույսը դնել վերստուգիչ մեխանիզմների և կանոնները խախտելու դեպքում պատժվելու սպառնալիքի վրա, այլ՝ վերացնել կոռուպցիան մտղ համակարգը: Օրինակ՝ եթե առաջ անձնագրերը տրվում էին (եթե արագ էր պետք) կաշառքի դիմաց՝ դարձնել անձնագիր արագ ստանալը պետականորեն վճարվող և հարկվող արարողակարգ, միաժամանակ՝ բարձրացնելով անձնագրավարուհիների աշխատավարձը: Կոռուպցիան հաճախ սողոսկում է այնտեղ, որտեղ կա անբավարար աշխատավարձ և բավական թանկ ծառայություն, և այդ դեպքերում այն կարող է քչանալ շուկայական հարաբերությունը (ե՛րբ առաջարկի գինն ու պահանջարկի՝ մուծելիության կարողությունը բալանսավորվում են) պաշտոնականացնելու միջոցով:

Հենց դրանով է բացատրվում մարդկանց ցանկությունը՝ կոռուպցիոն պետության մեջ, թեկուզ ցածր աշխատավարձով, բյուրոկրատական դիրք գրավել. իշխող կարող է մոնետիզացվել: Ինչպես գիտենք, բիբլիական ժամանակներում և մինչև շատ հետո հարկահավաքները պատմականորեն աշխատավարձ չէին ստանում. հավաքած հարկի կանխորոշված մասը հանձնում էին՝ մնացածն իրենցն էր: Դա, իհարկե, նրանց դրդում էր շորթել մարդկանցից ավելին, քան պահանջվում է, իսկ իշխին ասել, որ պահանջվողի «առաստաղը» ցածր դնի՝ մարդիկ փող չունեն: Շատ սրճարաններում ուսանող-մատուցողները չեն ստանում աշխատավարձ, կամ այն շատ ցածր է, բայց թեյավճարն իրենցն

է և բավական գումար է կազմում: Դա էլ է, իհարկե, անարդար՝ առանց աշխատավարձի աշխատելը, սակայն կա մեծ տարբերություն հանրային և մասնավոր ոլորտներում այդ իրադրությունների միջև. պետության՝ մեր հարկերի հաշվին մարդկանց կտողը՝ կաշառք ստացողը, քանդում է պետականության, ուրեմն և՛ մեր հասարակության գոյատևման հիմքերը: Այստեղի սիմվոլիկ վնասը՝ վնասի վարակն ու հանրային վտանգն ավելի մեծ է, թեև մասնավորի դեպքն էլ հղում է «վայրի շուկայական» հարաբերություններն անհապաղ հասցեագրելուն, ուղղելուն: Եվ, իհարկե, պետությունից կորզելու կոռուպցիոն մշակույթն առնչված է պետության կողմից գործիդ համար պաշտոնապես համապատասխանաբար փոխհատուցվելու խնդրին. չի՛ կարող լինել մարդու կյանքի միջին կարիքները չբավարարող աշխատավարձ՝ և որակյալ պետական աշխատող: Եթե նա պատահաբար ապահովված չէ այլ կերպ (ասենք, ընտանիքի անդամի կողմից)՝ մեծ հավանականությամբ կողմնակի կամ իլլեգալ եկամուտներ է փնտրելու, կամ՝ պարզապես վատ աշխատի՝ աշխատի ստացածի «չափով», ինչը նույն կոռուպցիան է: Մարդը ռացիոնալ արարած է, ի վերջո՝ էներգետիկ մեխանիզմ, և «ինփոլթը» պիտի ինչ-որ կերպ համապատասխանի «առօթփոթին»: Ճիշտ ինչպես որ առանց ուտելու հնարավոր չէ երկար ապրել, այն էլ՝ աշխատելով՝ եռանդ ծախսելով, նույն կերպ էլ առանց արժանապատիվ աշխատավարձ ստանալու հնարավոր չէ լավ աշխատել: Այս իրադրությունը նման է Մոլլա Նասրեդինի պատմությանը՝ երբ էշին սովորեցնում էր առանց ուտելու ապրել: Էշը գրեթե սովորել էր արդեն, ափսոս՝ սատկեց: Որպեսզի «չսատկի»՝ մարդը դիմելու է միջոցների, և այդ միջոցներից մեկը կոռուպցիան է: Նաև այդպես է նրա ապստամբ իշխը դրսևորվում անխիղճ շահագործման դեմ: Կամ՝ արտագաղթը: Կա կարծիք, թե կոռուպցիոններն իր բնույթով խաբեբա է, որքան էլ ստանար՝ չէր բավարարվի, ուրեմն խնդիրը, մի կողմից, մշակութային է՝ պետք է «ճիշտ դաստիարակել», մյուս կողմից՝ վերահսկման և ցուցադրական պատիժների հարց է, իսկ աշխատավարձերը՝ ոչինչ, թող ցածր մնան: Այդ կարծիքը գիտականորեն հիմնավորված չէ: Եվ մշակույթը, և՛ վերահսկողությունը կարևոր են, սակայն աշխարհի փորձը ցույց է տալիս, որ դրանց պիտի գումարավի արժանապատիվ աշխատավարձը՝ տնտեսապես ճշգրտորեն հաշվարկված, այլապես համակարգն անընդհատ քանդվելու գործընթացի մեջ է ընկղմված: Արժանապատիվ աշխատավարձը հիմքն է և՛ մշակույթն ուղղելու, և՛ վերահսկման ծախսերը խնայելու: Նաև՝ վերահսկումը սիստեմատիկ և էնդեմիկ կոռուպցիայի «ետևից» երբեք չի հասնի, եթե մենեջմենթային փոփոխություններ չարվեն²⁷:

²⁷ Կոռուպցիայի մասին տե՛ս Armenia 3.0. Understanding 20th Century Armenia գրքուկը (2020), հատկապես՝ Chapter 7. Corruption schemes (էջ 95) և հետո (անգլ.). <https://epfarmenia.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia>

4. Ահաբեկում և ապստամբություն

Բայց վերադառնանք ապստամբության իրավունքին: Եվ՝ ապստամբության կարողությանը: Չէ՞ որ օրենքին չհետևելն էլ փոքրիկ ապստամբություն է: «Փոքրիկ» անհատի **անձնական իշխը** կարևորագույն հասկացություններից է: Այն շատ հաճախ չի հասկացվում, չի ըմբռնվում, որովհետև մի քիչ, ինչ-որ, «տաբուական»²⁸ բան է: Որովհետև մենք խոսում ենք անհատի կամքի ազատության իրավունքի մասին, որն, ի վերջո, եթե զարգացավ դեպի անհատական ապստամբություն՝ ծնում է ահաբեկչություն:

Ահաբեկիչների մասին ենք մենք խոսում՝ պոտենցիալ ահաբեկիչների: Այդ թեման մի քիչ տաբու է համարվում: Մանավանդ որովհետև իսլամական ահաբեկչության պատմությունը սկսվեց, և եթե չես ուզում հանկարծ անմեղ մուսուլմանների վիրավորել՝ ձեռնպահ ես մնում ահաբեկչության խորքային ազդակները քննարկելուց: Բայց պետք է լավ հասկանալ, որ «մերկ մարդը» ներկա է եղել միշտ և ամենուր:

Ցանկացած համակարգում՝ բուրգային, բռնատիրական, տոտալիտար, ժողովրդավարական, թիմային, հորիզոնական և այլն – առանձին մարդը՝ անհատը, անձնավորությունը, կարևորագույն իշխային դեր է կատարում²⁹:
Նա փորձում է իր ցանկացած ձևով իր իշխը պարտադրել համակարգին,

²⁸ Տարուն իր նախնական՝ էթնոմեթոդաբանական իմաստն ընդլայնել է և այսօր մեծ մասամբ արտահայտում է տարատեսակ իշխների կողմից պարտադրանք՝ ձև թափել, թե ինչ-որ բանը չկա, չքննարկել որոշակի թեմաներ, հետապնդում հանրայնորեն կարևոր, գաղտնիացված՝ իշխին թիրախավորող թեմաներն արծարծողների:

²⁹ Իշխը որպես անհատի ազատ կամարտահայտում ձևակերպված է, մասնավորաբար, Հաննա Արենդթի կողմից, տե՛ս այստեղ.

http://www.bibikhin.ru/vita_aktiva_hanni_arendt

Այստեղ կարևոր է նշել, որ Արենդթի կողմից իշխի՝ իշխանության, և «իրական» քաղաքականության տարբերակումը բռնությունից ունի նորմատիվ բնույթ. Արենդթը, կարելի է ասել, իշխի իդեալն է ձևակերպում, պնդելով, որ ցանկացած հարաբերություն, որում կա բռնություն՝ իշխ չէ և քաղաքականություն չէ, իսկ իշխն անհատների ազատ կամարտահայտման միավորված արտահատումն է միայն՝ ամեն պահին ազատ և բռնությունից իսպառ զուրկ, ինչպես նաև քաղաքականությունը՝ նույնպիսի՝ բռնությունից ազատ գործունեությունը՝ «իրական» (Արենդթի իմաստով, այսինքն՝ իդեալական) իշխ ձևավորելու նպատակով: Քանի որ մտածողների և հետազոտողների մեծ մասը հակված են ուսումնասիրել իշխը որպես այդպիսին՝ որպես երևույթ (իսկ իշխի՝ պատմության և իրականության մեջ դիտվող դրսևորումները լի են բռնությանն առնչություններով, ինչպես բացատրում ենք վերը), շատերը հաճախ չեն հասկացել, թե ինչ նկատի ունի Արենդթը: Իհարկե, նրա այս մոտեցումն իդեալի մասին է, որն անհրաժեշտ է, որպեսզի հասկանալի լինի, թե ինչին է ձգտում մարդկությունը՝ բարեփոխելով իշխի բաշխման մեթոդները՝ պետությունների և սոցիալական այլ կառույցների կառավարումը: Իհարկե, Արենդթի մոտեցումն իշխին նշանակում է, որ աշխարհում իրական (գրեթե) ոչ մի (համենայն դեպս՝ հարատև, հաջողակ և խոշոր հանրություն ընդգրկող) դեպք չի եղել՝ իր գերադասած իմաստով իշխի և քաղաքականության իրագործման: Նույն խնդիրը քննարկվում է նաև սույն տեքստին նախորդող՝ Նաիրա Մկրտչյանի հոդվածում:

Նա պարզապես հպատակվող չէ: Ամեն համակարգի հաջողությունը, տևականությունը կախված է նրանից, թե որքանով են անձերը հարմարվում այդ համակարգի առաջարկած իշխի տարբերակին. նրանք բանակցում են, հարմարվում, ջատագովում փոփոխություն, բախման մեջ մտնում, միավորվում իրենց ուզածին հասնելու համար կամ, վերջապես, ապստամբում, եթե համբերությունները հատավ:

Եվ սա իշխի գերագույն գլխավոր կարևորագույն ձևերից մեկն է. եթե հուսահատության հասավ կամ ֆանատիկոսային ինչ-որ պատճառ ունեցավ՝ մեկ մարդը ռուս է: Մեկ մարդը պոտենցիալ ռուս է: Եվ մենք տեսել ենք մեր հասարակությունում նույնպես և՛ ահաբեկչության դեպքեր, և՛ «պրոտո-ահաբեկչության» դեպքեր, ինչպես, ասենք, «Սասնա Շուրի ապստամբությունն» էր, որը հենց դրանով էր հատկանշական. որ իրենք ասում էին, և մինչև հիմա էլ այդ կուսակցությունն ասում է, որ եթե պետք է՝ զենքի ուժով կքշեն իշխը:

Ինչն է դրա վտանգը. այդպիսի արարքների դեպքերում կվերադառնա անարխիան, կվերադառնա «բնական վիճակը»՝ պատերազմը բոլորի՝ բոլորի դեմ: Մեկ կամ մի քանի օրինակ հերիք է, որ դա տարածվի:

Կարևոր է հասկանալ, ինչու է «բնական վիճակի» մեկ առանձին դրսևորումն այդքան վարակիչ: Եթե մարդը հանդիպում է «բնական վիճակի» թեկուզ առանձին պատահական դրսևորման (երբ իրադրությունը լուծվում է նախ և առաջ ոչ լեգիտիմ բռնի ուժի կիրառմամբ կամ դրա սպառնալիքի միջոցով), նա ստանում է մի շարք ազդակներ, ինչպես, օրինակ. «Եթե պետությունը թույլ է տալիս սա՝ ուրեմն այն թույլ է, գրեթե բացակա: Ուրեմն ուրիշներն էլ են այսպես վարվելու: Ergo՝ մյուս անգամ, եթե կարողանամ, ես էլ այսպես վարվեմ, որպեսզի հաստատեմ, որ «զրո» չեմ՝ գլուխս հեշտ ուտել չի կարելի: Նաև՝ սա, ի վերջո, փաստորեն ձև է հարցեր լուծելու»: Եվ հետո վստահությունը հասարակության և պետության հանդեպ վերականգնելը շատ բարդանում է³⁰:

³⁰ Ամեն արարք ո՛չ միայն ինքնին է նշանակալի, այլև որպես օրինակ և «վարակ». չէ՞ որ սովորույթը և օրենքը հիմնված են կրկնության վրա. եթե դադարես կրկնել օրենքին ենթարկվելը, կամ եթե օրենքը չկրկնվեց՝ չկիրառվեց այս անգամ, որպեսզի արդարություն հաղթանակի՝ այն, փաստորեն, սկսում է քանդվել շատ ավելի նշանակալի իմաստով, քան այդպիսի առանձին վերցված դեպքերն են: Իսկ մի օրենքը քանդվելիս և նույնիսկ միայն երերալիս՝ սկսում է քանդել ամբողջ համակարգը, քանի որ բոլոր ինստիտուցիաները միմյանց կապված են: Երևակայեք, ինչ կլինեն, եթե հաջորդ առավոտյան բնական օրենքը չաշխատեր, և արևը ծագեր արևմուտքում: Տե՛ս նաև հետևյալ նյութերն օրենքների, դրանց էության, խախտման և այլ հարցերի վերաբերյալ. <https://gtergab.com/ru/news/essay/the-big-project-and-its-contemporary-context/117/>

Ինչպես որ լինում է, երբ իշխային համակարգերի խոշոր անկումներ են տեղի ունենում: Ինչպես, ասենք, 1917-18 թվականներին ռուսաստանյան հեղափոխության ժամանակ էր, երբ Պետրոգրադում փողոց դուրս գալիս զգուշանում էիր, քանի որ վտանգը մեծ էր՝ որ կողոպտեն և կամ սպանեն, անկախ նրանից՝ ո՛վ ես, քաղաքական դեր ունես, թե ոչ՝ պարզապես անցորդ ես: Անիշխանությունը հենց դա է՝ երբ կողոպուտն ու սպանությունը մասսայական են դառնում: Դրա տարրերը եղան նույնիսկ Հայաստանում անկախության ընթացքում, դրա ճանապարհին, այդ մի քանի տարվա մեջ, երբ էլի փողոց դուրս գալը, համենայն դեպս՝ գիշերը, վտանգավոր էր դարձել: Դրա վտանգը բավական ուժեղ էր մոտ անցյալում՝ 44-օրյա պատերազմից հետո: Որովհետև վտանգ կար, որ լիքը զենք է գալիս Հայաստան, և ինչ ասես կարող է տեղի ունենալ: Իշխը, ինչքան էլ ինքը «ժողովրդավարանա», ամեն ինչ անում է, որպեսզի ապստամբությունը՝ անհատական լինի, թե կոլեկտիվ, – բռնի ուժի դիմող ապստամբությունը բացառվի: Դրա համար են ասում, որ լավ ժողովրդավարությունները երբեմն շատ ավելի ազատություններ են կաշկանդում, շատ ավելի թափանցիկություն են պահանջում, քան ավտորիտար համակարգերը, որոնցում դու ունես թաքնվելու տեղ: Դրա մասին հետո էլի կասեմ, ավելի մանրամասն:

Իշխն ամեն ինչ անում է, որպեսզի իրադրությունն ապստամբության չբերի: Ապստամբությունը, ի վերջո, կարող է չլինել «թավշյա»: Կամ այն կարող է չլինել, ասենք, «ընդամենը» պալատական հեղաշրջում, որը չի «ծնում» խոշոր բռնություն կամ ահաբեկչություն: Այն կարող է լինել շա՛տ բռնի և արյունալի:

Իշխն ամեն ինչ անում է, որպեսզի չհասցնի անհատին այն աստիճան, որ նա դառնա «Նաիրի Հունանյան» և գնա և սպանի իշխին: Եվ մենք գիտենք, որ ահաբեկչության շատ տարբեր տեսակներ են եղել և կան: Եվ, ասենք, ինչով են տարբերվում դրանք: Դա մի ամբողջ գիտություն է, բնականաբար: Ասենք, շատ կարևոր շրջադարձ էր, երբ ահաբեկչությունը սեփական հասարակության խնդիրները լուծելու նպատակադրումից զարգացավ դեպի համաշխարհային հարցեր լուծելու նպատակադրում: Եվ անկախ նրանից, ինչպե՛ս ենք մենք վերաբերվում ԱՍԱԼԱ-ին³¹... Շատերը դեմ են, որ նրանք ահաբեկիչներ անվանվեն... Բայց, չմտնելով

(ռուս.) և <https://www.gtergab.com/hy/news/media/thinking-aloud-about-electric-yerevan/100/> (հայերեն)

³¹ Տե՛ս Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ՀԱՀԳԲ, անգլ.՝ Armenian Secret Army for the Liberation of Armenia: ASALA) մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Armenian_Secret_Army_for_the_Liberation_of_Armenia

իրավական ձևակերպումների մեջ, արձանագրենք, որ հայ ժողովրդի ներկայացուցիչները ևս վերջին դարի պատմության ընթացքում հանդես են եկել որպես ուժ, որը համաձայն էր բռնի ուժով վնաս հասցնել ուրիշներին՝ անկապ մարդկանց, որպեսզի համաշխարհային մասշտաբով ինչ-որ բան փոխվի: Նույն կերպ և, արդեն նշեցի՝ իսլամական ահաբեկչությունը: Լրիվ այլ կարգի էր էսէռների³² և մինչ այդ՝ ռուսաստանյան այդ «народовольцы»-ների ժամանակների ահաբեկչությունը՝ 19-րդ դարի երրորդ մասից սկսած: Народная воля, Земля и воля... Դրանցը թիրախավորում էր նախ և առաջ՝ իրենց ներքին հասարակությունը: Բայց բոլոր այդ տարբերակներն ունեն կարևոր ընդհանուր հատկանիշ. որ դա անողը մարդ-ռումբն է, և որ մարդը պոտենցիալ ռումբ է: Երբեք պետք չէ դա մոռանալ: Մարդու վերջնական, ճարահատյալ իշխը դրանով է արտահայտվում: Հիշենք փայլուն ամերիկյան «Ռեգ-թայմ»³³ վեպը, ինչպես նաև բազում, ոչ այդքան փայլուն, հոլիվուդյան ֆիլմերը՝ պատանդառության մասին: «Ստոկհոլմյան սինդրոմ»³⁴ այսօր դարձել է անարդար իշխին ո՛չ միայն հպատակվելու, այլև այն, թվում է, անկեղծորեն սիրելու (և այն քանդողների գործին դեմ լինելու) ֆենոմենը բացատրող գլխավոր մետաֆորներից:

5. Ինֆրակառուցվածքային իշխ

Վերը ես նշեցի, որ ժողովրդավարությունները հաճախ շատ բարձր մակարդակի թափանցիկություն են պահանջում և ներդնում, ինչն ինչ-որ իմաստով կաշկանդում է մարդկանց ազատությունը: Հիմա թափանցիկության մասին էլ ասեմ: Որքան ավելի է հասարակությունը գնում դեպի մասնակցային կառավարման համակարգ, այնքան ավելանում է նրա այն իշխը, որն անվանվել է *ինֆրակառուցվածքային իշխ*: Կարող է նաև անվանվել *թափանցիկության իշխ*: Եթե բուրգային համակարգում բռնության իշխն է գլխավորը (ֆիզիկական բռնության, հոգեբանական կամ դրանց սպառնալիքը), ապա որքան ավելի ոչ-բուրգային, ժողովրդավարական է համակարգը, այնքան ավելի համատարած է դառնում ինֆրակառուցվածքային իշխը: Այն հարցերը, որոնք ակտիվորեն քննարկվում են հասարակություններում՝ որտեղ է ավարտվում մարդկանց

³² Տե՛ս Էսէռների մասին այստեղ.
https://en.wikipedia.org/wiki/Socialist_Revolutionary_Party
 տե՛ս Նարոդնայա վոլյա-ի մասին այստեղ.

https://en.wikipedia.org/wiki/Narodnaya_Volya

³³ Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/E._L._Doctorow

³⁴ Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Stockholm_syndrome

անձնական կյանքի privacy-ին (անձնական կյանքի գաղտնիությունը, անթափանցությունը) և սկսվում թափանցիկությունը, – լինի պսակաժահրի հետ կապված թե այլ հանգամանքների, – այդ ամենը վերաբերում է ինֆրակառուցվածքային իշխին:

Մանկուր Օլսոնն ինֆրակառուցվածքային իշխի էությունը պատկերավոր կերպով ձևակերպեց մի 25 տարի առաջ գրած իր մի շատ կարևոր հոդվածում³⁵: Պատկերացնենք Դյունայի «Վիկոնտ դը Բրաժելոն» գիրքը՝ «Տասը տարի անց»-ը: Ֆուկեի և դ'Արտանյանի պատմությունը երբ Լյուդովիկոս 14-րդը որոշում է Ֆուկեին՝ իր գլխավոր նախարարին, բանտարկել, Ֆուկեն ձի է հեծնում և արշավում է դեպի իր կղզին: Փոքրիկ կղզի է, մայրցամաքից ոչ հեռու, լեռնային, Ֆուկեն այնտեղ ամրոց է կառուցել: Եթե Ֆուկեն՝ Ֆրանսիայի ամենահարուստ մարդը, ֆինանսների նախարարը, հասնի իր կղզին, Լյուդովիկոս 14-րդը չի կարողանա նրա հախից գալ, որովհետև կղզին պաշարելը կպահանջի շատ մեծ ծախս, երկար տարիներ, և անհայտ է՝ պետական զորքը կկարողանա՞ գրավել կղզին, թե՛ ոչ: Կղզին լավ պաշտպանված է, Ֆուկեն ունի սեփական զորք:

Բայց ի՞նչ է տեղի ունենում: «Ավաղ», պրոտագոնիստը՝ հերոսը, դ'Արտանյանը, նկատում է, որ Ֆուկեն ձի հեծնեց, և ինքն էլ է ձի հեծնում ու նետվում Ֆուկեի հետևից: Եվ ի վերջո նրան բռնում է:

Լեգիտիմություն և լեգիզմ

Սա բռնատիրական իշխի իրադրության օրինակ է. մարդը թե փախավ՝ փախավ, բռնակալը նրան չի կարողանա որսալ: Սակայն եթե բռնեց, երբեմն կարող է առանց որևէ «երկրային» օրենքի վրա հիմնվելու դատ ու դատաստան տեսնել: Չէ՞ որ նրա ուժը, տվյալ դեպքում՝ թագավորի, գալիս է «երկնքից»՝ աստծոց: Բոլոր ռեժիմները, բոլոր իշխերը փորձում են լեգիտիմանալ, «արդարանալ» այս կամ այն կերպ: Թագավորական ռեժիմներն «արդարանում էին», պնդելով, որ իրենց իշխն աստծոց է՝ աստված է իրենց տոհմին իշխ կարգել: Ժողովրդավարություններն իրենց ռեժիմն ամրապնդում են ժողովրդի կամքին հղում անելով: Ավտորիտար համակարգերը կարող են օգտագործել ձևական ժողովրդավարական ատրիբուտները՝ ձևական ընտրություն և այլն, բայց նաև հաճախ ապավինում են «քարիզմային»՝ ղեկավարի՝ ալֆա որձի (դա հիմնականում որձ է) կամ ամբողջ խունտայի հեղինակությանը:

³⁵ Տե՛ս «Նստակյաց ավազակի տեսությունը» բացատրված այստեղ (Теория оседлого бандита, ռուսերեն). https://ru.wikipedia.org/wiki/%D0%A2%D0%B5%D0%BE%D1%80%D0%B8%D1%8F_%D0%BE%D1%81%D0%B5%D0%B4%D0%BB%D0%BE%D0%B3%D0%BE_%D0%B1%D0%B0%D0%BD%D0%B4%D0%B8%D1%82%D0%B0 Տե՛ս նաև «Ելուզակություն և թալան» հոդվածն այստեղ (ռուսերեն). <https://www.gtergab.com/ru/news/media/banditism-and-pillage/97/>

Բռնատիրական ռեժիմները, հաճախ՝ ասենք, հեղաշրջումների արդյունքում առաջացած, կարող են չունենալ ֆորմալ լեգիտիմացիա, ֆորմալ արդարացում – թե ինչու է հենց այս խումբը՝ խունտան կամ անձը, եկել և մնում իշխանության: Այդ դեպքում նրանք իրենց իշխան արդարացնում են «արտակարգ իրավիճակով» և իսկույն սկսում փնտրել տարբերակներ, որպեսզի լեգիտիմանան, ասենք՝ պլանավորում ընտրություններ: Եթե որևէ տարածք և հասարակություն կամ դրա մաս իշխվում է առանց իշխի լեգիտիմության շղթան վերականգնելու կամ գոնե պնդելու, որ այն ունեն, այդ իշխը դառնում է շատ խախուտ և կարող է արագ փլվել: Այս հարցերում այստեղ շատ խորանալ չի լինի, բայց կարելի է ծանոթանալ բազում գործերի, գոնե սկսած Մաքս Վեբերից, շարունակած՝ Կառլ Շմիդտով³⁶, Միշել Ֆուկոյով³⁷ մինչև Զիորջիո Ագամբեն³⁸:

Ոչ-ժողովրդավարական համակարգերի ֆորմալ լեգիտիմացիայի հնարավոր կիրառականներից մեկը *լեգիզմ*³⁹ է: Դա այն դեպքն է, երբ ռեժիմն իր յուրաքանչյուր քայլ փորձում է արդարացնել՝ ձևականորեն այն օրենքին համապատասխանեցնելով (կամ օրենքը համապատասխանեցնելով իշխի կամայական ցանկությանը): Այլ դեպքերում գործում է «իսկական» օրենքը, որը դասական մեկնաբանությամբ պիտի լինի անաչառ, այսինքն՝ «կույր»: Թե որ դեպքերում է այն այդպիսին՝ դա էլ առանձին քննարկման առարկա է:

Ինֆրակառուցվածքային իշխի դեպքում (որը պարտադիր չէ, որ լինի իդեալական իմաստով ժողովրդավարական, սակայն հաճախ մոտ է ժողովրդավարականին, քանի որ տեխնոլոգիական պրոգրես ապրող և ապրած հասարակության իշխի ձևն է – թեև Չինաստանը կարող է հակառակ օրինակ մեկնաբանվել) իրադրությունը հակառակն է. ո՛չ մի Լյուդովիկոս 14-րդ, ո՛չ մի բռնակալ չի կարող առանց դատ և դատաստանի սպանել իր որևէ հպատակին: Նա անպայման օրենքով սահմանված որոշակի պրոցեդուրաների պիտի դիմի, եթե ուզում է պատժել ինչ-որ մեկին: Սակայն փոխարենն իշխան ամեն պահի գիտի, թե հպատակը որտեղ է գտնվում. իշխից չես փախչի: Նա չունի կամայական արարքի իրավունք, սակայն նրանից նաև հնարավոր չէ թաքնվել: Հիշենք Ասանժի օրինակը⁴⁰:

Եթե ինֆրակառուցվածքային իշխան էլ արդար չէ, ինչը հաճախ հավանական է, ապա կրկին դիմում է լեգիզմի. քիչ թե շատ կամուֆլյաժ պիտի անի, որպեսզի ապստամբության հավանականությունը փոքրացնի, իբր՝ իրենք ավելի արդար հասարակություն են,

³⁶ Տե՛ս Կառլ Շմիդտի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Carl_Schmitt

³⁷ Տե՛ս Միշել Ֆուկոյի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Michel_Foucault

³⁸ Տե՛ս Զիորջիո Ագամբենի ուսմունքի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Giorgio_Agamben և այստեղ.

A Brief History of the State of Exception:

<https://press.uchicago.edu/Misc/Chicago/009254.html>

³⁹ Տե՛ս լեգիզմի մասին Armenia 3.0 գրքում (էջ 98).

<https://epfarmenia.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia> (անգլ.)

⁴⁰ Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Julian_Assange

քան կամայականություններին տրվող բռնակալն էր: Այդպիսի հասարակություններում՝ ինչպես և ժամանակակից հասարակությունների գերագույն մեծամասնությունում, անպայման պրոցեդուրա (ընթացակարգ) պիտի լինի, առանց պրոցեդուրայի մարդու հախից գալը քրեական արարք է: Թեև հաճախ պրոցեդուրան այնպես չի գնում, ինչպես պիտի գնար. պատկերացնենք, բռնակալը բռնում է մեկին և հանձնում է դատարանին: Իսկ դատարանը, որքան էլ կախված լինի օրվա բռնակալից, ունի նաև անկախ գործողության լուսանցք, ունի օրենքը, որին պիտի հղում անի: Եվ նա բաց է թողնում կամ արդարացնում է բռնակալի կողմից հետապնդվողին, ամեն դեպքում՝ այն պատիժը չի տալիս, ինչ բռնակալն էր ակնկալում: Կամ՝ հակառակը. ժողովրդավարական թույլ իշխանության դեպքում ավտորիտարիզմին աջակցող դատական համակարգը պատշաճ կերպով չի պատժում մեղադրյալներին, քանի որ իրենք այդ դատական համակարգում ներգրավվածների քաղաքական համակիրներն են, ասենք թե: Այս դեպքում դատարանը կեղծ կերպով հայտարարում է, որ ինքն անկախ է գործադիրից: Իսկ եթե իրոք ուզում է անկախ լինել՝ հաճախ գերադասում է, որպեսզի դատավարությունը բաց լինի՝ թափանցիկ, որպեսզի հանրային կարծիքը թույլ չտա, որ իր որոշման վրա ազդի գործադիրը⁴¹:

Ձայն դահլիճից

Тройка-ները:

Մեզանում, ինչպես և Սովետական Միության սկզբնական շրջանում, իշխի կողմից մեկնաբանվում է, որ դատարանը «նախկիններն» են ու բաց են թողնում, ում որ իշխն ուզում է, որ բաց չթողնեն: Тройка-ն ինչու էր ներդրվել. որովհետև սովորական, «նորմալ» դատարանը չէր աշխատելու, չէ՞, երբ առանց դատ-դատաստան էր պետք մարդկանց հախից գալ: Тройка-ն արտադատարանական օրգան է, որ հաշվեհարդար է տեսնում անցանկալիների հետ, վերադասի հրամանն է կատարում: Կարելի է ասել, որ սա *անցումային արդարադատության* այլասերված տարբերակ է՝ մարդու իրավունքներին հակասող: Նրանք, ծաղրանքով ասեմ, հենց նույն վիճակում էին, ինչ մենք՝ այսօր, երբ դատարանը չի աշխատում կամ լավ չի աշխատում: Դրա համար тройка-ներ մտցրեցին: Դա նաև ռեպրեսիաների քանակի հետ է կապված – երբ չափից դուրս շատ մարդու հախից պիտի գամ՝ դատարանը պարզապես չի հասցնում: Մեր դատարանը, գիտենք, այնքան ծանրաբեռնված է, որ, նույնիսկ չնայած վաղ սովետական

⁴¹ Ընթացակարգի հասկացությունը և դատական համակարգը քննարկված տե՛ս նաև հաջորդ.՝ Վարսեր Կարապետյանի հոդվածում:

ռեպրեսիաների ոճից հեռու է, սակայն գործերի քանակը քչացնել չի կարողանում, այն միայն ավելանում է:

Հիմա տեսնենք մեզ մոտ ինչ կմտցնեն՝ պողպատե տրոյկա-ներ, թե թավշյա, թե ինչպիսի (կատակ): Իհարկե, ոչ մի «տռոյկա» էլ չեն մտցնի: Սակայն դատական գործերի քանակը, դատավորների պակասը, մասնագետների պակասը նաև ի՞նչ են ցույց տալիս: Որ մեզանում, նախ, շատ կոնֆլիկտային հասարակություն է՝ չափից դուրս շատ գործեր են գնում դատարան⁴², և երկրորդ՝ չկան կոնֆլիկտների արտադատարանական լուծման զարգացած համակարգեր (հեղինակավոր ոչ ֆորմալ միջնորդներ, արբիտրաժ և այլն), բացի բռնությունից, ասենք՝ գողական համակարգից և այլն, որին ավելի լավ է, բնականաբար, չդիմել, և որը պիտի վերանա:

Վերադառնանք ինֆրակառուցվածքային իշխին: Այն հիմա գերիշխող իշխն է: Դու կարող ես հանգիստ լինել, որ առանց պրոցեդուրայի անարդար կերպով պետությունը քեզ երբևէ ռեպրեսիայի չի ենթարկի, բայց կարող է անարդար կերպով ենթարկել պրոցեդուրայով՝ մեկ, երկրորդը՝ կարող են ոչինչ չանել էլ, բայց նրանք կուտակում են քո մասին ամբողջ ինֆորմացիան և պետքն եկած տեղը լույս աշխարհ կհանեն: Իհարկե, փառք աստծո, Հայաստանում սա դեռ չի հասել բացարձակ տարբերակի, նաև որովհետև այստեղ տեխնոլոգիաները հետամնաց են: Բայց հավանական է, ինչ-որ մեկը նաև Հայաստանի բոլոր բնակիչների մասին արդեն ունի հսկայական քանակով տեղեկատվություն: Եվ դու ուր էլ գնաս, աշխարհի ո՞ր ծայրն էլ գնաս՝ դու, այսպես ասած, «под колпаком» ես. ամեն ինչ գիտեն. թե դու որտե՞ղ ես գտնվում, ո՞վ ես, ի՞նչ ես, ի՞նչ ես արել, ո՞ր օֆշորում է գողնո՞ղ: Պարզապես գուցե տվյալ պահին դեռ չեն օգտագործում:

Սա է ինֆրակառուցվածքային իշխը, որը հիմա գերիշխող է դառնում: Հետաքրքիր հարցեր են առաջանում, դրա հետ կապված: Օրինակ, մենք չգիտենք, թե որտե՞ղ է Վանո Սիրադեղյանը⁴³: Արդեն տասնյակ տարիներ նա Հայաստանում չէ, նա թաքնված է ինչ-որ տեղ, հուսով եմ, որ մահացած չէ, որովհետև երևի այդ դեպքում կիմացվեր: Բայց որտեղ է նա՝ մեծ մասը չգիտի: Երևի Հայաստանում կա մի չորս-հինգ մարդ, որոնք գիտեն, բայց գաղտնիքը լավ են պահում: Բայց պարզ է, որ դա միայն մե՞նք չգիտենք: Երևի թե աշխարհի բոլոր երկրներում ով ուզի՝ իշխերում գտնվողները, շատ լավ էլ գիտեն, թե նա որտե՞ղ է, որովհետև այլապես անհնար է դա

⁴² Եթե հետազոտվեր, գուցե պարզվեր, որ դա նորմալ է. իրար չեն կոտորում, փոխարենը դատարան են գնում: Հավատում են, որ պետությունը գործում է և հարցը կլուծի:

⁴³ Այս ելույթը տեղի է ունեցել 2021 թ. հուլիսին, երբ դեռ անհայտ էր, որ Վանո Սիրադեղյանը վախճանվել է:

բացատրել. մի՞թե հնարավոր է այսօրվա օրով այդպես լավ թաքնվել ինֆրակառուցվածքային իշխից:

Չայն դահլիճից

Այսինքն՝ ինֆրակառուցվածքային իշխը ենթադրում է, որ պիտի լինեն ինստիտուտներ և ընթացակարգեր, և դրանք պիտի լինեն որոշակի չափով արդար, և սակայն էլի արդյունքը կարող է լինել արդար կամ ոչ արդար որոշում:

6. Բարդ համակարգ

Արդարն այստեղ՝ իշխի տեսակետից, ես կբնորոշեի որպես **մարդկանց համաձայնություն՝ դրան ենթարկվել:** Ադապտացիայի կարողություն: Այսինքն արդարը պայմանական է, պայմանավորվածություն է: Իհարկե, մարդու բնույթին և մշակույթին՝ արդարության նրա զգացումին որոշ չափով ադապտացված: Արդարը ո՛չ թե այն է, ինչ դու ուզում ես և համարում ես արդար, այլ շատ ընդլայնված տիրույթ ունի և ավարտվում է այնտեղ, որտեղ մարդն ապստամբում է: Մինչև այդ արդար է, հա՛: Հոբսն ու Լոքն իրար մի քիչ խառնված են այս ասածումն հանդես գալիս, և բնական է՝ մարդկային հասարակության մեջ միշտ էլ խառնված են հանդես եկել: Ուժն ու արդարությունը, բռնի իշխն ու լեգիտիմ իշխն իրար հետ խառնված են հանդես գալիս իրավական ամեն ասպարեզում: Այդքանով՝ այդ: «Պիտի»: Ինստիտուտները հենց նրա համար են՝ որ զսպեն անարդարությունը: Մենք մինչ այժմ իշխի, այսպես ասած, «голая власть»՝ *մերկ իշխի* կոնտեքստում էինք խոսում: Դրա համար ես ինստիտուցիաների մասին չեմ խոսել մինչ այս: Բայց ինստիտուցիաների մեծ մասը «մերկ իշխի» համեմատ ավելի «հաջորդ փուլի» կառույցներ են, նրա շնորհիվ են ձևավորվել, իշխի «արյուն» է հոսում նրանց «երակներում»: Եվ, ինչպես լեգիզմի ֆենոմենն է ցույց տալիս, իրենց գործունեությունը նույնպես կարող է շա՛տ հեռու գնալ արդարության պահանջից:

Իշխն ինքը խոշորագույն ինստիտուցիա է, միաժամանակ՝ ամեն ինստիտուցիայում առկա «էներգետիկ դաշտ», որն այդ ինստիտուցիաների բնույթը կազմակերպող խոշոր գործոններից մեկն է: Եկեք նաև պայմանավորվենք, ինստիտուցիա ասելիս ինչ ենք հասկանում, այո՞: **Դազլաս Նորթն**⁴⁴ **ինստիտուցիան սահմանում է որպես «խաղի կանոններ»,**

⁴⁴ Տե՛ս Դազլաս Նորթի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Douglas_North

այսինքն՝ ո՛չ թե (միայն) որպես «իր», «առարկա», (շոշափելի) կազմակերպություն, այլ՝ որպես օրենքի, ավանդույթի և այլնի համաձուլվածքներ, գործունեություն ըստ որոշակի տարբեր կանոններ իրագործելու՝ մարդկային հարաբերությունների հանգույցներ: Ինստիտուցիաների հետազոտությունը նեոինստիտուցիոնալ տնտեսագիտության մոտեցման կողմից բացատրեց, թե ինչու միշտ չէ, որ մարդը գործում է ռացիոնալ կերպով (կամ՝ գրեթե երբեք չի գործում այդպես): Դա հասկանալում մեծ դեր խաղաց ամերիկահայ տնտեսագետ Արմեն Ալչյանի հոդվածը, գրված 1950-ականներին՝ QWERTY-ի (ՃՓՐՍՄՈՒԿԸ) մասին: ՃՓՐՍՄՈՒԿԸ, ինչպես գիտենք, գրամեքենայում տառերի դասավորությունն է: Երբ 1860-ականներին սկսեցին արտադրվել մեխանիկական գրամեքենաներ, դրանցում տառերը պիտի դասավորվեին այնպես, որ ամենահաճախ օգտագործվողները միմյանցից հեռու լինեին, որպեսզի լծակները, թղթին գալով, միմյանց հազվադեպ խանգարեին: Սակայն երկրորդ համաշխարհայինի տարիներին ԱՄՆ-ում արդեն օգտագործվում էին էլեկտրական գրամեքենաներ, որոնք այդպիսի խնդիր չէին առաջացնում: Նախագիծ առաջարկվեց՝ գրամեքենաների վրա տառերի դասավորությունը փոխել, հաշվարկվեց, որ դրանց սովորական՝ այբուբենին համապատասխան դասավորումը հսկայական գումարներ կխնայեր: Սակայն այդ նախագիծը տապալվեց, քանի որ այն երկարաժամկետ օգուտը, որ այդ բարեփոխումը կբերեր, ստորադասվեց այն կարճաժամկետ վնասին, որը պիտի հասցեագրվեր, որպեսզի բոլոր մեքենագրուհիները (իսկ դրանք, բնական է, -ուհի էին) ստիպված վերամարզվեին QWERTY-ի փոխարեն այբբենական դասավորությամբ ստեղծաշարն օգտագործել կարողանալու համար: Այժմյան համակարգչային ստեղծաշարերի դեպքում այդ խնդիրն այլևս գոյություն չունի, և այդ դասավորությունն այդպես էլ շարունակում է կոչվել՝ typewriter, «գրամեքենայական»: Հետաքրքիր է, որ, քանի որ հայերեն տառերը ներդրվում են անզլերեն ստեղծաշարի վրա, առաջացել է հատուկ՝ keyboard տերմինը, որը նշանակում է, որ հայերեն տառերը տվյալ դեպքում դասավորված են ոչ թե ՃՓՐՍՄՈՒԿԸ տարբերակով, այլ՝ անզլերեն ստեղծաշարի տառերին մոտավոր համապատասխանությամբ: Այդպես, ինստիտուցիան՝ սովորույթը, կանոնը, մանավանդ եթե մասսայական է, ինդուստրիալ և համատարած, հաճախ գերադասվում է պրոգրեսի նկատառումներին, որը պահանջում է նոր կանոն առաջադրել և դրա ընդունման համար արագորեն մեծ ներդրում անել, ինչին դժվար են համաձայնում՝ նույնիսկ եթե հետագայի երկարաժամկետ օգուտը շատ ավելի մեծ է լինելու: Այդպիսով պրոգրեսը նշանակալիորեն դանդաղում է, և բարեփոխումները՝ նույնիսկ նրանք, որոնք քաջ հայտնի է, որ անվերապահորեն օգուտ կտան՝ չեն արվում: **Կարո՞ղ եք արդյոք այլ նման օրինակներ քննարկել:**

Ինֆրակառուցվածքային իշխի վրա հիմնված զարգացած ժամանակակից ժողովրդավարական համակարգն ամենաբարդ համակարգն է: Այն պարունակում է իշխի բոլոր տեսակի դրսևորումները՝ տարբեր մակարդակներում: Այնպես չէ, որ այն ունի միայն ընտրովի ալֆա որձ և ներքևում՝ ամբոխը, որը նրան ենթարկվում է, և որին նա սիրաշահում է: Սա զուտ պոպուլիստական ինչ-որ բան կլիներ: Բայց կան հասարակությունում, իրոք, ինստիտուցիաները: Դրանցից որոշները կլոր սեղանի սկզբունքով են աշխատում, որոշները՝ բուրգի, ասենք՝ բանակը, որոշները, կրկնելով, ասենք, պետական իշխի սկզբունքը ավելի փոքր մասշտաբով՝ ռեֆերենդումային, պլեբիսցիտային տարբերակով և այլն: Այս համակարգը հենց իր բարդությամբ՝ ինստիտուցիաների բարդությամբ է ճկուն և հարմարվող, ադապտացվող համակարգ: Այդ է պատճառը, որ այն քանդելը շատ դժվար է ոչ միայն դրսից, այլև ներսից:

Որքան ավելի զարգացած և բարդ է համակարգը, որքան ավելի ինստիտուցիոնալիզացված է, որքան ավելի ինֆրակառուցվածքային, որքան ավելի շատ կան որոշումների ընդունման և իրագործման եղանակներ այդ համակարգում, որքան իշխերի ճյուղերն ավելի իրարից բաժանված են և տարրալուծված տարբեր ինստիտուցիաների մեջ, որքան հասարակությունն ավելի մերված է պետության հետ՝ այնքան ավելի կայուն է: Ամենապարզունակն ու անկայունը պարզ բուրգային բռնատիրությունն է՝ ստրկության վրա հիմնված: Որովհետև մարդկանց ազատության վրա իշխելու համար անհրաժեշտ կոնտրոլը՝ վերստուգիչ համակարգը, պիտի այդ դեպքում անընդհատ ուռճանա և չհերիքի / չի հերիքելու: Եթե մարդիկ ազատ չեն իրենց ստեղծագործականությունը դրսևորելում՝ նրանք իրենց կդրսևորեն տգեղ ձևերով՝ համակարգը քանդելով, ամեն դեպքում՝ դիմադրության միջոցով: Թեկուզ եթե բռնի դիմադրության չդիմեն՝ կծաղկի կոռուպցիան, գործի փոխարեն «տուֆտա» արտադրելը և այլն: Դա հաշվի առնելով, բարդ համակարգերն անընդհատ մտահոգվում են այդ հարցով՝ ոչ միայն ֆորմալ, պետական ինստիտուցիաների կանոնները զարգացնելու, այլև՝ ոչ ֆորմալ նորմերն ու կանոնները, ավանդույթները, հասարակական մշակույթը, վարքը կարգավորող կանոնները ձևավորելու հարցով: Նրանք անընդհատ զբաղված են պետական, պաշտոնական օրենքները հասարակական վարքի ձևերին համապատասխանեցնելու, և՛ հակառակը, խնդրով: Դպրոցը, բանակը, նույնիսկ քերականությունը ծառայում են այդ նպատակին: Որովհետև պետական, պաշտոնական կանոնները, մի կողմից, իրենց նպատակին՝ տրամաբանությանը, արդարությանը համապատասխանելուց կարող են շեղվել՝ պետական ապարատի անընդհատ ուռճացման, բյուրոկրատիայի կանոնն ու կոնտրոլը՝ անելիքին, արդյունքին գերադասելու պատճառով: Այդ դեպքում պետությունը

հետամնաց է դառնում կյանքի փոփոխվող հոսքի համեմատ, մարդկանց կարիքների և սպասելիքների համեմատ: Մյուս կողմից՝ պետությունը կարող է որոշ հարցերում ավելի առաջադեմ լինել, քան հանրությունը, և պահանջել փոփոխություն, որը հանրության մշակույթի մեջ դեռևս չի տեղավորվում:

Սթիվըն Փինքըրն⁴⁵ ասում է, որ կոպիտ բռնի ուժի, ֆիզիկական բռնության քանակը՝ պատերազմները և այլն, գլոբալ մասշտաբով քչանում են: Դա, իհարկե, հարյուր տոկոսանոց ճշմարտություն չէ, սակայն գլոբալ վիճակագրությունը տվյալ պահին դա է ցույց տալիս: Փինքըրը լայնորեն քննադատվել է, սակայն իր ասածը որոշակի հիմք պահպանում է: Դա, իհարկե, բարդ համակարգերի զարգացման շնորհիվ է, ինչպես որոշ երկրների ներսում՝ այնպես էլ գլոբալիզացիայի և համացանցի տարածման միջոցով: Դա, իհարկե, «անձամբ» մեզ չի օգնում կամ մխիթարում, որովհետև մենք հենց նոր ընկանք այն «փոքրիկ» պատմական սխալանքի մեջ, որն ասում է, որ մեր հայերիս, և մեր տարածաշրջանի դեպքում այդ ստատիստիկ օրինաչափությունը կարծես չի աշխատում. մեզանում բռնությունը, մեր հանդեպ բռնությունը և մեր տարածաշրջանում բռնությունը ծաղկում են այնպես, որ, թվում է, գլոբալ այս միտումը կամ սխալ է, հնարանք, հերյուրանք, կամ մեր հաշվին է, այսինքն մենք սխալանքի տիրույթում ենք, և, եթե աշխարհը գնում է դեպի ավելի արդար ու հավասարակշռված համակարգ՝ դա լինելու է ի հաշիվ մեզ:

Բայց գլոբալ մասշտաբով՝ Սթիվըն Փինքըրի գլխավոր փաստարկն է, որ համաշխարհային պատմության կտրվածքով բռնությունը քչանում է: Ո՛չ թե 19-րդ կամ 20-րդ դարերից սկսած, այլ՝ եթե դիտես ողջ (հայտնի, ֆիքսված) պատմությունը սկզբից մինչ այսօր:

Ձայն դահլիճից

Իսկ կարո՞ղ ենք ասել, որ ժողովրդավարական հասարակությունում, երբ որ կան տարբեր խմբեր, որոնք ունեն տարբեր իշխեր, և այդ իշխերը միմյանց չեն համաձայնում՝ շահերի բախում է տեղի ունենում: Նրանք երբեմն չեն գալիս համաձայնության, և դա կարող է ինչ-որ տեղ նաև թուլացնել տվյալ պետությունը կամ հասարակությունը, որովհետև տարբեր խմբերի այդ բախումը նորից ստեղծում է, ինչ-որ իմաստով, Հորսի ասած պատերազմը՝ «բոլորը բոլորի դեմ»:

⁴⁵ Steven Pinker, *The Better Angels of Our Nature: Why Violence Has Declined*, 2011: https://en.wikipedia.org/wiki/The_Better_Angels_of_Our_Nature

7. Միջազգային հարաբերություններ

«Շահերի բախումը» տերմին է. վերն ասացինք: Թեև երկու տարբեր սուբյեկտների կոնֆլիկտը նույնպես կարող է դիտարկվել որպես նրանց ունեցած՝ միմյանց հակասող շահերի բախում, սակայն որպես տերմին դա այլևս այլ բան է նշանակում. «շահերի բախում» ասում են մեկ մարդու «գլխում» տարբեր շահերի բախմանը: Կոնֆլիկտը կարելի է պարզապես «բախում» ասել, եթե կա կոնֆլիկտ (բախում)՝ ուրեմն կողմերն ունեն նաև հակադրվող շահեր, բնականաբար⁴⁶:

Ինչ վերաբերում է ձեր հարցին: Կան թույլ հասարակություններ և ուժեղ հասարակություններ կամ պետություններ: Ես ուզում եմ անցնել միջազգային իրավունքի և օրենքի խնդրին: Դա կապված է ձեր ասածի հետ: Հետո կանդրադառնամ ձեր ասածին: Մեզանում դա էլ է շատ ուժեղ նախապաշարումների նյութ. մարդկանց մեծ մասը չի հասկանում միջազգային հարաբերությունների էությունը, ինչպես չեն հասկանում ինֆրակառուցվածքային և ֆիզիկական բռնության վրա հիմնված իշխի տարբերությունը, ինչպես և չեն հասկանում այն գրադացիան, թե ինչպե՞ս է իշխը կամաց-կամաց, պայքարի միջոցով, դարերի ընթացքում դառնում ավելի ու ավելի ժողովրդավար: Նույն կերպ էլ՝ չեն հասկանում տարբերությունը միջազգային օրենքի և ներպետական օրենքի միջև:

Իհարկե, դա կուրսերի, դասավանդվող առարկաների հսկայական նյութ է, ինչպես և այս ամբողջ պատմությունը՝ իշխի մասին, բայց կարծ եթե փորձենք ձևակերպել, ինչո՞ւ են բուրգերը կազմավորվել: Արդեն ասացի, չէ՞, որ այդ ալֆա որձը սկսել է շահագործել, թալանել, կամ՝ ով որ իր սպառնալիքի դիմաց չէր տալիս սպասվելիք հարկը, տուրքը՝ խփում-սպանում էր. այդպես դարձել է ինչ-որ մի խմբի առաջնորդ: Եվ այդ խումբը պաշտպանվում էր թշնամիներից՝ այլ բռնի գոփողներից⁴⁷: Եվ ինչո՞ւ հիմա չկա համաշխարհային կառավարություն: Որովհետև մինչև հիմա այդ խմբերի զարգացումը եկել է այն աստիճանի, որ ամենամնայուն

⁴⁶ Որոշ տերմինների (օրինակ՝ «կոնֆլիկտ», «նախագահ») հայերեն թարգմանության խնդիրները տե՛ս այստեղ. <https://groghutsav.am/2021/12/16/տերմինների-թարգմանություն-և-այլև-գևո/>

⁴⁷ Այն, որ մարդկանց կողոպտելն ու ստրկաբար աշխատեցնելն ավելի շահավետ է, քան սպանելը, մարդկային քաղաքակրթության կողմից հայտնաբերվեց զարգացման շատ վաղ շրջանում: Այդ է նաև պատճառը, ինչու նացիստների մոտեցումը դեպ մարդը այդ անսպառ ռեսուրսը, այդքան զարմանալի և վայրագ էր համարվում, երբ նրանք գերադասում էին որոշ ազգերի ներկայացուցիչների սպանող շահագործմանը: Նույն աննորմալությունը կա ցանկացած ցեղասպանության պարագայում, երբ շահագործման օգուտը ստորադասվում է ոչնչացման օգուտին, արդյունքում ապամարդկայնացնելով հանրությանը (նախ և առաջ նրանց, ովքեր մասնակցեցին սպանողին որպես սպանող):

ադապտացվող տարբերակը մնում են զուտ պետությունները: Պետությունների՝ իրար կողք գտնվելը և փոխհարաբերություններն են որոշում միջազգային հարաբերությունները: Հիմա նույնիսկ մարդկությունն այնքան է զարգացել, որ պետությունները, համենայն դեպս՝ նրանցից ճանաչվածները, դարձել են նաև ՄԱԿ-ի անդամ: Այսինքն ստեղծվել է համաշխարհային պրոտոկառավարություն կամ քվազիկառավարություն: Կա միջազգային օրենք: Կան այլ ռեգիոնալ միջազգային կազմակերպություններ: Այդ ամենը հայտնի է: Բայց ի՞նչն է տարբերությունը. որ Հոբսի «բնական վիճակը» շատ ավելի նման է համաշխարհային միջպետական իրադրությանը, քան պետությունների մեծ մասի ներպետական իրադրությանը:

Շատ կոպիտ ասած, չէ՞ որ մենք «օրենք» ասելիս պետք է հասկանանք ո՛չ միայն պետական գրված օրենքը, ո՛չ միայն աշխատող օրենքը, այլև՝ չաշխատողը, նաև՝ չգրված ավանդույթը, նորմը. այդ բոլոր կանոնները, ասենք՝ ներկազմակերպչական կանոնները, նաև՝ պարզապես մարդկային լեզուն, որը նույնպես նորմերի համակարգ է: Երբ մենք նայում ենք այդ բոլորին և դրանց խախտումների պատմությանը, մենք տեսնում ենք, որ ցանկացած ներհասարակական իրադրության մեջ ավելի քիչ այդպիսի օրենք, կանոն, նորմ, պայմանավորվածություն է խախտվում ամեն միավոր ժամանակի մեջ, քան՝ չի խախտվում: Հենց դա՛ է ձեր դիտարկման պատասխանը. **կոնֆլիկտներն արտիկուլացնելը (հոդաբաշխ կերպով արտաբերելը, ինչը պահանջում է շատ զարգացած լեզու, ոճեր, բարդ և տարատեսակ կերպով արտահայտվելու՝ մարդկանց զարգացած կարողություն, տարբեր կրիչներով նաև) և հիմնականում ոչ բռնի միջոցներով լուծելը բարդ, զարգացած համակարգի առանձնահատկությունն է:** Պարզունակ համակարգերում է, որ հիմնականում բռնի ուժն է կարգավորիչը՝ քուչի խուժանի դեպքում, Գուլագում, Հարավային Կովկասում և նման դեպքերում: Մնացած բոլոր դեպքերում կան պրոցեդուրաներ, և դրանք այնքան շատ են և բազմազան, որ թույլ են տալիս կոնֆլիկտները լուծել առանց ֆիզիկական կամ հոգեբանական բռնության դիմելու: Կոնֆլիկտները լուծվում են թուլացած «հաղթանակ-պարտություն» տարբերակով, երբ «պարտվողն» ընդունում է լուծման «քաղաքակիրթ» (կամ ընդունված), պայմանավորված տարբերակը, քանի որ մեծ համակարգից կոնտեքստային օգուտը՝ «բնական վիճակի» բացակայությունը, ավելին է, քան վնասը, չնայած «պարտությանը»: Նա համաձայն է այդ կանոններին: Իսկ եթե ոչ՝ նոր գործի է դրվում բռնությունը, հարկադրանքը՝ ոստիկանությունը, ԴԱՀԿ-ը և այլն:

Իսկ միջազգային հարաբերություններում մենք այդ երաշխիքը չունենք. այնտեղ չկա «ուստիկանություն». միջազգային օրենքը գտնվում է շատ ավելի սաղմնային վիճակում:

Միջազգային կանոնների, նորմերի, օրենքների ցանցը նոսր է, ոչ միայն որովհետև դրանք ավելի ջահել են, քան դարավոր, եթե ոչ հազարամյակների ընթացքում ձևավորված ներպետական նորմերը, այլև որովհետև դրանք, նույնիսկ եթե արստրակտ կերպով ձևավորված կան, չունեն դեռևս հաճախակի կիրառման փորձ. հաճախ նիհար արստրակցիա են⁴⁸:

Եվ եթե մի որևէ ուժ՝ F, զգում է, որ ինքն X ունի՝ «գրավիտացիոն կարողություն», իսկ այս մյուս F-ը չունի, իսկ կողքերի F-երն ուրիշ բաներով են զբաղված՝ կարող է գալ, տալ-շանսատակ անել և թողնել-գնալ:

Մի անգամ ես այս տարբերությունը սահմանեցի որպես «անանձնական» վերսուս «անձնականացված» օրենքների տարբերություն⁴⁹: Ուժեղ պետությունն իր շրջապատում, ինչպես և ուզուրպատորը պետության ներսում, որը չունի լեգիտիմացիայի որևէ սկզբունք իր իշխի համար, որին համաձայն լինեն իշխվողները, բացի իր բռնի ուժից՝ «անձնականացված» օրենք է: Ներպետական ժամանակակից օրենքը պնդում է, որ «կոյր է», չէ՞, այսինքն ձգտում է լինել «անանձնական», անաչառ, անձերից չկախված՝ «արդար»: Խախտումները, իհարկե, լիքն են, սակայն իդեալը դա է: Անաչառության այդ արժեքը կապված է գիտության անաչառության արժեքի հետ. չէ որ երկար ժամանակ համարվում էր (և հիմա էլ դեռ՝ բավական ուժգնորեն), որքան էլ դժվար է կամ գրեթե անհնարին՝ լինել հետազոտվող նյութից անկախ, – որ գիտական արդյունքն այն է, որը հետազոտողի անձից անկախ է: Նշանակում է, նախորդ փորձի արդյունքը, եթե նույն

⁴⁸ «Նիհար արստրակցիա». այստեղ՝ վերացարկման այնպիսի դեպք, որը, առերևույթ մտածողության գործիք լինելով, իրականում չի օգնում իրական հարցը լուծելուն և նույնիսկ վնասում է, քանի որ զոհաբերում է, իրականության իր մոդելավորման մեջ, երևույթի որոշիչ հատկանիշները: Օրինակ՝ տարածված արտահայտությունները՝ «Մենք անմիաբան ժողովուրդ ենք», կամ՝ «Բոլորս պիտի միավորվենք»: Այստեղ «մենք», «ժողովուրդ», «բոլորս» հասկացությունները նիհար արստրակցիա են, քանի որ չի ճշգրտվում, ինչն է (ովքեր են) ընդգրկվում դրանց տիրույթում, ովքեր՝ ոչ: Ավելին՝ չի պարզաբանվում, արդյոք այդ արստրակտ մարդիկ համաձայն են միավորվել, ո՞ր հարցերի շուրջ, իսկ ո՞ր ոչ, և արդյոք ի՞նչ իրական ձևերով են իրենք միավորվում / միավորված, եթե միավորված են, և ու՞մ հետ: Իհարկե, նիհար արստրակցիաները շատ ավելի բազմազան են, քան այս օրինակները: **Փորձեք դուք առաջարկել նիհար արստրակցիաների օրինակներ:**

⁴⁹ Տե՛ս այստեղ. <https://www.gtergab.com/hy/news/essay/thinking-aloud-about-electric-yerevan/100/>

էքսպերիմենտը դրվեց քիչ թե շատ նույն կոնտեքստում ուրիշների կողմից՝ կկրկնվի: Նույնն էլ դատը. քիչ թե շատ նույն հանցանքի համար պիտի քիչ թե շատ նույն պատիժը տրվի, անկախ նրանից, հանցագործն ով է՝ հարուստ է, իշխան, թե՛ ոչ: Իհարկե, երկու դեպքում էլ լինում են ինչպես միտումնավոր և աններելի, այնպես էլ մտածված և կարևոր, հասկանալի խախտումներ, ինչպես, օրինակ, երբ դատի ժամանակ մեղմացուցիչ հանգամանքներ են հաշվի առնվում:

Այդ «անանձնականացումը» նաև մոդեռնիզմի կարևորագույն հասկացության՝ «օտարացման» պատմական արտահայտություն է: Օտարացումը հնարավորություն է տալիս ուստիկանին չհամարել տմարդի, երբ նա ոլորում է կարգը խախտողի ձեռքերը, և նույնիսկ երբ՝ միայն կարգազանցության մեջ կասկածվողի: Այդպես են «մարդ» մնում դատավորները, բանտապահները կամ նույնիսկ դահիճները՝ իրենք իրենց և իրենց մերձավորների աչքերում: Իրենց դիտում են որպես պետության «գործիք», և եթե պետությունը լեգիտիմ է, այսինքն՝ ըստ օրենքի՝ ժողովրդի քվեով է կազմավորված, ապա իրենք պիտի իրենց գործառույթը կատարեն, և եթե ըստ օրենքի են կատարում, առանց այն խախտելու՝ բռնություն կիրառելու համար անձամբ մեղավոր չեն կարող համարվել: Only business, ինչպես ասում են անգլերեն:

Բայց նույն օտարացումը՝ օտարացնելով մարդուն իր աշխատանքից, կյանքում, իշխում իր տեղը գրավելուց՝ բեկորների է վերածում նրա ամբողջական, միասնական ինքնությունը, և հսկայական ճիգեր են գործադրվում այն հաղթահարելու համար, կյանքի ամբողջականությանը մարդուն մերձեցնելու, նրա ամբողջականությունը վերականգնելու համար: Այդ է պատճառը, օրինակ, որ անարդար բանտապանը՝ վերտուխայը, կամ անարդար դատավորը կամ, ասենք, «տռոյկայի» անդամն այլևս «նորմալ» մարդ չեն համարվում այլ «նորմալ» մարդկանց կողմից, այլ՝ հանցագործ, թեկուզև՝ չպատժված: Եթե իշխի հրամանն անարդար ես համարում՝ ենթարկվել, թե՛ ոչ, դժբախտ ենթարկվել, - սա՛ է, որ քննարկվում է անընդհատ պատմության ընթացքում:

Իսկ դ՞նք ինչ եք կարծում:

Օրենքի այդ անանձնականությունն է, որ մեծ մասամբ բացակա է միջազգային հարաբերություններում: Թվում է, Արցախը միջազգային հանրությունը չպաշտպանեց, մինչդեռ Կոսովոն՝ պաշտպանեց, - ուրեմն՝ անարդար է և աչառու: Այո: Եվ դրանից միջազգային օրենքը հերքողները հետևություն են անում, որ եթե ուժ ունենաս կամ ստիպես՝ ինչին ուզես՝ կհասնես: Իմ հետևությունն այլ է. ա) եղիր այնպիսին, որ պաշտպանեն. հիմքեր ստեղծիր, նախագծերի միջոցով, իսկ դրա համար պետք է նաև

արդար եղած լինել, և բ) մենք ուզում ենք, որ աշխարհում միջազգային արդար, «անանձնական» օրենքը զարգանա և գործի, դա Հայաստանին շահավետ կլինի, ուրեմն՝ օգնիր այն զարգացնել, ո՛չ թե հայտարարիր, որ այն չկա:

Չկա ոչ մի վերջնական զսպիչ ուժ միջազգային հարաբերություններում: Երբ կա միջազգային ոստիկան՝ այն կարող է զսպել, և այդ զսպումը նման է Հոբսի օրենքին՝ արդար թե անարդար, բռնի ուժի սպառնալիքի պատճառով՝ ենթարկվում ես: Այդպիսին էր Ռուսաստանը, երբ նրան 19-րդ դարում անվանեցին «Եվրոպայի ժանդարմ» (երբ այն հրով և սրով «կարգուկանոն» էր հաստատում կամ իր գաղութներում, կամ՝ այլ պետությունների, նրանց հրավերով): Այդպիսին էր երկբևեռ համակարգը՝ ԱՄՆ-ի («Արևմուտքի») և ԽՍՀՄ առճակատման՝ Սառը պատերազմի ժամանակ: Եկեք հասկանանք, որ դրա էությունն այն էր, որ, մրցակցելով, մրցակցության պատճառով՝ երկու համակարգերը շատ ավելի փող՝ արժեք, ռեսուրս էին ծախսում «դրսի» աշխարհին տիրապետելու, նրա վրա ազդելու վրա, քան այլապես կանեին: Այսինքն՝ առանց հստակ «նաղդ» շահույթի հեռանկարի, միայն գաղափարական և անվտանգային, գեոպոլիտիկ նկատառումներից ելնելով՝ նրանք ռեժիմներ էին փոխում կամ խրախուսում, անհատույց փող և այլ ռեսուրս շռայլելով աշխարհի շատ ռեժիմների:

Իսկ երբ ԽՍՀՄ-ը կործանվեց, ԱՄՆ-ն էլ կամաց-կամաց դադարեց, չուզեց կամ չկարողացավ համաշխարհային մասշտաբի աներկբայելի ոստիկանի դերը շարունակել՝ որոշեց զբաղվել միայն իրեն, որպես առանձին պետություն (ոչ որպես աշխարհի համակարգերի կեսի պատասխանատու) շահութաբեր միջազգային քաղաքականությամբ՝ սկսվեցին ուժերի վերաբաշխումներ. զարգանում է Չինաստանը, թուլանում է Ռուսաստանը, և ահա առաջանում են «գրպանիկներ»՝ ուժերի բալանսի՝ իշխերի բալանսի խախտումներ, իշխերի վակուումներ: Այդպիսի իշխային վակուում առաջացավ մեր տարածաշրջանում՝ Ադրբեյջանի հարստացման, Ռուսաստանի՝ թուլացման, Էրդողանյան Թուրքիայի՝ հավակնոտ դառնալու արդյունքում, և դա հանգեցրեց 44-օրյա պատերազմին, և այժմ էլ այդ իրավիճակը պայմանավորում է հաջորդող իրադարձությունները:

Թափանցիկությանը զուգահեռ՝ ռեսուրսի ծախսը պետության կողմից ավելի ու ավելի պատասխանատու գործ է դառնում ժողովրդավարություններում, և այլևս իշխը չի կարող իրեն թույլ տալ ընդգրկվել որևէ պատերազմի մեջ, եթե ծախսն ավելին է լինելու, քան՝ սպասվող օգուտը, - և դա խորապես փոխում է աշխարհի գեոքաղաքականությունը, քանի որ ոչ-ժողովրդավարությունները

կարող են իրենց թույլ տալ դա անել: Ժողովրդավարությունները, ուրեմն, իրենց երկրին հասանելիք հնարավոր վնասը հակակշռելու փաստարկով են համոզում իրենց էլեկտորատներին՝ որ որոշակի ռեսուրս իրենց սահմաններից դուրս ծախսելը, այնուամենայնիվ, արդարացված է: Այդ է պատճառը, որ ժողովրդավարություններին անասելի օգուտ է պատերազմներից խուսափելը՝ պայմանավորվելով, իսկ ոչ-ժողովրդավարությունները դա օգտագործում են՝ կամ տեղային՝ լոկալ պատերազմներ ձեռնարկելով (անպատիժ կմնան՝ եթե այդ պատերազմի «ալիքները» շատ չեն վնասում ժողովրդավարություններին), կամ՝ ժողովրդավարություններին նենգասպառնալով՝ շանտաժի ենթարկելով, որ վտանգավոր պատերազմ կսկսեն: Իսկ պատերազմը ոչ-ժողովրդավարությունների համար անհրաժեշտ է (քանի որ իրենց իշխը բավարար չափով լեգիտիմ չէ), որպեսզի և՛ հանրության ուշադրությունը դրանից շեղեն, և՛ դրանից օգտվելով՝ օրենքի գերակայությունն էլ ավելի կրճատեն: Հենց դա նկատի ունի Ագամբենը՝ ասելով «բացառիկ, բացառության իրադրություն» կամ՝ «արտակարգ իրավիճակ»:

«Քուչի կռվում», ինչպես գիտենք, առաջինը հարձակվելն օգուտ է: Առաջինը հարձակվելը նաև օգուտ է «նորմալ» օրենքի պայմաններում, ասենք՝ առաջինը դատի տալը նրան, ում հետ բախման մեջ ես, որպեսզի մարդուն դժվար կացության մեջ գցես, մինչև նա հասցնի դա անել քո հանդեպ: Բայց հատկապես առաջինը հարձակվելն օգուտ է, հակառակորդին անսպասելիության մեջ գցելով, երբ չկա «վերադաս» օրենք: Այս տեքստը, իհարկե, 44-օրյա պատերազմի մասին չէ, և, թվում է, չի կարելի ասել, որ Ադրբեջանն առաջինը հարձակվեց երկու իմաստով. նախ՝ շատ էր ասել, որ կհարձակվի, երկրորդ՝ հայկական կողմը նախորդ պատերազմում տարածքներ էր գրավել: Ինչևէ. միևնույն է, քանի որ շատերը չէին հավատում, որ Ադրբեջանը կհարձակվի և Թուրքիան կմիջամտի՝ նրանց հարձակումն անսպասելի ընկալվեց:

«Ներքին» վիճակում, ի վերջո, ավելի հավանական է, որ բռնության դիմողը համարժեք պատիժ կկրի, քան միջազգային հարաբերությունների դեպքում: Խնդիրը նույնիսկ այն չէ, որ հետո գան քեզնից «վրեժը լուծեն», ասենք՝ քեզ պատժեն, ինչպես, ասենք, Քուվեյթի առաջին պատերազմի ժամանակ. երբ Իրաքը Քուվեյթը գրավեց, հետո համաշխարհային, միջազգային հանրությունը եկավ և պատժեց: Բայց «նախահոբսյան» աշխարհում, երբ Ղեբիափանը չկա՝ շահեկան է, թեև ռիսկային, առաջինը հարձակվել.

դու արդեն վնասը տալիս ես, հետո կտեսնենք. կարող է և տուժես ի պատասխան, կարող է՝ չէ:

Միջազգային հարաբերություններում այդպիսի վտանգները մեծ են: Միջազգային օրենքը փորձում է զսպիչներ ստեղծել, բայց վատ է աշխատում, որովհետև պետությունների շահերը տարբեր են: Միջազգային օրենքը, փաստորեն, աշխատում է միայն այնքանով, որքանով պետությունները պայմանավորվել են, համաձայնել են հետևել այս կամ այն պայմանավորվածությանը: Պայմանավորվածությունը խախտելով, պետությունը կարող է նշանակալի կերպով վնասվել, նույնիսկ կործանվել, սակայն խախտումը զսպելու համար այդ նկատառումը բավական չէ, մանավանդ երբ նա զգում է, որ մյուսից ուժեղ է, իսկ մոտալուտ պատժի շանսը՝ ցածր:

«Միջազգային իրավունքը պետությունների ազատության նկատմամբ տարածվող արգելքների կամ ինքնիշխանության սահմանափակումների ամբողջություն է: Միջազգային իրավունքի ձևավորման միակ ձևաչափը պետությունների կամարտահայտությունն է: Պետությունները սեփական ցանկությամբ որոշում են ստանձնել պարտավորություններ և կաշկանդել իրենց իսկ ազատությունը կամ ինքնիշխանությունը որոշակի վարքագծի կանոններով: Կամարտահայտությունը կարող է արտահայտվել երկու ձևով՝ միջազգային պայմանագրեր կամ սովորույթ: Սովորույթն այն կանոնն է, որը պետությունը ստանձնում է որոշակի վարքագծի պարբերական կրկնությամբ, երբ պարբերական կրկնությունն իրականացվում է այնպիսի եղանակով, որ վարքագծից հնարավոր լինի ենթադրել, որ պետությունն ինքն իրեն պարտավորված էր զգում դրսևորել նման վարքագիծ» (ըստ միջազգային օրենքի մասնագետ, իրավաբան Լևոն Գևորգյանի ֆեյսբուքյան գրառման):

Եթե պետության շահը փոխվեց, կամ իրադրությունը թույլ է տալիս՝ պետությունը կարող է խախտել ինչպես պայմանագիրը, այնպես էլ՝ սովորույթը: Իրականում երկուսն էլ, «ոստիկանի» բացակայության պայմաններում, դառնում են պետության կողմից բռնի ուժի դիմելիս՝ հաջողության հասնելու շանսն ամրապնդելու ձև: Չէ՞ որ պայմանագիրը թուղթ է, ձևական խոսք, որն ասում է, որ տվյալ պետությունն այսինչ բանը կանի և այնինչ բանը չի անի: Թուղթը («թղթե շերտփղ») հեշտ է դեն նետել, ինչպես Հիտլերն ու Ստալինը դեն նետեցին 1939 թվականի պակտը 1941-ին (տես՝ այդ մասին նաև ստորև): Թուղթը քիչ բան է նշանակում: Ավելին. այն իսկույն իր ուժը կորցնում է, երբ մեկ թղթի փոխարեն ընդունվում է մեկ

այլը, ինչպես ցույց է տալիս, օրինակ, Սան Ստեֆանոյի վերսուս Բեռլինի թղթերի պատմությունը, կամ՝ Լոզանի⁵⁰ և Սևրի⁵¹, և այլն: Նույն կերպ էլ սովորույթը. ասենք, տվյալ պետությունը երկար ժամանակ չի հարձակվել, և բոլորը սովորել են, որ այն այդպիսին է՝ չհարձակվող, զգուշությունը թուլացրել և այլևս հարձակում չեն սպասում: Մեկ էլ հանկարծ... Այդպես էր, օրինակ, Աբխազիայի և Հարավային Օսիայի ճանաչումը Ռուսաստանի կողմից 2008-ին. չէ որ մինչ այդ 15 տարուց ավելի այն կարող էր դա արած լինել, սակայն չէր անում: Հետո հանկարծ արեց: Նույնը՝ Ղրիմի միացումը 2014-ին: Սովորույթի վրա հենվելը միջազգային հարաբերությունների կայունության գլխավոր երաշխիքներից է, սակայն և՛ շատ խաբուսիկ: Նույն կերպ էլ՝ նախորդ միջադեպերը (պրեցեդենտները): Միջազգային հարաբերություններում մի դեպքը կարող է հիմք հանդիսանալ մեկ այլ դեպքում ևս նույն կերպ որոշում ընդունելու, սակայն չկան դեպքեր, որոնց բոլոր տարատեսակները միատեսակ են որոշվում: Իրաքի դեմ առաջին պատերազմի համար ԱՄՆ-ն ստացավ ՄԱԿ-ի աջակցությունը, երկրորդի՝ ոչ:

Դա վերաբերում է ցանկացած հարցի՝ նոր պետությունները ճանաչելուն կամ որևէ որոշման ծանրակշռությանը: Օրինակ, Չեչնիայի առաջին պատերազմի ժամանակ որոշ պետություններ այն ճանաչել էին, սակայն հետո ետ կանգնեցին: Նույնը՝ Աբխազիայի և նույնիսկ Կոսովոյի դեպքում: Սակայն Կոսովոն մնում է նշանակալիորեն ճանաչված և գործում է, փաստորեն, որպես անկախ երկիր: Մակեդոնիան երկար տարիներ հրաժարվում էր Հունաստանի հետ լուծել իր անվան խնդիրը, հետո հանկարծ համաձայնեց, և հնարը գտան համատեղ: Կայունությունն ապահովելու համար պետություններին ներգրավում են ո՛չ թե միայն մեկ պայմանագրի մեջ, այլ՝ դրանց ցանցի⁵², միջազգային տարբեր կազմակերպություններ իրար սկզբունքներին փոխկապված սկզբունքներ են առաջադրում և այդպիսով երկրագունդը ծածկում սկզբունքների ցանցով: Դրան օգնում է նաև գլոբալիզացիան: Ինչը նշանակում է, որ, օրինակ, եթե որևէ պետություն խախտում է որևէ միջազգային օրենք (ասենք՝ Ռուսաստանը՝ Ղրիմը կլանելով), ապա դրա պատասխանները կարող են լինել տարբեր միջազգային ասոյանների կողմից և տարբեր մակարդակներով: Օրինակ՝ բացի անձնական և ինդուստրիալ

⁵⁰ Տե՛ս Լոզանի պայմանագրի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Treaty_of_Lausanne

⁵¹ Տե՛ս Սևրի պայմանագրի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Treaty_of_S%C3%A8vres

⁵² Տե՛ս «Հայաստանը միջազգային կազմակերպությունների ցանցում» տեսաելույթն ու տեքստն այստեղ. <https://epfarmeria.am/hy/video/Armenia-in-network-of-International-organizations>

էմբարգոներից, որ Արևմուտքը սկսեց գործածել Ռուսաստանի դեմ, միշտ կա սպառնալիք, որ կարող են նաև «սվիֆտ» բանկային միջազգային համակարգի գործածումը Ռուսաստանում սառեցնել, ինչը կրերի այնտեղ տնտեսական ճգնաժամի: Ռուսաստանը փորձում է սեփական փոխարինիչ համակարգն արագ ձևավորել, բայց նախ այն պիտի աշխատի և վստահության արժանանա, երկրորդ՝ անհնար է, այսօրվա աշխարհում, դառնալ լրիվ ավտարկիկ⁵³, այն էլ՝ այնպիսի մեծ պետության դեպքում, ինչպիսին Ռուսաստանն է: Եվրոպան նաև քննարկում է ռուսական ածխաջրածնային ռեսուրսներից իր կախվածությունը սակավացնելու ձևերը – իսկ եթե դա տեղի ունեցավ՝ Ռուսաստանի տնտեսությունը կքանդվի:

Այսպիսով, քանի որ միջազգային օրենքն այդպես խախտու է, այն հաճախ օգտագործվում է զուտ որպես իրական կամ հռետորաբանական՝ սպեկուլյատիվ հավելում ռեալ քաղաքականությանը: Այսպես, Արցախի Հայաստանին պատկանելու (կամ՝ Ադրբեջանին պատկանելու լեգիտիմությունը քանդող) պատմական կամ միջազգային օրենքին հղող փաստարկները սին են, եթե Հայաստանը և Արցախը չունեն բավական ուժ, իշխ, հեղինակություն՝ միջազգային հանրությանը համոզելու: Քանի որ հակադրվում են միջազգային օրենքի այլ փաստարկների՝ Ադրբեջանի կողմից առաջ քաշվող: Որն ուժ ունի աշխարհին համոզելու, որ իր փաստարկներն առաջնային են:

Ուրեմն, եթե դա հասկանում են՝ այդ փաստարկներին կրկին և կրկին դիմողները կամ կարճամիտ են՝ կարծում են, որ ցանկությունը նշանակալի գործոն է, երբ ուժդ, ռեսուրսդ չի հերիքում (ցանկությունը, այո, որոշ չափով գործոն է, սակայն՝ շատ սահմանափակ), – *ցանկամիտ են* կամ *ըղձապաշտ (wishful thinking)* – կամ՝ սպեկուլյանտ. պարզապես ուզում են «հայրենասեր» երևալ: Ինքնախաբեությամբ են զբաղված, կամ էլ թաքուն (կամ ոչ շատ թաքուն) ապավինում են «երրորդ ուժին», որին, իրենց կարծիքով, հանկարծ կարող է ատամների այդ կրճտոցը պետք գալ:

Պատմական–իրավական հիմքերը՝ աներկբայելիորեն սահմանված, պետք կգան, երբ խաղաղությունն այնքան զարգացած լինի, որ արդեն քննվեն համակեցության կանոնները կամ սահմանազատման սկզբունքները: Իսկ քանի դեռ հարաբերությունը հիմնված է բիրտ ուժի վրա՝ դրանք հիմնականում նշանակալի չեն: Ուժի և օրենքի (պայմանագիր պլուս սովորույթ) միասնությունն է, որ ստեղծում է միջազգային հարաբերությունները: Իհարկե, ուժը միայն բիրտ ուժը չէ, նաև՝

⁵³ Տե՛ս ավտարկիան բացատրված այստեղ. <https://en.wikipedia.org/wiki/Autarchy>

«անշոշափելի» հանգամանքներն են՝ հեղինակությունը կամ դաշնակիցներ ունենալը և այլն (տե՛ս հետո՝ *փափուկ ուժի* և *ազդեցության* մասին): Փաստարկի համոզիչ դարձնելը կարելի է անխոնջ կերպով և լրջորեն կառուցել: Սակայն հայկական կողմը դա չի արել տարիների ընթացքում, ինքն իր լեզվի միջոցով փաստարկները կամաց-կամաց «ջրելով», չամրապնդելով դրանք բավարար չափով և լրջորեն չհակակշռելով Ադրբեջանի ուժեղացումը և միջազգային աշխատանքը: Այս արձանագրումը, իհարկե, չի նշանակում, թե հայկական կողմը պիտի փորձեր միայն մրցակցային կերպով ձգտել լուծել բախումը և հրաժարվեր անկեղծ փորձերից՝ փոխզիջումային տարբերակով հասնել կայուն խաղաղության:

Չճանաչված պետություններ

Երկրորդ համաշխարհային պատերազմից՝ ՄԱԿ-ի ստեղծումից ի վեր, պետությունների սուվերենության ատրիբուտների թվում մեծացավ **ճանաչում** ատրիբուտի նշանակությունը: Եթե որևէ տարածք իր բնակչությամբ կամ դրա մի մասով անջատվում է մեկ այլ պետությունից կամ դուրս գալիս նրա կազմից և հայտարարում անկախ պետություն՝ այն պիտի ճանաչվի ճանաչված պետությունների ակումբի կողմից: Սովորաբար դա նշանակում է՝ ճանաչվել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից և հրավեր ստանալ՝ դառնալու ՄԱԿ-ի անդամ: Այդպիսին էր, ԽՍՀՄ կազմալուծումից հետո, տասնհինգ գլխավոր հանրապետությունների ճակատագիրը: Սակայն նույն փուլուման պատճառով տեղի ունեցած պատերազմների արդյունքում առաջացած որոշ միավորներ այդպիսի ճանաչում չստացան: Դրանք էին Մերձդնեստրի հանրապետությունը, Աբխազիան, Հարավային Օսիան, Չեչնիան և Լեռնային Ղարաբաղը: Բոլոր այդ միավորներն ազդարարեցին, որ իրենք պետություն են, որպեսզի լեզվի մասնակց են իրենց իշխան այն տարածքի վրա, որտեղ ստեղծվել էին և որը կարողանում էին պահպանել՝ ի հեճուկս իրենց նախկինում ենթաիշխող հանրապետության: Սակայն լեզվի մասնակցության կուտակման այդ քայլն այդպես էլ չհանգեցրեց նրանց միջազգային ճանաչմանը: Ինչպես գիտենք, նրանք տարբեր բախտ ունեցան: Մերձդնեստրը դեռ կա և բավական «թեթև» հարաբերություններ ունի Մոլդովայի հետ (այսինքն՝ տվյալ պահին քիչ սպասելի է պատերազմ այդ տարածքում): Աբխազիան և Հարավային Օսիան 2008-ի Ռուսաստան-Վրաստան բախման արդյունքում ճանաչվեցին Ռուսաստանի կողմից, բայց՝ էլ ոչ մի նշանակալի պետության: Չեչնիան որպես անկախ պետություն վերացավ արյունալի պատերազմի արդյունքում, թեև խնդիրները մնացին: Արցախը, մոտ երեսուն տարի Ադրբեջանից անկախ գոյատևելուց հետո, 2020 թ. պատերազմի արդյունքում սարսափելի հարված ստացավ և կորցրեց շատ տարածքներ, և միայն ռուսաստանյան խաղաղապահ ուժն է այսօր նրա մնացած տարածքը և բնակիչներին բաժանում Ադրբեջանից: Ավելին. 2014-ից այդպիսի տարածքներին

ավելացան Ղրիմը, որը Ռուսաստանն ընդգրկեց իր կազմի մեջ, և այսպես կոչված «Դոնբասյան և Լուգանսկյան ժողովրդական հանրապետությունները», որոնք իրենց ազդարարել են չճանաչված պետություններ, սակայն նույնիսկ Ռուսաստանն իրենց չի ճանաչել (գոնե՝ առայժմ): Աշխարհում էլի կան այդպիսի դեպքեր, ինչպես, օրինակ, Հյուսիսային Կիպրոսը՝ ճանաչված և հովանավորվող՝ միայն Թուրքիայի կողմից: Կարևոր իրադարձություն էր 2008-ին Կոսովոյի ճանաչումը աշխարհի մոտ հարյուր պետության կողմից: Բնականաբար, այն պետությունները, որոնցից այդ միավորներն անջատվում են, չեն ընդունում այդ անջատումը և միջոցներ ձեռնարկում այն վերացնելու համար, ուժով, եթե կարող են, կամ՝ նաև դիվանագիտական միջոցներով թույլ չտալով, որպեսզի այդ միավորները ճանաչվեն այլ պետությունների կողմից: Եվ բնական է, որ պետությունները սովորաբար չեն սիրում ճանաչել այդպիսի նորահայտ ինքնահռչակ պետությունների, քանի որ այդ ճանաչումը կարող է դրդել իրենց ներսում եղած՝ առանձին տարածքի հավակնող որոշ ժողովուրդների նույնը պահանջել: Գիտենք, որ Քվեբեքում և Չոտյանդիայում վերջին տասնամյակների ընթացքում եղան անջատման հանրաքվեներ, սակայն՝ անհաջող: Եղավ նաև Կատալոնիայի անջատման փորձ, որը ճնշվեց Իսպանիայի կողմից:

Չճանաչված պետությունները սովորաբար, բնականաբար, թույլ են: Նրանք օգտվում են ինչ-որ մեկի օգնությունից, որպեսզի հաղթանակեն պատերազմում կամ, ամեն դեպքում, նույնիսկ եթե առանց պատերազմի (ինչը քիչ հավանական է մեր տարածաշրջանում)՝ ինքնահռչակվեն: Այդպիսի միավորների գոյությունը նշանակում է ուժի կամ իշխի վակուումի առկայություն:

Իշխի վակուումը ստեղծվում է այն դեպքում, երբ երկրագնդի որևէ տարածք «ծածկող» ուժային և իշխային ճառագայթների ցանցը նոսրանում է: Այդ ճառագայթները տարբեր են: Կարող են լինել տեղական իշխի արտահայտություն՝ տեղի բնակչության կողմից կազմավորված իշխական համակարգի: Դրանք, իրենց հերթին, ամրապնդվում են շրջակա և գլոբալ իշխերի հետ եղած հարաբերություններով: Ուժը կարող է ճառագայթվել ուղղակիորեն, ֆիզիկապես, ասենք՝ որևէ պետության զորքի ժամանումով կամ ներկայությամբ, կամ՝ հեռավար կարգով, ասենք՝ այն համացանցային ծածկույթով, որը պատկանում է որևէ պետությանը կամ բխում է որևէ պետությունից: Կամ ազդեցության այլ միջոցներով՝ առևտրական կամ մշակութային. այն, ինչ անվանվում է *փափուկ ուժ* (տե՛ս հետո): Այդ ցանցում կարևոր դեր է կատարում նաև տվյալ իշխի և նրա շրջապատի պատկանելությունը պետությունների ակումբներին՝ ՄԱԿ-ից սկսած և տարածաշրջանային կազմակերպություններով վերջացրած, ինչպես, ասենք՝ ՆԱՏՕ-ն, Եվրոպայի խորհուրդը, ՀԱՊԿ-ը կամ Եվրոպական Միությունը: Իշխի վակուումը կարող է ստեղծվել նաև ուժերի բալանսի խախտման արդյունքում, երբ հարևան պետություններից որոշներն ուժեղանում են, մյուսները՝ թուլանում: Արցախյան երկրորդ պատերազմը մասամբ կարող է բացատրվել նաև այդ հանգամանքով. Ռուսաստանը և Իրանը թուլանում են, այլ երկրներին տանուլ տալով համաշխարհային կարողությունների մրցույթում, ԱՄՆ-ն նահանջում է տարածաշրջանից, ԵՄ-ն մասնակցում է միայն «փափուկ» կերպով, իսկ

Թուրքիան և Ադրբեջանը նախկինի համեմատ ուժեղացել են, նաև հենց այդ՝ այլ ուժերի համեմատական թուլացմամբ կամ նահանջով պայմանավորված, բայց նաև՝ զինված լինելով իրենց առաջնորդների և նրանց սատարող ուժերի գաղափարախոսությամբ, որն իշխի ճառագում է պարունակում և ջատագովում որպես գործողությունների տարբերակ: Իշխի վակուումը պարտադիր պահանջում է, որպեսզի այն լրացվի, և ավելացնում է բռնի ընդհարումների շանսը, եթե այն բացառելու վերաբերյալ խելոք և մտածված քաղաքական քայլեր չեն կատարվում ժամանակին: Երկրագնդի ցամաքում այսօր փաստորեն չկա տարածք, որն իշխով ծածկված չէ: Իհարկե, կան ավելի նոսր իշխ պահանջող հատվածներ, ասենք՝ Անտարկտիդան, կամ այլ հատվածներ, որոնց իշխային ծածկույթը՝ իշխի տարբեր ճառագումների հյուսվածքը, ավելի նոսր է, քան այլ տեղերում, և սակայն եթե այնտեղ չկա իշխի վակուում կամ իշխերի բալանսի խախտում, այդ տարածքները տևականորեն չեն ենթարկվում որևէ այլ իշխի կողմից ակտիվ մարտահրավերի և պատերազմի առարկա չեն դառնում: Սակայն ոչ մի տեղանք *ապրիորի* կերպով ապահովված չէ այդպիսի զարգացումից: Ինչպես վերջերս տեսանք «Իսլամական պետության» գոյացումից և անհետացումից, իշխի վակուումը և բալանսի խախտումը միշտ կարող են հանգեցնել խոշոր արհավիրքների: Առանց միջազգային ճանաչման այսօր չի կարող կայուն կերպով գոյություն ունենալ ո՛չ մի պետականակերպ իշխ⁵⁴, ինչպես նաև առանց միջազգային ճանաչման չի կարող լինել հարևան պետությունների միջև կայուն կերպով տարածքների փոփոխում՝ եթե պետություններից մեկը դրան համաձայն չէ, ինչպես ձեռնարկեց Ռուսաստանը՝ ընդգրկելով Ղրիմն իր կազմի մեջ. դա չի ճանաչվել միջազգային հանրության կողմից: Սակայն Ռուսաստանն իրեն բավականին ուժեղ է համարում, որպեսզի չնայած դրան և դրան հաջորդած պատժամիջոցներին՝ շարունակի պահել Ղրիմը: Ասենք, այդպիսի կտրուկ արարքը, ինչպես Ղրիմի ընդգրկումը սեփական կազմի մեջ, չի էլ կարող հեշտությամբ հետ խաղացվել, և նշանակում է, որ Ռուսաստանը տևական կոնֆլիկտ է հիմնադրել Ուկրաինայի հետ: Բայց և այնպես, Ռուսաստանն արդեն չհամարձակվեց (առայժմ) էլ ավելի հանդգնորեն առաջ գնալ և ճանաչել նաև կամ ընդգրկել իր կազմի մեջ Դոնեցկն ու Լուգանսկը, միայն օգտագործում է այս չճանաչվածներին Ուկրաինայի հետ իր կոնֆլիկտում հավելյալ ճնշման միջոցներ ունենալու նպատակով: Կարևոր է հասկանալ, որ ուժերի բալանսը կարող է ժամանակավորապես վերականգնվել շատ անորոշ կետում. եթե որևէ իշխ բավարարված է տվյալ իրադրությամբ կամ տվյալ պահին ավելին անել չի կարող, չճանաչվածը կարող է այդպես պահպանվել երկար տարիներ, սակայն այդ տարածաշրջանը շարունակում է մնալ անկայունության կետ, և վաղ թե ուշ այնտեղ կարող է պայթյուն լինել, ինչպես էլ որ եղավ Արցախյան երկրորդ պատերազմը:

⁵⁴ **Ճանաչումը** դարձել է փափուկ, իսկ իրականում՝ բավական կոշտ ուժի դրսևորման ձև ժամանակակից միջազգային հարաբերություններում, ՄԱԿ-ի հիմնադրումից ի վեր. ինչպես նոր պետության ճանաչումը, այդպես էլ, ասենք, ցեղասպանության: **Ինչու՞:**

Միջազգային հարաբերությունների, դիվանագիտության և պատերազմի տերմինաբանությամբ Ղրիմի՝ Ռուսաստանի տարածքի մեջ ընդգրկելը կոչվում է «անեքսիա», սակայն այս բառը, ինչպես և շատ այլ բառեր, ներառյալ «ցեղասպանություն», «ագրեսիա», չափազանց շատ են չարաշահվում «հետ-ճշմարտական»⁵⁵ հռետորաբանական խոսույթի և **էպիստեմի** կողմից (Ֆուկոն «ետ» բերեց Պլատոնի օգտագործած տերմինը նոր իմաստով – տես հետո), և գուցե ավելի ճիշտ է խուսափել այն բառերից, որոնք շատերի կողմից ընկալվում են որպես կարծրատիպ և պիտակավորում:

Չճանաչումը սկսվում է հենց այն պետությունից, այն իշխից, որն իրեն տուժած է զգում տվյալ իրադարձությունների արդյունքում: Այն պետությունը, որից անջատվել է չճանաչվածը, ամեն ինչ անում է վերջինիս մեկուսացնելու նպատակով, ստեղծում շրջափակում-բլոկադաներ, էմբարգոներ, արգելքներ՝ նույնիսկ ֆիզիկապես այնտեղ մտնելու համար, և դիվանագիտական ասպարեզում ջանքեր ներդնում՝ այդ չճանաչված իշխը դելեգատիմացնելու նպատակով: Եթե վերջինս չունի ուժեղ հովանավոր(ներ), այդ քաղաքականությունը հանգեցնում է նրա իշխի թուլացմանը և ճգնաժամի, որն օգնում է ռազմական միջոցներով հարցը լուծելուն: Այդպես եղավ Չեչնիայում, որը որպես չճանաչված պետություն Ռուսաստանի կողմից դրվեց այնպիսի վիճակում, որ նրա իշխը սկսեց իռացիոնալ քայլեր կատարել և չկարողացավ ինստիտուցիոնալանալ, արդյունքում՝ արյունահեղ պատերազմի միջոցով տապալվեց: Ընդհակառակը, շնորհիվ Ռուսաստանի սպոնսորության, Աբխազիան այսօր ավելի ապահով է, քան 2008-ից առաջ, քանի որ Վրաստանը չի պատրաստվում ռազմական միջոցներով լուծել Աբխազիայի անջատման հարցը, թեև ոչ Վրաստանը, ոչ աշխարհի այլ պետություններ չեն ճանաչում Աբխազիայի անկախությունը և Ռուսաստանի կողմից այն ճանաչելը: Նույն կերպ և պատճառով համեմատաբար ապահով է Թուրքիայի հովանավորած՝ Հյուսիսային Կիպրոսը: Չճանաչված պետությունները, որպես իրենց ճանաչման հիմք, հաճախ հղում են անում հենց Մարդու իրավունքների հռչակագրի նախաբանին և նշում, որ իրենց բնակչության գոյությունը նախկին պետության սահմաններում և այդ պետության մեջ մասնակցությունն անհնարին են այդ բնակչության իրավունքներին սպառնացող վտանգների պատճառով: Պետությունը, որից նրանք անջատվել են, ընդհակառակը, հաճախ ընդգծում է, որ նրանք «անիշխանության բուն» են, որ այնտեղ թագավորում է անարխիան և հանցագործությունը, որ նրանք թրաֆիքինգի տարածք են, որ այնտեղ ապրողներն անօրեն և «անպետական» անձնավորություններ են, և որ, վերջապես (ինչը հաճախ, եթե ոչ մշտապես լինում է) իրենք արտաքսել են իրենց տարածքից շատ բնակիչների (հաճախ՝ իրենց այժմյան քանակից էլ շատ ավելի), դրանց՝ այլազգի լինելու պատրվակով:

⁵⁵ «Հետ-ճշմարտությունը» սահմանները որպես մի իրադրություն, երբ մարդկանց (կամ խմբերի) կարծիքներին և պնդումներին տրվում է ավելի բարձր ստատուս, քան «օբյեկտիվ», գիտականորեն հաստատված (և ուրեմն կրկնելի) ճշմարտությանը, իսկ վերջինս կորցնում է իր հեղինակությունը:

Այս թնջուկը խորանում է, եթե հակամարտող կողմերը չեն կարողանում լեզու գտնել երկխոսական-դիվանագիտական մակարդակում: Իհարկե, դա էլ է խոչընդոտվում ճանաչված պետությունների կողմից, քանի որ եթե անջատողական չճանաչվածի «պաշտոնական» ներկայացուցիչը հանդիպի ճանաչված պետության պաշտոնականին և նրա հետ միասին նույնիսկ որևէ խնդրի լուծման հանգի՝ դա կնշանակի «ոչ պաշտոնականի»՝ չճանաչվածի թեկուզ մասամբ «ճանաչում», կարձանագրվի որպես չճանաչված պետության հաղթանակ: Իսկ չճանաչվածը, այսպես ասած, չկա: Այն պաշտոնապես, իբր, գոյություն չունի: Այդ է պատճառը, որ, օրինակ, Արցախյան առաջին պատերազմի ավարտը՝ հրադադարով, որի փաստաթուղթը ստորագրվեց նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռազմական ղեկավարության կողմից, համարվում էր հայկական կողմի մեծ հաղթանակ, քայլ՝ դեպի ԼՂ-ի միջազգային ճանաչում: Սակայն սովորաբար պետությունները հենց նույն թակարդը չընկնելու համար խորշում են չճանաչված պետության պաշտոնական անձանց հետ հանդիպելուց և նրանց հետ համատեղ թղթեր ստորագրելուց: Նրանք ստորագրատում են չճանաչված պետության իշխին որպես ապստամբ կողմ, պարզ ասած՝ «խուժան», որն իրավունք չունի մասնակցել պաշտոնական պետական ծեսերի և հարաբերությունների: Այսպես, պաշտոնական ծեսերն իշխի ճանաչման կարևոր ատրիբուտ են դառնում, խանգարելով խաղաղության կառուցմանը: Նույն կերպ էլ լեզուն. լեզվի հարցն ընդգրկվում է իշխային հաշվարկների մեջ, և, ասենք, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառակապակցությունն Ադրբեջանի պաշտոնական անձի կամ մեդիայի կողմից կարող է օգտագործվել միայն չակերտի մեջ, էլ չասած՝ որևէ ածականով, ասենք՝ «անօրեն»: Թուրքիայում 1915-ը հաճախ ձևակերպվում է որպես «հայոց այսպես կոչված ցեղասպանություն» կամ «ցեղասպանություն» չակերտներով, և հայկական կողմն էլ սկսել էր քարտեզներ թողարկել, որտեղ ԼՂ-ն և հարակից տարածքներն ընդգրկված էին Հայաստանի տարածքի մեջ, ինչպես նաև վերանվանել էր այդ տարածքները, և եթե Քարվաճառի փոխարեն մեկնումեկը հանրայնորեն ասեր կամ գրեր Քելբաջար՝ կարող էր ենթարկվել առնվազն հասարակական պարսավանքի, օստրակիզմի կամ այլ ճնշման, նույնիսկ սպառնալիքների: Լեզվի՝ իշխին կապվածությունը մաս է իշխի՝ ճշմարտությանը կապված լինելուն, իշխի կողմից ճշմարտություն («իբր-ճշմարտություն», «միակ» ճշմարտություն) կառուցելու փորձերին, ինչը քննարկվում է «Իշխ և ճշմարտություն» տուփիկում (տես ստորև):

Բնական է, որ, ինչպես և շատ այլ դեպքերում, իշխերի՝ միմյանցից մեկուսացումը և թշնամանքի կառուցումը՝ երկխոսության և փոխգործակցության փոխարեն, դառնում են իշխերի ընդհարման պատճառ, պատերազմների ակունք և բուն, սարսափելի դժբախտություն և մահ բերելով այդ իշխերին ենթակա ժողովուրդներին: Եվ, ընդհակառակը, երկխոսության ինստիտուցիոնալացումը, փոխգործակցության ցանցի հյուսվածքը, եթե այն ամուր է և հաստ, նշանակում է ժողովրդավարացում, իշխի՝ ավելի համաչափ բաշխում, ծածկում է իշխի վակուումը, թեկուզև դրա համար կարիք լինի դժվարին փոխզիջումների

զնայ, և փոքրացնում է լայնամասշտաբ փորձանքների և պատերազմների հնարավորությունը, բախումները մղելով «քաղաքակիրթ լուծումների» դաշտ (տես դա քննարկված նաև նախորդ՝ Նաիրա Մկրտչյանի հոդվածում):

Իսկ դուք ինչ եք կարծում, ինչպե՞ս քանդել արցախյան թշնամանքի կծիկը:

Պետությունների միասնական շահեր ձևավորելը խոշորագույն խնդիրներից է: Առաջին անգամ՝ երբ Իրաքը Քուվեյթը գրավեց, միջազգային հանրությունը համաձայնեց ԱՄՆ-ին պատվիրակել պատասխանը և օգնեց ազատագրել Քուվեյթը, իսկ իրաքյան երկրորդ պատերազմի ժամանակ, չնայած դա տեղի էր ունեցել սեպտեմբերի 11-ից հետո և դրա արդյունքում, միջազգային հանրությունը չհամաձայնեց սատարել ԱՄՆ-ին, բացի առանձին պետություններից: ԱՄՆ-ը որոշեց դա անել ինքնուրույն, առանց լեգիտիմացնելու իր ակցիան միջազգային հանրության միջոցով, որովհետև միջազգային հանրությունն ասում էր, որ Իրաքում չկա միջուկային զենք, և հետո պարզվեց, որ իրոք չկար:

Միջազգային օրենքը գտնվում է դեռ բարուրային, օրորոցային վիճակում, և դեռ երկար ժամանակ է պահանջվելու, որպեսզի մարդիկ համաձայնեն, որ այն դառնա գոնե ինչ-որ չափով անխափան աշխատող: Եվրոպական միությունը մասնակի օրինակ է միջազգային օրենքի, որն ավելի լավ է աշխատում, քան շատ այլ դեպքերում (առայժմ): Եվ տեսեք, ի՞նչ բարդ կառուցվածք ունի այն, հենց միավորելով իշխի տարբեր, բոլոր լեգիտիմ և ինչ-որ իմաստով ոչ լեգիտիմ ձևեր, օրինակ՝ նախարարների խորհրդի համակարգը: Այն օգտագործում է տարբեր իշխական մակարդակներ, որպեսզի գործողություններն ամբողջ իր տարածքով քիչ թե շատ օրենքին համապատասխան տեղի ունենան, և որոշումները միասնաբար ընդունվեն: Ինչի պատճառով իրենք շատ դանդաղ են նաև, այո՞: Այդ մասին արդեն խոսվեց՝ որ շատերով որոշում կայացնելը դանդաղ է: Դա, իմիջիայլոց, նույնպես պատճառներից մեկն է, ինչու բանակի մասին մտածողները հաճախ ասում են, որ այն պիտի բուրգային լինի. որքան ավելի հորիզոնական է որոշում ընդունելու խումբը՝ մեծ և հորիզոնական, այլ ոչ թե բուրգային, այնքան ավելի շատ ժամանակ է պահանջվում, այնքան դանդաղ են որոշումներն ընդունվում, այնքան ոչ-կտրուկ են դրանք հաճախ: Դա նույնպես պետք է հասկանալ: Դրա համար արտակարգ իրադրությունների դեպքում վերադառնում են նախնական մոդելին, որի արդարացումը, եթե կա, գուցե դա է. հենց «դրսից» վտանգի դեմ պատվար

ապահովելն է, երբ ալֆա որձին ասում են՝ «Ինչ ասես՝ կանենք, ախպեր ջան»: Հիմա մնում է, որ ինքը լինի իրոք ալֆան, իրոք՝ ալֆա որձն այդ իրադրությունների մեջ, ոչ թե՛ բետա կամ գամմա որձը. երբեմն այդպես չի ստացվում:

Ալֆա որձը՝ «շի վզիկ»

Ավաղ, դա բարալիկ, «շի-վզիկային» (bottleneck) իրադրություն է. երբ միայն մեկն է որոշումներ կայացնում, ուրեմն և՛ միայն մեկն է ողջ ինֆորմացիան արտոբացնում և համակարգում, որոշում կայացնելուց առաջ, - իսկ շի վզիկը նեղ է, դրանով անցնող ինֆորմացիայի քանակը՝ սահմանափակ: Քանի՞ պատասխանատու որոշում կարող է կայացնել մարդը՝ ուրիշների կյանքերին վերաբերող, օրվա ընթացքում: Հինգ: Քանի՞ օր անընդհատ, առանց հանգստանալու: Պատասխանատու որոշումներ կայացնելն ամենահոգնեցուցիչ, հյուծիչ գործողություններից է: Այդ է պատճառը, որ միանձնյա որոշումները, թեև արագ են, հաճախ ա) սխալ են կամ բ) բավարար չեն: Ժամանակակից բանակները դա հասկանում են: Նրանք ոչ միայն հագնում են «ոչ-մարդկային» տեխնոլոգիայով, ինչպես դռները, որոնք կառավարվում են ապահով տեղից, ուրեմն և՛ կառավարողներն իրենք սթրեսի մեջ չեն: Նաև «մարդկային» տեխնոլոգիաներն են փոխվում: Բանակի անձնակազմն ավելի ու ավելի հաճախ է սկսում կազմավորվել ըստ ցանցային տեխնոլոգիաների՝ փոքր խմբեր, ճկուն, միմյանց կապված, սակայն՝ անկախ, որոնք ունեն որոշում կայացնելու իրավունք: Այն, ինչ առաջ միայն հատուկ ստորաբաժանումներն էին գործածում՝ կոմանդոսները կամ պարտիզանները և այլն, այժմ դառնում է բանակի կազմավորման գլխավոր սկզբունքներից մեկը: Առաջադրանքը ստացեք, մեծ պատկերը, մեծ կոնտեքստն ունեցեք ձեր մտքում, տեղյակ եղեք, իսկ ինչպես եք առաջադրանքն իրագործելու՝ արդեն ձեր որոշումն է: Սա նման է «սահող գեներալի սկզբունքով»⁵⁶ գործող խմբերի ցանցերին՝ ես այդ մասին խոսել եմ մեկ այլ անգամ⁵⁷: Այսպիսի կառույցները ձևական չեն կարող լինել, այլ պիտի ձևավորվեն ճիշտ միջավայրում, ունենան ճիշտ որոշված հնարավորություններ և ստանան որակյալ նախապատրաստություն: Նման խնդիր է նաև այն քննարկումը, որը Հայաստանում անընդհատ կա. նախագահական, «կիսանախագահական», թե՛ «պառլամենտական» համակարգ: Նախագահականը, ի վերջո, «ալֆա որձի» որոշակի

⁵⁶ Տե՛ս «Սահող գեներալի սկզբունքի» բացատրությունը «Համակարգված մտագործունեության մեթոդաբանություն և կրեատիվ խաղեր» գրքույկում (էջ 9). <https://epfarmenia.am/hy/document/MSTA-Creative-Game> ինչպես նաև՝ «Մասնակցայնություն և թափանցիկություն» ելույթում և տեքստում (սկզբում). <https://epfarmenia.am/hy/video/Gevorg-Ter-Gabrielyan-Participatory-Transparency-31May-2021>

⁵⁷ Տե՛ս «Թափանցիկություն և Մասնակցայնություն» դասախոսությունն ու տեքստը այստեղ. <https://epfarmenia.am/hy/video/Gevorg-Ter-Gabrielyan-Participatory-Transparency-31May-2021>

հատկանիշները պահպանող համակարգ է, սակայն տեսականորեն նաև համարվում է, որ նախագահականի կամ «կիսանախագահականի» դեպքում ավելի բարդ համակարգ է կազմավորվում, որտեղ իշխի ճյուղերի բաժանումն ավելի լավ է աշխատում: Նաև՝ արտակարգ իրավիճակների դեպքում նախագահականն ավելի վճռական և արագ է գործում: Նաև մենք տեսանք, որ հապճեպ անցումը «պառլամենտականի» հսկայական խնդիրներ առաջացրեց և ցնցող բացասական հետևանքներ ունեցավ: Մյուս կողմից, ամեն իրական ռեֆորմ ձեռնարկելիս պետք է նաև հաշվի առնել իրական կոնտեքստը՝ տվյալ հանրության պատմությունը: Զուր չէ, որ այսօրվա ռեժիմը ոմանք անվանում են «վարչապետական» և ոչ թե «պառլամենտական»: Ինչպես նաև՝ անցումային ժամանակաշրջանը – հիմա, նախագահականին ետ գնալու դեպքում, կրկին կարող են ցնցումներ լինել:

Կարճ ասած, միանձնյա որոշման թերությունը՝ անձի արագ սպառվելը և մեծ մասսաների դանդաղ կոտորությունը, երբ նրանք ապահիշխանավորված են, – ինչպես նաև կոլեկտիվ որոշումների թերությունը՝ դանդաղությունը, և վերջապես՝ իշխերի ճյուղերի՝ միմյանցից բաժանումն ու որոշում ընդունելիս անկախ, սակայն կառուցողական լինելը՝ պիտի բալանսավորված լուծումներ գտնեն ինչ-որ ձևերով, որպեսզի տվյալ քաղաքակարգը (polity) լինի հաջող:

Իսկ թե ինչպես՝ քննարկման ենթակա է: Իսկ դուք ինչ եք կարծում:

8. Իրականության (և իշխի) սոցիալական կառուցումը

Վերջին մասը, որ ուզում եմ ներկայացնել, վերաբերում է իշխի ընկալման այն փոփոխություններին, որոնք սկսեցին տեղի ունենալ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո. փիլիսոփայական խնդիրներին. ինչպես ձևավորվեց իշխի մասին մտածելու հաջորդ փուլը, Հոբսից, Լոքից, Մոնտեսքյոյից⁵⁸ և դը Թոքվիլից⁵⁹ հետո: Այդ հարցում շատ մեծ էր Միշել Ֆուկոյի⁶⁰ ներդրումը:

Միշել Ֆուկոն հետազոտեց բանտային համակարգը, մարդկային «աննորմալության» ինստիտուցիան՝ խելագարության հասկացությունը, և մարդու սեքսուալությունը, և երեք դեպքում էլ ցույց տվեց դրանց սոցիալական կառուցման բաղադրիչները:

Ֆուկոն ասաց, որ բանտային համակարգը ստեղծվել է ոչ թե միայն հանցագործներին «ոչ-հանցագործ» մարդկանցից իզոլացնելու նպատակով, մեկուսացնելու՝ որպեսզի նրանք այլևս վնաս չպատճառեն

⁵⁸ Տե՛ս Շառլ Լուի Մոնտեսքյոյի մասին այստեղ. <https://en.wikipedia.org/wiki/Montesquieu>

⁵⁹ Տե՛ս Ալեքսի դը Թոքվիլի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Alexis_de_Tocqueville

⁶⁰ Տե՛ս Միշել Ֆուկոյի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Michel_Foucault

և արդարորեն պատժվեն (էլ չասած՝ վերադաստիարակվեն), այլև՝ շահագործման նպատակով՝ թույլերին, այլախոհներին, մրցակիցներին չեզոքացնելու: Մենք գիտենք, որ դա է եղել Գուլագը և այլն: Բայց մեզանում կա պատկերացում, իբր գոյություն ունի բանտի իդեալական տեսակը՝ ճիշտ և լավ, որը, ասենք, իրական հանցագործին իրապես և ճիշտ ձևի պատժում է կամ նույնիսկ վերադաստիարակում: Մինչդեռ փաստորեն նույն «գուլագային» սկզբունքն է եղել նաև դարեր առաջ, երբ որ բանտային համակարգը սկսեց ձևավորվել ժամանակակից Եվրոպական քաղաքակրթության մեջ: Այսինքն այդ անարդարությունը վերաբերում է նաև մեկուսացմամբ կամ աշխատանքով պատժելու այլ դեպքերի: Մարդուն պատմականորեն հասարակությունից մեկուսացրել են ո՛չ թե անպայման այն պատճառով, որ նա ինչ-որ խոշոր նորմ է խախտել՝ հանցագործ է, հանցանք է գործել, այլ որովհետև, օրինակ, դու ուզում էիր նրանից խլել իր տունը կամ՝ որովհետև նա պարզապես տարբերվում էր իր շրջապատից: Ֆուկոն արդարության այդ ամբողջ հասկացությունը, ինչպես որ այն իդեալիստորեն, անքննադատաբար ձևավորվել էր հասարակության «մտքում», շուռ տվեց:

Նույնը նա արեց խելագարության՝ հոգեկան առողջության պարագայում. ցույց տվեց, որ այդ օրվա՝ 1950-ական թվականների Ֆրանսիայում և ընդհանրապես Եվրոպայում խելագարության ժամանակակից նորմն առաջացել էր, ասենք, մի քանի դար առաջ, և սկսել էր ձևավորվել «անցանկալի» մարդկանց չեզոքացնելու համար: Երեխայիդ չես ուզում ժառանգություն տալ՝ հայտարարիր խելագար, կամ՝ կնոջ⁶¹, կամ՝ ինչ-որ հարուստ մարդու, որին դու փող ես պարտք, կամ՝ ամուսնուդ, եղբորդ, քրոջդ, ծնողներիդ և այլն: Եվ ցույց տվեց, որ հոգեկան անառողջության նորմը շա՛տ անհայտ և անհասկանալի տեղում է գտնվում, որ այդ նորմը շա՛տ շարժական է, և մի դեպքում մարդը լրիվ նորմին համաձայն է գործում, մյուս դեպքում՝ ունի խնդիրներ, և կան ամբողջ հասարակություններ, որոնք դրա մեջ ընկղմված են, ինչպես, ինձ թվում է, մեր հայաստանյան հասարակությունն այսօր, նաև բնական պատճառով՝ այն տրավմայի, որ ստացավ 44-օրյա պատերազմից: Երբ մարդկանց տասնամյակներ շարունակ ընդգրկում են փսևդոմիֆական դիսկուրսի մեջ՝ «ոչմիթիզական», որպեսզի համակարգը ծառայեցնեն որոշ անձերի կողմից ժողովրդի թալանին, ժողովրդին լռեցնելով այն փաստարկով, որ եթե թալանի դեմ ընդվզի՝ թիզերն էլ կկորցնի, - ժողովուրդը բացարձակապես անպատրաստ

⁶¹ Տե՛ս այսպես կոչված «կանացի հիստերիայի» մասին. https://en.wikipedia.org/wiki/Female_hysteria

է դուրս գալիս դաժան պատերազմի, և նրա արդյունքները մեծ անակնկալ են ու խոր տրավմա են թողնում:

Հոգեբանական տրավմա

Հոգեբանական տրավմայի մի կարևոր պատճառ է սովորաբար իրականությունն աղեկվատ չզնահատողի հանդիպումն այդ անսթղ իրականությանը, անկախ նրանից, չզնահատողն ինքն էր «մեղավոր» իր այդ ոչ ռեալիստական հայացքն ունենալում, թե՛ պարզապես օբյեկտիվորեն անկարող էր լինելու դաժան իրականությանը դիմակայել, նույնիսկ եթե շատ ռեալիստ լիներ, - թե՛ երկուսն էլ միասին: Ինչպես գիտենք, իրականությունը քիչ թե՛ շատ ռեալիստորեն զնահատելը մարդու հոգեբանական առողջության՝ նորմին համապատասխանելու ցուցիչներից է:

Ձայն դահլիճից

Մինչև վերջերս մեր օրենսդրությամբ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անգործունակ էին ճանաչում և հոգեբուժարան էին տեղավորում, նրանք իրավունք չունեին դատարան դիմել: Մարդն ինչ-որ պարբերական հաճախականությամբ պիտի իրավունք ունենա դիմելու դատարան, իսկ մեզ մոտ այդ իրավունքը շատ երկար ժամանակ՝ մինչև վերջերս, չկար. նոր են փոխել:

Հոգեկան առողջության պատրվակով կամ պատճառով մեկուսացված մարդն իրավունքներից զրկվում է: Դա ավանդական մոտեցում է: Մեզանում արդեն իբր թե կա, որքան գիտեն, օրենսդրություն, որն ասում է, որ առանց իր համաձայնության իրավունք չկա մարդուն մեկուսացնելու: Բայց կան բացառություններ. եթե նա չի կարող այդ համաձայնությունը կամ անհամաձայնությունն արտահայտել, ապա իր մերձավորներն են արտահայտում, և այլն: Մենք գիտենք, որ եղել է այսպես կոչված *պատժիչ հոգեբուժությունը*⁶² Խորհրդային Միությունում և այլ տեղեր, այսինքն՝ դա ուղղակիորեն օգտագործվել է իշխի քաղաքական նպատակներով, նաև որպես կտտանք, հալածանք, ստիգմա և խոշտանգում: Եվ հենց դա է ասում Ֆուկոն. որ հենց սկզբից այդ «սկոմոռոխները» (скоморох), «վագաբոնդները» (շրջիկ երաժիշտ), այդ «տրուբադուրները»՝ աշուղները, թափառական մուրացիկները,

⁶² Տե՛ս պատժիչ հոգեբուժության մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Political_abuse_of_psychiatry

«բոմժերը», «ընկնավորները», «շրջմուխները», «խեղկատակները»⁶³ և այլն, որ նորմից դուրս էին, հայտարարվում էին խելագար և մեկուսացվում էին, որպեսզի այլընտրանքային կարծիք չարտահայտեն իշխի կամ այլ տաբուների վերաբերյալ: Այսինքն՝ վախենալով, որ նրանք ո՛չ թե անպայման ֆիզիկական ահաբեկիչ են՝ ֆիզիկապես վտանգավոր⁶⁴, այլ դիսիդենտ՝ այլախոհ, այսինքն՝ «բանավոր ահաբեկիչ», խոսքով բուրգը, համակարգը քանդող. դրա համար նրանց պետք էր մեկուսացնել: Եվ այդպես է ձևավորվել այդ ինստիտուցիան:

Վերջապես՝ սեքսուալությունը: Ի՛նչ է ասում Ֆուկոն, փորձեմ ներկայացնել կարճ և շատ պարզունակացված: Ասում է. ամեն անգամ, երբ ինչ-որ մեկն արգելում է մյուսի սեքսուալության դրսևորումները, ինքը՝ արգելողը, այդ ժամանակ սեքսուալ հաճույք է ստանում: Այսինքն սեքսուալության տաբուներն ամրապնդելուն ուղղված ամեն ակցիա, գործողություն պայմանավորված է այդ սուբյեկտի, դա անողի սեքսուալ ֆանտազիաներով և նրա՝ իշխի, իշխելու ցանկությամբ: Որովհետև իշխն ու սեքսուալությունը շատ ուժեղ են առնչված: Դա նաև զուտ ֆիզիոլոգիական առնչություն է. վերջերս իմացա, որ տղամարդու ուղեղում ագրեսիային և սեքսուալությանը համապատասխանող տիրույթներն իրար շատ մոտ են գտնվում, և երբեմն պարզապես ազդակը սխալ տեղ է գնում: Շատ հետաքրքիր է դա:

Ֆուկոյից հետո եկան այլ հետազոտողներ և փիլիսոփաներ, որոնք զարգացրին այդ նոր մոտեցումները: Ֆուկոյից առաջ էլ կային, իհարկե, օրինակ՝ քննադատական փիլիսոփայության⁶⁵ ներկայացուցիչները՝ Ադորնոն,

⁶³ «Ծաղրածուների» ազատությունը՝ «թագավորի դեմքին» ճշմարտությունն ասելու, հայտնի պատմական իրողություն է, սոցիալական ինստիտուցիա. այն պատկերված է նաև Շեքսպիրի «Համլետ»-ում և «Լիր արքա»-ում, Դյունայի մի շարք գործերում՝ Շիկոյի կերպարը, Տարկովսկու «Անդրեյ Ռուբլյով» ֆիլմում (որտեղ հենց թափառական ծաղրածուի հետ հաշվեհարդար են տեսնում – ուրեմն դա, չնայած եղել է իբր «ընդունված» ինստիտուցիա, սակայն՝ իշխի կամայականության պատճառով միշտ էլ վտանգավոր է) և այլուր:

⁶⁴ Ֆիզիկապես վտանգավորը միայն ահաբեկիչը չէ: Մարդկանց մեկուսացնում են նաև այլ պատճառներով. օրինակ, Երկրորդ համաշխարհային պատերազմից մի քանի տարի հետո Մոսկվայի տարածքից հեռացրին բոլոր հաշմանդամներին, որպեսզի նրանք «չփչացնեն մայրաքաղաքի տեսքը» և չհիշեցնեն պատերազմի արհավիրքները: Նույն կերպ վարվեցին կոկին 1980 թվականի Օլիմպիադային ընդառաջ հեռացնելով նաև միգրանտ աշխատողներին: «Տգեղը» (թույլը, հիվանդը, «կեղտոտը»)՝ «աչքից հեռու»: այդ մոտեցումը շատ տարածված է այն խմբի վարքում, որը կարելի է անվանել «փողաիշխ» հարստությունն ու իշխը միավորող սոցիալական խմբի: Որպեսզի չտեսնեն, խիղճը չտանջի, և որպեսզի ուրիշները չտեսնեն և չզգան դժբախտության ու փողաիշխի միջև եղած անդունդի խորքն ու արհավիրքը – և հանկարծ ու չքննադատեն կամ, ավելի վատ՝ չապստամբեն: **Քննարկեք այս թեման ավելի խորքից, ներառյալ «փողաիշխի» ճաշակը:**

⁶⁵ Տե՛ս քննադատական տեսության մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Critical_theory

Մարկուզեն և այլն: Բայց Ֆուկոյից հետո է՛լ ավելի հաստատվեցին այդ մոտեցումները, նաև՝ հետազոտությունների միջոցով իրականության սոցիալական կառուցումը՝ որպես իշխի դրսևորման մի հին, բայց նոր հասկացված ձև⁶⁶: Դա նաև տեղի ունեցավ նացիստական Գերմանիայի պատմությունը դիտարկելու շնորհիվ. ինչու՞ պրոպագանդան այդքան ուժեղ ազդեց այդ ժողովրդի վրա, ինչու՞ նրանք հանկարծ բոլորը համաձայնեցին հրեաների ոչնչացմանը:

Իրականության սոցիալական կառուցումը դարձավ, երևի, իշխի նկատմամբ այդ մոտեցման ամենահամապարփակ ձևակերպումը:

Մոտավորապես բիրտ ուժի և իրականության սոցիալական կառուցման միջև են տեղավորվում այնպիսի հասկացություններ, ինչպես **ազդեցությունը** (միջազգային հարաբերություններում այժմ շատ ուսումնասիրվող՝ որպես բիրտ, հարկադրական ուժին-բռնությանն այլընտրանք) և այսօր շատ մոդայիկ **փափուկ ուժը**: *Ազդեցությունը* և *փափուկ ուժը*, փաստորեն, այն հասկացություններն են, որոնցով բացատրվում է բիզնեսի կամ գլոբալ այլ երևույթների, ներառյալ՝ միջազգային օգնության ազդեցությունը հասարակությունների վրա: Օրինակ, «Կոկա-Կոլան» կամ «Մակդոնալդսը» համարվում են ամերիկյան ազդեցության՝ *փափուկ ուժի* հաջող արտահայտումներ. համարվում է, որ նրանց տարածվելն աշխարհով մեկ ամերիկյան մշակույթի և արժեքների տարածում է: Նույն կերպ կարելի է մեկնաբանել կապույտ ջինսի վրա ֆիքսվածությունը ԽՍՀՄ-ում. չէ՞ որ կան մարդիկ, որոնք ասում են, որ ԽՍՀՄ-ը քանդվեց «Ռանգլըր» և «Լևայս» ջինսերի՝ «դեֆիցիտ» և թանկ լինելու պատճառով: Զինսը, իհարկե, այս օրինակում խորհրդանիշն է սպառողական հաճելի ապրանքների լիության՝ Արևմուտքում:

Բայց, իհարկե, փափուկ ուժի ազդեցությունը շատ ավելի խորն է դիտարկվում: Այդպիսին է, օրինակ, այսօրվա Ռուսաստանը համարում Արևմուտքի՝ ԱՄՆ-ի և Եվրոպայի, ֆինանսական ներդրումները, հաճախ՝ անհատույց դրամաշնորհները մեր տարածաշրջանում կամ աշխարհի այլ մասերում: Համարվում է, որ այդպիսի ներդրումների շնորհիվ, ինչպես նաև, ասենք, մշակույթի տարածման (ինչպես անում է Բրիտանական խորհուրդը՝ անգլերեն ուսուցանելով մասսաներին – պատահական չէ, որ այդ գրասենյակն էլ փակվեց Ռուսաստանում, - կամ՝ Գյոթեի ինստիտուտը՝ գերմաներենը տարածելով) տվյալ պետությունն իր արժեքներն է ներարկում հասարակությանը, և հաճախ՝ «օտար» արժեքներ: Հատկապես այդպիսին են համարվում հանդուրժողականությունը դեպի համասեռականները, կանանց իրավունքները և այլն, այո՛: Մի կողմից, այո, այդպիսի արժեքներ

⁶⁶ Տե՛ս «Իրականության սոցիալական կառուցումը» գրքույկի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/The_Social_Construction_of_Reality

ներարկվում են, սակայն պետք է որոշել. **արդյոք դրանք տվյալ «հզոր» մշակույթի արժեքներ են, որոնք գալիս են ի հեճուկս տվյալ «խեղճ» հասարակության և նրա «վզին փաթաթվում», թե՛ համամարդկային արժեքներ:** Իրադրությունը բարդանում է նրանից, որ, ասենք, Արևմուտքի հրաժարումը՝ Արցախին օգնելու, մինչդեռ՝ Հայաստանում և Արցախում ժողովրդավարություն և մարդու իրավունքներ քարոզելը, համարվում է երեսպաշտություն, ուրեմն և՛ Արևմուտքից եկող ազդեցությունները շատերի կողմից համարվում են հայոց հասարակության համար ոչ օգտավետ և կողմնակալ, նույնիսկ՝ դավադրություն, ո՛չ թե համամարդկային արժեքների ներմուծում: Միևնույն ժամանակ՝ Արևմուտքից *քոփի-քյաֆ* է արվում (արտագրվում է, *թխվում է*) շատ բան, օրինակ՝ պառլամենտական համակարգի վերջին տարբերակը, որն այսօրվա Սահմանադրության մեջ խոշոր չափով արտագրվել է, *թխվել է* Գերմանիայից, որի պատմական փորձը բացարձակապես չի համապատասխանում Հայաստանի փորձին:

Սա քննարկման հետաքրքիր թեմա է: Մենք՝ ԵՀՀ-ն, համարում ենք, որ մարդու իրավունքները և ժողովրդավարությունը համամարդկային արժեքներ են, և դրանց հետևում ենք ո՛չ թե որովհետև Արևմուտքն է դրանք առաջարկում, ներարկում կամ պարտադրում, այլ՝ որովհետև այդպիսին է աշխարհի մեր ռացիոնալացումը: Ի վերջո, Մարդու իրավունքների հռչակագիրն ընդունվել է ողջ ՄԱԿ-ի կողմից: Իսկ դուք ի՞նչ եք կարծում: Այդ մասին վերջում էլի կխոսենք:

Թե ինչպե՛ս է սոցիալապես կառուցվում իրականությունը՝ դրա մի շարք տարբերակներ սկսեցին այժմ իշխի հասկացության տեսանկյունից, իշխի հետ երկխոսության և հարաբերության մեջ դիտարկվել: Մինչև այդ էլ, ասենք, նույնիսկ էթնոմարդաբանները, երբ հետազոտում էին տարբեր հասարակություններ, տարբեր ցեղեր, ցեղախմբեր և այլն, ավանդույթներ և այլն, անդրադառնում էին այս հարցերին. որ ամեն հասարակություն իր տիեզերքն է ստեղծում, ամեն հասարակություն ի՛նքն է որոշում, ասենք, երկրագունդը տափակ է, թե ոչ: Բնականաբար, երբ հասարակությունները մեկուսացումից դուրս են գալիս, արդեն համաշխարհային գիտություն է ստեղծվում (լուսավորչությունը եկավ և այլն), և կան այդ որոշումների և մոտեցումների մի շարք դեպքեր, որոնք արդեն նույնացել են աշխարհի մի խոշոր մասի, մարդկանց խոշոր մասի համար: Ասենք՝ համաշխարհային գիտական (և ոչ միայն) հանրույթն անվերապահորեն ընդունում է, որ երկրագունդը, այնուամենայնիվ, տափակ չէ, անկախ այդ փաստն ընդունողների ազգությունից, էթնիկ կամ կրոնական պատկանելությունից և ինքնությամբ վերաբերող այլ հատկանիշներից:

Բայց ամեն հասարակություն ի՛նքն է որոշում, և ամեն մշակույթ ի՛նքն է

որոշում աշխարհի իր տեսլականը: Իսկ դա նշանակում է՝ տեղի է ունենում **իրականության սոցիալական կառուցում**: Բոլոր ավանդույթները, որ՝ դու պիտի ամուսնանաս կամ որ պիտի հարսանիք անես, եթե ամուսնանում ես, կամ, չգիտեմ, չբաժանվես, կամ՝ բաժանվելն ազատ է... Ասենք՝ ինչպես է Հոլիվուդում. երբ նայում ես իրադրությանը՝ երբեմն մտածում ես. ամեն սիրավեպի համար պիտի բաժանվես-նորից ամուսնանա՞ս: Եվ տասնյակ անգամներ մարդիկ այդ արարողությունը կատարում են: Ինչու՞:

Հետաքրքիր հարց է, արժի խորանայ: Եթե ուզեք վարժություն անել՝ փորձեք սրա պատճառները վերլուծել:

Այդպես կառուցվում է իրականությունը: Իրականությունը սկսում է կառուցվել այն բոլոր իմաստներով, որոնք մենք նույնիսկ չենք էլ ըմբռնում: Մենք մի անգամ Իզաբելլայի հետ խոսեցինք⁶⁷ ես affordance⁶⁸ (օգտագործելիության տրամադրում) հասկացությունը ներս բերեցի: Դա էլ է իրականության կառուցման հարց. ինչպե՞ս և ինչու՞, ո՞վ է որոշել, որ աթոռը պիտի լինի այսպիսին, և աթոռի վրա նստելը պիտի լինի այսպես: Մենք՝ մարդկությունը, ստեղծել ենք աշխարհը մեր շուրջը, որքան կարողացել ենք՝ մեզ համապատասխան, և շարունակում ենք դա անել:

Ի՞նչ արդյունքների է դա բերում. բերում է, օրինակ, պատմության աղավաղմանն իշխական նպատակներով, այն, ինչը ես անվանում եմ **էթնոպիա, էթնոպիզմ (էթնոս և ուտոպիա բառերի միավորումից):** *Էթնոպիան* այն մոտեցումն է ազգին, ասես այն միշտ գոյություն ունի նույնությամբ, որպես կարծր, կոշտ և անփոփոխ իր, որպես պրիմորդիալ⁶⁹ երևույթ: Նաև անվանում են էսենցիալիստական մոտեցում՝ ազգ երևույթին⁷⁰: Դա բերում է երևակայական հանրույթներ⁷¹ ստեղծելու ֆենոմենին, նացիոնալիզմի բոլոր դրսևորումներին, երբ պատմությունն աղավաղվում է, լեգենդները, (փսևդո)միֆերը (տե՛ս շրջանակը հաջորդիվ) ստեղծվում են, որպեսզի մարդիկ հավատան, որ իրենց ազգն ամենահինն է, կապիկներից հետո առաջինն ինքն է եկել, և ամբողջ մարդկությունը սկսվել է այդ ազգից, և մարդկության բոլոր լավագույն գործողություններն այդ ազգի ներկայացուցիչներն են իրագործել. բերում է այդ բոլոր ֆենոմենների շարքին:

⁶⁷ Տե՛ս «Ազատության գրույցներ. Գաղափարներ և գաղափարախոսություններ» գրույցը՝ այստեղ. <https://epfarmeria.am/hy/video/Freedom-talks-ideas-and-ideologies>

⁶⁸ Տե՛ս <https://en.wikipedia.org/wiki/Affordance>

⁶⁹ Տե՛ս պրիմորդիալիզմի նկարագրությունը այստեղ. <https://en.wikipedia.org/wiki/Primordialism>

⁷⁰ Տե՛ս <https://en.wikipedia.org/wiki/Essentialism>

⁷¹ Տե՛ս Benedict Anderson, “Imagined communities”, 2006 (անգլ.), օրինակ՝ ներկայացված այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Imagined_community

Միֆը

Միֆը (առասպելը) դասական իմաստով աստվածային էակի մասին պատմություն է, որին վերագրվում է իրականությանը համապատասխանություն (մարդիկ հավատում են կամ պիտի հավատան, որ այդպես էլ եղել է): Այն գործել է որպես աշխարհը մարդկանց բացատրող միջոց:

Միֆը գիտական և մետաֆորիկ իմաստով անիրական պատմություն է, որն օգնում է մարդկանց ապրել. կողմնորոշվել կյանքում, չնայած ճշգրիտ «օբյեկտիվ» ճշմարտության բացակայությանը կամ անհասանելիությանը (կամ՝ դրան ի հեճուկս): Սովորաբար այդպիսի դեպքերում ստեղծվում է «արժեք-հետևանք» պայմանական կամ պատճառա-հետևանքային վարկած: Օրինակ՝ սույն տեքստը ելնում է այն վարկածից, որ մարդու իրավունքների պաշտպանությունը և զարգացումը կծառայի ողջ մարդկության բարօրությանը, թեև այս պայմանական կամ պատճառային կապակցությունն էմպիրիկ կերպով հաստատված չէ: Նույն կերպ էլ դստերը կարճ շրջազգեստ հագնել չթույլատրող հայրը գտնում է, որ եթե դա տեղի ունենա, իր դուստրը սխալ տպավորություն կթողնի շրջապատի վրա կամ իրոք կդառնա ոչ այնքան առաքինի, որքան պիտի լինի, և այդ գործոնները կազդեն դստեր ողջ ապագա կյանքի վրա: Միֆն այդ իմաստով գիտելիքի հետ հետաքրքիր հարաբերության մեջ է գտնվում. եթե տեսականորեն համարվում է, որ գիտելիքն այն է, ինչ համեմատաբար ճշգրտորեն համապատասխանում է իրականությանը (այս պնդումը հաճախ նույնպես կարող է միֆ լինել, քանի որ իրականությունը շատ բարդ երևույթ է), ապա միֆն այն է, ինչի անճշգրիտ մասն ավելի մեծ է, սակայն իրականությանը որոշ համապատասխանություն, այնուամենայնիվ, այն ունի: Օրինակ, անցյալի և փակ համայնքներում երիտասարդ աղջկա կարճ շրջազգեստն իրոք կարող է/էր նրա հետագա ճակատագրի վրա ունենալ խոշոր բացասական ազդեցություն, համայնքի ճնշման՝ իշխի պատճառով, համայնքի նախապաշարումների, կարծրատիպերի պատճառով: Սակայն այսօր կան շատ բնակատարածքներ (բնակատեղանքներ⁷²), որտեղ այդպիսի խնդիր չկա, բայց նաև՝ այնտեղ, որտեղ այդպիսի խնդրի մնացորդներ կան, այդ արարքը՝ կարճ շրջազգեստ կրելը, ընկալվում է որպես մարդու ազատության համար պայքարի օրինակ, այսինքն դրական իմաստով սադրիչ նշանակություն ունի:

Փսևդոմիֆ էս անվանում են այն դեպքերը, երբ որևէ անապացուցելի պատճառա-հետևանքային կապ առաջադրվում է իշխի կողմից չափազանց շեշտադրումով՝ որպես ինքնըստինքյան աքսիոմատիկ, անքննարկելի, անքննադատելի, - և սակայն դա արվում է ոչ թե պարզապես սոցիոլոգիական իշխի «ավտոմատ» կենսագործունեության

⁷² «Բնակատարածք» կամ «բնակատեղանք» անվանենք մարդկանց բնակության այն տարածքը / տեղանքը, որտեղ համայնքն առանձին մարդուն ճնշելու նշանակալի գործառույթ է իրականացնում, փոխանակ բարենպաստ պայմաններ ապահովի նրա անհատական ինքնության ծաղկման համար: Համայնքին հարաբերվում է նույն կերպ, ինչպես բնակչությունը՝ հասարակությանը:

պատճառով, այլ՝ միտումնավոր և դիտավորյալ կերպով՝ մարդկանց խաբելու և շահագործելու նպատակով: Այսինքն երբ միջ ստեղծողների առաջնորդները գիտակցում են, որ ունեն ետին նպատակներ: Ինչպես, օրինակ, հենց նույն կարճ փեշի հարցը՝ նոր, ժամանակակից իրադրության մեջ. մեր այսօրվա հասարակությունում արդեն պարզ է, որ, եթե մարդը ցանկանում է ազատ իրադրության մեջ կարճ փեշ կրել, դա իր իրավունքն է, և ոչ ոք իրավունք չունի դա արգելել կամ այդ փաստի հիման վրա մարդու վերաբերյալ հետևություններ անել: Այն արդարացումը, թե դա «կնոջ օգտին է», այժմ այլևս չի աշխատում, և մնում է միայն կնոջը ճնշելու, իշխելու պատճառը, ճիշտ ըստ Ֆուկոյի բացատրության:

Մենք տեսնում ենք, որ ցանկացած միջ կարող է դիտարկվել որպես փսևդոմիֆ, եթե դիտարկվում է դրա ծառայությունն անարդար իշխին: Այսինքն երբ և եթե քրմերն օգտագործում էին դասական միջերը մարդկանց վախեցնելու և հնազանդ պահելու համար, դրանք արդեն դառնում էին փսևդոմիֆ: Ավելին. եթե որևէ միջ խանգարում է մարդու կյանքին և նպատակներին, սակայն դրա քանդումը չի վնասի որևէ կարևոր արժեք (մի սպանիր, մի գողանա, ուրիշի հետ վարվիր այնպես, ինչպես կուզեիր, որ վարվեն քեզ հետ և այլն), մարդ իրավասու է այն վերափմաստավորել և նաև «ջարդել»: Այդպիսի դեպքերը նաև անվանում են «տաքունները ջարդել»:

Փսևդոմիֆի մեկ այլ օրինակ է այն վարկածը, որ, եթե կոռուպցիայի դեմ լրջորեն պայքարես Հայաստանում, պաշտպանունակությունը կթուլանա և Արցախը կհանձնվի, հետևաբար՝ չի կարելի հետապնդել գողոնի վրա նստած իշխավորներին, որոնք, իբր, ապահովում են Արցախի պաշտպանությունը: Հետաքրքիր է, որ այս փսևդոմիֆը երևութականորեն նույնիսկ, թվում է, հաստատվեց 44-օրյա պատերազմի «շնորհիվ», սակայն այստեղ մենք ունենք շատ խորը վերլուծության կարիք, թե ինչու՞ դա տեղի ունեցավ: ***Սա կարող է լինել ձեր քննարկման առարկան:***

Մենք ինչո՞վ ենք զբաղված որպես կազմակերպություն, և ես՝ որպես անհատ. ոչ թե փորձելով բոլորին համոզել, որ սա սխալ է, ասենք՝ էթնոպիզմի շաբլոնով իրականության սոցիալական կառուցումը սխալ է: Պարզ է, որ սխալ է: Դա նաև շեղում է մարդկանց: Մենք փորձում ենք գործիքներ մշակել, որոնք թույլ կտան մարդկանց կողմնորոշվել այսպիսի հարցերում: Որոշել, արդյոք հասարակության ճնշման այս կամ այն դեպքին անհատը համաձայն է, թե՛ ոչ, և եթե ոչ, ի՞նչ անի, իսկ եթե՛ մասամբ, ինչպե՞ս կարողանա ազդել այդ նորմի փոփոխության վրա: Որպեսզի մարդը կարողանա որսալ իր մեջ ճնշված ազատությունը, հասկանա, թե ե՞րբ և ինչու՞ է այդ ճնշելը տեղի ունեցել, և որոշի, արդյոք նա ցանկանում է շարունակել ենթարկվել այդ նորմին կամ այդ ավանդույթին, թե ոչ: Եվ

արդյոք կա՞ այդպիսի ավանդույթ, թե՞ միայն իրեն է թվում, և եթե նա գնաց այդ թվացյալ ավանդույթին հակառակ, ոչ ոք բացասական ռեակցիա չի տա, կամ ով որ տա՝ կարևոր չէ:

Օրինակ, կարճ շրջագգեստ հազնեւը կարող է որոշ շրջապատներում անընդունելի համարվել, իսկ քիթը կտրելը՝ ոչ: Ինչու:՝ Քննարկեք, խնդրեմ:

Իրականության սոցիալական կառուցումը նորմալ երևույթ է. մենք դրանում խորապես ընկղմված ենք: Աննորմալ է մեր՝ դրա չգիտակցելը հաճախ: Դրան հպատակվելն այն դեպքերում, երբ դրա կարիքը չկա: Ինչը դառնում է նույնպես դրա կառուցում: Ինքներս մեզ իրականության սոցիալական կառուցող կամ, ինչպես ես եմ ասում՝ «ռազմավարական ուժ» չհամարելը: Ինչը դառնում է էլի արարք. «ռազմավարական ուժ»-երից զուրկ հասարակության կառուցում: Այլընտրանքային իրականություն կառուցել չհամարձակվելը, չգիտակցելը, որ մենք նույնպիսի խաղացող ենք այս սոցիալական և բնական կյանքում, ինչպես և ցանկացած այլ մարդ կամ այլ բարդ սուբյեկտ՝ մարդկային փոխկապակցված խումբ, որը որոշ դեպքերում միասնաբար է գործում: Օրինակ, ծառեր հատողը պայմանավորում է, որ իր սերունդը կմեծանա անծառ միջավայրում (եթե, իհարկե, հատվածների փոխարեն նորերը չեն տնկվում). ինչպե՞ս կփոխվեն նոր սերնդի հոգեբանությունն ու վարքն այդ պատճառով: Ո՞վ է մտածում այդպիսի բաների մասին: Քչերը՝ մեր հասարակությունում, սակայն ավելի ու ավելի՝ գլոբալ մակարդակում:

Բայց ավելին. ճիշտ ինչպես որ իրականության սոցիալական կառուցմանը գիտակցորեն չմասնակցելն է՛լ է այն կառուցում, ինչպես որ իրականություն ընդունելը, ասես այն բնական է՝ անփոփոխելի (մինչդեռ այն սոցիալական է՝ փոփոխելի), նույնպես այն կառուցելու ձև է, պարզապես՝ ո՛չ այնպիսին, ինչպիսին կուզենայիր, որ այն լիներ, - նույն կերպ էլ իրականության «չքննադատական» սոցիալական կառուցման պատճառով տեղի են ունենում **ինքնահրագործվող կանխագուշակումներ**⁷³: Եթե դու երեխային անընդհատ ասում ես՝ «դու անհաջողակ ես, ձեռքիցդ ոչինչ չի գալիս, դու սխալ ես վարվում, դու սենց ես-նենց ես», երեխան մեծանում է և դառնում է այդպիսին: Կամ տեղի է ունենում, ասենք, այն, ինչ մեր քննադատական մտածողության բառարանիկում⁷⁴ էլ կա՝ «օվերտոնի մեթոդը»: Երբ ամենաանձևակերպելի, ամենատաբուսացված

⁷³ Տե՛ս ինքնահրագործվող կանխագուշակումների մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Self-fulfilling_prophecy

⁷⁴ Քննադատական մտածողության բառարանը այստեղ (էջ 22). <https://epfarmeria.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>

թեման մտցվում է հանրային դիսկուրս, որից հետո արդեն այդ թեման զարգացնելը և շարունակելը հեշտ է: Ասենք, որ «այսինչ ժողովրդին պետք է ոչնչացնել, որովհետև իրենք են պատճառը բոլոր մեր անհաջողությունների և մեր ժողովրդի սխալ ճակատագրի»: Ասենք՝ հրեաների նկատմամբ նացիստական, մինչ-նացիստական այդ ամբողջ պատմությունն ինչպե՞ս ձևավորվեց:

Ամենաանմարդկային գաղափարը դու կարող ես ընդգրկել հանրային դիսկուրս, մանավանդ՝ հիմա, սոցիալական համացանցի պայմաններում: Երբ մտել է, արդեն կարելի է այն զարգացնել: Գիտեք, սև PR-ը որն է: Նույնիսկ երբ դու որևէ անընդունելի բանն անելը քննադատում ես, դու ուժգնացնում ես այդ անընդունելի բանի գոյությունը սոցիալական դիսկուրսում: Լեգիտիմացնում, արդարացնում նրա գոյությունը դիսկուրսում ընդհանրապես: Այսինքն՝ սոցիալապես կառուցում ես աշխարհը: Աշխատում է իրականության սոցիալական կառուցման իշխը, և թվում է, թե ոչ մեկը հեղինակը չէ:

Ինչու՞ է, ասենք, Դմիտրի Կիսելյովի այդ խոսքը, ռուսաստանյան գլխավոր հեռուստաալիքով ասված՝ որ «մենք Ամերիկան կդարձնենք միջուկային փոշի», վտանգավոր. որովհետև նույնիսկ Սառը պատերազմի ընթացքում, 1945 թվականից սկսած, այդպիսի սպառնալիք չէր հնչել ո՛չ մեկի կողմից: Նույնիսկ Կարիբյան ճգնաժամի⁷⁵ ընթացքում չէր հնչել ո՛չ Ամերիկայի, ո՛չ Խորհրդային Միության կողմից: Այդ սպառնալիքի՝ այդպիսի հանրային հնչեցումը հենց այդ Օվերտոնի պատուհանն էր. «մենք մտցրեցինք միջուկային նախնական հարված հասցնելու դիսկուրսը մեր այսօրվա հարաբերություններ», ասում են Կիսելյովն ու իր կլիկը: Այն, ինչի դեմ տասնյակ տարիներ շարունակ աշխատել են և՛ Խորհրդային Միության առաջնորդներն ու պատասխանատուները, և՛ Ամերիկայի այն ժամանակվա նախագահներն ու իրենց թիմերը: Եվ հիմա հարց է առաջանում. Կիսելյովը դա արեց, որովհետև ինքն ու իր խոսքը, ընդհանրապես՝ խոսքը, էժա՞ն են այսօր, էժանացե՞լ են: Թե՞ հենց դա անելու համար՝ նախապատրաստելով իրադրությունը: Այսօր գուցե բառը, խոսքն արդեն այնքան են էժանացել համաշխարհայնորեն, որ այլևս համարվում է, որ ո՛չ մի սրբություն չկա: Ամեն՞ ինչ կարելի է ասել հանրայնորեն, մանավանդ՝ իշխի անունից, մանավանդ՝ եթե *լեգիտական ավտոկրատիա* ես: Բայց իրականում հնարավոր ազդեցությունը մնում է: Կատաստրոֆիկ պատերազմների շանսն այդպիսի խոսքերից ավելի ռեալ է դառնում: Իսկ ինչպե՞ս դիմակայել:

⁷⁵ Տե՛ս Կարիբյան ճգնաժամի մասին այստեղ.
https://en.wikipedia.org/wiki/Cuban_Missile_Crisis

Մենք դա՛ ենք քննարկում և սովորեցնում: Ստեղծիր քո դիսկուրսը:
Քննարկեք, խնդրեմ, ինչպես կարելի է դա անել:

Միջազգային հարաբերություններում ինքնաիրագործվող կանխագուշակումը վաղուց կոչվում է «անվտանգության դիլեմա»։ Կիսեյրովի խոսքերը հենց այդպիսի սպառնալիքի օրինակ են: Ինչու՞ է առաջանում պատերազմների խոշոր մասը: Որովհետև դու գիտես, որ դիմացինդ՝ քո ախոյանը, քո թշնամին ուժեղանում է, և հասկանում ես, որ մի քիչ էլ ուժեղանա՝ հարձակվելու է, և որպեսզի կանխես դա, դու՛ ես հարձակվում առաջինը: Եվ եթե դու չհարձակվես, որովհետև չես ուզում պատերազմ՝ վտանգը, որ նա հարձակվելու է՝ մեծանում է, իսկ եթե հարձակվես՝ պատերազմ հրահրեցիր: Դա՛ է անվտանգության դիլեման:

Այն լուծվում է շատ հեշտ ձևի, չէ՞, շատ հեշտ. երկխոսության միջոցով: Ա՛յ, եթե երկխոսություն չկա, եթե մեկուսացում է տեղի ունենում, ապա անվտանգության դիլեման սկսում է անխափան զարգանալ, աշխատել և աշխարհի քարտեզը ծածկել: Ծատ գիտնականներ համարում են, որ հենց դա էր պատճառը Առաջին համաշխարհային պատերազմի: Նաև Վիկտոր Սուվորովը⁷⁶ դրանով է բացատրում Հիտլերի հարձակումը Ստալինի վրա. Ստալինն էր պատրաստվում հարձակվել, բայց չհասցրեց: Սուվորովը պատմում է, ինչպես Ստալինը կառուցեց արևելք-արևմուտք մայրուղիներ ԽՍՀՄ նոր՝ Հիտլերի հետ պակտից հետո առաջացած ամբողջ արևմտյան սահմանով. որպեսզի տանկերն արագ հասնեն Գերմանական կայսրություն: Ինչպես տանկերը թեթևացրեց՝ որ արագ շարժվեն, պահպանելով նրանց զրահը միայն առաջնամասում և հանելով ետնամասից: Չէ՞ որ նա չէր պատրաստվում նահանջել, այլ ուղիղ՝ մինչև Բեռլին: Եվ երբ Հիտլերը նրանից առաջ ընկավ՝ նա սարսափելի մանթրաշ ընկավ, այո՞: Եվ տանկերը, որ պիտի նահանջեին՝ քամակները բաց, ոչնչացվում էին խրճերով, որովհետև քամակներին զրահ չունեին: Որքան գիտեմ, և Ազատության պողոտան ու Թբիլիսյան խճուղին, և Մյասնիկյան խճուղին կառուցվել են 1939-1940 թվականներին: Դրանք այն մայրուղիներն էին, որ արևելքից էին Երևան գալիս, և ասում են, որ հենց այդ նպատակով. որպեսզի, երբ պետք լինի, սովետական տանկերը գնան դեպի Թուրքիա: Անվտանգության դիլեմայի խնդիրն այն է, որ հաճախ չգիտես, այժմ ռեակտիվ ես քո արարքում, ի պատասխան հակառակորդի՞ արարքի ես թշնամական քայլ կատարում, թե՞ պրոակտիվ՝ նրա հնարավոր արարքից՝ քո վախին ի պատասխան. և արդյոք չափված-ձևված է արարքդ, չափազանցված չէ՞, բալանսը վերականգնելու փոխարեն չի՞ խախտի ավելի ուժգնորեն, քան կարող էիր քեզ թույլ տալ:

«Անվտանգության դիլեման» հաղորդակցության մեջ բավարար չափով չգտնվող և միմյանց թշնամացած կողմերի ճակատագիրն է. եթե կոնֆլիկտը բավարար միջոցներով չի հասցեագրվում խաղաղ լուծման նպատակով՝

⁷⁶ Տե՛ս Վիկտոր Սուվորովի մասին այստեղ.
https://en.wikipedia.org/wiki/Viktor_Suvorov

այն բերում է էսկալացիոն պարույրի, որը լավագույնս նկարագրվել է Հովհաննես Թումանյանի «Մի կաթիլ մեղր»-ում: Այս ծուղակին է կապված նաև հակառակորդների՝ միմյանց հայելայնորեն արտացոլելը. եթե հակառակորդներից մեկն ունի ուժեղ կամ աշխատող փաստարկ՝ մյուսն էլ է սկսում այդ նույն փաստարկն օգտագործել⁷⁷: Դրանով է պայմանավորված, օրինակ, Ադրբեջանի կողմից «ցեղասպանություն» բառի չարաշահումը: Մյուս քայլն է՝ հակառակորդի փաստարկները թուլացնելը. այդ է պատճառը, որ Ադրբեջանն ամեն ինչ արեց, որպեսզի հայկական կողմի արցախյան պայքարը վերաձևակերպվի ո՛չ թե որպես հայ էթնիկ փոքրամասնության խնդիր, այլ որպես տարածքային հարց և Հայաստանի կողմից՝ հողերի գրավում: Ավաղ, հայկական կողմը նույնպես տրվեց այդ մոտեցմանը, համենայն դեպս՝ սկզբունքորեն չհարունակեց պաշտպանել իր ոչ-նկրտումային մոտեցումն Արցախյան հարցին (օրինակ, զոհաբերեց արցախցիների մասնակցությունը բանակցություններին):

Վերջապես, այս մոտեցումը հանգեցնում է հավասարության նշանի, որ միջազգային հանրությունը դնում է հակամարտող կողմերի միջև: Դրսից դիտելիս՝ նրանք ավելի և ավելի են նմանվում միմյանց և դառնում գրեթե անտարբերակելի: Փոխանակ հստակեցնեն, թե ո՞ր դեպքում ո՞վ է մեղավոր՝ միջազգային ատյանները նշում են մարդու իրավունքների խախտումները՝ «երկու կողմից» էլ, հաճախ արհեստականորեն նույնականացնելով և հավասարեցնելով մեկ և մյուս կողմերի «մեղքը»: Այդ մոտեցումն այսօր կոչվել է *bothsideism* – «երկուկողմնէլ-ույթուն», և զուգորդվում է շեքսպիրյան ասույթին՝ Մոնտեքքի և Կապուլետի ընտանիքներին ուղղված. «Ժանտախտը թող երկուսիդ տունն էլ խցի»:

Ձայն դահլիճից

Քանի որ խոսք գնաց անվտանգության զգացման վերաբերյալ, ու քանի որ, դրանից ելնելով, մարդիկ սկսում են մտածել, որ դիմացինը կարող է հզորանալ և հարձակում իրականացնել, զուգահեռ է առաջանում հոգեբանության մեջ Մասլոուի բուրգին. բազային կարիքներին հաջորդում է ապահովության զգացողությունը: Կոնֆլիկտի մեջ գտնվող պետությունների պարազայում, եթե այդ բազային պահանջը չի բավարարվել, արդյոք կարո՞ղ են իրենք ավելի «վեր» բարձրանալ՝ ինքնաիրացվել, զարգանալ, ինքնագիտակցության այդ մակարդակն արդյոք կարո՞ղ է հաստատվել:

Մասլոուն, ավաղ, ինքն իր բուրգին դեմ էր, ճիշտ ինչպես Մարքսն ասում էր կյանքի վերջում՝ «միակ բանը, որ ես գիտեմ, որ ես մարքսիստ չեմ», նույն կերպ էլ խեղճ Մասլոուն. խոշոր գիտնական, որի բուրգը չարաշահվեց:

⁷⁷ Տե՛ս կոնֆլիկտի հայելանմանեցման տեղեկանքների մասին հոդվածը (անգլերեն). <https://gtergab.com/en/news/publicism/social-construction-of-a-conflict-1996-2011/24/>

Ոչ մի բանը մարդու մեջ անշարժ գոյություն չունի. այն, որ բուրգն ասում է՝ սկզբում, այսպես ասած, կենցաղային, կենսական կարիքների բավարարիր, հետո՝ ես բարձր մատերիաներից մտածում՝ այդպես չէ: Խառն է: Քեզ համար բարձր մատերիան կարող է լինել կենսական կարիք, և ուտելը՝ չլինել, ինչպես ճգնակյացի համար, օրինակ: Մասլոուի հասկացությունները, այսպես, իրար մեջ մտած ապարների տեսք ունեցող հասկացություններ են, տարբեր մակարդակներում գտնվող, բայց՝ իրար մեջ մտած ապարներ: Հաճախ մենք այդ դեպքն ունենք տարբեր պատճառներով, երբ անվտանգությունդ ապահովված չէ՝ իսկ դու ուրիշ բաներով ես զբաղվում: Եվ դա նորմալ է, պատահում է (որովհետև մարդն ու հասարակությունն ազատ են), ինչպես նաև, ավաղ՝ հակառակը. երբ անվտանգությունդ ապահովված է (ինչպես, օրինակ, Ռուսաստանինը՝ մեծ հաշվով), իսկ դու զարգանալու փոխարեն էլի դրանով ես զբաղված և միայն դրանով, իրականում՝ ընդամենը թուլանալով արդյունքում: Մեկ այլ օրինակ՝ մի ճլպստան փոքրիկ տղա հարձակվում է մի ուժեղ հսկայի վրա: Ինչու՞, որովհետև նա մտածում է. «Թե ես չհարձակվեմ՝ ինքն է ինձ վրա հարձակվելու, ավելի լավ է՝ ես հարձակվեմ: Նույնիսկ եթե ծեծ կերա՝ բայց գոնե դիմացիների աչքում կերևա, որ ես «խառոշի» տղա եմ, այսպես ասած»: Դա անընդհատ տեղի է ունենում:

Դավադրապաշտությունը⁷⁸, ֆեյք նյուզը (fake news), հետ-ճշմարտությունը, փսևդոմիֆը, պոստմոդեռնիզմի տերմիններ «սիմուլյակրը», կեղծ գիտակցությունը՝ ամենն իրականության սոցիալական կառուցման միջոցներ են: Պետք է հասկանալ նաև՝ ինչու՞ է մեզ պետք քննադատական մտածողությունը. որովհետև մենք անընդհատ ապրում ենք իրականության սոցիալական կառուցման իրադրություններում: Ճիշտ ինչպես որ որոշում ենք՝ տվյալ օրենքին հետևե՞լ, թե՞ չհետևել, նույնն էլ այս դեպքում. հետևե՞լ արդյոք այսինչ ասածին, հավատա՞լ կամ համաձայնե՞լ այնինչ դրույթին, թե՞ ոչ: Մենք անընդհատ դրա վերաբերյալ որոշումներ ենք կայացնում, գիտակցաբար, թե՞ ոչ: Եվ այսօրվա, ժամանակակից հասարակության վիճակն այն է, որ որքան շատ այդպիսի դեպքերի վերաբերյալ անձնական որոշումներ ընդունես, այնքան ավելի հեշտությամբ կխուսափես մանիպուլյացիաներից: Որպեսզի դժգոհ չլինես, որ քեզ ամուսնացրին քսան տարեկանում, մինչդեռ դու այդ ժամանակ դեռ չէիր

⁷⁸ Դավադրության տեսություն ելույթի առաջին մասը հասանելի է այստեղ. <https://epfarmenia.am/hy/video/conspiracy-theory-part-1> երկրորդ մասը՝ այստեղ. <https://epfarmenia.am/hy/video/conspiracy-theory-part-2> «Դավադրության» փոդքասթը հասանելի է այստեղ. <https://epfarmenia.am/hy/news/gevorg-ter-gabrielyan-speaks-about-conspiracy-theories>

հասկանում, սերն ի՛նչ է, ամուսնությունն ի՛նչ է, երեխա ունենալն ի՛նչ է և այլն: Որպեսզի դու ի՛նքդ պատասխանատու լինես քո բոլոր որոշումների համար: Ուզում ես այս ծեսերը, թե՛ ոչ: Քեզ տարան եկեղեցի, իսկ հետո պարզվեց, որ դու, ինչպես Սուսանա Հարությունյանի⁷⁹ պատմվածքում է՝ աստծո դեմ կռիվ ունես, չէիր ուզում եկեղեցով ամուսնանալ: Դու պիտի համաձայնես կամ ոչ ամեն ինչին:

Դա խնդիր է, որովհետև իրականության սոցիալական կառուցումը նախ և առաջ տեղի է ունենում հենց այն պահից, երբ նորածին երեխան ծնվեց՝ ընտանիքում: Ծնողները հսկայական իշխ ունեն երեխայի հանդեպ: Պետք է շատ զգույշ լինեն, որևէ կերպ բալանսավորեն իրենց իշխը, որպեսզի չձևավորեն այնպիսի երեխա, որը, իրեն խաբված զգալով իրականության սոցիալական կառուցման այն հանգամանքներից, որոնցում ժամանակին ընկղմված էր, և որոնք իր ազատությանը, կամքին, անկախությանը դեմ էին, – անհաջողակ, դժգոհ, աշխարհին չադապտացված մարդ դառնա:

Պետք է նաև հասկանալ, որ մարդիկ հիմնականում ապրում են *կոգնիտիվ դիսոնանսի*⁸⁰ մեջ: Նրանք, ովքեր քննադատական մտածողությունը մինչև վերջ չեն կարողանում կիրառել, ապրում են կոգնիտիվ դիսոնանսի մեջ ընկղմված: Մի կողմից՝ իրականության սոցիալական կառուցման մի խոշոր մասը՝ փսևդոմիֆային մասը, իրենց ասում է, որ երկրագունդը տափակ է, որ ալֆա որձերը ճիշտ ու լավն են, որ մարդը մարդուն գայլ է, որ «լավ» ազգը միավորվածն է՝ միաձև մտածող, և այլն: Մյուս կողմից՝ նրանք կյանքում հանդիպում են այլ իրադրությունների, և մի քիչ, այսպես, շիզոֆրենիկ վիճակում են հայտնվում: Դա գրեթե բոլոր մարդկանց ճակատագիրն է: Ուղղակի ոմանք, ռեֆլեքսիա անելով, իրենց այդ շիզոֆրենիաներից ազատվում են և տակից դուրս են գալիս, իսկ մարդկանց մի մասն էլ, այդ վիճակին լավ թե վատ հարմարված, ապրում է: Մի կողմից Արցախը մերն է, մյուս կողմից մենք չենք ուզում ո՛չ պատերազմ, ո՛չ Արցախ, ո՛չ մի բան: Այդպիսի ֆենոմեն գոյություն ունի, դա շատ մարդկային, շատ տարածված ֆենոմեն է, և պետք է որոշել, ո՛րն է իրականությունը քեզ համար: Ո՛րն ես դու, ի վերջո, ընտրում: Առանց լրջորեն ընտրելու է ապրել այս հասարակությունն այսքան տարիներ: Սակայն իրադրությունն ավելի բարդ է՛լ է. հաճախ կան իրադրություններ, երբ ստիպված ես առանց ընտրելու ապրել՝ ընտրության երկու կամ ավելի հնարավորություններն անընդհատ մտքումդ՝ գիտակցությանդ լուսավոր

⁷⁹ Տե՛ս Սուսանա Հարությունյանի մասին այստեղ. <https://bit.ly/3owUaHO>

⁸⁰ Տե՛ս կոգնիտիվ դիսոնանսի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Cognitive_dissonance

մասում պահած: Պետք է գիտակցել, որ կա ընտրություն, բայց միշտ չէ, որ այն տեղին է. այդպես, անլուծելի հակասությունները մտքում բաց պահած ապրող մարդիկ ավելի հարմարված են իրականությանը հաճախ, քան նրանք, ովքեր պահանջում են շուտափույթ, թեկուզ՝ իռացիոնալ և չմտածված ընտրություն: Հակասությունը պետք է պահել այնքան ժամանակ, մինչև որ ի վերջո չհստակվի, թե ո՞ր որոշումն է ճիշտ, կամ՝ այդ հակասությունը դեգակտուալանում է: Ես այդ մասին խոսել եմ⁸¹:

Իշխ և ճշմարտություն

Իշխանության և ճշմարտության (նաև՝ իմացության, իմացաբանության, գնոսեոլոգիայի, էպիստեմոլոգիայի) փոխհարաբերությունը բազմիցս հասցեագրվել է մտածողների կողմից: Հայտնի է Ֆրենսիս Բեքոնի ձևակերպումը՝ «Գիտելիքն ուժ է»: Ճշմարտությունը, բնականաբար, անմիջականորեն ասոցացնում են գիտելիքի և, ուրեմն, գիտության հետ, իսկ ուժը՝ բոլոր մակարդակների իշխանության: Սակայն քսաներորդ դարի կեսերին Ֆուկոյի և այլոց գիտական հեղաշրջումը կարծես շրջեց այս ձևակերպումը՝ կենտրոնանալով այն հարցի վրա, թե ինչպե՞ս է իշխանությունը որոշ(արկ)ում ճշմարտությունը, ազդում այն հանգամանքի վրա, թե ինչպե՞ս է (բն)որոշվում ճշմարտությունն այս կամ այն դարաշրջանում: Մենք կարող ենք տեսնել դրա բազում դեպքեր: Մի կողմից՝ գիտնականները, ուսուցիչները, կրոնապետերը (հնում՝ քրմերը) և գաղափարների այլ տիրապետողները որոշում էին, ինչն է գիտելիք կամ ճշմարտություն, ինչը՝ ոչ, և ոչ միայն առաջարկում, այլև պարտադրում դա իշխի հպատակներին: Այդպես, ուսուցիչները տիրապետում էին/են դասագրքային ճշմարտությանը և սովորեցնում այն աշակերտներին: Բաց էր/է թողնվում այն խնդիրը, որ դասագրքային ճշմարտությունը կարող է լինել ինչ-որ ժամանակ մարդկանց որոշածը, պայմանավորվածը՝ այս կամ այն շահերից ելնելով կամ թեկուզ քառսային կերպով ձևավորված, այլ ոչ թե «օբյեկտիվ ճշմարտությունը»: Բնական է, որ «օբյեկտիվ ճշմարտության» առկայությունն իսկ հարցականանում է այդպիսի մոտեցման դեպքում, հատկապես երբ խոսում ենք հասարակական, պատմական և հումանիտար ասպարեզների տիրույթին վերաբերող գործընթացների մասին: Իսկ երբ քննարկվում են «ճշգրիտ» գիտությունները, խոսքն առնվազն մարդկանց մտքի ուղղությունների մասին է – ուղղություններ, որոնք, պայմանավորված լինելով հասարակությամբ, իրենց գոյությամբ իսկ բացառում են այլ ուղղությունները, ինչի պատճառով էլ, համաձայն Թոմաս Կունի⁸², պատմականորեն դանդաղ են տեղի ունենում նոր **գիտական պարադիգմների** հաղթանակները հների նկատմամբ: Միշել Ֆուկոն առաջարկեց նոր հասկացություն՝

⁸¹ Տե՛ս «Ինչպե՞ս դիմակայել ինֆորմացիոն հոսքի տարափին» տեսաելույթն ու տեքստն այստեղ. <https://epfarmeria.am/hy/video/how-to-withstand-information-flow>

⁸² Տե՛ս Թոմաս Կունի մասին այստեղ. <https://plato.stanford.edu/entries/thomas-kuhn/>

Էպիստեմ, բնորոշելու համար իշխող հասարակական և գաղափարական հարաբերությունների ընդունված այն ձևակերպումները, որոնք որոշում են, թե ամեն տվյալ պատմական ժամանակաշրջանում ի՞նչ ուղղությամբ կարող է շարժվել գիտնականների միտքը և/կամ աշխատանքը:

Դասագրքային «օբյեկտիվ ճշմարտությունը» միայն տվյալների՝ իրականությանը համապատասխանելուն չի վերաբերում, այլ նաև՝ այդ տվյալների կոմբինացմանն ու ներկայացմանը: Որպես պարզ օրինակ՝ գրականության դասագրքերում կա հեղինակների հիերարխիա, ըստ որի՝ որոշ հեղինակներ ավելի մանրամասն են ուսումնասիրվում, իսկ ոմանք պարզապես բացակա են: Այդպիսով սովորողի մտապատկերում ամրապնդվում է աշխարհի այն պատկերը, որը նրան թելադրվել է դասագրքի կողմից: Ասենք, հայ գրականության դասագրքերում կարող է բացակայել կամ գրեթե չերևալ Վրթանես Փափագյանի անունը, մինչդեռ Եղիշե Չարենցին անդրադարձ է կատարվում գրեթե ամեն տարի: Էլ չասած կին հեղինակների մասին, օրինակ՝ Ջապել Եսայանի: Համարվում է, որ Չարենցը հանճար էր (ինչում կասկած չկա), ուրեմն և նրան պիտի ավելի շատ անդրադարձ լինի: Սակայն ի՞նչ և ինչու՝ է որոշել այդ հիերարխիան, այդ սանդղակը՝ պատասխանը սովորաբար բացակայում է: Էլ չասած, որ Չարենցի ժառանգության տարբեր մասերը տարբեր քաղաքական իրադրություններում ավելի են ընդգծվում, ասենք՝ խորհրդային վերջին ժամանակներում (երբ Չարենցն ընդգրկվեց դասագրքում) ավելի էին շեշտադրում «Գանգրահեր տղան», իսկ հետո՝ «Գիրք ճանապարհին»-ը: Որոշ գործեր այդպես էլ մնում են մեկնաբանված որպես «շեղում»։ Խորհրդային ժամանակ դրանք պարզապես բացակայում էին, հետխորհրդային ժամանակներում այդպիսին է մեկնաբանվում, ասենք, «Ռոմանս անսերը», իսկ որոշ նորահայտ գործեր կրկին անտեսվում են գիտելիքային պաշտոնական ինդուստրիայի կողմից: Այսօր էլ, թեև հրապարակված են և նույնիսկ կան համացանցում, լռության են մատնվում նրա այնպիսի գործեր, ինչպես, ասենք, Աթաբեկովին նվիրված ձոնը, այսինքն՝ ոչ միայն տաբու թեմաներ հասցեագրող գործերը (համասեռական սերը), այլև քաղաքական (ավելի շուտ՝ «քաղաքական կոռեկտությունից») խորհրդահայկական տարբերակի) «շեղում» պարունակողները: Այդպես կառուցվում է որոշակի էպիստեմի մի «աղյուսիկը»: Արդեն քննարկված *շրջանակային իշխը* կամ *օրակարգային իշխը*, ինչպես նաև բյուրոկրատիայի գործելաճոճ մոտ են այս գործընթացին: Տաբուի և կամ վետոյի «մասնաբաժինն» այս կամ այն խնդիրը կամ երևույթն արտիկուլացնելիս նույնպես (զատ)որոշում է ճշմարտության թույլատրելիության սահմանները տվյալ միջավայրում:

Հանրային և պաշտոնական պատկերացումների՝ Ֆուկոյի քննադատությունը՝ սեքսի, խելագարության, հանցագործության և բանտի վերաբերյալ, նույնպես թիրախավորում են իշխի ճշմարտությունը. իշխը (ինչպիսին էլ լինեի իր ակունքը՝ բռնակալական, գիտակցված թե հասարակական գիտակցության և պրակտիկաների «վեկտորների» հանրագումարից բխած «ինքնըստինքյան», իմանենտ, ասես ոչ մեկի կողմից չծրագրավորված) պարտադրել է իր

պատկերացումները, թե ինչպիսին (և ինչու՝ այդպիսին) պիտի լինի նորմատիվ սեքսը, նորմատիվ «ոչ հանցագործությունը», նորմատիվ պատիժը և նորմատիվ «ոչ խելագար լինելը»:

Ներկայումս, մասսայական հասարակության ձևավորումից և Երկրորդ համաշխարհային պատերազմից սկսած, հատկապես՝ համացանցի ի հայտ գալու հետ, իշխի և ճշմարտության այդ դժվարին փոխհարաբերությունն էլ ավելի է բարդացել. սկսվելով մասսայական հասարակության ձևավորմանն ուղղված պրոպագանդայից, ամրապնդվելով նաև սպառողական հասարակության շուկայականության կարևոր ատրիբուտի՝ գովազդային մոտեցման կողմից, անճշգրիտ, սուտ կամ կիսասուտ տեղեկատվությունը դարձավ այնքան համատարած, որ մեր ժամանակներն անվանեցին «հետ-ճշմարտային» կամ «հետ-ճշմարտության» ժամանակներ: Հասկանալով, որ հասարակական ճշմարտությունը կառուցվում է, ո՛չ թե ներակա (իմանենտ) է կամ «օբյեկտիվ»՝ մարդու ըմբռնումից կամ հասարակությունում ընդունված տիպերից գատ, մարդիկ և նրանց խմբերն արդեն գիտակցորեն փորձում են այն ձևել ըստ իրենց նպատակների, օգտագործելով մասսայական կոմունիկացիայի բոլոր միջոցները, մարդկային հոգեբանության մասին գիտելիքը և այլն, այսինքն՝ իրենց իշխն ուղղելով մարդկանց կարծիքներին և գիտելիքին վերջնականապես իշխելու նպատակին, այն էլ հաճախ՝ որևէ ռեֆերենցիալ իրականությանը համապատասխանող ճշմարտությունից այլևս ամբողջապես կտրված: Այդպես կառուցվում է ո՛չ միայն իրականությունը (ինչը մենք տեսնում ենք դավադրության առատ տեսությունների օրինակով), այլև անցյալը (պատմության փոխարինումն առասպելներով՝ փսևդոմիֆերով, հաճախ՝ հանուն քաղաքական նպատակների, կամ՝ տեղանունների վերանվանումը) և նույնիսկ ապագան, քանի որ հենց ապագայում են գործելու այն մարդիկ, որոնց իրականությունը դավադրապաշտական է, իսկ անցյալը՝ փսևդոմիֆոլոգիական: Բնականաբար, այդպիսի մարդիկ ավելի քիչ են կարողանալու խուսափել անարդար իշխի ճիշտներից՝ լինի դա ուղղակի շահագործման, հպատակության թե պարզապես **կառուցվածքային բռնության**⁸³ միջոցով (ավելի վատ ուսում, ավելի վատ առողջություն, տնտեսապես ավելի ցածր մակարդակի ապրելաճ և այլն): Միայն փոքրամասնությունը, որը կկարողանա հաղթահարել «հետ-ճշմարտության» ազդեցությունը, կկարողանա ճիշտ որոշումներ կայացնել իր կյանքի վերաբերյալ և սոցիալական աճ արձանագրել: Այս ծուղակից փրկվելը, պայքարն այս տենդենցի դեմ պահանջում են նոր մեթոդներ, որոնք հիմնվում են քննադատական մտածողության սկզբունքների վրա, բայց և ավելին՝ հանրագումարի են բերում և օգտագործում այն, ինչ կոչվում է *մտագործունեության մեթոդաբանություն*⁸⁴:

⁸³ Տե՛ս կառուցվածքային բռնությունը ձևակերպված այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Structural_violence

⁸⁴ Տե՛ս «Համակարգված մտագործունեության մեթոդաբանություն և կրեատիվ խաղեր» գրքույկը. <https://epfarmenia.am/hy/document/MSTA-Creative-Game>, Տե՛ս նաև «Մտագործունեություն» տեսաելույթն ու սղագրությունն այստեղ. <https://epfarmenia.am/hy/video/Gevorg-Ter-Gabrielyan-thought-activity>

9. Ամփոփում

Սա՛ է այն «քարտեզը», որ ուզում էի ներկայացնել. իշխի՛ տիրելու և, այսպես, բռնության, հարկադրանքի վրա հիմնված տարատեսակներից դեպի ավելի մասնակցայինը և դեպի ամենամասնակցայինը, բայց և՛ ամենավտանգավորը, եթե ճիշտ չօգտագործվի. իրականության սոցիալական կառուցումը: Որովհետև այսօրվա համացանցային աշխարհն ունի որոշակի տեսակի սուբյեկտներ, որոնք (գիտակցորեն կամ ոչ) հենց դա են թիրախավորում՝ իրականության կառուցումը. դավադրապաշտություն տարածողները, *ֆեյք նյուզ* տարածողները՝ այսպես կոչված՝ *տրոլները*: Եվ՝ պետությունները, որոնք որոշում են պրոպագանդա անել և այլն: Գիտության մեջ այս ամբողջ պատմությունը հստակվեց նացիստական Գերմանիայի պրոպագանդան հետազոտելու միջոցով, այդ համաշխարհային անմարդկային, հակամարդկային ախտի ֆենոմենը հասկանալ փորձելիս. դա չափից դուրս մեծ ցնցում էր «քաղաքակիրթ» աշխարհի համար և ուշադրություն բևեռեց այն հարցերի վրա, որոնք մինչ այդ չէին շոշափվում. աշխարհը մեծ մասամբ համարվում էր պարզապես «ստրված»՝ «դրսի» բան, որում դու ընկղմված ես և այն կառուցելու մեջ դեր չունես՝ բացի, իբր, «բնությանը հաղթելուց»:

Կառուցվածքային բռնությունը սերտորեն կապված է **կառուցվածքային իշխիս**⁸⁵. դա այն բռնությունն է, որը տեղի է ունենում հասարակությունում՝ իր տվյալ քաղաքատնտեսական և ավանդույթային կառուցվածքի պատճառով: *Կառուցվածքային իշխի* «տեսանելի մասերը» կազմավորում են *ինֆրակառուցվածքային իշխը*, հատկապես արդիական աշխարհում, սակայն վերջինս չի սպառում կառուցվածքային իշխի և բռնության ողջ տիրույթը: Կառուցվածքային իշխը բնորոշվում է իշխի այն դիսբալանսով (հավասարակշռության խախտմամբ), որն առկա է շնորհիվ տվյալ ակտորների՝ սոցիալական կառուցվածքի տարբեր դիրքերում գտնվելու: Օրինակ, զարգացած պետությունները կառուցվածքային իշխի դիրքում են «երրորդ աշխարհի» պետությունների համեմատ պարզապես շնորհիվ իրենց ռեսուրսների և հավելյալ հնարավորությունների, գաղութատիրության պատմության և այլն: Եվ **կառուցվածքային իշխը նշանակում է, որ նախկին գաղութատերերն ու ստրկատերերն ավելի են զարգանալու, ի հաշիվ նախկին գաղութների և ստրուկների, եթե իրադրությունը չբալանսավորվի: Կառուցվածքային բռնությունը մարդկանց խմբերի զարգացման հեռանկարը կասեցնելն է, նրանց այդ շանսից զրկելը: Եթե ոչինչ չարվի՝ ով ավելի զարգացած է՝**

⁸⁵ Տե՛ս կառուցվածքային իշխի մասին այստեղ. <https://www.e-ir.info/2016/12/18/reconceptualising-structural-power-a-new-concept-made-out-of-sterling-parts/>

Ճլ ավելի է զարգանալու, ով ոչ՝ Ճլ ավելի է հետընթաց ապրելու, ասում է կառուցվածքային իշխը բացատրողը: Դրանով են պայմանավորված գենդերային հավասարության համար պայքարի սրությունը, Me too⁸⁶ շարժումը, հակառասիստական շարժման սրությունը, Էդվարդ Սայիդի⁸⁷ մոտեցումը և այլ զարգացումներ ժամանակակից աշխարհում:

Առաջիններից մեկը սկսեց սա քննարկել, այս բաները հասկանալ ֆրանսիացի հետազոտող Ժակ Էյյուլը՝ «Պրոպագանդա»⁸⁸ վերնագրով իր գործում: Էյյուլին կարևոր է հիշել, որովհետև այդ նրա՝ ուսումնասիրությունները, հատկապես՝ «սոցիոլոգիական պրոպագանդա» հասկացությունն օգնեցին հետագայում պատասխանել մի շատ կարևոր հարցի: Մինչ այդ կար, այսպես կոչված, *արծարթե փամփուշտի* տեսությունը, ըստ որի՝ մարդիկ պարզապես, լսելով մասսայական մեդիայի պրոպագանդան կամ գովազդը, սկսում են գործել այնպես, ինչպես հաղորդագրությունն իրենց ուղղորդեց, այսինքն՝ ուղղակիորեն ազդվում են պրոպագանդայի կողմից: Դա կնշանակեր, որ, օրինակ, հայկական հեռուստատեսության սերիալներով ցուցադրվող գռեհիկ և բռնի բարքերն ուղղակիորեն ազդում են հասարակության՝ ավելի բռնի և գռեհիկ դառնալու վրա: Սակայն գիտափորձերը ցույց են տալիս, որ ազդեցությունն այդպիսին՝ ուղղակին չէ: Ինչը հիմք էր տալիս այն բիզնեսներին, որոնք օգտագործում են մասսայական մեդիան կամ գովազդ են անում, հերքել այն պնդումը, թե իրենց հաղորդագրությունները մարդկանց հոգեկանի համար վնասակար են:

Էյյուլի մոտեցումը և հետագա ուսումնասիրություններն ավելի հստակեցրին այդ ազդեցության մեխանիզմը. **մարդը ոչ այնքան կարծիք է փոխում կամ կարծիք է ձեռք բերում մասսայական մեդիայի ազդեցության պատճառով, որքան՝ հարմարվում, ադապտացվում այդ մեդիայով հեռարձակվող և կամ շրջապատի կողմից արտադրվող բարքովարքին:** Օրինակ՝ մարդ կարող է ձեռք բերել այս կամ այն ապրանքը ոչ թե որովհետև դա իրեն պետք է, որովհետև նա դրանում համոզվել է կամ հավատում է գովազդին, այլ՝ որովհետև գովազդն իրեն ասում է, որ իր շուրջը բոլորը (կամ հեղինակավորները՝ հենց գովազդի հեղինակները) համարում են, որ այդ ապրանքը պետք է ունենալ, այդ քայլն անհրաժեշտ է հասարակության հարմարված, ընդունված, «լիարժեք»

⁸⁶ Տե՛ս “Me too” շարժման մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Me_Too_movement

⁸⁷ Տե՛ս Էդվարդ Սայիդի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Edward_Said

⁸⁸ Տե՛ս Ժակ Էյյուլի «Պրոպագանդա» գործի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Propaganda:_The_Formation_of_Men%27s_Attitudes

անդամ լինելու համար: Նույն կերպ էլ իմ սերնդի շատ պատանիներ սկսում էին ծխել. ո՛չ թե նրանց դուր էր գալիս սիգարետը, այլ՝ նրանց թվում էր, թե դա նրանց ավելի ընդունելի է դարձնում տղայական շրջապատում, և նրանք ծխում էին նույնիսկ զգվելով (մինչև կախվածություն ձեռք բերելը), միայն թե՛ ավելի «հարգված» ընկալվեն մյուսների կողմից:

Այդ ամբողջն ազդում է մեր ամեն ինչի վրա, մեր աշխարհայացքի վրա: Մենք ամբողջ օրն ընկղմված ենք իշխի մեջ: Մենք ամբողջ օրը որոշումներ ենք կայացնում, բանակցում ենք իշխերի հետ՝ մեր սեփական իշխի, մեր մերձավորների իշխի, պետության, հասարակության իշխի, սոցիալական այդ իշխի՝ այդ ճնշող, տաբուացնող իշխի, այն ամենի, ինչը որ իշխը տաբուացնել է ուզում. սա՛ չի կարելի, նա՛ չի կարելի, – համաձայն ես դու, թե՛ ոչ, որ դա չի կարելի: Այդ ամեն ինչի մեջ մենք խորապես ընդգրկված ենք: Սա, այսպես, «թռչնի բարձրությունից», ինչպես ես ասացի սկզբում՝ *պարադիզմատիկ* մոտեցում է, ոչ պատմական⁸⁹: Ցավոք, մի որևէ Սթիվըն Փինքըր կամ գոնե Թալեր⁹⁰, մի այդպիսի հեղինակ չգիտեմ, որն այսպիսի աշխատություն գրած լիներ իշխի մասին: Ես ընդամենը մի տասը-տասնհինգ տոկոսը պատմեցի այն ամենի, ինչ պիտի պատմվի իշխի մասին: Սա արստրակտ-իդեալական, որոշակի իմաստով՝ *օնթոլոգիական* պատկեր է: Իշխի հետազոտման պատմական մոտեցումը մեծ մասամբ սահմանափակվել է մե՛կ բուրգայինը՝ նկարագրելով, մե՛կ՝ խունտան, մե՛կ՝ ժողովրդավարությունը և այլն, առանց բացատրելու դրանց միջև իմաստային կապերը, իշխի հոսքը՝ մեկից մյուսին: Դա է՛լ է շատ հետաքրքիր: Օրինակ՝ այն, որ լինում են պատմական հետընթացներ. այնպես չէ, որ պրոգրեսն անընդհատ «դեպի վեր» գնացող է, ինչպես

⁸⁹ Այս տեքստում «իշխ» հասկացությանը հարող, սակայն բաց թողած կամ ոչ բավարար բացատրված հասկացություն-երևույթներից են (որոնք ես նկատեցի). հեղինակություն, դոմինացիա, հեգեմոնիա, տիրան, սատրապ, ուզուրպատոր, պատերնալիզմ, սիմվոլիկ իշխ, բազմիշխանություն, կոնցեպտուալ իշխ, ապագան իմանալու / կանխորոշելու իշխ, ռեժիմ: Ընդհանրապես, սույն գրքում չի հասցեագրվում այն կարևորագույն գործոնը, որը և պայմանավորում է իշխի համեմատաբար արդար բաշխման ուղղությամբ ընթացքը, զարգացումը՝ դեպ Հաննա Արենդթի ձևակերպած իդեալական իշխը բռնությունից իսպառ զուրկ, այն վիճակը, երբ, ինչպես Յոհան Գալտունգի՝ սույն տեքստի բնաբանում ցիտած խոսքն է ասում՝ մարդկային ներուժը և նրա իրացումը մեկտեղելուն չեն խոչընդոտում բռնության խանգարիչ հանգամանքները: Եվ այդ գործոնը, իհարկե, իմ խորին համոզմամբ՝ ո՛չ թե պետական իշխանության ձևերն են՝ ռեժիմները, այլ հասարակության վարքային մշակույթն է՝ հասարակական հոգեբանությունն ուղղորդող արժեքները: Ռեժիմի և հասարակական մշակույթի միջև կարող է լինել որոշակի անհամապատասխանություն, սակայն ո՛չ մի ռեժիմ, որը հայտարարում է դրական արժեքներ, չի կարող հաջողության հասնել, եթե մշակույթը շատ հեռու է այդ արժեքներին համապատասխանելուց: Թող սա ֆիքսվի որպես հետագա անդրադարձների թեմա:

⁹⁰ Տե՛ս Նասիմ Թալերի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Nassim_Nicholas_Taleb

տեխնոլոգիական պրոգրեսի միջև է ասում: Օրինակ՝ լուսավորչությունից հետո ռոմանտիզմի դարաշրջանը, որ շատ սիրում են սովորաբար, գաղափարախոսական և աշխարհայացքային հետընթաց էր շատ առումներով: Լուսավորչության դարաշրջանն ասում էր լուսավորչական ճշմարտություններ, իսկ ռոմանտիզմի դարաշրջանը սկսեց ասել, որ մարդը, որպես, այսպես ասած, «Ֆաուստ», չար ուժերը հաղթող՝ չկա, – և ծնեց Շոպենհաուեր, Նիցշե և այլն: *Ճիշտ նույն կերպ, ինչպես որ այսօր լիբերալիզմն է ճնշվում ավտորիտար մոտեցումների կողմից՝ հայտարարվելով ոչ թե համապարփակ, «անանձնական» փիլիսոփայական մոտեցում, այլ՝ սպեկուլյատիվ, գեոպոլիտիկ՝ «Արևմուտքին» օգուտ, որով Արևմուտքը փորձում է սահմանափակել աշխարհի մնացած մասերը և շահագործել դրանք, իբր՝ «լավի և բարու» անունից:* Ինչու՞: Որովհետև կային չմտածված մասեր, կային «ծակեր» լուսավորչական գաղափարախոսության մեջ (և այսօր կան՝ լիբերալիզմի ջատագովների մտածողության մեջ և ուսումնասիրություններում), որոնք թույլ տվեցին հակառակ փաստարկներին զարգանալ, մինչև որ դրանք էլ չհաղթահարվեցին հաջորդ փուլի մտածողների կողմից: Եվ այդպես շարունակ:

Պետք է, սակայն, հաշվի առնել, որ այս տեքստում (և սույն գրքում) առաջարկած մոտեցումները սկզբունքորեն տարբերվում են նաև այն բոլոր մոտեցումներից՝ լինեն դրանք լիբերալ թե ոչ լիբերալ ճամբարին պատկանող, որոնք համարում են, որ մարդը պիտի ինչ-որ չափով իշխվի՝ որովհետև «անգիտակից» է: Այստեղ ներկայացվածը ելնում է այն դրույթից, որ մարդն ի զորու է ամբողջությամբ, ի վերջո, լավագույնս կազմակերպել սեփական համակեցությունը՝ գիտակցորեն և արդարորեն: Եթե, իհարկե, ցանկացավ: Որովհետև մարդն ազատ է:

Իշխ և բարոյականություն

Այս խնդիրը քննարկվում է իշխի մասին առաջին իսկ պատկերացումների առաջացման հենց սկզբից: Մաքիավելին փայլուն կերպով առաջարկել է, որ երկուսն իրար կապված չլինեն, ինչն ուղեցույց է դարձել շատ և շատ իշխողների համար: Միննույն ժամանակ, «ներքին» իշխի գործընթացները՝ բռնի ուժից դեպ ժողովրդավարության ավելի ու ավելի բարդ համակարգեր, իհարկե, ժողովրդավարության զարգացումը կապում են ավելի ու ավելի բարոյական իշխային համակարգերի զարգացման և հաստատման հետ: Սակայն մինչ այդ էլ «բարի թագավորի» լեգենդն այդ մասին էր:

«Բարի թագավոր» նշանակում է, որ ժողովրդի հիշողության մեջ (կամ այն ձևավորողների տեքստերում) տվյալ իշխավորի թագավորելու ընթացքը

Ֆիքսվել է որպես մի ժամանակաշրջան, երբ հպատակների մի խոշոր մասն ավելի շատ անտրտունջ ադապտացված էր վիճակին, քան հակառակը: Իսկ որոնք որ ադապտացված չէին՝ շատ ճայն չեն հանել: Թե որքան մասն էր ադապտացված, որքան՝ ոչ, իրականում հայտնի չէ: Ժողովրդավարությունը, սակայն, խոստանում է անընդմեջ «բարի թագավորություն», այսինքն՝ մարդկանց մեծ մասի անընդմեջ ադապտացվածություն իշխերի բալանսներին (և մեխանիզմներ, որ այդ ադապտացվածությունն ապահովվի), և դա է իր լեգենդի ուժը:

Բայց կա մի խնդիր. նույնիսկ եթե «ներքին» իշխը, ժողովրդավարության ուղին ընտրելով, շարժվում է դեպ «բարի թագավորություն», ապա իր արտաքին վարքում այն մնում է անբարի՝ բարոյականությունից դուրս: Սրա պատճառը ո՛չ միայն «դրսից ժանդարմի»՝ համաշխարհային ոստիկանի բացակայությունն է, այլև այն, որ ամեն պետություն, ըստ իր *raison d'être* (գոյության իմաստի), պիտի աշխատի իր «ներսի»՝ իր քաղաքացիների բարօրության համար, իսկ դա հաճախ հակասության մեջ է կողքի կամ մյուս պետությունների բարօրության հետ (ինչպես այդ բարօրությունները փոխադարձաբար հասկացված են):

Արբիտր քիչ կա: Եվ այստեղ ստեղծվում է մի բարոյական ծուղակ, զենոնյան մի պարադոքս, ապորիա. մի կողմից, ներքին հարաբերություններում քարոզվում է բարոյականություն, համարվում է, որ ներքին օրենքներն իսկ ծնվել են բարոյական պարտադրանքներից և բարոյական վարքի կարիքներից, մինչդեռ, մյուս կողմից, եթե արտաքին հարաբերություններում լինես բարոյական (ասում է այդ մոտեցումը)՝ գլուխդ կուտես: Այսինքն, քո համաքաղաքացիների հանդեպ դու ունես որոշակի պարտավորություններ, իսկ դրսի համաքաղաքացիների հանդեպ՝ պետության մակարդակով՝ ո՛չ այդքան: Իհարկե, մշակվել են նույնիսկ պատերազմի օրենքներ, ինչն է «թույլատրելի» պատերազմում, ինչը՝ ոչ, - սակայն սրանք մոլտիպլիկացնում են զենոնյան պարադոքսը: Օրինակ, քաղաքացիական անձին պատերազմում սպանելը համարվում է պատերազմական հանցագործություն, իսկ բազում 18-ամյա զինվորիկներին, որոնց բռնի հավաքագրել և ուղարկել են առաջնագիծ, քանի որ պետության դրվածքն այդպիսին է՝ ոչ: Շատ են եղել կոչերը՝ արգելել պատերազմ, կա պացիֆիստների շարժում, Փինբըրն ասում է, որ համաշխարհային զարգացումը դեպ դա է տանում, - սակայն դա դեռ հեռու է իրականացումից: Կարելի է, իհարկե, էլի գնալ քայլ առ քայլ և ռազմական հանցագործություն դարձնել նաև գերակշիռ ուժի անտեղի գործադրումը, մարդու իրավունքների պարադիգմն ընդլայնել: Սովորաբար հենց այդպես է շարժվում մարդկային զարգացումը՝ քայլ առ քայլ և դժվարությամբ ընդլայնելով այն դաշտը, որում բարոյականության օրենքները համընկնում են իշխի օրենքներին:

Սակայն փաստը մնում է փաստ. նրանց, ում պետությունն ու հասարակությունը սովորեցնում են, որ մարդ սպանելը վատ բան է (եթե կողքինդ է), նույն նրանց նույն այդ հեղինակավոր կառույցները սովորեցնում են, որ անհրաժեշտության դեպքում թշնամի ոչնչացնելը լավ բան է և նույնիսկ հերոսություն (հերոսության մյուս մասն էլ սեփական կյանքը վտանգի ենթարկելն

է հանուն դրա):

Շիզոֆրենիկ այդ իրադրությունը չի կարող չազդել ներքին ժողովրդավարության զարգացման հեռանկարների վրա: Մարդ սպանելն անբարոյական է – այս պոստուլատը հիմնված է շատ հին փիլիսոփայության վրա, մի աշխարհայացքի, որը մարդու կյանքը համարում է գերագույն արժեք, – այդ մոտեցման հիմքերն էլ արժի քննել (մեկ ուրիշ անգամ): Սակայն այդ պոստուլատը չի ասում, որ թշնամի սպանելը թույլատրված է, մինչդեռ պետության գաղափարախոսությունը դա ասում է և այդպես է դաստիարակում իր քաղաքացիներին: Բնական է, որ այդ բացթողումը, հակասությունը, պարադոքսը խորապես թուլացնում է պոստուլատը, ուրեմն և՛ պետականությունները, իշխային համակարգերը, որոնք պատմության ընթացքում ավելի և ավելի են հիմնվում դրա վրա: Մյուս կողմից, դրա վրա չհիմնվելն էլ կբերի պետության և հասարակության թուլացման և քանդման վտանգի, քանի որ կհանգեցնի նախահորսյան անարխիայի թույլատրությանը:

Ինչ եք կարծում, ինչպես լուծել այդ պարադոքսը:

Բայց ի՞նչն է ամենակարևորը. այդ ներսիդ «կշեռքը»: Մեր կազմակերպությունը հետազոտել է իշխի արտահայտումը գենդերային հարաբերություններում, վերջերս լույս ընծայեցինք⁹¹: Մենք հետազոտեցինք իշխի արտահայտումը նախ՝ քննադատական մտածողության գրքույկում⁹² կոմունիկացիոն հարաբերության մեջ. որ մարդը պիտի այդ «կշեռքի» վրա դնի, զգա, հիմա իրեն մանիպուլացնում են, թե՞ ոչ: Սա կոոպերատիվ, կառուցողական կոմունիկացիա է, թե՞ սա ոչ լեգիտիմ իշխային կոմունիկացիա է: Որովհետև կա և լեգիտիմ իշխային կոմունիկացիա, ասենք՝ հենց այս իրադրությունը. ես խոսում եմ, դուք լսում եք, բայց առայժմ քաղաքավարությունը պահպանվում է: Ես կարող է չափազանցնեմ, եթե մի տասը ռոպե էլ ավելի խոսեմ, դա կլինի չափից դուրս շատ, դուք արդեն կնեղվեք: Այդ է պատճառը, որ ինքնատիրապետումը՝ ինքնառեֆլեքսիան, ինքնագիտակցումը՝ self-awareness, շատ կարևոր է սեփական իշխը լեգիտիմ պահելու համար: Մարդիկ հարմարվում են, համաձայնվում են, ներում են, բայց այդ խնդիրը շատ ուժեղ է, և մենք դա ուսումնասիրել ենք, գուցե՝ ոչ ամբողջությամբ. էլի է պետք անդրադառնալ:

Մենք (ԵՀՀ-ն) նաև ուսումնասիրեցինք իշխի դրսևորումը կրթական

⁹¹ Տե՛ս ԵՀՀ «Գենդերային քաղաքականություն» (2020) փաստաթուղթն այստեղ. <https://epfarmeria.am/hy/document/EPF-Gender-Policy>

⁹² Տե՛ս «Քննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառուկներ» (2019) գրքույկն այստեղ. <https://epfarmeria.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>

պրոցեսներում⁹³, հենց այն, ինչի մասին ես հիմա ասացի. որ եթե չափից դուրս շատ ես մարդուն ճնշում կրթական նյութով՝ քո ուզած, քո որոշած՝ որ դա իրեն անհրաժեշտ է, – դա արդեն գուցե անարդար իշխի արտահայտություն է: Եթե սուտ, փսևդոմիֆոլոգիական պատմություն ես տրամադրում իրական պատմության փոխարեն՝ անարդար իշխի դրսևորում է: Մարդու ուղեղը մի կողմ ես շեղում: Ուզում ես նրան դարձնել քո ուզած ձևի: *Կոմպրաչիկոս*: «Ուղեղային» կոմպրաչիկոս⁹⁴: Նա դառնում է հոգեբանական հաշմանդամ, եթե իր մեջ ուժ չի գտնում ինքնուրույն հաղթահարելու այդ ճնշումը: Էլ չասած այն դեպքերը, երբ դա անում ես կոռուպցիոն շահից ելնելով: Փաստորեն՝ խաբում ես, կրթելու փոխարեն:

Իհարկե, հասարակությունը ձևավորում է մարդուն, և դա անխուսափելի է: **Խնդիրը, սակայն, ներդաշնակությունն է. որքանով է այն մարդուն ձևավորում ներդաշնակ՝ տվյալ պահի աշխարհին:** Չձևավորելը նույնն է, ինչ կոմպրաչիկոսներ ստեղծելը: Իրական Մաուգլին, որ մեծացել էր գայլերի շրջապատում, հետո, երբ վերադարձվեց մարդկային հասարակություն՝ արդեն պատանի տարիքում, այդպես էլ չտվորեց խոսել: Իսկ սոցիալիզմ կառուցողները (այդ թեմայով կարելի է կարդալ Պլատոնովի «Գուբը»՝ «Կոտլովանը»⁹⁵) չէին կարողանալու մարդկանց մեջ ներարկել սոցիալիզմի գլխավոր արժեքը՝ անանձնականը, էգոիզմի բացակայությունը, որքան էլ «պողմիկիտչիկություն»⁹⁶ անեին: Կոլխոզը չվերացրեց գյուղացու ցանկությունը՝ ունենալ սեփական հողակտոր և տնտեսություն: Եկեղեցու ավերումը չհանգեցրեց արժեզմի, նույնիսկ գուցե՝ ընդհակառակը:

Նույնն է և մեր կազմակերպության **իրավունքահեն մոտեցումների** թիրախը. ազատության և կամքի արտահայտումը մարդու իրավունք է, սահմանափակված՝ մյուս մարդու իրավունքով: «Կշեռքը»⁹⁷ որոշում է, եթե բողբոջը ծաղիկ դառնա, և մարդ ավելի մասշտաբայնորեն օգտագործի ազատության և կամքի իր իրավունքը, ընդունելի կլինի՞, թե՞ տվյալ բողբոջում արդեն կա իշխի չարաշահման վտանգ: Այդ կշեռքը որոշում է ընդունելու, որ՝ այս բանին համաձայն է, իսկ այս բանին՝ ոչ, առանց խախտելու մյուսների իրավունքները: Որքան ավելի լավ աշխատեց այդ

⁹³ Տե՛ս ԵՀՀ «Կրթություն և ուսուցում» (2020) փաստաթուղթն այստեղ. <https://epfarmenia.am/hy/document/EPF-Education-and-Learning>

⁹⁴ Տե՛ս կոմպրաչիկոսների մասին այստեղ. <https://en.wikipedia.org/wiki/Comprachicos>

⁹⁵ Տե՛ս «Գուբը»՝ «Կոտլովան» (այն կա հայերեն թարգմանած) գործի մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/The_Foundation_Pit

⁹⁶ Տե՛ս «պողմիկիտչիկություն» բառի բացատրությունն այստեղ. http://www.rusf.ru/abs/abs_meta/m_010299.htm

⁹⁷ Տե՛ս «կշեռքի» մասին այստեղ («Արժեքները մեզանում» տեսաելույթ). <https://www.youtube.com/watch?v=tJ23JeihDS0&t=2s>

կշեռքը բոլոր մարդկանց մեջ՝ այնքան ավելի հարմունիկ, ներդաշնակ կլինի հասարակությունը: Այդպիսով, քննադատական մտածողությունն օգնում է և՛ մարդու իրավունքները զգալու, հասկանալու, և՛ արարք կատարելիս կողմնորոշվելու, և՛ համացանցային մանիպուլյացիաներն ու չարաշահումները զգալու, հասկանալու առաջին քայլերը կատարել⁹⁸:

Վերջին կետը. ինչու՞ է իշխի ճիշտ և հավասարազոր բաշխումը կարևորվում քաղտնտեսական որոշակի «շկոլաների» կողմից: Հենց նրանց, որոնք, օրինակ, ինֆրակառուցվածքային իշխի գաղափարն են ստեղծել: Որովհետև համարվում է, որ ազատությունը, կամքը դրսևորող անհատը՝ այդ կշեռքն ունեցող, այսինքն դատել կարողացող՝ ստեղծագործող է, և հասարակությանն ավելի շատ ներդրում կբերի, և հասարակությունը կհարստանա (ռեսուրսի իմաստով): Եվ, քանի որ **այդպիսի հասարակությունում, ուր շատ մարդիկ ստեղծագործող են, նրանք նաև, ipso facto (նույն փաստի համաձայն), իշխանավորված, զորավորված, համայնքված, ցանցայնացած են՝** այդ ռեսուրսը կօգտագործվի ավելի կոնսենսուալ կերպով, քան այլապես:

Դա, իհարկե, դեռ ապացուցված թերեմ չէ, բայց շատ հավանական է թվում: Որովհետև **շատ ավելի հաճելի է ազատ միջավայրում, ազատության պայմաններում ինչ-որ գործ անել և զարգացնել այդ գործը, գործիդ ստեղծագործաբար վերաբերվել (և երբ գործդ ողջունվում է հասարակության կողմից, և դու էլ մյուսների նման գործունեությունն ես ողջունում), որքան էլ դա բարդ լինի, քան՝ ստրուկի պես ճկռել, հպատակվել և ապրել անհետաքրքիր և չարքաշ կյանք, որքան էլ դա ավելի հեշտ լինի, քանի որ քեզ թվում է, թե այդ դեպքում իրադարձությունների համար պատասխանատվություն ավելի քիչ ես կրում:** Հենց այս վերջին տեսակի վարքն է, որ մարդուն դարձնում է ապաիշխանավորված և անարդար կերպով իշխելի. – և մի գեղեցիկ օր աշխարհը՝ մարդու՝ սխալ կամ ժամանակին չընդունած որոշումների կուտակը, պայթում է իր գլխին – և նա չի իմանում, թե ի՞նչ անի:

Գրե՛ք հարցերի ձեր պատասխանները, կարծիքները, նամակներն այս էլեկտրոնային հասցեով՝ info-epf@epfound.am

⁹⁸ Քննադատական մտածողությունը որպես հոլիստիկ արարք և գործունեություն, դրա դրսևորման անհրաժեշտությունը գնահատելու մասին տե՛ս այստեղ. <https://epfarmeria.am/document/Towards-a-Civics-Advancement-Measurement-Tool> (անգլ.)

Ի՞նչ է պարտադիր իմանալ Հայաստանի օրենսդրական և իրավական համակարգի մասին

ՍԵՂՄԱԳԻՐ

Իրավունքի գերակայության ապահովումը, իրավական պետության հետագա կայացումն ու ժողովրդավարության ամրապնդումն անհնար է առանց քաղաքացիական հասարակության և դրա մասնիկը կազմող իրավագիտակից ու պահանջատեր անհատների: Սույն ձեռնարկի «Ի՞նչ է պարտադիր իմանալ Հայաստանի օրենսդրական և իրավական համակարգի մասին» հատվածի նպատակն է Հայաստանի Հանրապետության վերջին երեսուն տարիների սահմանադրաիրավական փորձի վերլուծության միջոցով ընթերցողին հակիրճ և ամփոփ կերպով ներկայացնել պետության ու դրա ձևերի, պետական իշխանության մարմինների ու դրանց տեսակների հետ կապված հարցերը: Բաժնուժարժարժված են նաև իրավական ակտերի ու դրանց տեսակների և, մասնավորապես, օրենսդրական ակտերի նախագծերի հանրային քննարկումների հետ կապված հարցերը: Միաժամանակ, առանձին անդրադարձ է կատարվել իրավախախտումներին ու իրավական պատասխանատվությանը՝ նպատակ ունենալով ընթերցողին հնարավորինս պարզ ու մատչելի ներկայացնել երբեմն խրթին թվացող այնպիսի հարցեր ինչպիսիք են, օրինակ, իրավախախտումների առանձին տեսակներն ու դրանցից յուրաքանչյուրի բնութագրիչ հատկանիշները: Սույն հատվածի շարադրանքը եզրափակվում է անվճար իրավաբանական օգնության տրամադրման կարգի ու դեպքերի հակիրճ նկարագրությամբ ու պրակտիկ բնույթի տեղեկատվության տրամադրմամբ:

Բանալի բառեր. Հայաստան, պետական ապարատ, պետության ձև, սահմանադրություն, կառավարում, իշխանության մարմիններ, դատարան, իրավունքի նորմեր, իրավունքի աղբյուրներ, իրավունքի համակարգ, իրավախախտում, իրավական պատասխանատվություն, քաղաքացիական հասարակություն, մասնակցայնություն:

ABSTRACT

What is obligatory to know about the legislative system of Armenia?

Without civil society and the legally literate and demanding individuals who are a part of it, it is impossible to ensure the rule of law, the further establishment of a rule of law-based state and the strengthening of democracy. The purpose of the article is, by analysing the legal-constitutional experience of Armenia over the last 30 years, to present issues concerning the forms of states and the types of state authorities. The article also deals with legal acts and their types and, in particular, issues related to public discussions of draft legislative acts. Consideration is given to violations and legal liability, with the aim of presenting clearly and accessibly as possible issues which often seem complicated, such as, for example, certain types of violations and the characteristic features of each of them. This section concludes with a brief description of the procedure and cases of providing free legal aid, and provides practical information.

Key words: Armenia, state apparatus, state power, constitution, governance, authorities, court, norms of law, sources of law, legal system, offense, legal responsibility, civil society, participation.

1. Պետություն և պետական մարմիններ

1.1. Ի՞նչ է պետությունը. պետության հասկացությունն ու հատկանիշները

Ի՞նչ է պետությունը, ինչո՞վ է պայմանավորված պետության գոյությունը հասարակության մեջ: Ո՞րն է պետության էությունը, ի՞նչ խնդիրներ է այն լուծում հասարակության համար, ի՞նչ գործառույթներ իրականացնում: Անտիկ ժամանակներից մինչև մեր օրերը այս հարցերը շարունակում են հուզել քաղաքական և իրավական մտքի ներկայացուցիչներին: Դրանց պատասխանների փնտրտուքն օգնում է առավել հստակ պատկերացնել պետության և անհատի միջև փոխհարաբերությունների բնույթը, նրանց փոխադարձ ակնկալիքները, իրավունքների և պարտականությունների ծավալը:

Պետականագիտության մեջ առկա են պետության տարբեր սահմանումներ, ինչը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ

հանգամանքներով: Ամենատարածված սահմանումներից մեկի համաձայն՝ պետությունը հասարակության հատուկ լիիշխան քաղաքական կազմակերպություն է, որն ունի տարածք, իր իշխանությունը տարածում է տվյալ տարածքի և այնտեղ ապրող բնակչության վրա, դրա համար ունի կառավարման հատուկ ապարատ, հրապարակում է վարքագծի համապարտադիր կանոններ (իրավունքի նորմեր)՝ անհրաժեշտության դեպքերում ապահովելով դրանց իրացումը հարկադրանք կիրառելու միջոցով, և օժտված է սուվերենությամբ (ինքնիշխանությամբ)⁹⁹: Բնականաբար, հասարակության մեջ գոյություն ունեն նաև այլ կազմակերպություններ, օրինակ՝ կրոնական և հասարակական, կուսակցություններ և այլն: Սակայն պետությունը հատուկ և լիիշխան կազմակերպություն է: Դա պայմանավորված է այն խնդիրների և նպատակների առանձնահատկությամբ, որոնք այն լուծում և իրագործում է հասարակության համար: Օրինակ, պետությունն է իրագործում երկրի պաշտպանությունը կամ իրավակարգի պահպանումը: Ինչ վերաբերում է լիիշխանությանը, ապա վերջինս նախ և առաջ ենթադրում է, որ միայն պետական իշխանությունն է, որ տարածվում է տվյալ պետության ողջ բնակչության վրա, և այն, որպես այդպիսին, չի կարող սահմանափակված լինել որևէ այլ կազմակերպության կամ անձի կողմից (բացի հատուկ դեպքերից, ինչպես, օրինակ, դեսպանությունները): Ավելին՝ պետությունն իրավասու է և պարտավոր է միջոցներ ձեռնարկել իր իրավագործության ներքո գտնվող անձանց այլ կազմակերպությունների և այլ անձանց ոտնձգություններից պաշտպանելու ուղղությամբ:

Պետության բնորոշ հատկանիշներից են, ինչպես նշվեց, տարածքն ու բնակչությունը: Ընդունված է համարել, որ դրանք պետության գոյության նյութական և սոցիալական հիմքն են. տարածքն աշխարհագրական այն տարածությունն է, որի սահմաններում ապրող ողջ բնակչության վրա գործում է պետության իշխանությունը: Սա, ի թիվս այլնի, նշանակում է, որ պետությունն իր իշխանությունը կազմակերպում է վարչատարածքային սկզբունքով, ի տարբերություն, օրինակ, մինչպետական հասարակության, որտեղ տոհմային իշխանությունը կազմակերպվում և իրացվում էր ոչ թե տարածքային սկզբունքով, այլ ազգակցական կապեր ունեցող անձանց շրջանակում: Պետական իշխանությունը վարչատարածքային սկզբունքով կազմակերպելն առաջ է բերում այնպիսի հաստատություն, ինչպիսին

⁹⁹ Վաղարշյան, Ա. (2013), Պետության և իրավունքի տեսություն- 1, Դասախոսություններ: Երևան, Հեղինակային հրատ., էջ 68:

քաղաքացիությունը կամ հպատակությունն է¹⁰⁰:

Պետության հաջորդ բնորոշ գիծը կառավարման հատուկ ապարատի առկայությունն է, որով, ի թիվս այլնի, պետական իշխանությունը տարբերվում է մինչպետական հասարակության¹⁰¹ անմիջական, սակայն և անհստակ իշխանությունից: Պետական կառավարման ապարատն ամենաընդհանուր գծերով կարելի է բնորոշել որպես պետական մարմինների, հիմնարկների և պաշտոնատար անձանց ամբողջություն, որոնց միջոցով պետությունն իրականացնում է հասարակության պետական կառավարումը՝ այդ գործընթացում օժտված լինելով ըստ անհրաժեշտության հարկադրանք կիրառելու իրավունքով:

Պետության ևս մեկ կարևորագույն հատկանիշ է, ինչպես ասացինք, ինքնիշխանությունը: Ինքնիշխանությունն ունի երկու կողմ՝ ներքին և արտաքին: Ինքնիշխանությունը ներքին իմաստով նշանակում է պետության գերակայությունը և լիիշխանությունը պետության ներսում մյուս կազմակերպությունների հետ հարաբերվելիս: Պետության ինքնիշխանությունն արտաքին առումով ենթադրում է պետության անկախությունն ու իրավահավասարությունը մյուս պետությունների հետ հարաբերություններում¹⁰²:

Ինքնիշխանության մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ «պետության ինքնիշխանություն» հասկացությանը զուգահեռ գոյություն ունի «ժողովրդի ինքնիշխանություն» հասկացությունը՝ ժողովրդի ինքնիշխանության առաջնայնությամբ և գերակայությամբ: Հենց ժողովուրդն է ինքնիշխանության առաջնային և հիմնական կրողն ու աղբյուրը: Ժողովրդաիշխանության այս սկզբունքը, մասնավորապես,

¹⁰⁰ Քաղաքացիությունն անձի և պետության միջև կայուն իրավական կապն է, որի կողմերը ձեռք են բերում փոխադարձ իրավունքներ և պարտականություններ: ՀՀ քաղաքացիության ձեռքբերմանն ու դադարեցմանն առնչվող հարցերը կարգավորվում են «Քաղաքացիության մասին» 1995 թվականի նոյեմբերի 6-ին ընդունված ՀՀ օրենքով, տե՛ս «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը (1995): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=57692> [ղիտվել է 22.08.2021]:

¹⁰¹ Համարվում է, որ մոտ 5000 տարի առաջ նախապետական վիճակում և կառավարման հատուկ ապարատի բացակայության պայմաններում գտնվող հասարակությունները բնութագրվում էին անմիջական կոլեկտիվ իշխանությամբ, իսկ տոհմի գործերը կառավարվում էին անմիջականորեն տոհմի մեծահասակների կողմից:

¹⁰² «Սուվերենություն» եզրը, որ ծագում է հին ֆրանսերեն «souverain» բառից, քաղաքական իմաստով ենթադրում է, մի կողմից, *ինքնիշխանություն*, այսինքն՝ բնութագրում է տվյալ պետության՝ այլ պետությունների հետ փոխհարաբերություններում առկա անկախությունն ու իրավահավասարությունը, մյուս կողմից՝ *գերիշխանություն*, այսինքն՝ տվյալ տարածքի սահմաններում պետական իշխանության բարձրագույն, գերակա իշխանություն լինելու հանգամանքը:

ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին¹⁰³: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով: Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

Ժողովուրդը, փաստորեն, պատվիրակում է պետությանը՝ իրագործել իր ինքնիշխանությունը, որքանով որ տվյալ պետական համակարգը կոնսենսուալ կերպով ընդունվում է ժողովրդի կողմից՝ պետական համակարգի լեգիտիմությունն ապահովող ընթացակարգերի կամ ծեսերի իրականացման միջոցով: *Ծանոթ. խմբագրի*

Ժողովրդի ինքնիշխանությունից զատ՝ մասնագիտական գրականության մեջ առանձնացնում են նաև «ազգի ինքնիշխանություն» հասկացությունը:

Այստեղ պետք է տարբերակել այն դեպքը, երբ «ազգ» և «պետություն» հասկացությունները որոշ լեզուներում այսօր ավանդաբար նույնացված են, մեկ այլ դեպքից՝ ազգերի ինքնորոշման իրավունքից: Առաջին դեպքը հատուկ է, օրինակ, անգլերենին կամ ֆրանսերենին, որտեղ հաճախ խոսելիս կամ գրելիս «ազգ» և «պետություն» հասկացությունները չեն տարբերակվում: Դա գալիս է այն ավանդույթից, որ Արևմուտքում ժամանակին ձևավորված պետական հանրություններն ինքնանվանվել են «ազգային պետություններ» կամ «ազգ-պետություններ» (nation-state): Դա նաև խառնաշփոթ կարող է առաջացնել համաշխարհային գլխավոր միջազգային կազմակերպության՝ Միացյալ ազգերի կազմակերպության անվանումը դիտարկելիս. այստեղ «ազգ» ասելով նկատի ունեն զուտ ճանաչված պետությունները: Հայերենում և ռուսերենում այդ խառնաշփոթը նույնպես առկա է, օրինակ, ՄԱԿ-ի անվան մեջ, իսկ հայերենում նաև «միջազգային»¹⁰⁴ բառում (օրինակ, «միջազգային հարաբերություններ» նախ և առաջ նշանակում է միջպետական հարաբերություններ): Ռուսերենում էլ «միջազգային» ընդհանրապես այլ կերպ է կազմավորվել՝ международный,

¹⁰³ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 2: Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510> [դիտվել է 22.08.2021]:

¹⁰⁴ Նկատենք, որ այդ բառի «շրջված» տարբերակը՝ «ազգամիջյան հարաբերություններ», արդեն նշանակում է ոչ թե պետությունների, այլ էթնոսների հարաբերություններ: Հասկացությունների այս զուգադրումը լավ է լուսավորում «ազգ» բառի բազմիմաստության բնույթը:

և բառացիորեն նշանակում է «միջժողովրդական»: Այս բոլոր դեպքերում, սակայն, խոսքը հիմնականում և նախ և առաջ վերաբերում է ճանաչված պետություններին, անկախ նույնիսկ իրենց կառուցվածքային բնույթից՝ ունիտար, ֆեդերատիվ, բազմազգ և այլն:

«Ազգի ինքնիշխանության» մյուս մեկնաբանությունը վերաբերում է էթնիկ ընկալմամբ ազգի՝ սեփական ճակատագիրն ինքնուրույն որոշելու իրավունքին և հնարավորությանը: Պետք է նշել, որ, չնայած «ազգերի ինքնորոշման իրավունքի» այդպիսի պարզեցված ընկալումն արդեն մեկ դարից ավելի տարեց է (ավանդաբար սերում է Վուդրո Վիլսոնի և Վլադիմիր Լենինի մոտեցումներից), այն որպես միջազգային իրավունք անվերապահորեն ճանաչված չէ, այսինքն աշխարհի պետությունները չեն պայմանավորվել, որ յուրաքանչյուր էթնիկ ազգ իրավունք ունի առանձին պետություն կազմել՝ իր տարածքով և կառավարությամբ: «Ինքնորոշման իրավունքը» (առանց «ազգերի» ածականի) ավելի ճանաչված է: Մանավանդ որ ազգերը կարող են սփռված լինել, ինչպես նաև՝ ազգի այդպիսի ընկալումը ճշգրտորեն ձևակերպելու դժվարության պատճառով: Կան ազգեր, որոնք ունեն նույն կրոնը և լեզուն, սակայն չունեն տարածք, որում բնակչության մեծամասնություն լինեին: Կան ազգեր, որոնք չունեն նույնիսկ ընդհանուր լեզու, սակայն իրենց ազգ են համարում, և այլն: Կան պետություններ, որոնք իրենց բնակչության բոլոր ներկայացուցիչներին համարում են նույն ազգության՝ տվյալ պետության ազգության (ազգ-պետության) պատկանող (օրինակ՝ Ֆրանսիան, Թուրքիան կամ ԱՄՆ-ը), անկախ իրենց էթնիկ պատկանելությունից: Ազգի մի մասը կարող է ունենալ ընդհանուր լեզու կամ կրոն և մշակույթ, մյուսը՝ ոչ, և սակայն երկու կամ ավելի մասերն էլ կարող են համարվել տվյալ ազգին պատկանող: Կամ՝ հակառակը. նույն լեզուն ունեցող երկու հանրություն կարող են հայտարարել, որ իրենք տարբեր ազգ են, կամ տարբեր կրոն ունեցող երկու հանրություն՝ որ իրենք նույնն են: Դրանք են պատճառները, որ «ազգ» երևույթի բացատրության՝ ներկայումս ամենատարածված մոտեցումն այն է, որ ազգերը սոցիալապես կառուցվող երևույթներ են (տես նախորդ հոդվածի մասերը՝ աշխարհի և իրականության սոցիալական կառուցման մասին): Նրանք «երևակայվում են»¹⁰⁵, հետո՝ կառուցվում սոցիումների կողմից՝ որոշակի առաջնորդների ակտիվ գործունեության շնորհիվ: Օրինակ՝ հայ ազգի կառուցման մեջ հսկայական դեր է կատարել Մեսրոպ Մաշտոցը՝ ստեղծելով այբուբենը հինգերորդ դարում, իսկ մինչ այդ՝ քրիստոնեության ընդունումը: Իսկ, ասենք, դազախներն ու դրդզներն իրենց գրավոր մշակույթը զարգացնելու համար այբուբեն ստացել են միայն խորհրդային տարիներին, և այդ նույն տարիներին բավական վոլյունտարիստական որոշումներով բաժանվել միմյանցից՝ որպես տարբեր ազգեր: Կան մշակութային կամ կրոնական նույն խմբին պատկանող մարդիկ, որոնք առանձնանում են գերիշխող ազգից, սակայն չեն համարվում ո՛չ ազգ, ո՛չ էթնոս, ինչպես, օրինակ, ալևիները: Կան

¹⁰⁵ Տե՛ս Բենեդիկտ Անդերսոնի «Երևակայական հանրույթներ» աշխատության մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Imagined_Communities

էթնոսներ, որոնք ունեն ազգի բոլոր հատկանիշները. բնակեցման՝ քիչ թե շատ կոմպակտ տարածք, որտեղ իրենք պատմականորեն բնակվում են, առանձին լեզու, ընդհանուր կրոն, մշակույթ և սովորույթներ, սակայն չեն հավակնում առանձին պետություն ունենալ, օրինակ՝ կարաչայները: Կան կայացած ազգեր, որոնց բազմաքանակությունը հիմք է տալիս շատերին և իրենց խոշոր մասին համարել, որ իրենք պիտի ունենան առանձին պետություն, սակայն՝ չունեն (օրինակ՝ քրդերը): Վերջապես, մարդիկ կարող են դառնալ տվյալ ազգին պատկանող իրենց ազատ կամարտահայտմամբ, ինչպես, օրինակ, վարվում են որոշ մարդիկ՝ Հայ առաքելական եկեղեցու դավանանքն ընդունելով և կնքվելով՝ լինելով, մինչդեռ, էթնիկ այլազգի: Ավելին. ընդունելով, ասենք, ԱՄՆ կամ Ֆրանսիայի քաղաքացիություն՝ ցանկացած ազգի ներկայացուցիչ դառնում է նաև ազգությամբ ամերիկացի կամ ֆրանսիացի (իր ընտրությամբ՝ նա կարող է նաև համարել, որ պահպանում է իր «նախկին» ազգությունը կամ ոչ, իսկ այլ քաղաքացիության պահպանումը կամ ոչ՝ որոշվում է տվյալ պետությունների օրենսդրությամբ): Այսպիսով՝ ազգը, ինչպես և քաղաքացիությունը, սոցիալական կառույց է: Սակայն եթե քաղաքացիությունը չափահաս մարդու կամարտահայտությամբ բացահայտորեն կարող է ընդունվել, մերժվել կամ փոխվել, ազգին պատկանելությունը հաճախ ավելի քիչ ռացիոնալիզացվող երևույթ է:

Այս խնդիրը հանգեցնում է «ազգ» երևույթի ձևակերպման դժվարությանը: Ձևակերպումը պիտի լինի այնպիսին, որ բոլոր «ազգերին» և «ազգերի» բոլոր տեսակներին համապատասխանի, իսկ դա անհնարին է: Վերջապես, պետությունները, հենց իրենց ինքնիշխանությունից ելնելով, որպեսզի կատարեն իրենց բնակչության առջև իրենց առաջնային պարտքը, չեն ցանկանում, որպեսզի իրենց տարածքում բնակվող առանձին էթնիկ խմբեր կամ դրանց մասեր իրենց հոչակեն նոր պետություն և առանձնանան տվյալ պետությունից: Այդպիսի դեպքերը միշտ բավական ցավալի են ընկալվում «մայր» պետության կողմից և շատ հաճախ հանգեցնում արյունահեղ պատերազմների: «(Ազգերի) ինքնորոշման իրավունքը» երբեմն դառնում է մոդայիկ. այդպես էր Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմներից և Սառը պատերազմից հետո, երբ միջազգային հանրությունը թույլ տվեց կամ ստիպեց, որ որոշ գաղութատեր պետություններ ինքնորոշման իրավունքներ տրամադրեն իրենց գաղութներին: Սակայն այդ գաղութներից շատ քչերն էին կոմպակտ կերպով մեկ տարածքում բնակվող էթնիկ ազգեր՝ առանց փոքրամասնությունների: Հավելյալ պետությունների առաջացման պատմությունը ցույց է տալիս, որ դրանք մեծ մասամբ կամ առաջանում են պատերազմների արդյունքում, կամ՝ պատերազմների մեջ ընդգրկվում առաջանալուց հետո: Բացառությունները՝ նոր պետությունների՝ բացարձակապես խաղաղ կերպով առաջանալը, ինչպես Չեխիայի և Սլովակիայի բաժանման դեպքում էր (տե՛ս հաջորդ հոդվածը), չափազանց քիչ են:

Պետությունը համեմատաբար ավելի ռացիոնալ երևույթ է, քան ազգը: Այն ավելի գիտակցորեն է ձևավորվում: Այն ունի, գոնե մոտավոր, սահմաններ, տարածք, քաղաքացիների (կամ հպատակների) քիչ թե շատ հստակ քանակ:

Էթնիկ ազգերը չունեն այդպիսի ատրիբուտներ. նրանց քանակը երբեք չի կարող ճշգրտորեն հաշվարկվել, նրանք կարող են ապրել տարբեր տարածքներում, և նրանց բնակության սահմանները հստակ չեն՝ կարող են միախառնված լինել այլ էթնոսների բնակության տեղանքներին: Այդ է պատճառը, որ ազգերը կամ այլ խմբեր, երբ ուզում են անկախանալ, հայտարարում են պետության ստեղծման մասին, նույնիսկ եթե այդ պետությունը չի ճանաչվում: Նրանք ստեղծում են պետական օրգաններ և այլն, որպեսզի, մի կողմից, ցույց տան միջազգային հանրությանը, որ իրենք կարող են գոյատևել, և իրենց տարածքում անարխիա՝ անիշխանություն չկա (այսինքն՝ իրենք լիիշխան են), մյուս կողմից՝ որպեսզի իրոք կառավարելի դարձնեն իրենց տարածքն ու բնակչությունը (դառնան լիիշխան և ինքնիշխան): Պետությունն ունի քիչ թե շատ հստակ տարածք և բնակչության (քաղաքացիների կամ հպատակների) քանակ, որոնք օգտվում են պետական-քաղաքական իշխանության՝ ի դեմս պետական օրգանների, գոյությունից: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հսկայական նշանակություն է ձեռք բերել «պետության ճանաչում միջազգային հանրության կողմից» հասկացությունը, որն էլ հենց պայմանավորում է այս կամ այն տարածքի և բնակչության՝ որպես պետություն կայանալը կամ չկայանալը: «Ճանաչում» այսօր հիմնականում նշանակում է՝ ճանաչվել այլ պետությունների կողմից (որքան կարելի է՝ շատ պետությունների, ինչպես, օրինակ, Կոսովոն), իսկ լիակատար ճանաչումն այն դեպքն է, երբ պետությունն անդամակցության հրավեր է ստանում ՄԱԿ-ից¹⁰⁶: Տե՛ս այս խնդիրները հասցեագրված նաև նախորդ հոդվածում: *Ծանոթ. խմբագրի*

1.2. Պետության ձև. հասկացությունը, տարրերը

Պետությունները միմյանցից տարբերվում են մի շարք բնութագրիչ գծերով: Մասնավորապես՝ որոշ պետություններում իշխանությունը կամ դրա մի մասը փոխանցվում է ժառանգաբար, մյուսներում՝ ձևավորվում է ընտրությունների միջոցով: Պետությունների մի մասը տարածքային կազմակերպվածության առումով ունի պարզ կառուցվածք, մյուսներում առկա են որոշակի աստիճանի ինքնուրույնությամբ օժտված սուբյեկտներ: Պետությունների մի մասում մարդու իրավունքները հարգված և պաշտպանված են, առկա է գաղափարական, քաղաքական բազմակարծություն, տնտեսությունն ազատ է, սեփականության բոլոր ձևերը՝ պաշտպանված, մյուսներում այդ արժեքները պաշտպանված չեն¹⁰⁷:

¹⁰⁶ Այս հարցերը քննարկվում են նաև սույն գրքի՝ այս հոդվածին նախորդող՝ «Իշխանություն / իշխ» էսսեում:

¹⁰⁷ ՀՀ Սահմանադրության (2015) «Սահմանադրական կարգի հիմունքներ» գլխում ամրագրված են մարդու բարձրագույն արժեք լինելու (հոդված 3), գաղափարախոսական բազմակարծության և բազմակուսակցական

Պետությունների միջև եղած այս տարբերությունները հասկանալու համար պետականագիտության և համապատասխան իրավական գիտությունների մեջ գործածվում է «պետության ձև» հասկացությունը, որն ունի երեք հիմնական բաղադրատարր՝ կառավարման ձև, կառուցվածքի ձև, և պետաիրավական վարչակարգ:

1.2.1. Կառավարման ձև

«Կառավարման ձև» հասկացությունը կիրառվում է՝ մատնանշելու, թե ի՞նչ եղանակով են կազմակերպվում պետական իշխանության բարձրագույն և մնացյալ պետական մարմինները, ինչպես են դրանք փոխգործակցում, արդյոք պատասխանատվություն կրո՞ւմ են պետական մարմինները ժողովրդի առջև, թե՞ ոչ: Ըստ կառավարման ձևի՝ պետությունները լինում են միապետություններ, ուր իշխանությունը կամ դրա մի մասը փոխանցվում է ժառանգաբար, և հանրապետություններ: Հանրապետություններն էլ, իրենց հերթին, լինում են նախագահական, խորհրդարանական և խառը՝ կիսանախագահական կամ կիսախորհրդարանական:

Չմոռանանք նաև, որ իրական կյանքում չկա գրեթե ոչ մի պետություն, որի կառավարման ձևը և համապատասխան ռեժիմը կարող են բնութագրվել միանշանակ կերպով: Այսինքն, ճիշտ ինչպես կան կառավարման նախագահական և կիսանախագահական ձևեր, այդպես էլ կան ֆիկտիվ (կամ իմիտացիոն) ժողովրդավարություններ կամ խառը՝ միապետական-ժողովրդավարական կարգ ունեցող պետություններ: Տե՛ս այդ մասին նաև սույն ժողովածուի նախորդ նյութը: *Ծանոթ. խմբագրի*

Ընդհանրապես, այս կամ այն երկրում առկա կառավարման ձևը հասկանալու համար առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել՝ իշխանության ո՞ր մարմինն է կազմավորում կառավարությունը, ո՞ր մարմնի

համակարգի (հոդված 8), սեփականության բոլոր ձևերի ճանաչման և հավասար պաշտպանության (հոդված 10), մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա հիմնված սոցիալական շուկայական տնտեսության առկայության (հոդված 11) վերաբերյալ դրույթները և այլն: Միևնույն ժամանակ, շատ ժողովրդավարական դրույթներ կային նաև ԽՍՀՄ սահմանադրության մեջ, սակայն դրանք չէին իրագործվում: Այսպիսով, պետությունների ռեժիմներում կողմնորոշվելու համար կարևոր է հասկանալ ոչ միայն այն, թե ինչ է գրված փաստաթղթերում, այլև այն, թե ինչպե՛ս են այդ դրույթներն իրագործվում, այլ կերպ ասած՝ ինչպիսի՞ն են պետական ինստիտուցիաները, նրանց վարքը:

առջև է այն պատասխանատու, ո՞ր մարմինն է լուծում կառավարության հրաժարականի հարցը: Ինչպես հայտնի է, 2015 թվականին իրականացված սահմանադրական փոփոխությունների հետևանքով Հայաստանը կիսանախագահական կառավարման ձևից անցում կատարեց խորհրդարանականին: Այսպես, ՀՀ գործող Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության նախագահը անհապաղ վարչապետ է նշանակում նորընտիր Ազգային ժողովի խորհրդարանական մեծամասնության թեկնածուին¹⁰⁸: Վարչապետն իր հերթին կառավարություն է ձևավորում նշանակումից սկսած տասնհինգօրյա ժամկետում՝ Հանրապետության նախագահին առաջարկելով փոխվարչապետների և նախարարների թեկնածությունները¹⁰⁹: Այսինքն՝ հենց խորհրդարանն է, որ այսօր ՀՀ-ում կազմավորում է գործադիր իշխանությունը: Իսկ կիսանախագահական կառավարման ձև ենթադրող 1995 թվականի Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության նախագահն է նշանակում և ազատում վարչապետին, վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում կառավարության անդամներին¹¹⁰:

Կառավարման այս կամ այն ձևի ընտրությունը կամ անցումը մի ձևից մյուսին կարող է պայմանավորված լինել ազգային-պատմական ավանդույթներով, քաղաքական-իրավական մշակույթով, կուսակցական համակարգի կառուցվածքով ու առանձնահատկություններով, ինչու չէ՞ նաև քաղաքական ընտրախավի դիրքորոշմամբ (ինչպես 2015-ին ՀՀ-ում կիսանախագահականից խորհրդարանական ձևին անցնելու դեպքում):

Հայաստանի պարագայում կառավարման թե՛ մեկ, թե՛ մյուս ձևի նախընտրելիության առնչությամբ կան համապատասխան փաստարկներ և հակափաստարկներ¹¹¹:

¹⁰⁸ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 149: Իսկ 89 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքներով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով:

¹⁰⁹ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 150:

¹¹⁰ ՀՀ Սահմանադրություն (1995), հոդված 55, կետ 4-րդ: Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1> [ընդմիջվել է 22.08.2021]:

¹¹¹ Տե՛ս «Սահմանադրական փոփոխությունների նախագծի հիմնավորումներ» (2015): Հասանելի է՝ <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/naxagci%20himnavorumner.pdf> [ընդմիջվել է 08.11.2020]: Հետաքրքրական և ուսումնասիրության կարող է նաև 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին, այսպես կոչված, Թավշյա հեղափոխության հաղթանակի գործում կառավարման

1.2.2. Կառուցվածքի ձև

Բացի կառավարման ձևից՝ պետությունները միմյանցից տարբերվում են նաև կառուցվածքով՝ բաժանվելով հիմնականում երկու խմբի՝ պարզ (ունիտար) և դաշնային (ֆեդերատիվ) պետությունների¹¹²: ՀՀ-ն իր կառուցվածքով պարզ պետություն է: Այն բաժանված է միայն վարչատարածքային միավորների, այսինքն՝ միայն տարածքային սկզբունքով: Որպես դաշնային պետության օրինակ կարող ենք նշել Ռուսաստանի Դաշնությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը և այլն:

ՀՀ վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները: Վարչատարածքային բաժանումը սահմանվում է օրենքով, Կառավարության ներկայացմամբ¹¹³: Ընդ որում՝ համայնքը կարող է ընդգրկել մեկ կամ ավելի թվով բնակավայրեր: Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանվում է տասը մարզի՝ յուրաքանչյուրը իր վարչական կենտրոնով՝ մարզկենտրոնով¹¹⁴: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ Կառավարությունը մարզերում իր տարածքային քաղաքականությունն իրականացնում է մարզպետների միջոցով¹¹⁵: Մարզպետներին նշանակում և ազատում է Կառավարությունը: Մարզպետները համակարգում են պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությունը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարմանը, ապա ՀՀ Սահմանադրության համաձայն՝ այն տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը¹¹⁶: Տեղական ինքնակառավարումն իրականացվում է

խորհրդարանական ձևի ունեցած «դերակատարության» հանգամանքը: Մասնավորապես՝ մասնագիտական շրջանակներում քննարկվում է այն հարցը, թե արդյոք իշխանափոխությունը անկախ դրա անվանումից կամ դրա նկատմամբ վերաբերմունքից, հնարավոր կլինե՞ր կառավարման կիսանախագահական ձևի պայմաններում:

¹¹² Բացի այս երկու ձևերից՝ մասնագիտական գրականության մեջ նշվում է նաև երրորդ ձևը՝ համադաշնությունը (կոնֆեդերացիան):

¹¹³ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը (1995): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=59732> [դիտվել է 22.08.2021]:

¹¹⁴ Տասը մարզերն են իրենց մարզկենտրոններով: Արագածոտն՝ Աշտարակ, Արարատ՝ Արտաշատ, Արմավիր՝ Արմավիր, Գեղարքունիք՝ Գավառ, Լոռի՝ Վանաձոր, Կոտայք՝ Հրազդան, Շիրակ՝ Գյումրի, Սյունիք՝ Կապան, Վայոց ձոր՝ Եղեգնաձոր և Տավուշ՝ Իջևան:

¹¹⁵ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 160:

¹¹⁶ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 179:

համայնքներում: Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով: Ընդ որում, ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է համայնքի ղեկավարի թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի ընտրություն՝ ըստ ՀՀ Ընտրական օրենսգրքի¹¹⁷:

1.2.3. Պետաիրավական վարչակարգ

Պետությունների տարբերակման հաջորդ կարևոր հատկանիշը պետաիրավական վարչակարգն է: «Պետաիրավական վարչակարգ» եզրույթը կիրառվում է՝ բնորոշելու պետական իշխանության իրականացման եղանակների, միջոցների և հնարքների ամբողջությունը: Ըստ այդմ՝ պետությունները դասակարգվելի են երկու խմբի՝ ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական պետությունների: ՀՀ-ն իրեն հռչակել է ժողովրդավարական պետություն: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է¹¹⁸: Կարևոր է, որպեսզի պետության ժողովրդավարական դիմագիծը հետևողականորեն արտացոլված լինի երկրի հիմնական օրենքում և երաշխավորված լինի համապատասխան կառուցակարգերի միջոցով, իսկ ժողովրդավարական արժեքներն արմատաձև հասարակական գիտակցության մեջ, դառնան իրավական մշակույթի անբաժան մաս և ապրելակերպ: ՀՀ սահմանադրությունը, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրական կարգի հիմունքները¹¹⁹,

ժողովրդավարական վարչակարգի համար բավարար հիմք է նախատեսում: Ժողովրդավարական պետություններում երաշխավորված են մարդու իրավունքներն ու ազատությունները, տնտեսական գործունեության ազատությունը, քաղաքական և գաղափարական բազմակարծությունը: Այս պետությունների բնակչությունն ունի պետական իշխանության բնույթի վրա ներգործելու՝ սահմանադրորեն երաշխավորված հնարավորություն, օրինակ, ընտրական համակարգի միջոցով: Ժողովրդավարական պետություններում իշխանությունները կազմակերպվում են դրանց տարանջատման ու հավասարակշռման սկզբունքի հիման վրա՝ ձևավորվելով մեծամասնության կամահայտնության արդյունքում: Այստեղ հավասարապես հաշվի են առնվում նաև փոքրամասնության շահերը¹²⁰:

¹¹⁷ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 181, մաս 1:

¹¹⁸ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 1:

¹¹⁹ ՀՀ Սահմանադրություն (2015), գլուխ 1:

¹²⁰ Ավելի մանրամասն տե՛ս Խրոպակյուկ, (1997), Պետության և իրավունքի տեսություն: Երևան, «ԳՈՇ» հրատ., էջեր 154-155:

1.3. Պետական ապարատի կազմակերպման ու գործունեության սկզբունքները

Ինչպես արդեն նշել ենք, պետության բնութագրիչ հատկանիշներից մեկը հասարակության կառավարման համար նախատեսված հատուկ պետական ապարատի առկայությունն է¹²¹: Այս հասկացությունը կիրառվում է՝ բնութագրելու համար պետական մարմինների, հիմնարկների և պաշտոնատար անձանց ամբողջությունը, որի միջոցով իրականացվում է հասարակության պետական կառավարումը: Պետական ապարատի կազմակերպումն ու գործունեությունն իրականացվում են մի շարք սկզբունքների հիման վրա: Դրանցից ամենակարևորներն են.

- **Իշխանությունների տարանջատման սկզբունքը.** այս սկզբունքն անկյունաքարային է ժողովրդավարական-ազատական հասարակություններում պետական իշխանության կազմակերպման և գործունեության համար: Իշխանությունների տարանջատման սկզբունքը պատմականորեն առաջինը հստակ ձևակերպել են Ջոն Լոքը Անգլիայում և Շառլ-Լուի Մոնտեսքյոն՝ Ֆրանսիայում: Մասնավորապես, Ջ. Լոքը կարծում էր, որ ազատության վարչակարգի պահպանումը պահանջում է, որ պետության հանրային-իշխանական լիազորությունները սահմանազատված լինեն և բաշխվեն տարբեր պետական մարմինների միջև: Օրենքներ ընդունելու իրավասությունը (օրենսդիր իշխանությունը) պիտի իրականացվի ամբողջ ժողովրդի ներկայացուցչական մարմնի՝ խորհրդարանի կողմից: Օրենքները կյանքի կոչելու իրավասությունն առավել հաճախ վերապահվում է գործադիր իշխանությանը՝ միապետին կամ նախարարների կաբինետին: Ըստ Ջ. Լոքի՝ իշխանության երրորդ ճյուղը միութենական (ֆեդերատիվ) իշխանությունն է, իսկ ըստ Շ.-Լ. Մոնտեսքյոյի՝ դատական իշխանությունը¹²²: «Սահմանադրությամբ երաշխավորվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանումն ու հավասարակշռումը¹²³»:

¹²¹ «Պետական մեխանիզմ» («կառուցակարգ») և «պետական ապարատ» հասկացությունների ծավալի և բովանդակության վերաբերյալ տեսաբանների մոտեցումները տարբեր են: Օրինակ՝ նշված երկու հասկացությունները Վ. Ներսեսյանցը նույնացնում է, Ա. Վաղարշյանը՝ տարբերակում, տե՛ս Ներսեսյանց, Վ. (2001), Իրավունքի և պետության տեսություն, Երևան, «Նաիրի» հրատ., էջեր 89-91, տե՛ս նաև Վաղարշյան, Ա. (2013), նշվ. աշխ., էջեր 156-157: Այս տեքստում «պետական կառուցակարգ» և «պետական ապարատ» հասկացությունները կկիրառվեն նույն իմաստով:

¹²² Нерсесянц, В. (2004). История политических и правовых учений: Учебник для вузов: 4-е изд., переработанное и дополненное. Москва, изд. НОРМА, стр. 332-339.

¹²³ «Սահմանադրություն (2015), գլուխներ 4-7:

- **Պետական ապարատի գործունեության մեջ հրապարակայնության և բացախսության սկզբունքը.** այս սկզբունքի իրացումն ապահովվում է մի շարք կառուցակարգերի միջոցով: Մասնավորապես՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, ի կատարումն տեղեկություններ ստանալու՝ յուրաքանչյուր անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքի¹²⁴, կանոնակարգում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերն ու պայմանները¹²⁵:
- **Պետական իշխանության մարմինների կազմակերպման ժողովրդավարական սկզբունքը.** այս սկզբունքը ժողովրդի իշխանության սկզբունքի մասնակի դրսևորումն է: Ժողովուրդն այն իրականացնում է ինչպես ուղղակիորեն՝ ընտրությունների ու հանրաքվեների միջոցով, այնպես էլ անուղղակի կամ միջնորդավորված՝ Սահմանադրությամբ նախատեսված պետական մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով¹²⁶:

Առկա են պետական մարմինների տարբեր դասակարգումներ, օրինակ, ըստ **գործունեության** ժամկետների, տարածքային ընդգրկվածության և այլն: Ստորև պետական մարմինները կքննարկվեն ըստ գործունեության իրականացման ոլորտի: Այդ չափանիշի համաձայն՝ պետական մարմինները բաժանվում են օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների:

¹²⁴ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 51:

¹²⁵ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը (2003), հոդված 1, մաս 1-ին: Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1372> [դիտվել է 22.08.2021]: Ի դեպ, նշված օրենքով տեղեկատվության տնօրինող է **(են)** համարվում և օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով տեղեկատվություն տրամադրելու պարտականություն են կրում նաև հանրային նշանակության կազմակերպությունները և դրանց **պաշտոնատար անձինք** (հոդված 3):

¹²⁶ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 2: Պետական մարմինների գործունեության սկզբունքների տեսանկյունից առանձնակի կարևորություն է ներկայացնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը (2004): Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75264> [դիտվել է 22.08.2021]: Այս օրենքով վարչական մարմիններ են՝ ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմինները՝ Հայաստանի Հանրապետության նախարարությունները, ինչպես նաև Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ, բ) տարածքային կառավարման մարմինները՝ մարզպետները, գ) տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը (հոդված 3, մաս 1-ին):

1.4. Օրենսդիր իշխանության մարմիններ

ՀՀ-ում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը¹²⁷ (ԱԺ): ԱԺ-ը ոչ միայն երկրի **օրենսդիր մարմինն է**, այլև ժողովրդի **ներկայացուցչական մարմինը**: Սա նշանակում է, որ առաջին հերթին հենց ԱԺ-ի միջոցով է ժողովուրդն իրականացնում իրեն պատկանող իշխանությունը՝ որպես միջնորդավորված ժողովրդաիշխանության իրականացման ձև: Ավելին՝ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ԱԺ-ն դարձավ առաջնային մանդատով օժտված, այսինքն՝ անմիջապես ժողովրդի կողմից ձևավորվող **միակ մարմինը**՝ ողջ հանրապետության մասշտաբով: Նախկինում այդպիսի մանդատով օժտված էր նաև ՀՀ նախագահը¹²⁸: Օրենսդիր և ներկայացուցչական մարմին լինելուց գատ, ԱԺ-ն իրականացնում է նաև այլ՝ ֆինանսական, վերահսկողական գործառույթներ և այլն: Մասնավորապես՝ հենց ԱԺ-ն է ընդունում պետական բյուջեն՝ երկրի հիմնական ֆինանսական փաստաթուղթը, որով սահմանվում են պետության բոլոր եկամուտներն ու ծախսերը, իրականացնում պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը¹²⁹: Պատգամավորները կարող են Կառավարությանն ուղղել բանավոր և գրավոր հարցեր¹³⁰, հարցապնդումներ¹³¹, վարչապետին հայտնել անվստահություն¹³² և այլն: Բացի դրանից՝ ԱԺ-ը կարող է ձևավորել քննիչ հանձնաժողով¹³³: Քննիչ հանձնաժողովների գործունեության մանրամասները սահմանվում են ԱԺ-ի կանոնակարգով¹³⁴:

¹²⁷ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 88, մաս 2-րդ:

¹²⁸ «Հանրապետության Նախագահն ընտրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից հինգ տարի ժամկետով», տե՛ս ՀՀ Սահմանադրություն (1995), հոդված 50, մաս 1-ին:

¹²⁹ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 111:

¹³⁰ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 112:

¹³¹ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 113: Հարցապնդումների ներկայացման կարգի հետ կապված հարցերը մանրամասնված են «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի (2016 թ.) 121-րդ հոդվածով: Հարցապնդումները, ի տարբերություն հարցերի, ներկայացվում են գրավոր, սահմանափակված է հարցապնդումներ ներկայացնելու հաճախականությունը (հերթական նստաշրջանի ընթացքում ոչ ավելի, քան մեկ անգամ), ինչպես նաև հարցապնդումներ ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը. այն պատկանում է միայն խմբակցություններին: Այլ է նաև հարցապնդումներին ընթացք տալու կարգը:

¹³² ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 115:

¹³³ Պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով իրավունքի ուժով ստեղծվում է Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով, ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 108, մաս 1-ին:

¹³⁴ Տե՛ս «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքը (2016), գլուխ 7: Հասանելի է՝ <http://www.parliament.am/parliament.php?id=bylaw> [դիտվել է 22.08.2021]:

1.5. Գործադիր իշխանության մարմիններ

Գործադիր իշխանության բարձրագույն մարմինը ՀՀ կառավարությունն է¹³⁵: Կառավարությունը պատասխանատու է երկրի ներքին ու արտաքին քաղաքականությունների մշակման և իրականացման համար: Դրանք կյանքի են կոչվում Կառավարության գործունեության հիմնարար փաստաթղթի՝ Կառավարության ծրագրի հիման վրա: Կառավարությունը իրականացնում է պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը¹³⁶:

Կառավարությունը կազմված է վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից¹³⁷:

Վարչապետի և կառավարության մյուս անդամների իրավասությունները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ¹³⁸: Այսպես՝ Վարչապետը Կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ղեկավարում է Կառավարության գործունեությունը և համակարգում Կառավարության անդամների աշխատանքը¹³⁹:

Գործադիր իշխանության մարմինների մասին խոսելիս հարկ ենք համարում հատկապես անդրադառնալ զինված ուժերին: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ զինված ուժերը Կառավարության ենթակայության ներքո են¹⁴⁰, որը զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն սահմանելու կարևորագույն պահանջի իրացումն է: Զինված ուժերի կիրառման մասին որոշումն ընդունում է Կառավարությունը: Անհետաձգելի անհրաժեշտության դեպքում զինված ուժերի կիրառման մասին որոշումը պաշտպանության նախարարի առաջարկությամբ կայացնում է վարչապետը և այդ մասին անհապաղ տեղեկացնում Կառավարության անդամներին: Սահմանադրությամբ սահմանվում է նաև, որ պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանում է Անվտանգության խորհուրդը, իսկ արդեն այդ հիմնական ուղղությունների շրջանակում զինված ուժերի

¹³⁵ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 146, մաս 1:

¹³⁶ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 146, մաս 3:

¹³⁷ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքը (2018), հոդված 2, մաս 1-ին: Հասանելի է <https://www.arlis.am/documentview.aspx?docid=120915> [դիտվել է 22.08.2021]:

¹³⁸ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 152:

¹³⁹ Վարչապետը կարող է նաև Կառավարության անդամներին կոնկրետ հարցերով հանձնարարականներ տալ: Վարչապետը գլխավորում է Անվտանգության խորհուրդը:

¹⁴⁰ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 155, մաս 1-ին:

ղեկավարումն իրականացնում է Պաշտպանության նախարարը¹⁴¹:

Կարևոր է նաև արտակարգ և ռազմական դրության հետ կապված հարցերի սահմանադրական կարգավորումը: Այսպես՝ **Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում** Կառավարությունը հայտարարում է **ռազմական դրություն**, ուղերձով դիմում է ժողովրդին, կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք¹⁴²: **Սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի** դեպքում Կառավարությունը հայտարարում է **արտակարգ դրություն**, ձեռնարկում է իրավիճակից բխող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում ժողովրդին¹⁴³: Նշված երկու ռեժիմները ենթադրում են որոշակի գործողություններ¹⁴⁴: Հատկանշական է նաև, որ ՀՀ Սահմանադրության¹⁴⁵ համաձայն՝ արտակարգ և ռազմական դրությունները կարող են հիմք հանդիսանալ մարդու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար:

Ամփոփելով՝ նշենք, որ ռազմական կամ արտակարգ դրության

¹⁴¹ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 155, մաս 2-րդ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը գլխավոր շտաբի պետն է, որին վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հանրապետության նախագահը՝ օրենքով սահմանված ժամկետով: Ոչ պատերազմական ժամանակ գլխավոր շտաբի պետը ենթակա է պաշտպանության նախարարին: Պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է (մաս 4-րդ):

¹⁴² ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 119, մաս 1-ին:

¹⁴³ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 120, մաս 1-ին:

¹⁴⁴ Մասնավորապես՝ իրավունքի ուժով անհապաղ գումարվում է ԱԺ-ի հատուկ նիստ: ԱԺ-ը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել արտակարգ կամ ռազմական դրությունը կամ չեղյալ հայտարարել արտակարգ կամ ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը: Արտակարգ կամ ռազմական դրության իրավական ռեժիմները սահմանվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունվող օրենքներով, տես՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը (2006): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=67147> [դիտվել է 22.08.2021] և «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը (2012): Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75358> [դիտվել է 22.08.2021]:

¹⁴⁵ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 76 «Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում»:

պայմաններում արգելվում է ԱԺ ընտրություններ¹⁴⁶, հանրաքվեներ անցկացնելը¹⁴⁷, վարչապետին անվստահություն հայտնելու մասին ԱԺ-ի որոշման նախագիծ ներկայացնել կամ քննարկել¹⁴⁸, կառավարությունը իրավունք չունի իր վստահության հարցը դնել¹⁴⁹:

1.6. Դատական իշխանության մարմիններ

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան¹⁵⁰: Արդարադատության իրականացման նկատմամբ որևէ միջամտություն արգելվում է: Հայաստանում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը¹⁵¹: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

ՀՀ-ում **բարձրագույն դատական ատյանը**, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, **Վճռաբեկ դատարանն է**¹⁵²: Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը¹⁵³:

Առաջին ատյանի դատարաններն են.

- ընդհանուր իրավասության դատարանները.
- մասնագիտացված դատարանները, այն է՝ վարչական դատարանը և սնանկության դատարանը:

Այսպես՝ **առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը**¹⁵⁴ քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը,

¹⁴⁶ ՀՀ Սահմանադրություն, հոդված 91, մաս 2-րդ:

¹⁴⁷ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 208:

¹⁴⁸ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 115, մաս 4-րդ:

¹⁴⁹ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 157, մաս 5-րդ:

¹⁵⁰ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 162:

¹⁵¹ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 163:

¹⁵² ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 171:

¹⁵³ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 167:

¹⁵⁴ Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների և դատավորների թվակազմի համար տե՛ս Դատական օրենսգրքի 23-րդ հոդվածը, ՀՀ դատական օրենսգրք սահմանադրական օրենքը (2018): Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=119531> [դիտվել է 22.08.2021]:

բացառությամբ մասնագիտացված դատարանների (վարչական և սնանկության դատարաններ) ենթակայությանը վերապահված գործերի¹⁵⁵: Մասնագիտացված դատարաններից **վարչական դատարանին** ենթակա են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը, **սնանկության դատարանին**՝ սնանկության հարաբերությունները կարգավորող օրենքով նախատեսված բոլոր գործերը¹⁵⁶:

Վերաքննիչ դատարաններն են.

- վերաքննիչ քրեական դատարանը.
- վերաքննիչ քաղաքացիական դատարանը.
- վերաքննիչ վարչական դատարանը¹⁵⁷:

Վերաքննիչ դատարանը օրենքով սահմանված լիազորությունների սահմաններում վերանայում է առաջին ատյանի դատարանների՝ բողոքարկման ենթակա դատական ակտերը: Վերաքննիչ դատարանում գործերի քննության կարգը, ինչպես նաև վերաքննության սահմանները սահմանվում են օրենքով¹⁵⁸:

Վճռաբեկ դատարանը մեկն է, որը գործում է երկու պալատով՝

1) քրեական պալատ և 2) քաղաքացիական ու վարչական պալատ: Պալատներից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես Վճռաբեկ դատարան¹⁵⁹: **Վճռաբեկ դատարանը** վերանայում է վերաքննիչ դատարանի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր կայացրած դատական ակտերը: Դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով Վճռաբեկ դատարանը՝ 1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, 2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները¹⁶⁰:

¹⁵⁵ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքը (2018), հոդված 20:
¹⁵⁶ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքը (2018), հոդված 24:
¹⁵⁷ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքը (2018), հոդված 2:
¹⁵⁸ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքը (2018), հոդված 27:
¹⁵⁹ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքը (2018), հոդված 30:
¹⁶⁰ Օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովում է Վճռաբեկ դատարանը, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ կերպով է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաբանական պատճառով: Մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու նպատակով Վճռաբեկ դատարանը վերանայում է այն դատական ակտերը, որոնք խաթարում են արդարադատության բուն էությունը, ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքը (2018), հոդված 29:

1.6.1. Սահմանադրական արդարադատություն. համառոտ ակնարկ

Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը, որի նպատակը ՀՀ-ում Սահմանադրության գերակայության ապահովումն է¹⁶¹: Արդարադատություն իրականացնելիս ՍԴ-ն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: ՍԴ-ի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ կազմավորման և գործունեության կարգը՝ Սահմանադրությամբ և ՍԴ-ի մասին օրենքով¹⁶²:

ՍԴ կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և դիմողը վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների խախտմանը՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին

¹⁶¹ ՀՀ Սահմանադրական դատարանի, այդ թվում՝ որոշումների համար տե՛ս Սահմանադրական դատարանի կայքէջը, հասանելի է՝ <http://www.concourt.am/> [դիտվել է 22.08.2021]:

¹⁶² ՀՀ Սահմանադրության (2015)167-րդ հոդվածի համաձայն՝ ՍԴ-ը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով՝ ա) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաքրեական օրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը, բ) մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը որոշում է դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը, գ) մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, դ) լուծում է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը, ե) լուծում է հանրաքվեի, Ազգային ժողովի և Հանրապետության նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը, զ) որոշում է կայացնում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցի վերաբերյալ, է) եզրակացություն է տալիս Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին, ը) որոշում է կայացնում Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին, թ) լուծում է Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, ժ) լուծում է Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցը, ի) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը, լ) օրենքով սահմանված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ, ավելի մանրամասն տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը (2018): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=119246> [դիտվել է 22.08.2021]:

իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը¹⁶³: ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, այդ թվում՝ կոնկրետ հարցերի շրջանակը ըստ յուրաքանչյուր սուբյեկտի, նախատեսված է ՀՀ Սահմանադրության (2015 թ.) 169-րդ հոդվածով:

1.7. Պետություն և քաղաքացիական հասարակություն

Պետության և քաղաքացիական հասարակության (ՔՀ) միջև կապն առանցքային նշանակություն ունի: ՔՀ-ն իրավունքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական և իրավական պետության սոցիալական հիմքն է: Այսպես՝ ժամանակակից ՔՀ-ն իրավական, ազատական-ժողովրդավարական, բազմակարծային բաց հասարակություն է, որի հիմնական սուբյեկտը ազատ անհատն է: Նա իր շահերն իրականացնում է բոլորի համար միասնական օրենքի և ընդհանուր իրավակարգի¹⁶⁴ շրջանակներում¹⁶⁵: ՔՀ անդամներն իրենց տարաբնույթ շահերն ու հետաքրքրությունները արտահայտում և իրացնում են հասարակական-քաղաքական կազմակերպությունների միջոցով: Եվ հենց այդ պատճառով է, որ ժողովրդավարական պետություններում երաշխավորվում է միավորվելու ազատությունը: Հայաստանում երաշխավորվում է գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը¹⁶⁶, միավորումների ազատությունը¹⁶⁷, կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու իրավունքը¹⁶⁸ և այլն:

Կախված կազմակերպության կողմից քաղաքական¹⁶⁹ նպատակներ հետապնդելու կամ չհետապնդելու հանգամանքից՝ ՔՀ կազմակերպությունները բաժանվում են երկու մեծ խմբի՝ քաղաքական և ոչ քաղաքական: Քաղաքական կազմակերպությունների միջուկը կուսակցություններն են: Կուսակցությունը ՀՀ քաղաքացիների կամավոր միավորում է, որի նպատակը հանրաքվեներին, պետական և տեղական

¹⁶³ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 169, մաս 1-ին, կետ 8:

¹⁶⁴ Իրավակարգը որպես իրավական կատեգորիա, փաստական հասարակական հարաբերությունների համակարգ է, որը հաստատվում է իրավունքի նորմերի լրիվ և ճշգրիտ իրականացմամբ:

¹⁶⁵ Քաղաքացիական հասարակության բնութագրիչ հատկանիշների ու հիմնական բաղադրատարրերի քննարկումն առավել մանրամասն տես Վաղարշյան, Ա. (2013), նշվ. աշխ., էջեր 204-211, ինչպես նաև Ներսեսյանց, Վ. (2001), նշվ. աշխ., էջեր 99-100:

¹⁶⁶ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 8:

¹⁶⁷ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 45:

¹⁶⁸ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 46:

¹⁶⁹ Այստեղ՝ քաղաքական իշխանության հասնելու և (կամ) մասնակցելու:

ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելն է¹⁷⁰ (այսինքն՝ քաղաքական իշխանությանը հասնելը և (կամ) մասնակցելը): Կուսակցությունը ձևավորվում է ՀՀ քաղաքացիների նախաձեռնությամբ՝ հիմնադիր համագումարի որոշմամբ: Հիմնադիր համագումարը իրավազոր է, եթե դրան մասնակցում է առնվազն 300 հիմնադիր¹⁷¹:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է ոչ առևտրային հասարակական կազմակերպությունների երկու հիմնական տեսակ՝ հասարակական միավորումներ և հիմնադրամներ¹⁷²: Կան նաև այլ տեսակի կազմակերպություններ, որոնք նույնպես կարող են պնդել, որ քաղաքացիական հասարակության շահերն են արտահայտում, սակայն հիմնական իրավաբանական տեսակն այս երկուսն են: Հասարակական միավորումների գործունեությունը կարգավորվում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով: Հասարակական կազմակերպությունը (ՀԿ) ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ, ստեղծվում է հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջունքներ բավարարելու համար: ՀԿ-ը կարող է լինել առանց անդամության սահմանափակման կամ սահմանափակ անդամությամբ: ՀԿ-ն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, գործունեության առարկան, նպատակները և ձևերը¹⁷³: ՀԿ գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամների շահերի

¹⁷⁰ «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքը (2016), հոդված 2: Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110534> [դիտվել է 22.08.2021]:

¹⁷¹ «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքը (2016), հոդված 7:
¹⁷² ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (1998), հոդվածներ 122 և 123: Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=74658> [դիտվել է 22.08.2021]: Նախկինում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսվում էր նաև ոչ առևտրային կազմակերպությունների ևս մեկ տեսակ՝ իրավաբանական անձանց միությունները, որոնք կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ենթակա էին վերագրանցման «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, այսինքն՝ ներկայումս իրավաբանական անձանց միությունները՝ որպես ոչ առևտրային կազմակերպությունների առանձին տեսակ, գոյություն չունեն, տես՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը (2016): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=110802> [դիտվել է 22.08.2021]:

¹⁷³ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը (2016), հոդված 2:

ընդհանրությունը, անդամության կամավորությունը, ինքնակառավարումը, հաշվետվողականությունը:

Հիմնադրամներն այլ օրենքի համաձայն են գործում, սակայն ընդհանուր առմամբ նույնպես հիմնականում հանդիսանում են քաղաքացիական հասարակության շահերի արտահայտիչ: ՀԿ-ները, հիմնադրամները, որոշ դեպքերում՝ մեդիաները և որոշ այլ տեսակի կառույցներ, բայց հիմնականում՝ ՀԿ-ներն ու հիմնադրամները, հանդիսանում են քաղաքացիական հասարակության շահերի և իդձերի արտահայտման, պաշտպանման և իրագործման առաջատարներ՝ առանց քաղաքական իշխանության ձգտելու՝ պաշտոնապես ձևակերպված հավակնության: Վերջին տարիներին կազմակերպությունների տեսակները Հայաստանում փոքր-ինչ պարզեցվել են: Օրինակ՝ ՀԿ-ներին իրավունք է տրվել շահութաբեր գործունեությամբ զբաղվել՝ իրենց կանոնադրական նպատակների համար ռեսուրս հայթայթելու նպատակով, սակայն՝ ոչ շահույթ կուտակելու: Նույն կերպ էլ՝ շատ կազմակերպություններ, որ առաջներում ունեին այլ կարգավիճակներ, դարձել են հիմնադրամներ, օրինակ՝ թանգարանները, համալսարանները և այլն: Այսպիսի դեպքերում այն կառույցները, որոնք կազմավորվում են պետության կողմից, ունեն իրենց կառավարման օրգաններում պետության ներկայացուցիչ և/կամ համաֆինանսավորվում են պետության բյուջեից տևական կտրվածքով՝ տարեցտարի, - իհարկե, տարբերվում են այն կառույցներից, որոնք պետությունից այդպիսի կախվածություն չունեն, սակայն իրավաբանորեն նրանք համարվում են նույնական: *Ծանոթ. խմբագրի*

2. Իրավունք և նորմատիվ իրավական ակտեր

2.1. Իրավունքի նորմեր և աղբյուրներ

2.1.1. Իրավունքի նորմեր

Գոյություն ունեն «իրավունք» հասկացության տարբեր սահմանումներ: Այս համատեքստում իրավունքը կսահմանենք որպես իրավական նորմերի համակարգ: Իր հերթին, իրավական նորմը վարքագծի համապարտադիր կանոն է: Իրավական նորմը սոցիալական նորմի տարատեսակ է: Սոցիալական նորմեր են նաև սովորույթային, բարոյական, արարողակարգային, ծիսակարգային, կրոնական և այլ նորմերը: Պատմականորեն առաջինն ի հայտ եկած սոցիալական նորմը սովորույթային նորմն է կամ սովորույթը: Այն վարքագծի կանոն է, որը երկար ժամանակահատվածում անընդհատ կրկնվելու հետևանքով ամրապնդվել (ձևավորվել) է որպես վարքագծի կանոն:

Իրավական նորմերը սահմանվում են պետության իրավասու մարմնի կողմից և ամրագրված են պաշտոնական պետական ակտերում՝ օրենքներում, որոշումներում, հրամանագրերում և այլն: Դրանց ձևակերպման վրա հաճախ ազդում են պատմական ակունքները, ավանդույթները, սոցիալական նորմերը կամ օրենքների նախկին ձևակերպումները (գործող ու նախկին իրավակարգավորումները): Սոցիալական մյուս նորմերն ունեն ամրագրման այլ աղբյուր կամ ծագման այլ եղանակ, օրինակ, եկեղեցական իշխանությունների կողմից ընդունված ակտերը՝ կանոնական իրավունքի (կրոնական նորմերի) դեպքում և այլն: Իրավական նորմերը ոչ միայն սահմանվում են պետության (պետական իրավասու մարմնի) կողմից, այլև ապահովվում պետական հարկադրանքով: Նշվածը ենթադրում է, որ իրավական նորմերի կարգադրագրերի պահանջները կամովին չկատարվելու դեպքում դրանց կատարումն ապահովվում է պետական հարկադրանքով: Ի տարբերություն իրավական նորմերի՝ սոցիալական մյուս նորմերն ունեն դրանց կատարումն ապահովելու այլ կառուցակարգեր, մեթոդներ՝ համոզում, պարսավանք, վտարում և այլն: Իրավական նորմերի ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկը, թերևս, դրանց ձևական որոշակիությունն է, այսինքն՝ իրավական նորմերն ունեն արտահայտման (ամրագրման) որոշակի ձև: Սա առաջին հերթին ենթադրում է, որ իրավական նորմերը, ի տարբերություն, օրինակ, սովորույթների կամ սովորությանի նորմերի, ամրագրվում են կոնկրետ ակտերում՝ պաշտոնական փաստաթղթերում:

Կարևոր է նշել միանգամից, որ իրավական նորմերը նաև փոփոխվում են: Օրինակ, անցյալում երեխային դպրոցում ֆիզիկական բռնությամբ պատժելը պատժելի արարք չէր և նույնիսկ, ընդհակառակը, խրախուսելի էր: Այժմ դա քրեականորեն պատժելի արարք է: Երբ հասարակությունը նկատում է, որ որևէ իրավական նորմ սահմանված չէ, փոփոխման ենթակա է, կամ սահմանումը կամ նորմն ինքնին սխալ է (հնացել է կամ չի համապատասխանում ժողովրդավարության՝ անընդհատ զարգացող սկզբունքներին)՝ պետությունից պահանջում է փոփոխություն: Քանի որ պետությունը դանդաղ աշխատող և պահպանողական համակարգ է ինքնին, որովհետև հենց իր նպատակներից մեկն է կայունություն ապահովելը, պետությունը հաճախ չի նկատում նորմի փոփոխման հասունացած կարիքը կամ ժամանակին դրան չի արձագանքում: Որպեսզի պետությունն այդ փոփոխության կարիքը նկատի, հասկանա և այն իրագործի՝ հենց այդ կարիքը հաճախ հասցեագրվում է քաղաքացիական հասարակության և մեդիայի ակտիվ գործունեության միջոցով: *Ծանոթ. խմբագրի*

2.1.2. Իրավունքի աղբյուրներ

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են իրավական նորմերի ամրագրման երեք հիմնական աղբյուրներ (ձևեր)՝ նորմատիվ իրավական ակտեր (օրինակ՝ օրենքներ), դատական որոշումներ և իրավական սովորույթներ: Նշվածներից պատմականորեն առաջինը ի հայտ են եկել իրավական սովորույթները: Սակայն ժամանակակից ժողովրդավարական պետություններում (երբեմն նաև՝ ոչ ժողովրդավարական) նորմատիվ իրավական ակտերը և դատական որոշումներն իրավունքի հիմնական աղբյուրներն են, ընդ որում՝ կախված կոնկրետ իրավական համակարգից¹⁷⁴ գերակայում է իրավունքի նշված աղբյուրներից մեկը կամ մյուսը: Այսպես՝ «մայրցամաքային» (կոնտինենտալ) իրավական համակարգում առաջնային են նորմատիվ իրավական ակտերը, իսկ «ընդհանուր» (անգլո-սաքսոնական) իրավական համակարգում՝ դատական որոշումները:

Մշակութային-պատմական այս բաժանումը կարևոր է ճշգրտորեն հասկանալ. Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի տեսակետից՝ մայրցամաքային Եվրոպայի (նախ և առաջ՝ Արևմտյան Եվրոպայի մայրցամաքային պետությունների) իրավական փիլիսոփայությունը բնորոշվում է որպես «կոնտինենտալ»: Իրավունքի փիլիսոփայության գլխավոր հարցերից մեկն է հենց դա. որը պիտի լինի իրավունքի առաջնային աղբյուրը. դատական որոշումը, թե՛ նորմատիվ ակտը: «Ընդհանուր» իրավական համակարգերի ջատագովները պնդում են, որ նորմատիվ ակտի գերակայությամբ իրավական համակարգերում դատական իշխանությունը երբեք չի հասնի անկախության այն աստիճանի, ինչ իրենց համակարգում է հասել, չի զորավորվի (իշխանավորվի) այնպես, ինչպես պահանջում է իդեալական ժողովրդավարությունը: «Կոնտինենտալ» համակարգը, ասում են «ընդհանուրի» ջատագովները, պահանջում է, որ ամեն օրենք լինի ձևակերպված, և անկարող է ճկունորեն գործել այն դեպքերում, երբ օրենքը ձևակերպված չէ: Այդ առումով հետաքրքիր է հետևյալ հռչակավոր օրինակը. կանոնն ասում է. «Ոչ մի փոխադրամիջոց՝ զբոսայգում» (no vehicles in the park): Երեխան հեծանիվ է քշում: Ոստիկանը նրան տանում է դատարան: «Անգլո-սաքսոնական» համակարգում դատավորն իրավասություն

¹⁷⁴ Իրավական համակարգը չպետք է շփոթել իրավունքի համակարգի հետ: Իրավունքի համակարգը իրավական նորմերի համակարգն է, որն ընդգրկում է իրավական նորմերը, դրանք միավորող իրավական հաստատությունները (ինստիտուտները) և իրավունքի ճյուղերը: Իրավական համակարգը յուրաքանչյուր պետության շրջանակում գոյություն ունեցող բոլոր իրավական երևույթների նորմերի, մարմինների, հարաբերությունների, իրավագիտակցության և այլնի համակցությունն է: Իրավական համակարգերի տարատեսակների մասին ավելի մանրամասն տե՛ս Վաղարշյան, Ա. (2017), Պետության և իրավունքի տեսություն-2, Դասախոսություններ: Երևան, Հեղինակային հրատ., էջեր 198-199:

ունի որոշելու՝ արդյոք մանկական հեծանիվ քշելը կանոնի խախտում է, թե ոչ: Տրամաբանությունից ելնելով՝ կանոնն արգելում էր ավտոմեքենաների, մոտոցիկլետների և այլ նման փոխադրամիջոցների մուտքը զբոսայգի, այլ ո՛չ թե հեծանիվների, ինքնազլորների և կամ անվաչմուշկների: Իսկ մանկասայակները: Իսկ հաշմասայակները: Սակայն «մայրցամաքային» դատավորը կպահանջի, որ օրենքը հստակ ձևակերպի, թե «փոխադրամիջոց» ասելով ինչ նկատի ունեն, և թվարկի: Եվ քանի որ նորանոր փոխադրամիջոցներ կարող են առաջանալ, և բոլորը երբևէ հնարավոր չի լինելու ժամանակին ֆիքսել օրենքում՝ առաջանում է «գեշ անվերջության» խնդիրը, և «մայրցամաքային» դատավորն անզոր է լինելու այդ հանելուկը լուծել և որոշում կայացնել:

Իրավա-մշակութային այս տարբերության պատմական բացատրություններից մեկն այն է, որ «մայրցամաքում» օրենքը պատմականորեն միշտ իջեցվել է «վերևից»՝ տվյալ տեղանքը գրաված իշխանության կողմից, իսկ «անգլո-սաքսոնական» աշխարհում, որը, ծովերով պաշտպանված լինելով, օտար ուժերի հարձակումներին շատ ավելի քիչ է ենթարկվել, զարգացել է վարից վեր: Դրանով է, օրինակ, բացատրվում նաև շերիֆների ուղղակի ընտրությունն ԱՄՆ-ում (տե՛ս հաջորդ հոդվածը). «մնացուկ» այն ժամանակներից, երբ դատավորներն էլ էին ուղղակիորեն ընտրվում տվյալ համայնքի բնակիչների կողմից՝ հարգարժան և հեղինակություն վայելող անձանց թվից: Այդպիսով, «մայրցամաքային» իրավական համակարգ ունեցող երկրների (ինչպիսին է նաև Հայաստանը) գլխավոր խնդիրներից է՝ «վերից» իջեցված օրենքը համապատասխանեցնել տեղական իրավական նորմին և հասնել նրան, որպեսզի օրենքի պաշտպաններն ու իրագործողները (դատավորները, ոստիկանությունը, քրեակատարողական համակարգը) իշխանավորված լինեն և հեղինակություն վայելեն, լինեն լեգիտիմացված՝ հասարակության վստահությամբ, և նրանց որոշումները լինեն հասարակության կողմից ընդունվող և հարգվող: Հայաստանի, ինչպես նաև շատ այլ հետխորհրդային տարածքների իրավական համակարգի՝ «մայրցամաքային» օրենքի տարբերակին դասվելը մեծապես պայմանավորված է նրանով, որ այստեղ օրենքի նախնական ձևակերպումները սերում են Պարսկական և Ռուսական կայսրությունների և ԽՍՀՄ տիրապետության ժամանակներից, երբ օրենքը, իրոք, իջեցվում էր «վերից վար»¹⁷⁵: Դրանով է նաև բացատրվում «չգրված օրենքի» և

¹⁷⁵ Նույն խնդիրը վերաբերում է նաև տեղական ինքնակառավարման սկզբունքներին. տրամաբանորեն՝ այդ համակարգը պիտի լինի իշխանության առաջնային օրգանը, սակայն այն տարածքներում, որտեղ իշխանությունը պատմականորեն «վերից վար» է իրագործվել տեղական ինքնակառավարումը հաճախ այդ իշխանության զուտ կցորդն է: Առաջին դեպքի տարբերակ է ԱՄՆ կառուցվածքը: Ինչ վերաբերում է երկրորդ դեպքին, այդ համակարգն ունեցող երկրների խնդիրն է՝ իշխանավորել տեղական ինքնակառավարումը, որպեսզի այն չլինի զուտ ձևական: Մյուս կողմից, տեղական ինքնակառավարման իշխանավորումից զգուշանում են նրանք, ովքեր համարում են, որ դա թուլացնում է իշխանության «ուղղահայացը» և կարող է հանգեցնել պետության ամբողջականության խնդիրների: Ոչ-ժողովրդավարությունների և կամ մասնակի ժողովրդավարությունների իշխանությունը սովորաբար տատանում է իշխանավորել տեղական ինքնակառավարումը: Տե՛ս այս մասին նաև հաջորդ հոդվածը:

«գրված օրենքի» միջև եղած «մկրատը» շատ ու շատ հետխորհրդային հասարակություններում, օրինակ՝ Հյուսիսային Կովկասում՝ «արյան վրեժի» կամ «հարսնացուի առևանգման» օրենքը կամ նաև Հայաստանում դեռևս երբեմն ներկա՝ անչափահասների ամուսնության ավանդույթը: Որքան էլ պնդեն, որ դա սովորույթ է և օրինական չէ, այդպիսի սովորույթները ստիպում են մարդկանց կամ նրանց հնարավորություն են տալիս գործել «գրված» օրենքին հակառակ՝ ունենալով, իրենց կարծիքով, խորապես լեզիտիմ հիմք: Մանավանդ եթե «գրված» օրենքն էֆեկտիվ կերպով չի իրագործվում: Այս խնդիրներն առավել ակտուալ են դարձել Հայաստանում վերջերս, մարդու իրավունքների պաշպանության, ինչպես նաև քրեական «օրենքի» և «օրենքով գողերի» դեմ պայքարի համատեքստում: *Ծանոթ. խմբագրի*

Պետք է, սակայն, նկատի ունենալ, որ իրավական համակարգերն այս առումով քարացած չեն, և դրանք կարող են տեղ հատկացնել մյուս իրավական աղբյուրներին: Այսպես՝ «մայրցամաքային» իրավական համակարգերում նորմատիվ-իրավական ակտը թեպետ շարունակում է մնալ իրավունքի հիմնական աղբյուրը, այնուամենայնիվ, դրան զուգահեռ, դատական որոշումները՝ նախադեպերը, գնալով ավելի ու ավելի մեծ կարևորություն ու տեղ են զբաղեցնում այդ իրավական համակարգում. Հայաստանում վերջերս կարևոր զարգացումներ են տեղի ունենում այդ ուղղությամբ:

2.2. Իրավական ակտերը՝ որպես իրավունքի աղբյուր

Առօրյա կյանքում յուրաքանչյուրն առնչվում է տարբեր իրավական ակտերի հետ, ավելին՝ մեր կյանքին վերաբերող մեծաթիվ հարցեր կարգավորվում են հենց իրավական ակտերով: Իրավական ակտերը, ինչպես և ենթադրվում է, բազմաթիվ են, անընդհատ ավելանում են (գնալով ավելի ու ավելի շատ հասարակական հարաբերություններ են ենթարկվում իրավական կարգավորման՝ նոր իրավական ակտեր ընդունելու ճանապարհով) և ունեն կարգավորման տարբեր առարկա, իրավաբանական ուժ ու բնույթ: Իրավական ակտերը կարելի է դասակարգել՝ հիմնվելով տարբեր չափանիշների վրա: Ըստ բնույթի՝ իրավական ակտերը լինում են նորմատիվ, անհատական և ներքին իրավական ակտեր: Ըստ գործողության ժամանակի՝ նորմատիվ իրավական ակտերը լինում մշտական և ժամանակավոր: Մշտական են այն իրավական ակտերը, որոնց գործողության համար ժամկետներ նախատեսված չեն, և, հակառակը,

ժամանակավոր իրավական ակտերը նախատեսված են միայն որոշակի ժամկետով գործողության համար:

Այսպես, ըստ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ իրավական ակտերը լինում են.

- **Նորմատիվ իրավական ակտեր.** ՀՀ ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտը, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար (օրինակ՝ պարտադիր զինվորական ծառայություն նախատեսող ՀՀ օրենսդրական ակտերը, որոնց կամովին չկատարվելու դեպքում իրավական նորմի պահանջները կիրառործվեն պետական հարկադրանքի միջոցով: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է նախատեսում ժամկետային զինվորական կամ այլ ընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորահավաքային զորակոչից խուսափելու համար¹⁷⁶):
- **Անհատական իրավական ակտեր.** սա նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտն է, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց համար (օրինակ՝ հանքարդյունաբերական ընկերությանը լիցենզիա տրամադրելու մասին պետական իրավասու մարմնի որոշումը կամ Հանրապետության նախագահի կարգադրությունը՝ օգնական նշանակելու մասին և այլն: Հիմնականում ընդունվում է կառավարության կամ նախարարությունների կողմից):
- **Ներքին իրավական ակտեր.** նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտերն են, որոնք սահմանում են վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք այն ընդունող մարմնի հետ աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից¹⁷⁷ (օրինակ՝ Երևանի

¹⁷⁶ Սույն ձեռնարկը կազմելու պահին դեռևս գործում է 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգիրքը (հոդված 327): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=69646>: ՀՀ նոր քրեական օրենսգրքով (ընդունվել է 2021 թ., ուժի մեջ է մտնում 01.07. 2022 թ.) նշված հանցանքը նախատեսված է 461-րդ հոդվածով:

¹⁷⁷ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ Օրենքը (2018), հոդված 2, կետ 6-րդ: Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=120733>:

պետական համալսարանի ռեկտորի հրամանը՝ համալսարանի տարածքում անվտանգության կամ հակահրդեհային կանոններ սահմանելու մասին):

2.2.1. Իրավական ակտերի հանրային քննարկումները

Իրավական ակտերի հանրային քննարկումները նպատակ ունեն ապահովելու իրավաստեղծ գործընթացին հանրության մասնակցությունը, գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Հենց հանրային քննարկման միջոցով է, որ հանրությունն իրագեկվում է իրավական ակտերի նախագծերի մասին, իրավաստեղծ մարմինները հնարավորություն են ստանում բացահայտելու հանրության կարծիքն այս կամ այն իրավական ակտի վերաբերյալ, ինչպես նաև ստանալու և ամփոփելու դրանց վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ:

Հանրային քննարկման են ենթակա **օրենսդրական ակտերի նախագծերը** (Սահմանադրություն, սահմանադրական օրենքներ և օրենքներ)՝ բացառությամբ միջազգային պայմանագրի վավերացման (դրան միանալու) մասին օրենքի նախագծի: Հանրային քննարկումն անցկացվում է օրենսդրական ակտերի մշակման գործընթացում հասարակության մասնակցությունն ապահովելու, ինչպես նաև, ի թիվս այլնի, ակտի վերաբերյալ առաջարկություններ ու դիտողություններ ստանալու նպատակով: Վավերացման ենթակա միջազգային պայմանագրերի դեպքում, քանի որ դրանց տեքստն արդեն վերջնական է, ըստ այդմ՝ չկա հանրային քննարկում անցկացնելու նպատակը: Այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հանրային քննարկման կարող են դրվել նախագիծը մշակող կամ ընդունող մարմնի նախաձեռնությամբ¹⁷⁸:

¹⁷⁸ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը (2018), հոդված 3: «Հանրային քննարկումների կազմակերպման ու անցկացման մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1146-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ Հանրային քննարկումների կարգ) այդ դեպքերը մասնավորեցվում են: Մասնավորապես՝ պարտադիր կարգով հանրային քննարկման են ենթակա նաև պետական կառավարման համակարգի մարմինների կողմից մշակվող ՀՀ կառավարության նորմատիվ որոշումների նախագծերը՝ բացառությամբ ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծերի: Հանրային քննարկման են ենթակա նաև ՀՀ կառավարության ներքին իրավական ակտերի նախագծերը և ՀՀ կառավարության անդամների (վարչապետ, փոխվարչապետներ, նախարարներ) կողմից ընդունման ենթակա ներքին իրավական ակտերի նախագծերը՝ բացառությամբ գաղտնիք պարունակողների: Պետական կառավարման համակարգի մարմինների կողմից մշակվող ՀՀ կառավարության անհատական որոշումների նախագծերը ենթակա են հանրային քննարկման ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա (Հանրային քննարկումների կարգ, մաս 3-րդ), տե՛ս «Հանրային քննարկումների կազմակերպման ու անցկացման մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի

Հանրային քննարկումը կազմակերպում են ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը կամ Կառավարության անդամը, ինչպես նաև Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինները: Հանրային քննարկումների տևողությունն առնվազն 15 օր է: Հանրային քննարկումներն անցկացվում են համապատասխան մարմնի կողմից նորմատիվ իրավական ակտի նախագիծը և դրա ընդունման հիմնավորումը շահագրգիռ մարմիններ ներկայացնելուն զուգահեռ հրապարակելու միջոցով: Հանրային քննարկումների անցկացման արդյունքները և դրանց հիման վրա լրամշակված նորմատիվ իրավական ակտի նախագիծը նույնպես հրապարակվում են:

Հանրային քննարկումը պարտադիր իրականացվում է քննարկում իրականացնող մարմնի պաշտոնական կայքում և ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարվող **իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական <https://www.e-draft.am/> կայքում** հրապարակման եղանակով:

Չնայած վերջին տարիներին պետության կողմից իրականացվող հանրային քննարկումների որակը փոքր-ինչ բարձրացել է, նաև շնորհիվ e-draft և նման կայքերի լավ աշխատանքի, սակայն կա առնվազն մի քանի հանգամանք, որ բարելավման կարիք ունեն: Օրինակ՝ հանրային քննարկման դյուրարարության (Ֆասիլիտացիայի) հարցը: Հասկանալի չէ, օրինակ, թե e-draft կայքում արտահայտվող կարծիքներն ինչ սկզբունքով են հաշվի առնվում: Որոշում ընդունողը կամ որոշման սևագիրը պատրաստողն իրենք են որոշում և ընտրում¹⁷⁹, թե որ կարծիքները հաշվի առնեն, որո՞նք՝ ոչ: Նաև անմիջական՝ առերես քննարկումների ժամանակ, որոշում ընդունողն է որոշում, թե ու՞մ հրավիրի և ինչպե՞ս վարի հանդիպումը, թեև հանդիպումների մասնակիցները կարող են երբեմն «ըմբոստանալ» և պահանջել վարման ավելի հարմար կարգ: Այդպիսով, որոշ քննարկումներ ավելի ճիշտ են կազմակերպված և արդյունավետ են, այլ քննարկումներ՝ ոչ: Ընդհանրապես, քննարկումների արդյունավետությունը բարձրացնելու համար չէր խանգարի, որ պետության ներկայացուցիչները տիրապետեն դյուրարարության՝ ֆասիլիտացիայի¹⁸⁰ սկզբունքներին: Քննարկումների մեծ մասն արվում է հնոտի մեթոդներով՝ սեղանի շուրջ ժողովված մարդկանց բանավոր խոսքի հնարավորություն տրամադրելով. խոսք, որից ֆիքսվում է միայն այն, ինչ կարևոր է համարում

հոկտեմբերի 10-ի թիվ 1146-Ն որոշում: Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=126002> [դիտվել է 22.08.2021]:

¹⁷⁹ Տե՛ս «Օրակարգը որոշելու իշխի» մասին՝ նախորդ հոդվածում:

¹⁸⁰ Տե՛ս դյուրարարության մասին, օրինակ, «Ֆասիլիտացիոն հմտություններ» տեսաեկույթը և տեքստն այստեղ. <https://epfarmeria.am/hy/video/facilitation-skills-Gevorg-Ter-Gabrielyan>

վարողը կամ գրի առնողը, այդպիսով հաճախ աղավաղելով մարդկանց կարծիքները (որոնք էլ, իրենց հերթին, առանձնապես մշակված չեն հնչում): Վերջապես, հանրային քննարկումների այս օրենսդրական պահանջը վերաբերում է զուտ պետությանը, որպեսզի առանց հանրության հետ հետադարձ կապի այն օրենքներ չընդունի: Մյուս կողմից, բազում-բազում հանրային քննարկումներ են կազմակերպում շահագրգիռ քաղաքացիները: Քաղաքացիական հասարակության գործունեության խոշոր մասը հանրային քննարկումներն են՝ տարբեր ձևաչափերով, տարբեր, շատ բազմազան, հաճախ զարգացած և ժամանակակից մեթոդիկաներով: Եվ սակայն այդ քննարկումներին պետության ներկայացուցիչների մասնակցությունը երաշխավորված չէ, առավել ևս՝ դրանց արդյունքները հաշվի առնելը, երբ դրանք ուղարկվում են պատկան մարմիններին: Իսկ թերևս ամենակարևորը, որ դեռևս ամբողջությամբ չի իրագործվում, նորմատիվ ակտի ընդունումից առաջ ոչ-պետական շրջանակների հետ բավարար չափով քննարկումներ անցկացնելն է, այսինքն՝ որպեսզի քաղաքացիական հասարակությունը մասնակցի նորմատիվ ակտի բուն բովանդակության ձևակերպմանը՝ հենց սկզբից: Եթե այդպիսի մոտեցումն արմատավորվի, ապա սևագրերի քննարկումը, իհարկե, շատ ավելի արդյունավետ կդառնա, քանի որ այդ մոտեցումն արդեն կընդգրկի հանրության կարծիքներն ու սպասելիքները հենց նորմատիվ ակտի նախնական տեքստի մեջ: Այս մոտեցումն առնչվում է «օրակարգի ձևակերպման» խնդրին, որի մասին խոսվել է սույն ժողովածուի նախորդ տեքստում: Իհարկե, ամեն դեպքում քննարկումները պիտի լինեն միմյանց փաստարկները լսելու, ռացիոնալ փաստարկներ ներկայացնելու և փաստարկներով միմյանց համոզելու տիրույթում, այսինքն՝ հետևեն կառուցողական կոմունիկացիայի սկզբունքներին¹⁸¹: *Ծանոթ. խմբագրի*

2.2.2. Իրավական ակտերի տեսակները

Ելնելով ՀՀ Սահմանադրության և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համադրված վերլուծությունից՝ կարող ենք նշել, որ նորմատիվ ակտերը բաժանվում են երկու մեծ խմբի՝ **օրենսդրական ակտերի և ենթաօրենսդրական ակտերի**: Այդ երկուսի ամբողջությունը կոչվում է օրենսդրություն: Օրենսդրական ակտերը երեք հիմնական տեսակի են¹⁸²

- Սահմանադրություն.
- սահմանադրական օրենքներ.
- օրենքներ:

¹⁸¹ Տե՛ս «Քննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառուկներ» գրքույկն այստեղ. <https://epfarmenia.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>

¹⁸² Տե՛ս «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը (2018), հոդված 2:

Օրենսդրական ակտերի վերը բերված աստիճանակարգությունը ներկայացված է ըստ օրենսդրական ակտերի իրավաբանական ուժի, որտեղ արտահայտված է մի կողմից նորմատիվ իրավական ակտերի՝ իրար նկատմամբ գերակայությունը, մյուս կողմից՝ ստորադաս նորմատիվ իրավական ակտի՝ գերակա ակտին համապատասխանելու պահանջը: ՀՀ Սահմանադրությունը, մասնավորապես՝ սահմանում է. «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին: Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»¹⁸³:

Սահմանադրությունը երկրի հիմնական օրենքն է:

Սահմանադրությամբ են կարգավորվում հասարակական կյանքի ամենահիմնարար ու առանցքային հարցերի վերաբերյալ հարաբերությունները:

Սահմանադրական օրենքները յոթն են՝ Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, «Սահմանադրական դատարանի մասին» օրենքը, «Հանրաքվեի մասին» օրենքը, «Կուսակցությունների մասին օրենքը» և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքը: Դրանք այն օրենսդրական ակտերն են, որոնք ուղղված են ապահովելու միջնորդավորված ժողովրդաիշխանության իրականացումը (Ընտրական օրենսգրքի և Հանրաքվեի մասին օրենքի պարագայում), իսկ մեծ մասը հաստատութենական են, այսինքն՝ նպատակ ունեն սահմանելու կարևորագույն հաստատությունների կազմակերպմանն ու գործունեությանն առնչվող հարցերը (Ազգային ժողովի կանոնակարգի, Դատական օրենսգրքի և Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքների պարագայում): Ի տարբերություն օրենքների՝ սահմանադրական օրենքներն ընդունվում են ձայների հատուկ մեծամասնությամբ,

¹⁸³ ՀՀ Սահմանադրություն, հոդված 5: Այս հոդվածին համապատասխան՝ վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Ինչ վերաբերում է նույն պայմանագրերի ու ՀՀ Սահմանադրության միջև հակասությանը, ապա նշենք, որ այդպիսի հնարավոր հակասությունները պարզելու նպատակով է, որ միջազգային պայմանագրերը, մինչև դրանց վավերացումը, ստուգվում են դրանցում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելու նպատակով, իսկ հակասելու դեպքում այդպիսի միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել (ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 116, մաս 3-րդ):

այն է՝ պատգամավորների ընդհանուր թվի ճայների առնվազն երեք հինգերորդով¹⁸⁴:

Օրենքներ. Իրավունքի տեսության մեջ օրենքը սահմանվում է որպես օրենսդիր իշխանության մարմնի՝ խորհրդարանի կողմից հատուկ կարգով կամ համաժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունված նորմատիվ ակտ, որը կարգավորում է կարևորագույն, առանձնահատուկ նշանակություն ունեցող հասարակական հարաբերությունները և օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով¹⁸⁵:

Ենթաօրենսդրական ակտ. Օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտ, որը Սահմանադրության ու օրենքների հիման վրա ապահովում է դրանց իրականացումը¹⁸⁶:

Իրավական ակտերը կարելի է գտնել Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/>, իսկ դատական ակտերը՝ «DataLex» դատական տեղեկատվական համակարգում հետևյալ հղումով՝ <http://datalex.am/>:

2.3. Իրավունքի համակարգ. հասկացությունը, կառուցվածքը, իրավունքի ճյուղերը

Իրավունքը պետության կողմից սահմանվող իրավական նորմերի համակարգ է: Իրավունքի այս ընկալման դեպքում «իրավունք» և «իրավունքի համակարգ» եզրույթները նույնանում են: Ըստ այդմ՝ իրավական նորմը իրավունքի (իրավական համակարգի) հիմնական առաջնային տարրն է, բայց՝ ոչ միակը: Իրավունքի համակարգն ընդգրկում է **իրավական նորմերը**, դրանք միավորող **իրավական հաստատությունները (ինստիտուտները) և իրավունքի ճյուղերը**: Իրավական հաստատությունը իրավական ճյուղի առանձնացված մասն է, որը կարգավորում է միասեռ հասարակական հարաբերությունների որոշակի կողմ, օրինակ, պարտավորությունների հաստատությունը՝ քաղաքացիական իրավունքում, պատժի հաստատությունը՝ քրեական իրավունքում և այլն: Ինչ վերաբերում է իրավունքի ճյուղին, ապա հարկ է նշել, որ այն, որպես իրավական նորմերի համակցություն, կարգավորում է

¹⁸⁴ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 103, մաս 2-րդ:

¹⁸⁵ Վաղարշյան, Ա. (2017), նշվ. աշխ., էջ 85:

¹⁸⁶ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը (2018), հոդված 2, մաս 1-ին, կետ 3-րդ:

որակապես միասեռ հասարակական հարաբերությունների ոլորտը:

Իրավունքի համակարգում կարելի է առանձնացնել նաև հանրային իրավունքը և մասնավոր իրավունքը, նյութական և ընթացակարգային նորմերը: Նյութական նորմերը կարգավորում են մարդկանց, կազմակերպությունների, հասարակական կյանքի այլ մասնակիցների միջև իրապես գոյություն ունեցող հարաբերությունները, օրինակ, գույք վարձակալելուն, աշխատանքի ընդունվելուն, անձի կողմից հանցանք կատարելուն, ընտրություններ կազմակերպելուն և անցկացնելուն վերաբերող հարաբերությունները և այլն: Նյութական իրավունքի ճյուղեր են քաղաքացիական իրավունքը, աշխատանքային իրավունքը, քրեական իրավունքը, սահմանադրական իրավունքը և այլն: Մյուս կողմից՝ դատավարական նորմերով (սրանք ընթացակարգային հարաբերությունները և նորմերը կարգավորող են) սահմանվում են իրավական վեճերի լուծման, իրավախախտումների, այդ թվում՝ հանցագործությունների քննության հետ կապված հարցեր: Դատավարական իրավունքի ճյուղին են դասվում քրեական դատավարության, քաղաքացիական դատավարության, սահմանադրական դատավարության, վարչական դատավարության իրավունքները, վարչական վարույթը և այլն:

Իրավունքը կարելի է բաժանել նաև ներպետական և միջազգային ձևերի: Ներպետականը տվյալ պետության իրավասու մարմինների կողմից ընդունված պետական իրավական ակտերն են, որոնք սահմանում են վարքագծի կանոններ պետության ներսում կամ պետությանը վերաբերող իրավահարաբերությունների մասնակիցների համար: Իսկ ահա միջազգային իրավունքը սահմանվում է պետությունների կողմից դրանց կամահայտնության հիման վրա և համաձայնությամբ: Միջազգային իրավունքը կարգավորում է պետությունների, ինչպես նաև միջազգային իրավունքի այլ սուբյեկտների՝ ժողովրդի և այլնի, միջև հարաբերությունները: Տե՛ս այս մասին նաև սույն գրքի նախորդ նյութը:

3. Իրավախախտում և իրավական պատասխանատվություն

3.1. Իրավախախտում. հասկացությունն ու տեսակները

Իրավունքի տեսության մեջ ընդունված է իրավախախտումը սահմանել որպես իրավագործունակ անձի մեղավոր վարքագիծ, որը հակասում է իրավունքի նորմերի կարգադրագրերին, վնաս է պատճառում

այլ անձանց և հանգեցնում իրավական պատասխանատվության¹⁸⁷։ Ընդ որում՝ անձը չի կարող պատասխանատվության ենթարկվել իր մտադրությունների, հույզերի, մտքերի և զգացմունքների համար, քանի դեռ դրանք չեն դրսևորվել մարդու որոշակի ակտում՝ գործողության կամ անգործության ձևով։ Իրավունքի նորմերով պաշտպանվում են անձանց, կազմակերպությունների, հասարակության ու պետության որոշակի շահեր։ Ուստի իրավախախտումները ոտնձգում են անձանց, կազմակերպությունների, հասարակության և պետության՝ օրենքով պաշտպանվող շահերի դեմ, այդպիսով վնաս պատճառում։ Մարդիկ զրկվում են իրենց կյանքից, գույքից, վնասվում է նրանց առողջությունը, խախտվում է հասարակական կարգն ու անվտանգությունը։ Անձի, կազմակերպության իրավական նորմերի կարգադրագրերին հակասող, այլ անձանց ու կազմակերպություններին վնաս պատճառող ցանկացած վարք չէ, որ կարող է իրավախախտում համարվել և իրավական պատասխանատվություն առաջացնել։ Անհրաժեշտ է, որ այն լինի մեղավոր վարք և կատարված լինի իրավագործունակ անձի կողմից։ Մեղքն ունի երկու ձև՝ դիտավորություն և անզգուշություն, և քրեական իրավախախտման առկայության համար անհրաժեշտ է մեղքի դրսևորման այս երկու ձևերից մեկնումեկը (երբեմն դրանք նաև զուգակցվում են)։ Քրեական և վարչական իրավախախտումներում մեղքի առկայությունը պարտադիր է արարքն իրավախախտում որակելու համար, իսկ քաղաքացիաիրավական իրավախախտումներում մեղքի առկայությունը ոչ միշտ է պարտադիր։ Օրինակ, անձին պատճառված ֆիզիկական կամ հոգեկան տառապանքը (այսինքն՝ ոչ նյութական վնասը) ենթակա է հատուցման նույնիսկ այն դեպքերում, երբ դատական ակտը կայացրած դատավորը տվյալ անարդար ակտը չի կայացրել դիտավորությամբ կամ թեկուզ անզգուշությամբ։

Մեղքից բացի՝ արարքը պիտի կատարված լինի իրավագործունակ անձի կողմից։ Սա ենթադրում է, որ արարքն իրավախախտում որակելու համար անձը պիտի հասած լինի որոշակի տարիքի, օրինակ, 14 կամ 16 տարեկան՝ կախված հանցանքի տեսակից, և գործունակ կամ մեղսունակ լինի։

Գործունակությունը քաղաքացիաիրավական կատեգորիա է։ Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների

¹⁸⁷ Խրոպանյուկ, Վ. (1997), նշվ. աշխ., էջ 388:

նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով¹⁸⁸։ Նրա նկատմամբ սահմանվում է խնամակալություն:

Մեղսունակությունը քրեաիրավական կատեգորիա է: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարք կատարելիս գտնվել է անմեղսունակության վիճակում, օրինակ՝ հոգեկան առողջության խնդիրների հետևանքով չի գիտակցել իր արարքի հակաիրավականությունը կամ չի ղեկավարել այն¹⁸⁹:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են իրավախախտումների երկու հիմնական խմբեր՝ հանցանքներ (հանցագործություններ) և զանցանքներ:

Հանցանքներն օժտված են վտանգավորության ամենաբարձր աստիճանով, և դրանցով ամենից ծանր վնասն է հասցվում անձանց, կազմակերպությունների, հասարակության և պետության շահերին: Հանցանքի օբյեկտներ կարող են հանդիսանալ մարդկանց կյանքի և առողջության, հասարակական կարգի և հասարակական անվտանգության, պետական կարգի և պետական ծառայության կապակցությամբ առաջացող հասարակական հարաբերությունները և այլն:

Զանցանքները հանցանքների համեմատությամբ ունեն վտանգավորության փոքր աստիճան, և դրանցով վնաս է հասցվում իրավակարգի միայն առանձին կողմերի, օրինակ, աշխատանքային կարգապահություն, երթևեկության կանոններ, հեղինակային իրավունքներ և այլն: Զինվորական ծառայության մեջ աստիճանակարգային հարաբերությունների դեմ ոտնձգող արարքները, որպես կանոն, համարվում են զանցանքներ: Զանցանքներն իրենց հերթին լինում են՝ վարչական, կարգապահական և քաղաքացիաիրավական:

¹⁸⁸ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (1998), հոդված 31, մաս 1-ին: Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=74658> [դիտվել է 22.08.2021]:

¹⁸⁹ ՀՀ քրեական օրենսգիրք (2003), հոդված 25, ՀՀ քրեական նոր օրենսգիրք (2021 թ.), հոդված 29:

3.2. Իրավական պատասխանատվության հասկացությունը և տեսակները

Իրավական պատասխանատվությունը պետական հարկադրանքի միջոցներից մեկն է: Այն կիրառվում է անձի նկատմամբ՝ կատարված իրավախախտման համար, արտահայտվում է մեղավորի նկատմամբ տարաբնույթ միջոցների կիրառմամբ¹⁹⁰: Այդ միջոցներն են, օրինակ, ազատազրկումը, տուգանքի կիրառումը, աշխատանքից ազատումը և այլն: Իրավական պատասխանատվությունն իրականացնում է կարևոր գործառնություններ, այդ թվում՝ կանխող-դաստիարակչական և իրավավերականգնիչ կամ հատուցողական: Իրավական պատասխանատվության տեսակներն են.

Քրեական պատասխանատվությունը, որին ենթարկվում են քրեական օրենքով արգելված արարք՝ հանցանք կատարելու համար: Քրեական պատասխանատվության սկզբունքները նախատեսված են հենց ՀՀ քրեական օրենսգրքում (ՔՕ): ՀՀ ՔՕ-ն հիմնվում է օրինականության, անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության, արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքների վրա¹⁹¹:

Վարչական պատասխանատվությունը, որի հիմքը վարչական իրավախախտում կատարելն է: Ի տարբերություն հանցանքների, որոնց համար պատասխանատվությունը նախատեսված է բացառապես ՀՀ ՔՕ-ով, վարչական իրավախախտումները նախատեսված են մի շարք օրենսդրական ակտերով, առավելապես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով¹⁹²:

Կարգապահական պատասխանատվությունը, որը կիրառվում է աշխատանքային, ծառայողական, զինվորական և ուսումնական կարգապահության խախտման համար:

Աշխատանքային կարգապահական պատասխանատվության միջոցները կիրառվում են աշխատանքային կարգապահության խախտման համար: Աշխատանքային կարգապահությունը բոլոր աշխատողների համար պարտադիր վարքագծի կանոններն են, որոնք, ի թիվս այլնի, սահմանված են աշխատանքային օրենսդրությամբ, ինչպես նաև գործատուի ներքին

¹⁹⁰ Վաղարշյան, Ա (2017), նշվ. աշխ., էջ 335:

¹⁹¹ ՀՀ քրեական օրենսգիրք (2003), հոդված 5, 8, 9, 10: 2021 թ. ՀՀ քրեական օրենսգրքով քրեական օրենսդրության սկզբունքները նախատեսված են 2-րդ գլխով, հոդվածներ 4-7:

¹⁹² Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք (1985): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=73129> [դիտվել է 22.08.2021]:

իրավական ակտերով: Աշխատանքային կարգապահության խախտման համար կիրառվող կարգապահական տույժերն են՝ նկատողություն, խիստ նկատողություն, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում¹⁹³:

Ծառայողական կարգապահական պատասխանատվության միջոցները կիրառվում են ծառայողական կարգապահության խախտման (ծառայողական իրավախախտումների) համար: Ծառայողական կարգապահության օրինակ է ոստիկանությունում սահմանված ծառայողական կարգապահությունը, որը կարելի է բնորոշել որպես ոստիկանության ծառայողների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունների խստիվ և ճշգրիտ պահպանում, կատարում և իրավազորությունների իրականացում¹⁹⁴: Ոստիկանության ծառայողների կողմից ծառայողական կարգապահության խախտման համար կարող են կիրառվել պատասխանատվության տարբեր միջոցներ (կարգապահական տույժեր)՝ նկատողությունից մինչև ոստիկանությունից ազատում¹⁹⁵:

Զինվորական կարգապահական պատասխանատվության միջոցները կիրառվում են զինվորական կարգապահության խախտման (կարգապահական իրավախախտումներ) համար: Զինվորական կարգապահությունը յուրաքանչյուր զինծառայողի կողմից իր պարտականությունների և կարգուկանոնի խստիվ և ճշգրիտ պահպանումն է¹⁹⁶: Զինծառայողների կողմից կարգապահական իրավախախտումների համար կարող են կիրառվել տարբեր կարգապահական տույժեր՝ նկատողությունից մինչև զինվորական ծառայությունից ազատում¹⁹⁷:

Ինչ վերաբերում է ուսումնական կարգապահական

¹⁹³ ՀՀ աշխատանքային օրենսգրք (2004), հոդված 223, մաս 1-ին: Հասանելի է՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150003> [դիտվել է 22.08.2021]: Աշխատանքային պայմանագրի լուծման հիմք է հանդիսանում, օրինակ, անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի աշխատանքի չներկայանալը, պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելը կամ խուսափելը (հոդված 113, մաս 1-ին, կետեր 9-10-րդ):

¹⁹⁴ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքը (2005), հոդված 5: Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=75037> [դիտվել է 22.08.2021]:

¹⁹⁵ Կարգապահական տույժերի ամբողջական ցանկի համար տե՛ս «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքը (2002), հոդված 42: Հասանելի է՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150048> [դիտվել է 22.08.2021]:

¹⁹⁶ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքը (2012), հոդված 2, մաս 1-ին: Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=75199> [դիտվել է 22.08.2021]:

¹⁹⁷ Կարգապահական տույժերի ամբողջական ցանկի համար տե՛ս «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքը (2012), հոդված 23:

պատասխանատվությանը, ապա այն կիրառվում է աշակերտների և ուսանողների կողմից ՀՀ օրենսդրությամբ և, մասնավորապես, տվյալ ուսումնական հաստատության ներքին (լոկալ) ակտերով սահմանված կանոնների (ուսումնական կարգապահության) խախտման համար:

Քաղաքացիաիրավական պատասխանատվությունը կիրառվում է մարդկանց, կազմակերպությունների և քաղաքացիական շրջանառության մյուս սուբյեկտների նկատմամբ գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների խախտման հիմքով, որոնց արդյունքում պատճառված վնասները քաղաքացիական օրենսդրությամբ ենթակա են հատուցման:

3.3. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է յուրաքանչյուրի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը¹⁹⁸, որի իրացման համար առկա են որոշակի կառուցակարգեր: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Պետական միջոցների հաշվին ցույց տրվող իրավաբանական օգնության՝ հանրային պաշտպանության հետ կապված հարցերը կարգավորվում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով¹⁹⁹: Այսպես՝ հանրային պաշտպանություն է համարվում հետևյալ դեպքերում տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը.

- խորհրդատվությունը. հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում՝ ներառյալ իրավաբանական տեղեկատվության տրամադրում.
- ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով: Նշված գործերով ներկայացուցչությունը կամ պաշտպանությունն²⁰⁰

¹⁹⁸ ՀՀ Սահմանադրություն (2015), հոդված 64:

¹⁹⁹ Տե՛ս «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը (2004): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=48764>:

²⁰⁰ Ներկայացուցչությունն իրականացվում է քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով, իսկ պաշտպանությունը՝ քրեական գործերով:

իրականացվում է քրեական գործով մինչդատական վարույթում ՀՀ առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանում:

Այսինքն՝ անվճար իրավաբանական օգնությունն ընդգրկում է իրավաբանական օգնության բոլոր տեսակները՝ բացառությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող դիմումների, և իրականացվում է գործի քննության բոլոր փուլերում՝ մինչդատական վարույթում, ՀՀ բոլոր դատական ատյաններում, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանում:

Անվճար իրավաբանական օգնության տրամադրման կարգը տարբերակում են ըստ գործի տեսակների: Այսպես՝ ՀՀ օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում կամ, եթե դա է պահանջում արդարադատության շահը, քրեական գործերով վարույթն իրականացնող մարմինն է որոշում, որ պետք է անձին անվճար իրավաբանական օգնությամբ ապահովել²⁰¹: Քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշման հիման վրա՝ այդպիսի օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց դիմումի համաձայն²⁰²:

²⁰¹ Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (1998 թ.) 69-րդ հոդվածը նախատեսում է քրեական գործով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցության հետևյալ դեպքերը. 1) այդպիսի ցանկություն հայտնել է կասկածյալը կամ մեղադրյալը, 2) կասկածյալի կամ մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը՝ համր, կույր, խուլ լինելու, խոսքի, լսողության, տեսողության ֆունկցիաների այլ էական խանգարման, երկարատև ծանր հիվանդության, ինչպես նաև տկարամտության, բացահայտ մտավոր անզարգացածության, այլ ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով, 3) կասկածյալի կամ մեղադրյալի մոտ առկա է հոգեկան հիվանդություն կամ ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարում, 4) կասկածյալը կամ մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին, 5) հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է, 6) մեղադրյալը ժամկետային ծառայության զինծառայող է, 7) կասկածյալների կամ մեղադրյալների շահերի միջև կան հակասություններ, և նրանցից մեկը պաշտպան ունի, 8) քրեական հետապնդումն իրականացվում է այն անձի նկատմամբ, որին վերագրվում է քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարում անմեղսունակության վիճակում, 9) կասկածյալը կամ մեղադրյալն անգործունակ է, 10) ներկայացվել է համաձայնեցման կամ համագործակցության վարույթ կիրառելու միջնորդություն, 11) դատարանը կիրառում է սույն օրենսգրքի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան, տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը (1998): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentView.aspx?docid=68011>: Պետք է նկատի ունենալ, որ նշված բոլոր դեպքերում անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է, եթե անձը չունի բավարար ֆինանսական միջոցներ պաշտպան իրավիճակում համար: Հանրային պաշտպանի գրասենյակի կայքէջ: Հասանելի է՝ <https://www.advocates.am/about-us/%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BA%D5%A>

²⁰²

4. Կարճ ամփոփում

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի այս կարճ էքսկուրսը մեզ թույլ է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումը. ըստ օրենսդրության՝ Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարական և իրավական պետություն է: Այլ խնդիր է օրենսդրության պահանջների կատարումն ու դրանց իրացումը իրական կյանքում յուրաքանչյուրիս կողմից: Հենց այստեղ է, որ առաջանում է էական խզում գրված օրենքի և իրական կյանքի միջև: Բացի դրանից՝ ակնհայտ է, որ նույնիսկ ամենակատարյալ օրենսդրությունն անընդհատ կատարելագործվելու և լրացվելու կարիք ունի՝ հասարակական զարգացումներից հետ չընկնելու ու դրանց համապատասխանելու նպատակով: Յուրաքանչյուր քաղաքացի իր ամենօրյա կյանքում պիտի գործի իրավական ակտերի պահանջների անշեղ կատարման հրամայականով՝ գիտակցելով, որ դա իրավական պետություն և ժողովրդավարություն կառուցելու մեջ իր կարևորագույն ներդրումն է:

5. Օգտագործված աղբյուրներ

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքը (2016): Հասանելի է՝ <http://www.parliament.am/parliament.php?id=bylaw> [դիտվել է 22.08.2021]:
2. «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը (2012): Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75358> [դիտվել է 22.08.2021]:
3. Դատական տեղեկատվական համակարգ («DataLex»): Հասանելի է՝ <http://datalex.am/>: [դիտվել է 22.08.2021]:
4. Իրավական ակտերի նախագծերի քննարկման միասնական կայք: Հասանելի է՝ <https://www.e-draft.am/> [դիտվել է 22.08.2021]:
5. Խրոպանյուկ, Վ. (1997), Պետության և իրավունքի տեսություն: Երևան, «ԳՈՇ» հրատ.:
6. «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքը (2018): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=120915> [դիտվել է 22.08.2021]:
7. «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքը (2016): Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110534> [դիտվել է 22.08.2021]:
8. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ: Հասանելի է՝ <https://www.arlis.am/> [դիտվել է 22.08.2021]:
9. ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2004): Հասանելի է՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150003> [դիտվել է 22.08.2021]:
10. ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքը (2018): Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=119531>: [դիտվել է 22.08.2021]:
11. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքը (2012): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=75199> [դիտվել է 22.08.2021]:
12. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենք (2005): Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=75037> [դիտվել է 22.08.2021]:
13. ՀՀ Սահմանադրություն (1995): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1> [դիտվել է 22.08.2021]:
14. ՀՀ Սահմանադրություն (2015): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510> [դիտվել է 22.08.2021]:
15. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը (1995): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=59732> [դիտվել է 22.08.2021]:
16. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (1998): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=74658> [դիտվել է 22.08.2021]:
17. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (1998): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=68011> [դիտվել է 22.08.2021]:
18. ՀՀ քրեական օրենսգիրք (2003): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=69646> [դիտվել է 22.08.2021]:
19. Հանրային պաշտպանի գրասենյակի կայքէջ: Հասանելի է՝ <https://www.advocates.am/about-us/%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%>

- BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A3%D6%80%D5%A1%D5%BD%D5%A5%D5%B6%D5%B5%D5%A1%D5%AF.html [դիտվել է 22.08.2021]:
20. «Հանրային քննարկումների կազմակերպման ու անցկացման մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1146-Ն որոշում: Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=126002> [դիտվել է 22.08.2021]:
 21. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը (2016): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=110802> [դիտվել է 22.08.2021]:
 22. Ներսեսյանց, Վ. (2001), Իրավունքի և պետության տեսություն: Երևան, «Նաիրի» հրատ.:
 23. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը (2018): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=120733> [դիտվել է 22.08.2021]:
 24. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքը (2002): Հասանելի է՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150048> [դիտվել է 22.08.2021]:
 25. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը (2006): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=67147> [դիտվել է 22.08.2021]:
 26. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը (2018): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=119246> [դիտվել է 22.08.2021]:
 27. Սահմանադրական դատարանի կայքէջ: Հասանելի է՝ <http://www.concourt.am/> [դիտվել է 22.08.2021]:
 28. Սահմանադրական փոփոխությունների նախագծի հիմնավորումներ (2015): Հասանելի է՝ <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/naxagci%20himnavorumner.pdf> [դիտվել է 22.08.2021]:
 29. Վաղարշյան, Ա. (2013), Պետության և իրավունքի տեսություն-1, Դասախոսություններ: Երևան, Հեղինակային հրատ.:
 30. Վաղարշյան, Ա. (2017), Պետության և իրավունքի տեսություն-2, Դասախոսություններ: Երևան, Հեղինակային հրատ.:
 31. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք (1985): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=73129> [դիտվել է 22.08.2021]:
 32. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը (2004): Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75264> [դիտվել է 22.08.2021]:
 33. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը (2003): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1372> [դիտվել է 22.08.2021]:
 34. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը (2004): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=48764> [դիտվել է 22.08.2021]:
 35. «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը (1995): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=57692> [դիտվել է 22.08.2021]:
 36. Нерсесянц, В. (2004). История политических и правовых учений: Учебник для вузов: 4-е изд., переработанное и дополненное. Москва, изд. НОРМА.

Պետական իշխանության և կառավարման մոդելները Վիշեգրայան քառյակի քաղաքական էվոլյուցիայի համատեքստում

ՍԵՂՄԱԳԻՐ

Ուսումնասիրությունը հակիրճ ներկայացնում է իշխանությունների տարանջատման սկզբունքը՝ գործադիր, օրենսդիր և դատական մարմինների հակակշիռների մոտեցումները: Ներկայացվում են նախագահական և խորհրդարանական համակարգերը Չեխիայի, Հունգարիայի, Լեհաստանի և Սլովակիայի ժողովրդավարացման և անցումային փորձի համատեքստում՝ ուշադրություն դարձնելով ռեժիմի տեսակներին, ժողովրդավարացման նախադրյալներին և անցման եղանակներին: Ներկայացվում է նաև տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության, զանգվածային լրատվական միջոցների և ընկերությունների դերը:

Բանալի բառեր. Չեխիա, Հունգարիա, Լեհաստան, Սլովակիա, Չեխոսլովակիա, իշխանական ճյուղերի բաժանում, Մոնտեսքյո, ժողովրդավարացում, կառավարման համակարգ, տեղական ինքնակառավարում, քաղաքացիական հասարակություն, մեդիա, բիզնեսի իշխանություն:

ABSTRACT

State power and governance models in the context of the political evolution of the Visegrad countries

This study briefly presents the origins of the idea of separation of powers into executive, legislative and judicial branches, and the checks and balances system. An introduction to presidential and parliamentary systems follows. The models which emerged as outcomes of democratisation and transition experience of the Czech Republic, Hungary, Poland and Slovakia are presented, with attention to the regime types, preconditions for democratization and the modes of transition

as possible determinants. The study also includes a concise review of the role of local government bodies, civil society, media and corporations.

Key words: Czech Republic, Hungary, Poland, Slovakia, Czechoslovakia, division of powers, Montesquieu, democratization, system of governance, local government, civil society, mass media, business power.

1. Նախաբան

Սույն տեքստը հակիրճ անդրադառնում է իշխանական ճյուղերի բաժանման սկզբունքին և դրա, ինչպես նաև գործադիր, օրենսդիր ու դատական իշխանությունների զսպումների և հակակշիռների կարևորությունը: Անդրադարձ է կատարվում կառավարման մի քանի մոդելի, որոնք իրենց ժամանակակից տեսքով ձևավորվել են քաղաքական համակարգերի էվոլյուցիոն զարգացման ընթացքում, երբ երկիրը բացարձակ միապետությունից անցել է խորհրդարանական կառավարմամբ սահմանադրական միապետության կամ հանրապետական վարչակարգերի: Բացի դրանից՝ կարճ անդրադարձ է կատարվում նաև իշխանության այլ մակարդակներում առկա յուրահատկություններին:

Իշխանական ճյուղերի բաժանմանը, ինչպես նաև զսպումների և հակակշիռների մեխանիզմներին անդրադառնալիս անհրաժեշտ է հիշել, որ դրանք քաղաքական ոչ միազիժ գործընթացների պայմաններում բազմիցս վտանգվել են, ինչը հանգեցրել է մարդու իրավունքների զանգվածային ոտնահարման, ունեզրկման և սպանությունների: Առաջին աշխարհամարտի ավարտից, եվրոպական մի քանի կայսրությունների փլուզումից և դրանց տարածքում ազգային պետությունների ձևավորումից, ապա նաև երկրորդ աշխարհամարտից հետո մի շարք եվրոպական երկրներում հաստատվեցին կոմունիստական, ֆաշիստական և նացիստական վարչակարգեր: Այլ մայրցամաքներում մինչ այդ էլ գոյություն ունեին և դեռևս պահպանվում են ռազմական վարչակարգեր, իսկ վերջին տասնամյակներում ձևավորվել են կրոնապետական վարչակարգեր: Տարատեսակ բռնատիրական վարչակարգերում իշխանական ճյուղերի բաժանման, ինչպես նաև զսպումների և հակակշիռների մեխանիզմները զուտ ձևական են, բայց դրանք պատշաճ կերպով չեն գործում նաև կիսավտորիտար և հիբրիդային վարչակարգեր ունեցող երկրներում:

Որոշ դեպքերում կառավարման մոդելների ընտրությունն ուղղակի

պայմանավորված էր ժողովրդավարացման գործընթացների բնույթով: Հետազոտությունն ավելի մանրամասն ներկայացնում է Վիշեգրադյան քառյակի երկրների (Լեհաստան, Չեխիա, Սլովակիա, Հունգարիա) փորձի որոշ առանձնահատկություններ՝ անդրադառնալով 1989-1990 թթ. տեղի ունեցած ժողովրդավարացման ընթացքին և դրա արդյունքում ձևավորված կառավարման մոդելներին (Լեհաստանում՝ կիսանախագահական, մյուս երկրներում՝ խորհրդարանական):

Հետազոտության ենթաբաժիններից մեկում կդիտարկվեն նաև օրենսդրական մակարդակով ամրագրված տեղական ինքնակառավարման մոդելները, այդ թվում՝ քաղաքներին ու համայնքներին տրված լիազորությունները՝ նաև հարկերի և տուրքերի հավաքման առումով: Բացի դրանից՝ քննության առարկա կդառնան ինքնակառավարման ոլորտում ազգային փոքրամասնություններին առնչվող որոշ առանձնահատկություններ, մասնավորապես՝ Սլովակիայում փոքրամասնությունների հետ հարաբերություններին առնչվող որոշ խնդիրներ, ինչպես նաև Հունգարիայում 13 ազգային փոքրամասնություններին (այդ թվում՝ հայկական) տրված կարգավիճակը:

Սլովակիայի անկախացումից հետո այնտեղ ձևավորվել էր ավտորիտար համակարգ, որի հետևանքով այն չի կարողացել 1997 թ. անդամակցել ՆԱՏՕ-ին՝ Վիշեգրադյան մյուս երկրների անդամակցությանը զուգահեռ: Սառեցվել էին ԵՄ-ի հետ անդամակցության բանակցությունները: Հետազոտության ենթաբաժիններից մեկում անդրադարձ կկատարվի Սլովակիայում 1998 թ. սկսած բարեփոխումներին, այդ թվում՝ հակակոռուպցիոն միջոցառումներին: Անդրադարձ կկատարվի նաև տնտեսական բարեփոխումներին, որոնք 2000-ականների սկզբին որոշ դիտորդների կողմից չափազանց արմատական էին համարվում, սակայն այժմ կարող են դիտարկվել որպես հաջողված: Վիշեգրադյան քառյակի երկրների էվոլյուցիան Վարշավյան պայմանագրի կազմաքանդումից ի վեր կարող է հետաքրքիր հետևությունների նյութ հանդիսանալ Հայաստանի բարեփոխումների մասին մտածելու համար:

2. Իշխանական ճյուղերի բաժանումը և կառավարման մոդելները

2.1. Իշխանական ճյուղերի բաժանման պատմական նախադրյալները

Երկար ժամանակ է պահանջվել իշխանական ճյուղերի բաժանման կարևորությունը գիտակցելու համար: 14-րդ դարի սկզբին Անգլիայի խորհրդարանը սահմանափակեց «գործադիր»-միապետի իշխանությունը՝ օրենսդիր լիազորությունները որոշ չափով բաշխելով կալվածատերերի, կրոնական առաջնորդների և քաղաքային համայնքների ներկայացուցիչների միջև: Հետագայում խորհրդարանի լիազորությունների ընդլայնման շուրջ տարաձայնությունները հանգեցրին 1642–60 թթ. քաղաքացիական պատերազմի, որի արդյունքում կարճ ժամանակով տապալված միապետությունը վերականգնվեց, բայց օրենսդիր լիազորություններն ամբողջությամբ արդեն փոխանցվել էին խորհրդարանին:

Իշխանական ճյուղերի բաժանման ժամանակակից ընկալումը սկիզբ է առնում Ջոն Լոքի՝ 1690 թ. լույս տեսած «Քաղաքացիական կառավարման մասին երկրորդ երկը» աշխատությունից. «Օրենսդիր իշխանությունն է իրավասու ուղղորդելու պետության հզորությունը՝ հանուն հանրության ու նրա անդամների: ... Եվ քանի որ բնավորությամբ թույլ մարդկանց համար իշխանությանը տիրելը չափազանց մեծ գայթակղություն է՝ եթե այն նույն անձինք, որոնք ունեն օրենքներ ընդունելու լիազորություն, ունենան նաև դրանք գործադրելու լիազորություն, կարող են իրենց ազատել իրենց իսկ ընդունած օրենքներին ենթարկվելուց և օրենքները թե՛ ընդունելիս ու թե՛ կատարելիս համապատասխանեցնել իրենց անձնական շահերին՝ դրանով իսկ ունենալով հանրության շահերից տարբերվող շահեր, իսկ դա հակասում է հասարակության և կառավարման նպատակին» (Locke, 1884, p. 267):

Շառլ Լուի Մոնտեսքյուն 1748 թ. լույս տեսած «Օրենքների ոգին» աշխատությունում նշել է, որ Անգլիայում առկա ազատությունը պահպանվում էր գոյություն ունեցած պետական հաստատությունների շնորհիվ: Ըստ Մոնտեսքյոյի, ազատությունը չի կարող գոյություն ունենալ, եթե նույն անձը կամ մարմինն իրականացնում է թե՛ օրենսդրական, թե՛ գործադիր իշխանությունը, կամ եթե դատական իշխանությունը տարանջատված չէ թե՛ օրենսդիրից, թե՛ գործադիրից (Montesquieu, 1777, p. 199): Վերլուծելով այդ և ավելի վաղ ժամանակաշրջանների

պետությունների փորձը՝ Մոնտեպյուն զարգացնում է Լոքի գաղափարները կառավարման և հասարակական կյանքի կազմակերպման մասին:

Ամերիկյան հեղափոխությունից հետո Լոքի և Մոնտեպյոյի գաղափարները հայտնվեցին ԱՄՆ նորաստեղծ սահմանադրության հիմքում: Սահմանադրության կերտողները, հիմնվելով իշխանական ճյուղերի բաժանման սկզբունքի վրա, օրենսդիր, գործադիր ու դատական իշխանության բաժանումը և դրանց միջև զսպումների և հակակշիռների առկայությունը դիտարկել էին որպես բացարձակ անհրաժեշտություն՝ մարդու ազատությունների պահպանման տեսանկյունից: Ճյուղերից յուրաքանչյուրը ստացավ հստակորեն սահմանված լիազորություններ և իր աշխատակազմը, ինչպես նաև միմյանց նկատմամբ վերահսկողության և զսպման գործիքակազմ, որը ներառել է օրենքների և պայմանագրերի վավերացման անհրաժեշտությունը, վետոյի հնարավորությունը, իմպիչմենտի մեխանիզմների առկայությունը, սահմանադրությանը հակասող որոշումներն ու օրենքները Գերագույն դատարանի կողմից չեղարկելու հնարավորությունը և այլն:

2.2. Կառավարման մոդելները և ընտրական համակարգերի օրինակներ

ԱՄՆ-ի սահմանադրությամբ է սկզբնավորվել նաև նախագահական համակարգը, որում ընտրվում է ոչ միայն օրենսդիր մարմինը, այլև գործադիրի ղեկավարը: Դա իշխանական ճյուղերի բաժանման լրացուցիչ տարր է՝ ի տարբերություն խորհրդարանական համակարգի, որտեղ գործադիրը ղեկավարվում է խորհրդարանական մեծամասնության ներկայացուցիչ վարչապետի կողմից, իսկ խորհրդարանի կողմից ընտրված նախագահին (ժամանակակից սահմանադրական միապետություններում էլ՝ միապետին, որի անունից է վարչապետն իր լիազորություններն իրականացնում) վերապահված են հիմնականում ներկայացուցչական գործառույթներ:

ԱՄՆ-ում երկպալատ խորհրդարանի առկայությունը, բացի զսպումների և հակակշիռների ապահովման լրացուցիչ կարևոր գործոն լինելուց, նաև երկրի դաշնային բնույթով է պայմանավորված՝ նպատակաուղղված լինելով նահանգների սուվերեն իրավունքների ապահովմանը: Կոնգրեսի ստորին՝ Ներկայացուցիչների պալատը կազմված է բնակչության որոշակի քանակ ունեցող ընտրատարածքներից ընտրվող ներկայացուցիչների կողմից, ինչի արդյունքում մեծաքանակ բնակչությամբ նահանգներն ավելի մեծ կշիռ

ունեն: Սակայն Վերին պալատում՝ Սենատում, որին, բացի օրինագծերը և միջազգային պայմանագրերը վավերացնելուց, վերապահված է, մասնավորապես, Գերագույն դատարանի անդամների և դեսպանների թեկնածությունները հաստատելու լիազորությունը (առաջադրում է նախագահը), յուրաքանչյուր նահանգ ունի երկուական ներկայացուցիչ:

Կարևոր է հասկանալ, որ ընտրիչների ժողովի ինստիտուտը, որը վերջին շրջանում թե՛ բանավեճերի պատճառ է դառնում (ընտրողների քվեների մեծամասնություն ստացած նախագահի թեկնածուն կարող է ընտրիչների ժողովում քվեների մեծամասնություն չստանալ, թեև դա քիչ հավանական է), նպատակաուղղված է առավելապես փոքր նահանգների ազդեցության ավելացմանը. մեկ ընտրիչը ներկայացնում է ավելի փոքրաթիվ ընտրողներ:

ԱՄՆ Կոնգրեսի մեծամասնական ընտրական համակարգն առավելություն է տալիս երկու խոշոր կուսակցությունների ներկայացուցիչներին: Չնայած Միացյալ Թագավորությունում խորհրդարանական համակարգի գոյությանը՝ բրիտանական (կամ «վեսթմինսթերյան») ըստ խորհրդարանի նստավայր հանդիսացող պալատի անվանման) համակարգը, որը կիրառվում է նաև նախկին Բրիտանական կայսրության մի շարք գաղութներում, նույնպես հիմնված է մեծամասնական ընտրական համակարգի վրա, և երկու ամենամեծ կուսակցությունները պատմականորեն ունեն որոշակի առավելություն: Վերջին տարիներին փոքր կուսակցություններն ավելի մեծ ներկայացուցչություն են ձեռք բերում, բայց դեռևս անհնար է պատկերացնել Մեծ Բրիտանիայում ոչ թե Պահպանողական կամ Լեյբորիստական կուսակցությունների, այլ մեկ ուրիշ կուսակցության կողմից առաջադրած վարչապետի ընտրություն:

Ամերիկյան ու բրիտանական մոդելներից առանձնանում է եվրոպական նախագահական համակարգը (ավելի ճիշտ՝ կիսանախագահական, քանի որ գործադիրի գործառույթները բաժանված են նախագահի և վարչապետի միջև): Այն սկիզբ է առել Ֆրանսիայի՝ 1958 թ. ընդունված և Հինգերորդ հանրապետության հռչակման հիմք դարձած սահմանադրությամբ և նախատեսում էր նախագահի ընտրություն ընտրիչների ժողովի կողմից: 1962 թ. դրույթը փոխվեց հանրաքվեի միջոցով, և այդուհետ հանրապետության նախագահն ընտրվում է ուղղակիորեն ընտրողների կողմից: Ֆրանսիայի Չորրորդ հանրապետությունից (1946–1958 թթ.) կատարված անցումը մեծապես պայմանավորված էր խորհրդարանական համակարգի անկայունությամբ. 12 տարվա ընթացքում երկիրը փոխել էր 21 կառավարություն:

Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատի պատգամավորներն ընտրվում են մեծամասնական համակարգով, իսկ վերին պալատի՝ Սենատի անդամները՝ անուղղակի եղանակով, տեղական խորհուրդների ու մունիցիպալ կազմավորումների ղեկավարների կողմից: Օրենսդրական նախագծերը և Սահմանադրական խորհրդի անդամների թեկնածությունները հաստատվում են խորհրդարանի երկու պալատների կողմից, մինչդեռ վարչապետի թեկնածությունը հաստատելու և կառավարությանն անվստահություն հայտնելու լիազորությունները վերապահված են ստորին պալատին:

Եվրոպական մայրցամաքում առավել տարածված է խորհրդարանական համակարգը՝ միապալատ կամ երկպալատ խորհրդարաններով: Միակ կամ, երկպալատի դեպքում՝ ստորին պալատի ընտրությունը տեղի է ունենում համամասնական կամ խառը եղանակով:

Գերմանիան կիրառում է խառը համակարգ՝ ստորին պալատի ընտրություններում համադրելով մեծամասնական և համամասնական համակարգերը: Միասնական կուսակցական ցուցակի փոխարեն առկա են մարզային ցուցակներ, ինչն արտացոլում է պետության դաշնային բնույթը. Գերմանիայի մարզերը (Länd) ունեն ինքնավարության բարձր աստիճան: Դա մեծապես պայմանավորված է պատմական ավանդույթով. ժամանակակից Գերմանիայի տարածքում պատմականորեն գոյություն են ունեցել բազմաթիվ առանձին միապետություններ, դքսություններ, կոմսություններ և այլ պետական միավորներ, որոնք 1815 թ. Վիեննայի վեհաժողովից հետո կազմել են համադաշնություն, իսկ այնուհետև Գերմանական կայսրության (1871-1918) մաս են դարձել: Վերին պալատն ընտրությունների միջոցով չի ձևավորվում. այն կազմված է մարզային կառավարությունների նշանակած ներկայացուցիչներից, որոնց պաշտոնավարման ժամկետը սահմանափակված չէ:

Խորհրդարանի ձևավորման համամասնական եղանակի կիրառման պարագայում կուսակցությունների համար սովորաբար սահմանվում է նվազագույն անցողիկ շեմ՝ 2-5%: Բացառություն է, թերևս, Նիդերլանդներում կիրառվող համակարգը, որում համամասնական եղանակով ընտրվող խորհրդարանի ստորին պալատը կազմված է 150 պատգամավորական մանդատներից, և վավեր քվեների 1/150 բավական է, որ կուսակցությունները հայտնվեն խորհրդարանում՝ 1 պատգամավորով: Այս դեպքում խորհրդարանում հայտնվում են նաև բազմաթիվ փոքր կուսակցությունների ներկայացուցիչներ, և երբեմն անհրաժեշտ է լինում դաշինքներ կազմել 5-6 կուսակցության

մասնակցությամբ: Այնուամենայնիվ, Նիդերլանդներում փոխադարձ հարգանքի, փոխզիջման և պայմանավորվելու զարգացած մշակույթը, հասարակական բևեռացման բացակայությունը համակարգն ընդհանուր առմամբ կայուն են պահում՝ չնայած նրան, որ երբեմն որևէ հարցի վերաբերյալ անհամաձայնության պատճառով փոքր կուսակցություններից մեկը կարող է լքել իշխող կոալիցիան՝ պարտադրելով արտահերթ ընտրություններ: Նիդերլանդներում, Սկանդինավյան երկրներում (որոնց ևս հատուկ է հասարակական բևեռացման բացակայությունը և փոխզիջման մշակույթը) առկա խորհրդարանական համակարգերը քաղաքական համակարգերի տիպաբանությունը բնութագրել է որպես «ընկերակցական» ժողովրդավարական համակարգեր (անգլ. consociational democracy) (Lijphart, 1969):

Այլ երկրների խորհրդարանական համակարգերի համար հատկանշական են կամ խոշոր կուսակցությունների դոմինանտ դերը, կամ քաղաքական բևեռացման և երկարատև անկայունության ժամանակահատվածները. վերջինիս օրինակներից է, Ֆրանսիայի վերոհիշյալ Չորրորդ հանրապետությունից բացի, Իտալիան՝ մասնավորապես 1970–1980–ականներին, իսկ վերջին տարիներին՝ Իսրայելը:

Առանձնակի է Մոլդովայի դեպքը. 1994 թ. ընդունված սահմանադրությամբ նախատեսված էր, որ նախագահն ընտրվելու էր ուղիղ քաղաքացիների կողմից, սակայն 2000 թ. ընդունված փոփոխությամբ նրան պետք է այդուհետ ընտրեր խորհրդարանը՝ քվեների 3/5-ով: Քաղաքական սուր բևեռացման պայմաններում 2009–2012 թթ. երկիրը չի ունեցել ընտրված նախագահ: 2009-ի ապրիլին ընտրված խորհրդարանական մեծամասնությանը (60 մանդատ՝ 101-ից) մեկ քվե էր պակասում, և երկու անընդմեջ քվեարկությամբ նախագահ չընտրելուց հետո խորհրդարանը լուծարվեց: Նույն տարվա հուլիսի ընտրություններից հետո ձևավորվեց չորս կուսակցությունների կոալիցիա՝ 53 անդամից, որը նույնպես ընդունակ չէր նախագահ ընտրել, և խորհրդարանը 2010 թ. սեպտեմբերին լուծարվեց: 2010 թ. նոյեմբերին ընտրություններից հետո ձևավորված 59 հոգանոց կոալիցիան կարողացավ նախագահ ընտրել միայն 2012 թ. մարտին՝ երեք անգամ փորձելուց և ի վերջո ընդդիմադիր Սոցիալիստական կուսակցության 3 պատգամավորի իր կողմը գրավելուց հետո միայն: 2013-ի տարեսկզբին իշխող կոալիցիան փլուզվեց՝ երկու հիմնական կուսակցությունները վերահսկող օլիգարխների՝ Վլադ Ֆիլատի և Վլադ Պլահոտնյուկի, համապատասխանաբար՝ վարչապետի և խորհրդարանի առաջին փոխխոսնակի տարաձայնությունների պատճառով: Ամիսներ

շարունակ նոր կոալիցիա ձևավորելն անհնար եղավ՝ հակառակ նախագահ Ն. Տրնդստիի ու ԵՄ ներկայացուցիչների միջնորդական ջանքերին. այդ ժամանակահատվածում երկու հիմնական հակառակորդները հասցրել էին հերթով մարտավարական դաշինքներ կազմել ընդդիմադիր Կոմունիստական կուսակցության հետ՝ միմյանց թուլացնելու փորձերի ընթացքում: Մայիսին հակառակորդները ձևականորեն հաշտվեցին և կազմեցին նոր կոալիցիա՝ միայն արտահերթ ընտրություններից խուսափելու համար: 2014 թ. նոյեմբերի ընտրություններից հետո դարձյալ նույն երկու կուսակցությունները ձևավորեցին 44 անդամից կազմված փոքրամասնության կոալիցիա: Զավեշտալի դուռսուլիան ի վերջո փլուզվեց 2015 թ. հոկտեմբերին, երբ Պլահոտնյուկի կամակատար գլխավոր դատախազը (պաշտոն, որի նկատմամբ վերահսկողությունը տարիներ շարունակ տարբեր խմբերի՝ միմյանց հանդեպ քաղաքական թշնամանքի պատճառներից մեկն էր) Ֆիլատին մեղադրեց ֆինանսական չարաշահումների համար, և խորհրդարանն ընդդիմության գործուն մասնակցությամբ նրան զրկեց անձեռնմխելիությունից: Այնուհետև Ֆիլատի կուսակցությունը փլուզվեց, իսկ պատգամավորների մեծ մասն անցավ Պլահոտնյուկի կողմը (Grigoryan, 2016, pp. 137-139): Ի վերջո, 2016 թ. Սահմանադրական դատարանի որոշմամբ նախագահի ուղիղ ընտրությունները վերականգնվեցին:

2.2.1. Հայաստանի կառավարման համակարգը. ձևական փոփոխություն՝ ինստիտուտների կայացման փոխարեն

Հայաստանում անկախության շուրջ 30-ամյա ժամանակաշրջանում փորձարկվել են թե՛ նախագահական (1991-1995 թթ.), թե՛ կիսանախագահական (1995-2018 թթ.), թե՛ խորհրդարանական (2018-ից ի վեր) համակարգերը, ինչը մեր երկրի փորձը յուրահատուկ է դարձնում, սակայն բնավ ոչ օրինակելի:

1995 թ. համակարգի փոփոխությունը կարող էր պայմանավորված լինել խորհրդարանի դերը բարձրացնելու մղումով, ինչպես նաև նրանով, որ հաշվի էր առնվել եվրոպական երկրներում կիսանախագահական համակարգի առավել տարածված լինելը: Սակայն 2015 թ. սահմանադրությամբ համակարգի փոփոխությունը թույլ է տալիս ենթադրել, որ այն կարող էր կատարվել պարզապես Սերժ Սարգսյանի պաշտոնավարումը երկրորդ նախագահական ժամկետի ավարտից հետո երկարաձգելու նպատակով:

Նույնիսկ եթե այդպես չէ, կարելի է ասել, որ դեռևս ԽՍՀՄ-ից

ժառանգած թերի քաղաքական մշակույթի, իշխանական ճյուղերի բաժանման ձևական բնույթի, զսպումների և հակակշիռների գործող մեխանիզմների բացակայության, համակարգային կոռուպցիայի, կառավարիչների մասնագիտական և այլ թերություններով պայմանավորված վատ կառավարման հետևանքով առաջացած խնդիրները համակարգի ձևական փոփոխությամբ լուծելու փորձ է կատարվել: Կարևորն այն է, որ լուրջ համաժողովրդական խորհրդակցություն տեղի չի ունեցել, որպեսզի քննարկվեր կառավարման մոդելների տարբերությունը և Հայաստանի համար ամենաօգտավետ և հարմար տարբերակը: Իհարկե, անգամ հաշվի առնելով 2018-ից հետո տեղի ունեցած զարգացումները և բացահայտված խնդիրները, որոնք ցուցադրում են սահմանադրական կարգավորումների թերություններն ու կառավարման վատ որակը, հնարավոր չէ միանշանակորեն պնդել, որ խորհրդարանական համակարգը Հայաստանում առհասարակ չէր կարող գոնե տեսականորեն դրական արդյունք ապահովել: Մյուս կողմից, զսպումների և հակակշիռների իրապես գործող մեխանիզմների բացակայության և մյուս համակարգային խնդիրների առկայության պայմաններում արդեն պարզ է, որ այն չէր կարող նաև բարելավում ապահովել նախկինում եղած կիսանախագահական համակարգի համեմատ:

Այդ է պատճառը, որ ստորև ներկայացնում ենք այլ երկրների, հատկապես՝ Վիշեգրադյան քառյակի փորձը, հաշվի առնելով, որ, չնայած գեոքաղաքական դիրքի տարբերությանը, այս երկրները որոշակի ընդհանրություններ ունեն Հայաստանի և ավելի լայն՝ հարավկովկասյան բոլոր երեք պետությունների հետ, և հետաքրքիր դասերի աղբյուր են այս պետությունների համար:

3. Վիշեգրադյան քառյակի երկրների փորձը. Ժողովրդավարացում և բարեփոխումներ

3.1. Ժողովրդավարացման նախադրյալները

3.1.1. Լեհաստան

Լեհաստանում 70-ականների ընթացքում վիճակը բավական անկայուն էր: Տնտեսական բարեփոխման փորձ նախաձեռնվեց այն բանից հետո, երբ 1970 թ. դեկտեմբերին սննդամթերքի սղության և գնաճի պատճառով բազմաթիվ ցույցեր տեղի ունեցան, և Բալթիկ ծովի նավահանգիստներում, որտեղ իրավիճակն առավել լարված էր,

ոստիկանությունն ու զինվորականները զենք կիրառեցին: Ի տարբերություն 1962 թ. Նովոչերկասկում նույն պատճառով տեղի ունեցած ցույցերի, Լեհաստանում չսկսվեցին զանգվածային բռնաճնշումներ, այլ փոխվեց Միացյալ աշխատավորական կուսակցության ղեկավարությունը: Վլադիսլավ Գոմոլկային փոխարինած Էդվարդ Գերեկը կարողացավ հանգստացնել աշխատավորական ցույցերը՝ այցելելով Շեցինի նավաշինարաններ (Garton Ash, 1983, p. 13): Է. Գերեկը փորձեց ընդօրինակել «սպառողական սոցիալիզմի» հունգարական փորձը (ներկայացված է ստորև)՝ արևմտյան բանկերից վարկերի հաշվին զարգացնելով արտադրական հզորությունները: Սակայն նախապատվությունը տրվել էր պողպատաձուլարաններին, նավաշինությանն ու նավթաքիմիական արդյունաբերությանը, մինչդեռ այդ ոլորտները մրցունակ չէին անգամ 1973 թ. նավթային ճգնաժամից առաջ, իսկ գյուղատնտեսական ոլորտում շարունակվում էր կոլեկտիվացումը՝ նպաստելով արտադրողականության շարունակական անկմանը: Նախկինում սննդամթերքի խոշոր արտահանող հանդիսացած երկիրը ստիպված էր ներմուծել այն. այդպիսով՝ 70–80–ականներին արևմտյան երկրների հետ առևտրի դեֆիցիտը հասավ 4,5 միլիարդ դոլարի (Garton Ash, 1983, pp. 14–16): Այն կրճատելու նպատակով սննդամթերքի գները 1976 թ. բարձրացնելու փորձը կրկին հանգեցրեց բողոքի զանգվածային ցույցերի: 1976–ից մինչև 1979 թ. արտաքին պարտքը 10 միլիարդ դոլարից հասավ 17–ի (Garton Ash, 1983, p. 17): Շարունակական տնտեսական անկման պայմաններում ընդդիմադիր գործունեության ճնշումը խթանում էր քաղաքացիների դժգոհությունը:

1980 թ. հուլիսին տեղի ունեցած համազգային գործադուլին հետևեց «Համերաշխություն» անկախ արհեստակցական միության ստեղծումը: Բանակցությունների արդյունքում կառավարությունը համաձայնեց որոշակի փոխզիջումային լուծումների: Սակայն արդեն 1981 թ. մարտին ԽՍՀՄ–ի ղեկավարությունը հայտարարեց. «Լեհ կոմունիստներն ունեն թե՛ հնարավորություն, թե՛ ուժ՝ շրջելու իրադարձությունների ընթացքը և վերացնելու լեհ ժողովրդի սոցիալիստական նվաճումների գլխին կախված վտանգը» (Ruane, 1982, p. 127): Կառավարության և ընդդիմության միջև բանակցությունների փաստն իսկ լուրջ անհանգստություն էր պատճառել ԽՍՀՄ–ի ղեկավարությանը, և դա, հավանաբար, ազդեց նաև հետագա զարգացումների վրա:

1981 թ. նոյեմբերին «Համերաշխության» պատվիրակության հետ հերթական հանդիպման արդյունքում մամուլի ազատության, մունիցիպալ մարմինների ընտրությունների անցկացման և ինքնավարության

պահանջներին առերեսվելով, կառավարությունն ավելի կոշտ դիրքորոշում որդեգրեց: 1981 թ. դեկտեմբերի 13-ին վարչապետի, պաշտպանության նախարարի և Միացյալ աշխատավորական կուսակցության առաջին քարտուղարի պաշտոնները զբաղեցրած գեներալ Վոյչեխ Յարուզելսկին հայտարարում է ռազմական դրություն՝ արգելելով «Համերաշխության» գործունեությունը: Չնայած մոտ մեկ տարի անց «Համերաշխության» առաջնորդների մի մասին՝ այդ թվում Լեխ Վալենսային ազատ արձակելուն, իսկ 1983 թ. հուլիսին նաև ռազմական դրությունը չեղարկելուն (ենթադրաբար՝ վերացել էր ԽՍՀՄ-ի կողմից «սոցիալիզմի նվաճումները» պաշտպանելու նպատակով ներխուժման անմիջական վտանգը), բանակի վերնախավը շարունակեց կառավարել մինչև 1989 թ.:

Կարելի է ենթադրել, որ ԽՍՀՄ-ի կողմից ներխուժման սպառնալիքը պայմանավորված էր ոչ միայն «Համերաշխության» հետ իշխանության բանակցությունների իրողությամբ, այլև Երկրորդ աշխարհամարտը սանձազերծելու մեջ ԽՍՀՄ-ի դերի և Կատինյան ոճրի (The Katyn Massacre History)²⁰³ վերաբերյալ ընդհատակյա ուսումնասիրությունների և «սամիզդատի» գործունեության շարունակական ընդլայնմամբ: Ոչ պաշտոնական Կատինյան ինստիտուտը 1979-1981 թթ. (սկսած 1979-ի ապրիլից) պարբերաբար թողարկել է «Բյուլետեն Կատինսկի» ամսաթերթը՝ պատմական իրադարձությունների ժամանակագրությամբ, սպանվածների ցուցակներով, Կատինյան ոճրի մասին հրապարակումներից հատվածներով և գրականության ցանկով: 1980-ին՝ Կատինյան ոճրի 40-ամյակին, լույս են տեսել տարբեր հրապարակումներ, հատուկ թողարկումներ: Այսպես, «Բյուլետեն դոլնոսլոնսկին» ներառել է Վարշավայի գետտոյի ապստամբության 37-ամյակի մասին խմբագրական, ինչպես նաև ԽՍՀՄ-ում և Լոնդոնի Գաներսբերի գերեզմանատանը լեհ վտարանդիների կողմից տեղադրված արձանների վրա գրառումների համեմատություն: Առաջին դեպքի գրությունն է. «Այստեղ հանգչում են գերմանացի ֆաշիստների կողմից 1941 թ. աշնանը սպանված լեհ ռազմագերիները», իսկ երկրորդի՝ «Ի հիշատակ 1940 թ. անհայտ կորած 14500 լեհ ռազմագերիների»: Նույն բյուլետենն անդրադարձել է ԽՍՀՄ-Լեհաստան հարաբերությունների պատմությանը՝ 1923 թ. հաշտության պայմանագրին և 1932 թ. չհարձակման

²⁰³ Տե՛ս այդ մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Katyn_massacre Երկրորդ աշխարհամարտի սանձազերծումից հետո Լեհաստանի մասնատման, ԽՍՀՄ-ի պատասխանատվությունը 1990 թ. ընդունելու, ինչպես նաև ժամանակակից Ռուսաստանում «պատմության կեղծման դեմ պայքարի» պատրվակով կրկին ժխտողական վերաբերմունք որդեգրելու վերաբերյալ տե՛ս նաև հեղինակի զեկույցը Բաց հասարակության արխիվի կայքում. <https://www.osaarchivum.org/files/fellowships/visegrad/reports/2010/GRIGORYAN-201010.pdf>.

պայմանագրին: Այն նաև վերահրապարակել է Կատինյան ոճրի մասին ֆրանսիական «Լառուս», բրիտանական, ամերիկյան և խորհրդային 1955 և 1973 թթ. հրատարակված հանրագիտարաններից քաղվածքներ և վտարանդի Բոլեսլավ Վույչիցկու 1953 թ. լույս տեսած «Ճշմարտություն Կատինի մասին» գրքի գրախոսությունը (Biuletyn Dolnośląski, 1980): Իր հերթին, Լեհաստանի երիտասարդական միության «Բռատնյակ» ամսաթերթը հրապարակել էր ԽՍՀՄ իրականության վերաբերյալ նյութեր, այդ թվում՝ Վառլամ Շալամովի «Կոլիմայի պատմությունները» (Bratniak, 1980):

Ընդհատակյա Կատինյան կոմիտեն ամենամյա միջոցառումներ էր կազմակերպում ապրիլի 13-ին (1943 թ. այդ օրը գերմանական ռադիոն հայտնել էլ Կատինում զանգվածային գերեզման հայտնաբերելու մասին) և սեպտեմբերի 17-ին՝ 1939 թ. խորհրդային բանակի ներխուժման օրը: 1981 թ. հուլիսին և դեկտեմբերին կոմիտեի կողմից Վարշավայի ռազմական գերեզմանատներից մեկում տեղադրվել են խաչեր, որոնք կարճ ժամանակ անց հեռացվել են իշխանությունների կողմից: Ի վերջո, կոմիտեի չորս ղեկավարներ 1982-ին դատապարտվեցին 3-7 տարվա ազատազրկման՝ «ԽՍՀՄ-ը վարկաբեկելու» և «հակաազգային քաղաքականություն» քարոզելու համար (Cienciala et al., 2007, p. 245):

Անգամ ռազմական դրության և բռնաճնշումների պայմաններում Լեհաստանում շարունակել է գործել կոմունիստական բլոկի երկրներում ընդհատակյա ամենակազմակերպված ընդդիմադիր շարժումը, որն իրագործել է ոչ պաշտոնական համալսարանական դասընթացներ, «սամիզդատի» բազմաթիվ հրատարակություններ, զարգացրել նյութական փոխօգնության համակարգ և այլն:

3.1.2. Հունգարիա

1956 թվականի հունգարական հեղափոխությունը ՍՍՀՄ-ը ճնշեց տանկերով, 3000 հունգար զոհվեց, 200000-ը արտագաղթեց: Սակայն, սկսած 1962-ից, Կրեմլի դրածո Յանոշ Կադարի կառավարությունը որոշ չափով թուլացրեց բռնաճնշումները, ինչպես նաև որդեգրեց համեմատաբար ազատականացված տնտեսական քաղաքականություն, որը հետագայում անվանվեց «գուլյաշ-կոմունիզմ»՝ նկատի ունենալով սպառողական պահանջումների բավարարման միտումը: 1968 թ. բարեփոխումներով հնարավոր դարձավ այսպես կոչված «երկրորդ տնտեսության»՝ չգրանցվող, չհարկվող և հատկապես ծառայությունների ոլորտում բավական մեծ դերակատարում ստացած ձեռնարկատիրության

զարգացումը (Kis, 1989, p. 17, footnote 12): Այն, ինչ ԽՍՀՄ-ում էլ էր տարածվում՝ հետապնդվելով որպես «սպեկուլյացիա» և ծնելով ցեխավիզմի հայտնի երևույթը, և նկարագրվում էր որպես «սև շուկա», Հունգարիայում համեմատաբար արագ հիմք դարձավ որոշակի բարեփոխումների, և շատ շուտով հունգարացի գիտնականները սկսեցին լրջորեն ուսումնասիրել:

Մասնակիորեն թուլացավ նաև գիտության և մշակույթի ոլորտների նկատմամբ գաղափարախոսական վերահսկողությունը, ինչպես նաև հեշտացավ արտասահման ճանապարհորդելու թույլտվություններ ստանալը (Kis, 1989, p. 88): Այսպես, երեք տարին մեկ քաղաքացիները կարող էին այցելել անգամ կապիտալիստական երկրներ. փոխարկելի արժույթի սահմանափակ առկայության պայմաններում հիմնական ուղղությունն Ավստրիան էր՝ փոքր տրանսպորտային ծախսերի պատճառով: 1973 թ. նավթային ճգնաժամով պայմանավորված տնտեսական անկման հետևանքները մեղմելու և սպառման մակարդակն ու քաղաքական կայունությունը պահպանելու համար կառավարությունն արևմտյան բանկերից սկսեց վարկեր վերցնել. 70-ականների վերջին արտաքին պարտքը հասել էր 7 միլիարդ դոլարի (Kis, 1989, p. 18): 80-ականներին ընդունվեցին կոմերցիոն (*առևտրական*) ընկերությունների գործունեության, սնանկացման և տնտեսական մրցակցության մասին արևմտյան չափանիշներին համապատասխանող օրենքներ, ինչպես նաև հարկային օրենսգիրք (Elster et al., p. 1998, 44): «Երկրորդ տնտեսության» աճը և տարբեր ոլորտներ արդեն պաշտոնական ներթափանցումը շարունակվում էր՝ համապատասխան օրենսդրության զարգացման պայմաններում. այսպես, օրինականացվել էր անշարժ գույքի մասնավոր սեփականության իրավունքն ու առքուվաճառքը, և 1984 թ. դրությամբ բնակելի շենքերի շինարարության 55 տոկոսն արդեն իրականացվում էր մասնավոր ընկերությունների կողմից (Kornai, 1992, p. 441, cited in Linz and Stepan, 1996, p. 299): Դրա հետ մեկտեղ, տնտեսության արդյունավետությունը մնում էր ցածր: 1989-ին արտաքին պարտքը հասավ 16 միլիարդ դոլարի (Linz and Stepan, 1996, p. 300): Այդ պայմաններում քաղաքական բնույթի բարեփոխումների բացակայությունը նպաստում էր դժգոհության աճին:

3.1.3. Չեխոսլովակիա

Ի տարբերություն Հունգարիայի, երբ ՍՍՀՄ-ը դաժանորեն ճնշեց 1968-ի «Պրահայի գարուն» կոչվող բարեփոխման շարժումը, երկրում ձևավորվեց Արևելյան Եվրոպայի առավել կոշտ կոմունիստական վարչակարգերից

մեկը: Այն բնութագրվել է «համերաշխ երկիր»՝ ԽՍՀՄ-ին առավել հավատարիմ ղեկավարությամբ (Janos, 1996, p. 13), որն 80-ականներին աշխարհում վեցերորդն էր՝ ըստ զենքի առևտրից բնակչության մեկ շնչին ընկնող շահույթի (Judt, 1992, p. 110): 1968-ի դեպքերից հետո զանգվածային արտագաղթը տևական ժամանակով թուլացրել էր ընդդիմության ներուժը (Elster et al., 1998, p. 42): Տնտեսությունը չէր բարեփոխվել. այն մնացել էր պլանային՝ ընդհուպ մինչև 1989-ի վերջը: Դա մասնավորապես արտահայտվել է մասնավոր հատվածի ավելի փոքր չափաբաժնով, պետական մենաշնորհներով և ԽՍՀՄ-ի գլխավորած Տնտեսական փոխօգնության խորհրդի անդամների հետ առևտրի ավելի մեծ ծավալով (Elster et al., 1998, p. 44): Միաժամանակ, Չեխոսլովակիայում աղքատության տոկոսն ավելի ցածր էր (Elster et al., 1998, p. 46), իսկ արտաքին պարտքը՝ ավելի փոքր՝ արևելաեվրոպական այլ երկրների համեմատ (Henderson and Robinson, 1997, p. 234):

1977 թ. ստեղծվեց «Խարտիա-77» շարժումը, որը միավորել էր մի շարք հայտնի մտավորականների, կաթոլիկ եկեղեցու ակտիվ հետևորդների, 1968-ին տապալված բարեփոխման փորձի մասնակից նախկին պաշտոնյաների և այլ անձանց, որոնց հաճախակի ազատազրկում կամ այլ բռնաճնշումների էին ենթարկում: Այնուամենայնիվ, ո՛չ «Խարտիա-77»-ը, ո՛չ 1988-1989 թթ. ձևավորված խմբերը կազմակերպված քաղաքական ընդդիմություն չէին՝ փոքրաթիվ լինելու պատճառով: «Խարտիա-77»-ի անդամներից Յան Ուրբանը նշել է. «1989-ի ամռանը ձեռք էինք գցել մի գաղտնի զեկուցագիր, որը Պետանվտանգության ծառայությունը նախապատրաստել էր Քաղբյուրոյի և կուսակցական քարոզիչների համար: Ըստ այդ վերլուծության՝ «հակասոցիալիստական ընդդիմադիր խմբավորումների» կորիզը շուրջ 60 հոգի էր, իսկ հետևորդներն ու համագործակցողները՝ 500: Նրանց գնահատականը ճիշտ էր... Մենք համոզված էինք, որ վարչակարգը կայուն է՝ մինչև այն ինքն իրեն փլուզվեց» (Urban 1992, cited in Linz and Stepan, 1996, p. 321)²⁰⁴:

3.1.4. Ժողովրդավարացման նախադրյալները. կարճ ամփոփում

Ըստ որոշ հեղինակների՝ վարչակարգերի տեսակներն ազդել են

²⁰⁴ Խորհրդային համակարգի թվացյալ կայունության ընկալման մասին միտք է պարունակվում նաև Բերքլիի համալսարանի պրոֆեսոր Ալեքսեյ Յուրչակի «Դա ընդամիշտ էր՝ մինչև վերջանալը» աշխատությունում (Everything Was Forever, Until It Was No More: The Last Soviet Generation. Princeton University Press, 2005). Երկրի բնակիչների համար համակարգի փլուզումը բոլորովին անսպասելի էր, սակայն օրինաչափ:

ժողովրդավարացման եղանակների վրա: Դա մատնանշել է Հ. Լինցը՝ վարչակարգերի ու ժողովրդավարացման եղանակների տիպաբանությանն անդրադառնալիս (Linz, 1995, p. 120): Հ. Կիթչելթը և համահեղինակները նույնպես կարծիք են հայտնել, որ այդպիսի կապ գոյություն ունի: Նրանց բնորոշմամբ՝ «ազգային-հարմարվողական» կոմունիստական վարչակարգով Հունգարիան ու Լեհաստանը ունեցան դրանց համապատասխան ժողովրդավարացում. կոմունիստական վարչախմբերը փոխզիջման պատրաստ գտնվեցին, և անցումային գործընթացները տեղի ունեցան բանակցությունների միջոցով, մինչդեռ Չեխոսլովակիայի բյուրոկրատական-ավտորիտար համակարգը պակաս ճկուն եղավ (Kitschelt et al., 1999, pp. 36-37, table 1.1): Վարչակարգերի որոշ բնութագրիչների համեմատությունը ներկայացված է Աղյուսակ 1-ում.

3.2. Ժողովրդավարացման գործընթացները

Խորհրդային ներխուժման վտանգի նվազմանը զուգընթաց նվազում էր նաև ներքին բռնաճնշումների հավանականությունը: Բացի դրանից՝ «Լեհաստանի և Հունգարիայի կոմունիստական կուսակցությունների բարեփոխիչ թևերն ընկալում էին «գլասնոստը»՝ հրապարակայնությունը, և «պերեստրոյկան»՝ վերակառուցումը, որպես օժանդակություն կոշտ գծի կողմնակիցների դեմ» (Jasiewicz, 2003, p. 174): Երբ «քաղաքական հանրույթն ավելի ուժեղ էր, իսկ պետական-կուսակցական ապարատում պրագմատիկները՝ ավելի ազդեցիկ, տեղի էին ունենում բանակցված փոփոխություններ, ինչպես Լեհաստանում և Հունգարիայում: Ավելի թույլ քաղաքական հանրույթը և պետական-կուսակցական ապարատում բարեփոխիչների խմբավորման անկարողությունը ժողովրդական ապստամբությունների հանգեցրին Արևելյան Գերմանիայում և Չեխոսլովակիայում» (Ekiert, 1995, p. 351): Ընդհանուր առմամբ, թե՛ բանակցությունների, թե՛ վարչակարգի կոլապսի միջոցով ժողովրդավարացած Վիշեգրադյան քառյակի երկրները խուսափեցին իշխանափոխության երրորդ՝ առավել կոշտ տարբերակից, որն իրագործվեց, մասնավորապես, Ռումինիայում:

3.2.1. «Կլոր սեղանը» և ընտրությունները Լեհաստանում

1988 թ. սկսված գործադուլների շարքը վարչակարգին մղեց բանակցությունների: Ինչպես նշվել է, Լեհաստանը Վարշավյան պայմանագրի «միակ երկիրն էր, որտեղ հնարավոր եղավ վարչակարգի

Աղյուսակ 1. վարչակարգերի տեսակները և ժողովրդավարացման եղանակները

Երկիրը / վարչակարգի տեսակը	Տեսությունները	Բնաճանշումները	Ընդդիմությունը	Ժողովրդավարացման եղանակը
Լեհաստան. ազգային-հարմարվողական	Պլանային, մասնավորի աննշան չափաբաժնով: Մասնավորեն կոլեկտիվ, մասնավորապես, պահանջարկը չբավարարող գյուղատնտեսություն: Մենրաբաժնեքի և այլ ապրանքատեսակների դեֆիցիտ: Մեծ արտաքին պարտք:	Բողոքի զանգվածային ցույցերը ճնշելու հավակածություն	Ընդդիմադիր մտավորականների ստվար շերտ, կազմակերպված «սամիզբատ» և ինքնակազմակերպվող կրթական գործընթաց: 70-ականներից սկսած՝ զանգվածային գործադուլներ: 1980 թ. «Համերաշխություն» արհմիության հիմնադրում	Բանակցված բարեփոխում. «Համերաշխությունը» կառավարության կողմից ճանաչվել է բանակցային գործընթացի կողմ՝ հետագայում հարթելով ընտրություններում
Հունգարիա. ազգային-հարմարվող	Բավական ապակենտրոնացված, խոշոր մասնավոր հատվածով՝ ներառելով գյուղատնտեսությունը, փոքր ձեռնարկատիրությունը և ընկալարանաշինությունը: Մեծ արտաքին պարտք, այդ թվում՝ սպառողական ապրանքների ձեռքբերման համար:	Սկսած 60-ականներից՝ համեմատաբար սահմանափակ	Ընդդիմադիր մտավորականների գործունեություն, այդ թվում՝ «սամիզբատ» ամսագրեր	Բանակցված բարեփոխում. կոմունիստական կուսակցության որոշ պաշտոնյաների նախաձեռնած բարեփոխմանը հաջորդեց ընդդիմադիրների հետ «կտր սեղանը», այսուհետ՝ ազատ խորհրդարանական ընտրությունները
Չեխոսլովակիա. Եվրոկրատական-ավտորիտար	Պլանային, մասնավորի աննշան չափաբաժնով և Տնտեսական փոխօգնության խորհրդի անդամների հետ առավել սերտ կապերով: Փոքր արտաքին պարտք	Կոշտ, զանգվածային	Կազմակերպված, սակայն սահմանափակ այլախոհական շարժում՝ սկսած 70-ականների վերջից	Բողոքի զանգվածային ցույցերի արդյունքում վարչակարգի կոլապս և ընդդիմության պահանջների կատարում

կողմից չվերահսկվող լայնածավալ հասարակական շարժման առաջացում՝ կոմունիստական վարչակարգի պայմաններում բավական մեծ ազդեցության ձեռքբերմամբ ... այն նաև միակ երկիրն էր, որտեղ վարչակարգի և ընդդիմության միջև բանակցությունների նպատակն ի սկզբանե վարչակարգի բարեփոխումն էր, ոչ թե ամբողջական լուծարումը» (Elster et al., 1998, p. 53): Մասնավորապես այն պատճառով, որ Լեհաստանն առաջին երկիրն էր, որտեղ սկսվեց անցումային գործընթացը, «կլոր սեղանի» նպատակը ոչ այնքան լիակատար ժողովրդավարության հաստատումն էր, որքան «Համերաշխության» օրինականացումը, իսկ այնուհետև կիսաժողովրդավարական ընտրությունները՝ մասնակիորեն ֆիքսված արդյունքով» (Bozókí, 2003, p. 8): Վերջինիս առումով պայմանավորվածությունն այն էր, որ Վ. Յարուզելսկին պետք է ընտրվեր երկպալատ խորհրդարանի նախագահ:

1989 թ. ընտրությունների արդյունքում Սենատի (վերին պալատի) բոլոր 100 տեղի, իսկ Սեյմի (ստորին պալատի) 460 տեղից 161-ի համար²⁰⁵ թեկնածուներ առաջադրած «Համերաշխությունն» ընտրությունների արդյունքում զբաղեցրեց բոլոր տեղերը՝ բացի Սենատում մեկ տեղից (որը բաժին հասավ անկախ թեկնածուի), իսկ այնուհետև, նախկին իշխող կուսակցության արբանյակներին իր կողմը քաշելով, ստացավ իր թեկնածու Տադեուշ Մազովեցկուն վարչապետ նշանակելու, իսկ մեկ տարի անց՝ նաև նախագահ Վ. Յարուզելսկուն պաշտոնանկ անելու հնարավորություն. Ընտրական օրենսգրքի 1990 թ. փոփոխությամբ ներդրվեց նախագահի ուղիղ, համաժողովրդական ընտրության մեխանիզմը: Դա, սակայն, դարձավ նաև «Համերաշխության» տրոհման պատճառներից մեկը. վարչապետ Տ. Մազովեցկին կայունության պահպանման կողմնակից էր և պահանջում էր, որ նախագահական ընտրությունը տեղի ունենար սահմանադրության ընդունումից և արտահերթ խորհրդարանական ընտրությունից հետո: Ի վերջո, նա գնաց նախագահական ընտրությունների, սակայն 1990 թ. դեկտեմբերի 9-ին պարտվեց Լ. Վալենսային: Շուտով «Համերաշխության» քաղաքական կառույցը տրոհվեց, ինչի արդյունքում 1991 թ. նոր խորհրդարանական ընտրություններ անցկացնելու անհրաժեշտություն առաջացավ:

Կարելի է նշել, որ «Համերաշխության» ժողովրդականության

²⁰⁵ Մնացած տեղերի կեսն ամրագրված էր Միացյալ աշխատավորական կուսակցության, կեսն էլ՝ նրա արբանյակ կուսակցությունների՝ Միացյալ ժողովրդական կուսակցության և ժողովրդավարների ալյանսի համար. կոմունիստական Լեհաստանում ձևականորեն գոյություն ունեցող բազմակուսակցական համակարգ:

ներուժը «կլոր սեղանի» ընթացքում թերագնահատվել էր թե՛ իր, թե՛ կոմունիստական կառավարության կողմից: Դրա վկայությունն էին, մասնավորապես, Լ. Վալենսայի երկու արտահայտությունները բանակցություններից, իսկ այնուհետև՝ 1989 թ. խորհրդարանական ընտրություններից հետո: Նա նախ հայտարարել էր. «մեզանից [«Համերաշխության» առաջնորդներից] ոչ մեկն այս ընտրությունների ցանկությունը չունի. պարզապես սա այն ահավոր գինն է, որ ստիպված ենք վճարել մեր արհմիությունը վերականգնելու համար» (Weschler, 1989, cited in Bruszt and Stark, 1992, p. 42, footnote), իսկ ընտրություններից հետո՝ ասել. «Մենք բախտի քմահաճույքով հաղթեցինք» (Przeworski, 1990; cited in Bruszt and Stark, 1992, 42, footnote):

Մյուս կողմից, կոմունիստները չափազանց ինքնավստահ գտնվեցին՝ կարծելով, որ Սեյմում տեղերի 65 տոկոսը և նախագահի պաշտոնի ապահովումն իրենց համար երաշխավորելու էր իշխանության հարատևությունը: Նրանց օրինակարգության սղությունը հանգեցրեց իշխանության կորստին:

3.2.2. «Կլոր սեղանը» և առաջին ազատ ընտրությունները Հունգարիայում

Ի տարբերություն Լեհաստանի՝ Հունգարիայում չկար «Համերաշխության» նման կայացած ընդդիմադիր կառույց: Սակայն, մի կողմից, Լեհաստանի դեպքերի հանդեպ ԽՍՀՄ-ի ցուցաբերած զսպվածությունը հուշեց, որ Հունգարիայում էլ միջամտություն չի լինի (Elster et al., 1998, p. 65), մյուս կողմից՝ իր դերը խաղաց իշխող կուսակցության բարեփոխիչ հատվածի և դեռևս չուժեղացած ընդդիմության որոշակի, թեկուզ սահմանափակ, փոխադարձ օժանդակությունը (Elster et al., 1998, p. 54), որի նպատակն էր իշխող կուսակցության կոշտ գծի կողմնակից ղեկավարների մեկուսացումը: Արդեն 1989 թ. փետրվարին կենտրոնական կոմիտեի մեծամասնությունն ազատ խորհրդարանական ընտրությունների կողմ քվեարկեց:

Նույն տարվա սեպտեմբերին որոշվեց մինչև խորհրդարանական ընտրություններն անցկացնել ուղիղ նախագահական ընտրություններ: Սակայն առավել արմատական ընդդիմադիր կուսակցությունները՝ Ազատ Ժողովրդավարների միությունը և Երիտասարդ Ժողովրդավարների միությունը²⁰⁶, պահանջեցին նախ խորհրդարանական ընտրություններ անցկացնել և ստորագրահավաք կազմակերպեցին՝ հարցը հանրաքվեով

²⁰⁶ Առավել հայտնի է ՖԻԴԵՍ հունգարերեն հապավումով:

լուծելու համար, քանի որ «հույս ունեին առավել ճանաչված դառնալ՝ ավելացնելով իրենց ընտրողների քանակը» (Bruszt and Stark, 1992, p. 50): 1989 թ. նոյեմբերի 26-ին կայացած հանրաքվեին մասնակցեց ընտրողների 58 տոկոսը: Խորհրդարանական ընտրություններ անցկացնելու կողմնակիցները նախ հաղթեցին նվազագույն՝ 50,07 տոկոս մեծամասնությամբ, ապա 1990 թ. գարնանը երկու փուլով ընտրված խորհրդարանը որոշեց պահպանել խորհրդարանական կառավարման մոդելը: Ամռանը Սոցիալիստական կուսակցությունը փորձեց վերահաստատել ուղիղ նախագահական ընտրությունների անցկացումը, սակայն նոր հանրաքվեն տապալվեց ցածր մասնակցության պատճառով:

Խառը խորհրդարանական համակարգը բանակցությունների ընթացքում ձեռք բերված փոխզիջումների արդյունքն էր: Միապալատ խորհրդարանի 386 տեղից 176-ը պետք է բաշխվեր երկփուլ մեծամասնական համակարգով (եթե առաջին փուլում 50 տոկոսանոց քվորումի առկայության պայմաններում ոչ մի թեկնածու չէր ստանում մասնակիցների քվեների 50 տոկոսից ավելին, տեղի էր ունենում երկրորդ փուլ՝ 25 տոկոս քվորումով և առավելագույն քվեներ ստացած թեկնածուի հաղթանակով), 146-ը՝ համամասնական եղանակով 20 տարածաշրջանային ցուցակներով, իսկ 64-ը՝ համամասնական եղանակով առնվազն 5 տոկոս ստացած և նվազագույն շեմը հատած կուսակցությունների մեծամասնական եղանակով չընտրված թեկնածուների միջև՝ «փոխհատուցմամբ»: Այդ համակարգը գոյատևեց 20 տարի՝ չորս տարին մեկ տեղի ունեցած ընտրություններում, մինչև 2010 թ. քվեների 2/3 ստացած Երիտասարդ ժողովրդավարների միությունը (ՖԻԴԵՍ) փոխեց սահմանադրությունը՝ հաջորդ ընտրություններում ապահովելով իր համար առավել նպաստավոր պայմաններ:

Ընտրությունների արդյունքում մանդատների 42,5 տոկոսն ստացած Հունգարիայի ժողովրդավարական ֆորումը կալիցիա կազմեց 11,4 տոկոսն ստացած Անկախ փոքր սեփականատերերի կուսակցության և 5,4 տոկոսն ստացած Քրիստոնյա-ժողովրդավարական ժողովրդական կուսակցության հետ: Ազատ ժողովրդավարների միությունը դարձավ ամենախոշոր ընդդիմադիր կուսակցություն՝ ստանալով 23,8 տոկոսը, Սոցիալիստական կուսակցությունը (բարեփոխման կողմնակից նախկին կոմունիստները) ստացել էր 8,6 տոկոս, իսկ ՖԻԴԵՍ-ը՝ 5,4 տոկոս (հենց այդ ցածր արդյունքը Վիկտոր Օրբանին դրդեց ազատականությունից անցնել դեպի ամբոխավար ազգայնական պահպանողականություն, որը հետագայում նրան թույլ տվեց բավարարել իր ամբիցիաները):

Հունգարիայի դեպքում էլ կարելի է նշել, որ թե՛ «կլոր սեղանի», թե՛ նախընտրական շրջանում ընդդիմության պոտենցիալը թերագնահատվել էր: Ըստ Արենդ Լայպիարտի՝ «կոմունիստները շարունակաբար եղել են չափազանց լավատես, իսկ նրանց ընդդիմախոսները՝ չափազանց հոռետես», ընդ որում՝ եթե ներդրվեր կոմունիստների նախընտրած համակարգը, որում պատգամավորների 75 տոկոսը պիտի ընտրվեր մեծամասնական համակարգով, նրանք նույնիսկ ավելի վատ արդյունք կստանային (Lijphart, 1992, p. 215): Մյուս կողմից, ուժեղ նախագահի ինստիտուտից հրաժարված ու նախապատվությունը խորհրդարանական կառավարմանը տված ընդդիմությունը հավանաբար բաց է թողել իր շարքերից նախագահ ընտրելու հնարավորությունը:

3.2.3. «Կլոր սեղանը» և առաջին ազատ ընտրությունները Չեխոսլովակիայում

Ինչ վերաբերում է Չեխոսլովակիային, կոմունիստական իշխանությունը 1987–89 թթ. ուժի միջոցով ցրում էր բողոքի ցույցերը՝ միայն վարչակարգի տապալմանը նախորդած վերջին շաբաթներին համեմատաբար հանդուրժող դառնալով, չնայած այդ ընթացքում էլ ցույցերը երբեմն ավարտվում էին մասնակիցների ծեծով կամ ձերբակալություններով (Henderson and Robinson, 1997, cited in Grigoryan, 2019, p. 169): 1989 թ. հոկտեմբերի 28–ին՝ 1918 թ. անկախ Չեխոսլովակիայի կազմավորման տարեդարձին, ոչ ֆորմալ տոնակատարություն էր կազմակերպվել, որի մասնակիցներից մոտ 350–ը ձերբակալվեցին, իսկ նոյեմբերի 17–ին կայացած արտոնված երիտասարդական քայլերթի մասնակիցները ծեծի ենթարկվեցին ոստիկանության կողմից (Judt, 1992, cited in Grigoryan, 2019, p. 169): Հենց դրանից հետո «իրադարձությունները զարգացան անհավանականորեն արագ» (Henderson and Robinson, 1997, cited in Grigoryan, 2019, p. 169). Նոյեմբերի 19–ին ցուցարարների քանակը գնահատվեց 200000, իսկ նոյեմբերի 23–ին հավանաբար գերազանցել է 330000–ը (Judt, 1992, cited in Grigoryan, 2019, p. 169): Նոյեմբերի 23–ին Վազլավ Հավելը և 1968–ի բարեփոխման փորձը նախաձեռնած Ալեքսանդր Դուբչեկը (որին այն ժամանակ ռազմական օդանավով տարել էին Մոսկվա և ստիպել հրաժարականի դիմում ստորագրել) միասին հանդես եկան: Վերջապես, նոյեմբերի 27–ին սկսված համընդհանուր գործադուլն իշխանություններին ստիպեց բանակցել Վ. Հավելի (որը դեռևս նույն տարվա հունվարին հերթական անգամ ձերբակալվել էր Յան Պալախի ինքնահրկիզման 20–ամյակի հետ կապված ցույցերի ժամանակ) առաջնորդած Քաղաքացիական ֆորումի և

դրա սլովակիական գործընկերոջ՝ «Հասարակությունն ընդդեմ բռնության» կազմակերպության հետ: Արդեն դեկտեմբերի 3-ին կառավարությունը համաձայնեց ընդդիմության ներկայացուցիչներին հինգ նախարարական պաշտոն հատկացնել, սակայն նախագահ Գ. Հուսակի հրաժարականի պահանջով ցույցերը շարունակվեցին: Եվս մեկ շաբաթ անց նախագահը հաստատեց նոր կառավարության կազմը, որում կոմունիստներն արդեն փոքրամասնություն էին կազմում, և հրաժարական տվեց: Դեկտեմբերի 28-ին Ա. Դուբչեկը դարձավ խորհրդարանի անդամ և անմիջապես նախագահ ընտրվեց, իսկ դեկտեմբերի 29-ին դեռ մեծ մասամբ կոմունիստներից կազմված խորհրդարանը Վ. Հավելին ընտրեց երկրի նախագահ, ինչից հետո միայն գործադուլն ավարտվեց: Շուտով նաև որոշվեց 1946-ից ի վեր առաջին ժողովրդավարական ընտրություններն անցկացնել 1990-ի հունիսին:

3.3. Պետական ինստիտուտների ձևավորումը և իշխանության թևերի տարանջատումը

Ի տարբերություն Չեխոսլովակիայի, որտեղ 1990 թ. կայացած ընտրությունների արդյունքներին դեռ կանդրադառնանք, Լեհաստանում և Հունգարիայում անցումը տեղի ունեցավ «կլոր սեղանների»՝ իշխանության և ընդդիմության ներկայացուցիչների՝ ամիսներ տևած բանակցությունների, իսկ այնուհետև՝ Հունգարիայում տեղի ունեցած ազատ, իսկ Լեհաստանում՝ մասամբ ազատ ընտրությունների արդյունքում, բարեփոխված կոմունիստական կուսակցությունների որոշակի քաղաքական դերակատարության պահպանմամբ (Հ. Լինցի և Ա. Ստեփանի վերը նշված աշխատությունում ժողովրդավարական անցման այդ եղանակն էր բնորոշվել որպես բանակցությունների միջոցով փոխանցում):

Անդրադառնալով Լեհաստանում, Հունգարիայում և Չեխոսլովակիայում 1989-1990 թթ. տեղի ունեցած առաջին ժողովրդավարական ընտրություններից (Լեհաստանում՝ նաև 1991 թ. երկրորդ ընտրություններից) հետո ձևավորված ընտրական համակարգերին և խորհրդարանական կամ նախագահական մոդելի ընտրությանը՝ Ա. Լայպիարտը կարծիք էր հայտնել, որ համամասնական ընտրական համակարգերի ընտրությունը ռացիոնալ էր, քանի որ թե՛ իշխող, թե՛ ընդդիմադիր կուսակցություններն այդպիսով իրենց շահերն էին փորձում պաշտպանել. երկու կողմն էլ ցանկանում էին ունենալ երաշխիք, որ չէին կորցնի ամբողջը և գոնե մի մասը կստանային: Նույնը վերաբերում է երկպալատ խորհրդարանական համակարգեր ձևավորելու դեպքերին (Lijphart, 1992, pp. 208-209):

3.3.1. Լեհաստանի կառավարման համակարգը

1991 թ. հոկտեմբերին կայացած առաջին լիովին ազատ խորհրդարանական ընտրություններում լեհական Սեյմի ընտրության համար կիրառվել էր համամասնական համակարգ՝ առանց նվազագույն շեմի, ինչի արդյունքում մասնակցած 111 կուսակցություններից 29-ը ներկայացուցչություն ունեցան 460 տեղանոց պալատում, այդ թվում 11-ը՝ մեկական պատգամավորով, մինչդեռ ինը կուսակցություն ստացավ քվեների 5 տոկոսից ավելին, իսկ խորհրդարանական մեծամասնություն ձևավորելու համար անհրաժեշտ էր առնվազն հինգ կուսակցությունից կազմված կոալիցիա: Ի վերջո, երկամսյա բանակցություններից հետո միայն երեք կուսակցությունների փոքրամասնական կոալիցիա հնարավոր եղավ ձևավորել: Ընդամենը երկու տարի պահանջվեց, որ արտահերթ ընտրությունը դառնա անխուսափելի:

Նվազագույն շեմ չնախատեսող համակարգը որակվել է «ծայրահեղ, անզամ անպատասխանատու համամասնական համակարգ» (Lijphart, 1992, p. 211), և կարճ ժամանակ անց արդեն ենթադրություն է արվել, որ առավել խոշոր կուսակցությունները կնախընտրեին նվազագույն շեմ սահմանել (Lijphart, 1992, p. 221), ինչն էլ ի վերջո տեղի ունեցավ՝ արդեն 1993 թ. ընտրություններում հինգ տոկոսանոց շեմի սահմանմամբ: Այդ ժամանակվանից ի վեր ընտրական համակարգը պահպանվել է՝ ամրագրվելով նաև 1997 թ. ընդունված սահմանադրությամբ:

Կարելի է նշել, որ ֆրանսիական ոճի կիսանախագահական համակարգը՝ նախագահի բավական մեծ լիազորություններով, բավական նպաստեց կառավարման կայունությանը փոքրամասնության թույլ կառավարության գործունեության ընթացքում: Այնուամենայնիվ, քանի որ այդ նույն ընթացքում Լ. Վալենսան ցանկացել էր համատեղել նախագահի և վարչապետի պաշտոնները, եղել են ենթադրություններ, որ համակարգը կփոխարինվեր նախագահականով կամ խորհրդարանականով: Դրանց հիմքում 70-ականներին ժողովրդավարացած Պորտուգալիայի և Հունաստանի փորձն էր՝ այս երկրներում նախ կիսանախագահական համակարգեր էին ձևավորել, ապա 80-ականներին փոխարինվել են խորհրդարանական համակարգերով (Lijphart, 1992, p. 221): 1995 թ. նախագահական ընտրություններում, ի թիվս այլ շերտերի՝ որոշ նախկին կոմունիստների միավորող ժողովրդավարական ձախ ալյանսի թեկնածու Ալեքսանդր Կվասնևսկու հաղթանակից և 1997 թ. խորհրդարանական ընտրություններից հետո համակարգը վերջնականապես կայունացավ և այդպիսին է մնում է մինչ այժմ:

3.3.2. Չեխոսլովակիայի դաշնային համակարգը՝ բարդություններ

Չեխոսլովակիան նոր ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման ընթացքի առումով զգալիորեն տարբերվում էր հարևան երկրներից: Նախ՝ քանի որ Ա. Դուբչեկին խորհրդարանի խոսնակ, իսկ Վ. Հավելին երկրի նախագահ ընտրելուց հետո խորհրդարանի ժողովրդական լեգիտիմության պակասն ակնհայտ էր բոլորի համար, կիրառվեց ժամանակավոր լուծման յուրօրինակ տարբերակ. 1990 թ. հունվարին 100 կոմունիստ պատգամավորներ մանդատները վայր դրեցին՝ տեղերը զիջելով ընդդիմության՝ նոմինացիայի կարգով առաջադրված ներկայացուցիչներին. այդպիսով, Դաշնային ժողովում կոմունիստներն այլևս մեծամասնություն չէին կազմում (Henderson and Robinson, 1997, p. 135): Այսպիսով, Չեխոսլովակիայում կատարված իշխանափոխությունը կարող է դիտարկվել որպես մի դեպք, երբ կատարվածը գործող սահմանադրության ակնհայտ խախտում էր, ինչը այլևս որևէ նշանակություն չունեցավ կոմունիստական գաղափարախոսության սնանկության պայմաններում, երբ ո՛չ տեղի բարոյալքված կոմունիստները, ո՛չ ԽՍՀՄ-ը դա չփորձեցին դարձնել խաղաքարտ:

Արտահերթ ընտրություններ անցկացվեցին 1990 թ. հունիսին՝ համամասնական համակարգով, հինգ տոկոսանոց շեմով և վարկանիշային քվեարկությամբ. ընտրողները կարող էին փոխել ցուցակում իրենց նախընտրած կուսակցության թեկնածուների հերթականությունը: Չեխիայում և Սլովակիայում առանձին-առանձին անցկացված ընտրություններով ձևավորված ժողովրդական պալատում չեխերին հատկացվել էր 101 տեղ, իսկ սլովակներին՝ 49 տեղ, Ազգերի պալատում՝ յուրաքանչյուրին 75-ական տեղ: Նույն ժամկետում տեղի ունեցան նաև երկու հանրապետությունների Ազգային խորհուրդների ընտրությունները:

Չեխիայում բոլոր մակարդակի ընտրություններում բացարձակ մեծամասնություն էր ստացել Քաղաքացիական ֆորումը, իսկ Սլովակիայի նրա գործընկերը՝ «Հասարակությունն ընդդեմ բռնության» կազմակերպությունը, ստացավ համեմատական մեծամասնություն. մյուս հաղթողը Քրիստոնյա-ժողովրդավարական շարժումն էր, ինչը պայմանավորված էր Սլովակիայում կաթոլիկ եկեղեցու ավելի մեծ դերակատարմամբ (Henderson and Robinson, 1997, p. 136): Թե՛ դաշնային, թե՛ հանրապետական կոալիցիոն կառավարությունները ձևավորվել էին առանց կոմունիստների և ազգայնականների մասնակցության:

Չնայած 1991-1993 թթ. Չեխոսլովակիան համարվել է ժողովրդավարացման առավել հաջողված օրինակներից (Henderson and

Robinson 1997, p. 231), այն 1993-ին բաժանվեց երկու մասի: Պատճառներն ուսումնասիրվել են տարբեր հեղինակների կողմից: Այսպես, «առկա վկայություններից լիովին ակնհայտ է, որ ո՛չ Չեխիայում, ո՛չ էլ Սլովակիայում չեն եղել նշանակալի անջատողական շարժում կամ ազգայնական պահանջներ՝ անգամ այն բանից հետո, երբ քաղաքական վերնախավերը սկսեցին բաժանման գործընթացը 1992 թ. հունիսյան ընտրություններից հետո» (Linz and Stepan, 1996, p. 328), և եթե խորհրդային ոճի դաշնային համակարգը, որում փոքր խմբավորումները կարող էին արգելափակել կարևոր որոշումները, չհամադրվեր «վարչակարգի հանկարծակի կոլապսից հետո անսպասելի կերպով իշխանությունը ժառանգած ժողովրդավարական առաջնորդների ապաքաղաքական ոճի հետ», երկիրը չէր բաժանվի պատմական, մշակութային կամ տնտեսական տարբերությունների պատճառով (Linz and Stepan, 1996, pp. 329-330): Սահմանադրության թերությունների բացասական ազդեցությունը մեծ էր նաև այն պատճառով, որ Վ. Հավելը որոշեց համապետական կուսակցություն չստեղծել (Linz and Stepan, 1996, p. 331):

Դաշնային խորհուրդը հաջողությամբ համաձայնության էր եկել այնպիսի բարդ խնդիրների վերաբերյալ, ինչպիսիք էին տնտեսական բարեփոխումը և լյուստրացիան, սակայն երկու հանրապետությունների միջև փոխհարաբերությունների խնդիրը չկարգավորեց: Նախնական պայմանավորվածությամբ, երկու տարվա ընթացքում նախատեսված էր ընդունել նոր դաշնային սահմանադրություն, այդ պատճառով խորհրդարանի աշխատանքի ժամկետը սահմանվել էր երկու տարի (Henderson and Robinson, 1997, pp. 234-235): Մինչդեռ նոր սահմանադրության ընդունման ու համապետական կուսակցական համակարգի ձևավորմանն ուշադրություն չէր դարձվել, և բոլոր կարևոր որոշումները երեք՝ դաշնային և երկու հանրապետությունների խորհրդարաններում համաձայնեցնելու անհրաժեշտության պայմաններում, 1992 թ. ընտրությունները դարձան բաժանման սկիզբը: Դրանց արդյունքում Վլադիմիր Մեչիարի գլխավորած «Շարժում հանուն ժողովրդավարական Սլովակիայի» կուսակցությունը, որը ստացել էր դաշնային ժողովրդական պալատի քվեների 12 տոկոսը, իսկ Սլովակիայի խորհրդարանական պալատում՝ 33,8 տոկոսը, ձեռք բերեց ցանկացած որոշում կասեցնելու իրավունք: Ի վերջո, այդ պայմաններում տնտեսական բարեփոխումների ռազմավարության և «դաշնություն, թե՛ համադաշնություն» հարցերի վերաբերյալ Վ. Մեչիարի և Չեխիայի վարչապետ Վացլավ Կլաուսի տարաձայնությունները հանգեցրին Չեխիայի և Սլովակիայի բաժանման:

Արդեն Չեխոսլովակիայի բաժանումից հետո Թավշյա հեղափոխության առաջնորդներից ոմանք գնահատեցին իրենց նախկինում դրսևորած ապաքաղաքական, հակաինստիտուցիոնալ պահվածքի հետևանքները: Վ. Հավելի մերձավորներից Պետր Պիտհարտը, որը նախ ղեկավարում էր Քաղաքացիական ֆորումի համակարգող կենտրոնը, իսկ 1990-1992 թթ. եղել է Չեխիայի վարչապետը, նկատել է, որ Վ. Հավելը «թերագնահատել էր ժառանգությունը ստացած սահմանադրության առաջացրած խոչընդոտները՝ կարծելով, որ խնդիրը կհաղթահարվեր Թավշյա հեղափոխության էներգետիկայով» (Linz and Stepan, 1996, p. 331):

Սակայն կարելի է գուշակել, որ խաղաղ բաժանումը, որպիսի օրինակները պատմականորեն քիչ են (ինչպես նաև ժողովրդավարացման ամբողջ ընթացքը՝ կոշտ ճնշումների փուլից հետո), ցույց էր տալիս նաև ժողովրդի և երկու ազգերի չարտահայտված կոնսենսուսը դեպ այդ ճանապարհը. փաստորեն, մեկ երկիրը դարձավ երկու՝ անցնելով կերպով: Չեխիայի և Սլովակիայի ներսում կամ նրանց շուրջ՝ գեոքաղաքական պատճառներով, խոշոր և անլուծելի խնդիրներ չառաջացան: Բնակչությունների տեղաշարժ և նման խնդիրներ գրեթե չարտահայտվեցին (Սլովակիա-Հունգարիա կամ հունգարացիներ հարաբերություններում, իհարկե, խնդիրներ պահպանվեցին, և դրանց կանդարտառնանք, բայց դրանք կային նաև մինչ այդ և զանգվածային բռնության չեն հանգեցրել), հարցերը լուծվեցին բնակչության համար հիմնականում ընդունելի կերպով: Երկու պետությունը ստեղծվեց մեկի տեղը, սակայն հասարակությունը մեծ խնդիրներ չզգաց և դա որպես ցնցում չընկալեց. տեղաշարժի և բնակչության հարաբերությունների բոլոր իրավունքները ձևակերպվեցին այնպես, որ կորուստները զգացվեն որքան կարելի է քիչ: Իհարկե, կարելի է նաև եզրակացնել, որ ժողովրդական այդ կոնսենսուսը հենված էր մշակութային այնպիսի հատկանիշների զարգացած լինելու վրա, ինչպիսին բարձր քաղաքացիական պատասխանատվությունը, մեդիաների ներկայացուցիչների և քաղաքական գործիչների՝ գործընթացները հասարակությանը բավարար և սպառիչ կերպով բացատրելու կարողությունն էին, իշխանության և հասարակության միջև ավանդական խզման բացակայությունը: Հաշվի առնելով 20-րդ դարի անցյալը, ներառյալ՝ նացիզմի և հաջորդ՝ ԽՍՀՄ-ի «վասալ» լինելու տարիները, հասարակական այդպիսի բարձր պատասխանատվության պահպանումը և զարգացումը հավելյալ ուսումնասիրության և բացատրության կարիք ունի, մանավանդ Սլովակիայի դեպքում, որն անկախ պետական համակարգ՝ փաստորեն գրոյից ստեղծելիս հաղթահարեց մի շարք դժվարություններ:

Խաղաղ բաժանմանը նպաստած գործոններից կարելի է հիշատակել պատմական անցյալում միմյանց դեմ կռվելու փորձի և դրա հետ կապված բացասական հիշողությունների բացակայությունը: Ավելին՝ Առաջին աշխարհամարտից հետո դաշնային պետության ստեղծումը ոչ թե պարզապես հոժարական էր, այլ սլովակների համար հնարավորություն էր՝ բացառել կրկին Հունգարական թագավորության կազմում հայտնվելու հնարավորությունը: Չեխոսլովակիայի բաժանման ընթացքում չարտահայտվեցին տարածքային կամ երկու նորաստեղծ պետություններում ազգային փոքրամասնությունների խնդիրներով պայմանավորված վեճեր, ոչ էլ արմատական ազգայնականության ու անհանդուրժականության այլ դրսևորումներ: Չեխիան նաև կայսերապաշտական կամ իր գերակայության պահպանման այլ մղումներ չդրսևորեց:

3.3.3. Չեխիայի և Սլովակիայի խորհրդարանական համակարգերը

1992 թ.՝ բաժանումից օրեր առաջ ընդունված Չեխիայի սահմանադրությամբ ձևավորվելու էր երկպալատ խորհրդարան՝ 200 տեղանոց, համամասնական համակարգով՝ 5 տոկոսանոց շեմով ընտրվող ստորին պալատով և մեծամասնական համակարգով ընտրվող 81 տեղանոց Սենատով, ընդ որում՝ 1996 թ. առաջին ընտրության ժամանակ անդամների 1/3-ն ընտրվել էր երկու, ևս 1/3-ը՝ չորս, 1/3-ն էլ՝ վեց տարով, և հետագայում երկու տարին մեկ տեղի է ունենում ռոտացիա:

Ի տարբերություն դրա՝ Սլովակիայում ձևավորվելու էր միապալատ, համամասնական համակարգով, 5 տոկոսանոց շեմով ընտրվող 150 տեղանոց Ազգային խորհուրդ: Սլովակիայի իրավիճակը հարևան երկրներից տարբերվում էր հիմնականում լիովին նոր պետական ինստիտուտներ ձևավորելու անհրաժեշտությամբ:

3.4. Նախագահի ինստիտուտը

3.4.1. Լեհաստան

Լեհաստանում ձևավորված կիսանախագահական համակարգի պայմաններում նախագահի լիազորություններն ակնհայտորեն ավելին են, քան Վիշեգրադյան քառյակի մյուս երկրներում: Համընդհանուր քվեարկությամբ հինգ տարով ընտրվող նախագահը կարող է կիրառել վետո, որը հաղթահարելու համար պահանջվում է Սեյմի անդամների քվեների 3/5-ը: Նախագահին վերապահված է կառավարություն

ձևավորելու լիազորությունը, և Սեյմում վստահության քվեի բացակայության դեպքում երկու պալատն էլ կարող են լուծարվել: Նախագահը նաև վավերացնում կամ չեղարկում է միջազգային պայմանագրերը, կարող է դիմել խորհրդարանին՝ կառավարության անդամի նկատմամբ հետաքննություն սկսելու նպատակով, նշանակում է դատավորներին, ինչպես նաև գերագույն դատարանի, սահմանադրական դատարանի և գերագույն վարչական դատարանի նախագահին ու փոխնախագահներին, նշանակում և ազատում է անվտանգության խորհրդի անդամներին, ինչպես նաև կարող է ներում շնորհել: 1997 թ. ընդունված սահմանադրությամբ նախագահի լիազորությունները որոշ չափով սահմանափակվել են՝ 1992 թ. «փոքր սահմանադրության» համեմատ. վետոն հաղթահարելու համար անհրաժեշտ քվեների քանակը 2/3-ից իջեցվել է մինչև 3/5, իսկ խորհրդարանը չի կարող լուծարվել բյուջեի վերաբերյալ անհամաձայնության դեպքում:

3.4.2. Հունգարիա

Հունգարիայում խորհրդարանի կողմից ոչ ավելի, քան երկու անգամ հինգ տարով ընտրվող նախագահը կարող է ընդունված օրինագծերը վերադարձնել խորհրդարան, սակայն պարտավոր է ստորագրել և հրապարակել օրենքը՝ պարզ մեծամասնությամբ կրկին ընդունվելու դեպքում: Խորհրդարանի լուծարման հնարավորությունները սահմանափակ են. դրա համար առիթ կարող է լինել միայն 12 ամսվա ընթացքում առնվազն չորս անգամ կառավարությանն անվստահություն հայտնելը, կամ ընտրությունից հետո վարչապետի թեկնածության առաջադրումից 40 օրվա ընթացքում թեկնածությունը չհաստատվելը:

Նախագահի լիազորությունների մեջ է մտնում ներում շնորհելը և դատավորների նշանակումը: Նա նաև առաջարկում է գերագույն դատարանի նախագահի և գլխավոր դատախազի թեկնածությունները, որոնք պետք է հաստատվեն խորհրդարանի կողմից: Մյուս լիազորությունները հիմնականում արարողակարգային բնույթի են, քանի որ իրականացվում են կառավարության առաջարկով, և որոշումները պիտի ստորագրվեն նաև վարչապետի կամ պրոֆիլային նախարարի կողմից: Այդ լիազորություններն ընդգրկում են միջազգային պայմանագրերի վավերացումը, դեսպանների նշանակումը, պետական քարտուղարների, ազգային բանկի նախագահի ու փոխնախագահի, ռեկտորների և պրոֆեսորների նշանակումն ու պաշտոնից ազատելը, բարձրագույն գինվորական կոչումներ շնորհելը, գիտությունների ակադեմիայի

Նախագահի նշանակումը: Նախագահը որոշակի ինքնուրույնություն ունի պետական պարզևներ շնորհելու հարցում:

3.4.3. Չեխիա

Չեխիայում նախագահն ընտրվում է հինգ տարով: 1993, 1998, 2003 և 2008 թթ. նախագահն ընտրվել է խորհրդարանի երկու պալատի համատեղ նիստում, իսկ սկսած 2013 թ.՝ համընդհանուր քվեարկությամբ: Այնուամենայնիվ, նախագահի լիազորությունները մնում են սահմանափակ: Նախագահը կարող է օրինագծերը վերադարձնել խորհրդարանի ստորին պալատ՝ հայտնելով իր կարծիքը²⁰⁷, սակայն խորհրդարանը կրկին քվեարկում է՝ առանց փոփոխությունների, և պարզ մեծամասնությունը բավական է օրենքն ընդունելու համար: Նախագահն ունի վարչապետի թեկնածություն առաջադրելու լիազորություն, սակայն եթե հաջորդաբար առաջադրված երկու թեկնածու վստահության քվե չի ստանում, պարտավոր է հաստատել ստորին պալատի խոսնակի՝ ըստ էության, խորհրդարանական մեծամասնության թեկնածուին: Եթե վերջին դեպքում էլ վստահության քվե չի տրվում, ստորին պալատը կարող է լուծարվել: Լուծարման մյուս հնարավորությունը պալատի նիստ գումարելու կամ քվորում ապահովելու «տևական» անկարողությունն է: Ընդունված օրենքները պետք է ստորագրվեն նաև խոսնակի և վարչապետի կողմից: Կառավարության առաջարկով նախագահը նշանակում է նաև սահմանադրական դատարանի և գերագույն դատարանի անդամներին, դատավորներին, ներում է շնորհում, նշանակում է վերահսկիչ պալատի նախագահին և փոխնախագահին, ազգային բանկի խորհրդի անդամներին, դեսպաններին, շնորհում է բարձրագույն զինվորական կոչումներ:

3.4.4. Սլովակիա

Սլովակիայի՝ 1992 թ. ընդունված սահմանադրությամբ նախատեսված էր նախագահին խորհրդարանի կողմից ընտրելու կարգ: Սակայն երբ 1998 թ. ընտրություններից հետո խորհրդարանն ամիսներ շարունակ չէր կարողանում համաձայնության գալ և նախագահ ընտրել, 1999 թ. հունվարից ընդունվեց համընդհանուր քվեարկությամբ նրա ընտրությունը սահմանող փոփոխություն, որի շնորհիվ նույն տարվա մայիսին նախագահ ընտրվեց: Նախագահն ընտրվում է հինգ տարի ժամկետով:

Չնայած ընտրական համակարգը մի շարք չափանիշներով նման է

²⁰⁷ Բացի սահմանադրական փոփոխությունների նախագծերից:

լեհականին, նախագահի լիազորությունները Սլովակիայում շատ ավելի սահմանափակ են՝ հիշեցնելով խորհրդարանական համակարգերը: Նախագահն ունի հիմնականում արարողակարգային բնույթի լիազորություններ, սակայն խորհրդարանին դիմելու հնարավորությունը կարող է նաև արդյունավետ լինել: 1994 թ. նախագահ Միխալ Կովաչի քննադատական ելույթից հետո խորհրդարանն անվստահություն հայտնեց կառավարությանը: Միաժամանակ, կառավարությունը չունեւ նախագահին պաշտոնանկ անելու մեխանիզմ. այդպիսով, նախագահը կարող էր ստանձնել արբիտրի դերը:

Նախագահը կարող է օրինագծերը վերադարձնել խորհրդարան՝ հայտնելով իր կարծիքը, սակայն պարզ մեծամասնությունը բավական է օրենքն ընդունելու համար: Ընդունված օրենքները պիտի ստորագրվեն նաև խոսնակի և վարչապետի կողմից: Նախագահն ունի վարչապետի թեկնածություն առաջադրելու լիազորություն: Խորհրդարանը կարող է լուծարվել, եթե կառավարության ծրագիրը չի հաստատվում նրա կազմավորմանը հաջորդող վեց ամիսների ընթացքում, եթե երեք ամսում հավանություն չի տալիս օրենսդրական նախագծին, որը ներկայացնելիս կառավարությունը վստահության քվե է ակնկալել, կամ եթե խորհրդարանն ընթացիկ նստաշրջանի պայմաններում երեք ամսից ավելի չի կարող որոշումներ կայացնել, օրինակ՝ քվորումի բացակայության պատճառով: Բացի դրանից՝ խորհրդարանը կարող է քվեների 3/5-ով նախագահին անվստահություն հայտնել, սակայն վերջնական որոշումն ընդունվում է համընդհանուր քվեարկությամբ, և եթե ընտրողները նախագահին վստահություն են հայտնում, խորհրդարանը լուծարվում է:

Նախագահը նաև նշանակում է դեսպաններին, շնորհում է բարձրագույն զինվորական կոչումներ, պրոֆեսորի կոչում, կարող է ներում շնորհել կամ համաներում հայտարարել: Նախագահը նաև նշանակում է սահմանադրական դատարանի անդամներին՝ խորհրդարանի կողմից երաշխավորված թեկնածուների շարքից, ինչպես նաև խորհրդարանի ներկայացմամբ նշանակում է գերագույն դատախազին:

3.4.5. Ներկայացուցչական ինստիտուտների և ժողովրդավարացման փոխկապվածության հարցը

Ինչպես արդեն նշվեց, Լեհաստանն ու Չեխիան ստեղծել են երկպալատ խորհրդարաններ՝ համամասնական եղանակով ընտրվող ստորին և մեծամասնական եղանակով ընտրվող վերին պալատներով: Սլովակիայում

Նախապատվությունը դեռ 1992 թ.՝ մինչ դաշնությունից դուրս գալը, տրվել է համամասնական եղանակով ընտրվող միապալատ խորհրդարանին: Հունգարական համակարգն ամենաբարդն է:

Լեհաստանի նախագահը միակն է, ում վետոյի իրավունքը կարող է գործնական դեր խաղալ, քանի որ այն հաղթահարելու համար որակյալ մեծամասնություն է պահանջվում. մյուս դեպքերում որոշումներն ընդունվում են պարզ մեծամասնությամբ: Սլովակիան միակ դեպքն է, երբ կա համընդհանուր քվեարկությամբ ընտրված նախագահին խորհրդարանի կողմից անվստահություն հայտնելու հնարավորություն:

Այսպիսով, իշխանափոխության եղանակների և ի վերջո առաջացած ներկայացուցչական ինստիտուտների մոդելների միջև ուղղակի գուգահեռներ չկան: Իշխանափոխության եղանակների և ի վերջո առաջացած ներկայացուցչական ինստիտուտների համեմատությունը ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. ներկայացուցչական մարմինները՝ ըստ սոցիալիստականից անկախ պետություն դառնալիս իշխանափոխության եղանակի

Երկիրը / իշխանափոխության եղանակը	Խորհրդարան	Նախագահ
Լեհաստան. բանակցված բարեփոխում	Ներքին պալատն ընտրվում է համամասնական, վերինը՝ մեծամասնական եղանակով	Ընտրվում է համընդհանուր քվեարկությամբ, բավական լայն լիազորություններով
Հունգարիա. բանակցված բարեփոխում	Միապալատ, ընտրվում է խառը եղանակով	Ընտրվում է խորհրդարանի կողմից, սահմանափակ լիազորություններով
Չեխիա.վարչակարգի կոլապս	Ներքին պալատն ընտրվում է համամասնական, վերինը՝ մեծամասնական եղանակով	Ընտրվում է համընդհանուր քվեարկությամբ (սկսած 2013 թ.), սահմանափակ լիազորություններով
Սլովակիա. վարչակարգի կոլապս	Միապալատ, ընտրվում է համամասնական եղանակով	Ընտրվում է համընդհանուր քվեարկությամբ (սկսած 1999 թ.), սահմանափակ լիազորություններով

Սա կարող է մեկնաբանվել որպես վարկած, որ ժողովրդավարացման շարունակականությունը և կառավարման ձևավորվող ավանդույթը որոշ չափով անկախ են բռնության տեսակից և մակարդակից, որոնք առկա էին ժողովրդավարացման գործընթացը սկսելիս: Սակայն առավել մանրամասնորեն դիտարկենք Սլովակիայի՝ համեմատաբար ավելի դժվարին ճանապարհը ժողովրդավարացման գործընթացում:

3.5. Ավտորիտարիզմի ու ազգայնականության դրսևորումները և ազգամիջյան հարաբերությունները Սլովակիայում

90-ականներին Լեհաստանը, Հունգարիան և Չեխիան համարվել են ժողովրդավարացման օրինակելի նմուշներ: 1994 թ. սկսվել էր ԵՄ-ի հետ ասոցացման գործընթացը, իսկ արդեն 1997 թ. այդ երեք երկրները դարձան ՆԱՏՕ-ի անդամ: Սլովակիան չդարձավ ՆԱՏՕ-ի անդամ, իսկ 1997 թ. դեկտեմբերին ԵՄ լյուքսեմբուրգյան վեհաժողովում սառեցվեցին ԵՄ անդամակցության վերաբերյալ բանակցությունները: Պատճառը վարչապետ Վ. Մեչիարի վարած քաղաքականությունն էր:

Դեռևս 1992 թ. Վ. Մեչիարի գլխավորած «Շարժում հանուն ժողովրդավարական Սլովակիայի» կուսակցությունը կոալիցիա էր կազմել Սլովակիայի ազգային կուսակցության հետ: Վերջինս աչքի էր ընկնում երկրում բնակվող երկու հիմնական ազգային փոքրամասնությունների՝ հունգարացիների և գնչուների դեմ ռասիստական բնույթի արտահայտություններով: Որոշ սլովակ վերլուծաբանների կողմից կուսակցությունը բնորոշվել էր որպես «մեկ խնդրի վրա կենտրոնացած ազգայնական կուսակցության տիպիկ օրինակ» (Gyárfásová, 2008, cited in Grigoryan, 2010, p. 314) և «քաղաքական ազգի երդվյալ հակառակորդ, որն առաջ է մղում էթնիկ սկզբունքով կազմված ազգի գաղափարը: Սլովակիայի ազգային կուսակցությունն ընկալում է Սլովակիայի Հանրապետությունը որպես էթնիկ սլովակների ազգային պետություն՝ առաջ մղելով ազգային փոքրամասնությունների՝ գլխավոր ազգին միաձուլվելու գաղափարը, որը պայմանավորված է, մասնավորապես, Սլովակիայի Հանրապետության հանդեպ ազգությամբ հունգար քաղաքացիների հավատարմությունը ապրիորի կասկածի ենթարկելով» (Mesežnikov, 2008, cited in Grigoryan, 2010, p. 314):

1994 տարեսկզբին որոշ պատգամավորներ լքել էին իշխող կոալիցիայի կուսակցությունները՝ զրկելով նրան մեծամասնությունից: Դրան հաջորդել էր նախագահ Մ. Կովաչի քննադատական ելույթը, որից

հետո խորհրդարանն անվստահություն հայտնեց կառավարությանը: Յոզեֆ Մորավչիկի կառավարությունը, որին օժանդակեցին նաև նախկին կոալիցիան լքած պատգամավորները, ութ ամսվա ընթացքում որոշ չափով բարելավեց հունգարական փոքրամասնության հետ հարաբերությունները և երկրի միջազգային հեղինակությունը (Henderson and Robinson, 1997, p. 373): Սակայն աշնանը կայացած ընտրությունների արդյունքում Վ. Մեչիարը կրկին զբաղեցրեց վարչապետի պաշտոնը՝ կոալիցիա կազմելով Սլովակիայի ազգային կուսակցության և ճախ արմատական Սլովակիայի աշխատավորների միության հետ:

Վ. Մեչիարի քաղաքականության բաղադրիչներից էին քաղաքական հակառակորդներից վրեժ լուծելու շարունակական փորձերը: Նախագահ Մ. Կովաչին հրաժարական պարտադրելու փորձերի ընթացքում նրա որդուն, որը կասկածվում էր Գերմանիայում խարդախություն կատարելու համար (ինչը հետագայում չհաստատվեց), առևանգել էին հատուկ ծառայությունների աշխատակիցները, տեղափոխել Ավստրիա և թողել ոստիկանության բաժանմունքի մոտ (Barber, 1995): Վ. Մեչիարը նաև շարունակաբար փորձել է զրկել Յ. Մորավչիկի ժողովրդավարական միությանը պատգամավորական մանդատներից՝ պնդելով, որ տեղի են ունեցել ընտրակեղծիքներ (Henderson and Robinson, 1997, p. 374):

Վ. Մեչիարի կառավարությունը հունգարական փոքրամասնության բազմաթիվ ներկայացուցիչների հեռացրեց պետական ծառայությունից: 1995-1998 թթ. ընթացքում փոխվեցին մարզային և տարածաշրջանային սահմանները՝ հունգարական մեծամասնությամբ տարածքային միավորների քանակը կրճատելու նպատակով, թանգարաններից հանվեցին հունգարերեն ցուցանակները, փակվեց երկու հունգարական թատրոն, սահմանափակվեց կրթական համակարգում հունգարերենի կիրառումը, իսկ հունգարաբնակ տարածքային միավորների տեղական ինքնակառավարման մարմինները զրկվեցին դպրոցների տնօրեններ նշանակելու իրավունքից (Némethová and Öllös, 2003, cited in Grigoryan, 2010, p. 309):

1998 թ. «Շարժում հանուն ժողովրդավարական Սլովակիայի» կուսակցությունը, չնայած ստացած ամենաշատ՝ 27% քվեներին, չկարողացավ կոալիցիա կազմել: Աջ և ճախ կենտրոնամետ հինգ կուսակցություն միավորող Սլովակիայի ժողովրդավարական կոալիցիայի կողմից Միկուլաշ Չուրինդայի գլխավորությամբ կառավարություն կազմելուց հետո բարեփոխումներ սկսվեցին: Դրա շնորհիվ 1999 թ. դեկտեմբերին կայացած ԵՄ վեհաժողովում ձեռք բերվեց անդամակցության բանակցությունները վերսկսելու համաձայնություն, քանի որ պետական

կառավարման համակարգի՝ մինչ այդ տեղ գտած թերություններն ու ժողովրդավարության դեֆիցիտը, ըստ ԵՄ-ի, հաղթահարվում էին (Pridham, 2002, cited in Grigoryan, 2010, p. 310): Ընթանում էին բանակցություններ նաև ՆԱՏՕ-ի հետ: Ճիշտ է, 2002 թ. ընտրություններից առաջ ԱՄՆ դեսպան Ռոնալդ Ուայզերը և ՆԱՏՕ-ում ԱՄՆ-ի ներկայացուցիչ Նիկոլաս Բերնսն ասել էին, որ Վ. Մեչիարի վերադարձի դեպքում անդամակցության գործընթացը կարող էր նորից դադարեցվել (Marušiak et al., 2003, p. 269):

Արդեն ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին անդամակցելուց հետո՝ 2006 թ. հունիսին կայացած ընտրությունների արդյունքում Սլովակիայի ազգային կուսակցությունը և «Շարժում հանուն ժողովրդավարական Սլովակիայի» կուսակցությունը կրկին հայտնվեցին իշխող կոալիցիայի կազմում՝ որպես «Սմեր սոցիալ-դեմոկրատիա»²⁰⁸ կուսակցության գործընկերներ: Մի քանի շաբաթ անց Սլովակիայի ազգային կուսակցության նախագահ Յան Սլոտան չեխական «Լիդովե նովինի» թերթի հետ հարցազրույցում ասաց, որ Հունգարական կոալիցիոն կուսակցությունը ճնշում է սլովակներին իրենց իսկ երկրում (նկատի ունենալով հունգարացիների՝ տեղական ինքնակառավարման որոշ մարմիններում ունեցած մեծամասնությունը), և որ ինքը նախանձում է չեխերին՝ Երկրորդ աշխարհամարտից հետո սուդետյան գերմանացիներին արտաքսելու համար (Dostál, 2007, cited in Grigoryan, 2010, p. 317): Երբ դրա պատճառով «Սմերը» հեռացվեց Եվրոպական սոցիալիստների կուսակցությունից, վարչապետ Ռոբերտ Ֆիցոն մեղադրանքներ հնչեցրեց Սլովակիայի «սադրիչ» ընդդիմադիր կուսակցությունների, ինչպես նաև Հունգարիայի վարչապետի և Սոցիալիստական կուսակցության հասցեին (Mesežnikov et al., 2008, cited in Grigoryan, 2010, pp. 317–318): 2006 թ. ձևավորված կոալիցիայի քառամյա գործունեության ընթացքում փոքրամասնությունների լեզուների կիրառումը պաշտոնական տիրույթում սահմանափակվեց (դա էականորեն ազդել է միայն հունգարերենի վրա), մտցվեցին նաև որոշ այլ սահմանափակումներ:

Անդրադառնալով Սլովակիայում միջէթնիկական հարաբերություններին՝ փորձագետներից մեկը մասնավորապես նշել է. «Սլովակիայում ազգային ինքնության ձևավորումը դեռևս ավելի շատ էթնիկ և մշակութային բնույթ ունի, քան քաղաքացիական և տարածքային, որի պատճառով փոքրամասնությունները չեն կարող լիակատար կերպով ինտեգրվել: Սլովակիական իրականությունը բնութագրելի է «մշակութային ազգ», այլ

²⁰⁸ «SMER – sociálna demokracia». «smer» նշանակում է «ուղղություն»:

ոչ թե «պետական ազգ» եզրույթով²⁰⁹ ... էթնիկ և մշակութային ինքնությամբ երկրների ելակետային պայմաններն ավելի բարդ են, քան քաղաքացիական ինքնությամբ երկրներինը» (Dostál, 2006, cited in Grigoryan, 2010, p. 328)²¹⁰:

Այնուամենայնիվ, երբ 2010 թ. ընտրություններում պարտված «Սմեր» կուսակցությունը 2012 թ. արտահերթ ընտրություններում ստացավ առավել բարձր արդյունք՝ 150-ից 83 մանդատ և կոալիցիայի կարիք այլևս չունեի, վարչապետ Ռ. Ֆիցոյի վերաբերմունքը հունգարական փոքրամասնության նկատմամբ ավելի բարյացակամ դարձավ: Դա մասամբ պայմանավորված էր 2015 թ. միգրացիոն ճգնաժամի ընթացքում Ֆիցոյի և Հունգարիայի վարչապետ Վ. Օրբանի ընդհանուր բացասական վերաբերմունքով դեպի Աֆրիկայից և Մերձավոր Արևելքից ներգաղթը: Արդյունքում կատարվեցին որոշ խորհրդանշական քայլեր, ինչպես, օրինակ, երկրի հարավի երկաթուղային կայարանների անունները ցուցանակներում երկու լեզվով նշելը:

Ինչ վերաբերում է Սլովակիայի ազգային կուսակցությանը, այն 2012 թ. կրկին առաջնորդվում էր հակահունգարական, ինչպես նաև եվրոսկեպտիցիզմի կարգախոսներով, սակայն չհաղթահարեց 5 տոկոսանոց շեմը: 2016 թ. կուսակցությունը դարձյալ հայտնվեց խորհրդարանում՝ արդեն առանց Յ. Սլոտայի, որը 2013-ին հեռացվեց կուսակցությունից գույքի չարաշահման պատճառով (նրա պատկերով շատ նյութեր, այդ թվում՝ նախընտրական պաստառները, այժմ հեռացված են կուսակցության կայքից): Կուսակցությունը դարձյալ տեղ գտավ Ռ. Ֆիցոյի գլխավորած կոալիցիոն կառավարության կազմում՝ Հունգարական կոալիցիոն կուսակցությունից անջատված «Most-Híd»²¹¹ և մեկ այլ փոքր կուսակցության հետ մեկտեղ:

2016 թ. խորհրդարանական ընտրություններին անդրադառնալիս կարելի է կրկին հիշատակել Սլովակիայի նախագահի կողմից արբիտրի դերակատարության հնարավորությունը: Որպես անկախ թեկնածու ընտրված, ազատական հայացքներ կրող Անդրեյ Կիսկան բավական հստակ ցույց տվեց իր դիրքորոշումը՝ խորհրդարան անցած ութ

²⁰⁹ Բնօրինակում օգտագործված են գերմաներեն «Kulturnation» և «Staatsnation» տերմինները:

²¹⁰ «Մշակութային ազգի» ընկալումները Հունգարիայում էլ են ուժեղ՝ արտերկրում բնակվող ազգակիցների հետ կապերի պատճառով. 1989 թ. ժողովրդավարացումից ի վեր դրանք ներքաղաքական նպատակներով շահարկելու տարբեր աստիճանի արդյունավետության փորձերը հատկապես հաջողությամբ օգտագործվեցին Վ. Օրբանի կողմից հատկապես 2011 թ. սահմանադրությունը փոխելու շնորհիվ:

²¹¹ Անվանումը կազմված է «կամուրջ» բառի սլովակերեն և հունգարերեն տարբերակներից:

կուսակցությունների ներկայացուցիչներից միայն յոթին հրավիրելով կուլիցիայի վերաբերյալ բանակցություններին մասնակցելու՝ դուրս թողնելով առաջին անգամ խորհրդարանում հայտնված և հինգերորդ տեղը զբաղեցրած նեոնացիստական ժողովրդական կուսակցություն-Մեր Սլովակիային: Միաժամանակ, այդ կուսակցության՝ խորհրդարանում ներկայացված լինելու դեմ ցույցեր տեղի ունեցան (Slovak Spectator, 2016):

3.6. Բարեփոխումները Սլովակիայում

1998 թ. խորհրդարանական ընտրություններին ընդառաջ Սլովակիան տնտեսական ճգնաժամի եզրին էր: Օրենսդրական բարեփոխումներ չէին արվել, իսկ նախորդ տարիների մակրոտնտեսական քաղաքականությունը և յուրայինների օգտին իրականացված սեփականաշնորհումը, չմարված վարկերի պատճառով (վարկերի մոտ 35 տոկոսն անհույս էին համարվում) հանգեցրել էին բանկային ճգնաժամի և սլովակյան ձեռնարկությունների կողմից օտարերկրյա վարկեր ներգրավելու անհնարինության. վարկավորման պայմաններն այն աստիճան էին վատթարացել, որ նոր վարկեր տրամադրվում էին տարեկան 20 տոկոս դրույքաչափով (Mathernová and Renčko, 2006, pp. 630–631, 634):

1998 թ. ձևավորված կառավարության խնդրի բարդությունը մասնավորապես այն էր, որ պետք էր ձախակողմյան կուլիցիոն գործընկերներին համոզել, որ անհրաժեշտ են արմատական արագ բարեփոխումներ, այդ թվում՝ բյուջեի ծախսերի և դեֆիցիտի կրճատում: Ելնելով այն դրույթից, որ մասնակի լուծումներն անարդյունավետ են, կառավարությունը քաղաքական որոշում կայացրեց բարեփոխման երեք հիմնասյուները՝ մակրոտնտեսական կայունացումը, բանկային սեկտորի ու արդյունաբերության վերակազմավորումը և օրենսդրական ու ինստիտուցիոնալ բարեփոխումները կազմակերպել որպես մեկ փաթեթ: Չորս տարվա ընթացքում կառավարությունը կենտրոնացավ մակրոտնտեսական կայունացման, բանկային սեկտորի և արդյունաբերության վերակազմավորման և սեփականաշնորհման վրա, ինչպես նաև ներդրեց ձեռնարկատիրական գործունեությունն ու սնանկացման գործընթացները կարգավորող ժամանակակից օրենսդրություն (Mathernová and Renčko, 2006, p. 632):

2002 թ. վարչապետ Մ. Չուրինդայի ժողովրդավարական քրիստոնեական միությունը կարողացավ նոր կուլիցիա կազմել Հունգարական կուլիցիոն կուսակցության, կաթոլիկ-պահպանողական

Քրիստոնյա-ժողովրդավարական շարժման և ազատական Նոր քաղաքացիների ալյանսի հետ: Նոր կոալիցիայի կազմում միավորվել էին արմատական բարեփոխումների կողմնակիցները, որոնք գաղափարական առումով ավելի մոտ էին միմյանց, ինչը թույլ տվեց առաջին տարում իրականացնել աշխատանքային օրենսդրության, սոցիալական ապահովության, կենսաթոշակային համակարգերի, ինչպես նաև հարկային օրենսդրության բարեփոխումները. ներդրվեց շահութահարկի և եկամտահարկի միասնական դրույքաչափ (19 տոկոս), ընդ որում՝ բաժնետերերին վճարվող շահութաբաժինն ազատվում էր եկամտահարկից: Ավելացված արժեքի հարկի տոկոսադրույքը նույնպես դարձավ միասնական՝ կազմելով 19 տոկոս, իսկ անշարժ գույքի օտարումից, ժառանգությունից և նվիրատվություններից գանձվող հարկերը վերացվեցին: Հիմնական նպատակներից մեկը բյուջեի դեֆիցիտը մինչև 2007 թվական ՀՆԱ-ի 3 տոկոսի իջեցնելն էր՝ ԵՄ-ի չափանիշներին համապատասխանելու համար²¹², սակայն հարկման պարզեցումը նաև նվազեցրեց հարկերից խուսափելու դրսևորումները, նպաստեց մրցունակության ամրապնդմանն ու ներդրումների խրախուսմանը (Mathernová and Renčko, 2006, pp. 636–637): Գործունեության երկրորդ տարվա ընթացքում կառավարությունն անցավ առողջապահության և կրթական բարեփոխումներին, ինչպես նաև իրականացրեց ֆինանսական ապակենտրոնացմանն ուղղված միջոցներ: Բարեփոխումները թույլ տվեցին ներգրավել խոշոր ներդրումներ, մասնավորապես մեքենաշինության ոլորտում՝ սոցիալիստական շրջանի ռազմարդյունաբերության ձեռնարկությունների կոնվերսիայի ու վերազինման շնորհիվ. երկրում սկսում են գործել «US սթիլը» և այլ խոշոր մետաղաձուլարաններ, «Կիա», «Յագուար», «Պեժո», «Ֆոլքսվագեն» ավտոգործարանները և նրանց համար պահեստամասեր և այլ պարագաներ արտադրող մի շարք ձեռնարկություններ: Մեքենաշինության տարբեր ցիկլերում աշխատուժի զբաղվածությունը հասնում է ավելի քան 10 տոկոսի: Հարկային օրենսդրությամբ և այլ կարգավորումներով ապահովված «ներդրողի դրախտ»²¹³ Սլովակիան դառնում է գերմանացիների նախընտրելի երկիրը Վիշեգրադյան քառյակից՝ Չինաստանից ավելի շահավետ պայմաններով: Բարեփոխման արդյունքում ձևավորված հարկային համակարգն առաջացրել էր անգամ

²¹² Դրա շնորհիվ Սլովակիան 2009 թ. դարձավ եվրոյի անցած երկրորդ նախկին սոցիալիստական երկիրը Սլովենիայից հետո:

²¹³ Արտահայտությունն օգտագործել էր Սթիվեն Ֆորբսը:

Գերմանիայի կանցլեր Գերհարդ Շրյոդերի բացահայտ դժգոհությունը, ապա նաև Անգելա Մերկելն էր մտահոգություն հայտնել աշխատատեղերի տեղափոխման վտանգի պատճառով (Marušiak et al., 2007, pp. 263–264):

Թե՛ Վ. Մեչիարի ժամանակաշրջանի քաղաքական ընդդիմությունը, թե՛ հասարակական կազմակերպությունները կատարել էին վերլուծություններ և կանխատեսել, թե ինչպիսի տնտեսական ու կառուցվածքային բարեփոխումների անհրաժեշտություն էր առաջանալու: Դրա շնորհիվ 1998 թ. իշխանության եկած դաշինքի անդամները, չնայած գաղափարախոսական տարբերություններին, կարողացել էին համաձայնության գալ կարևորագույն հարցերում (Mathernová and Renčko, 2006, p. 637): ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին ինտեգրվելու հեռանկարը ևս կարևոր միավորող գործոն էր (Mathernová and Renčko, 2006, p. 638): 1998 թ. ժողովրդավարացումը և այդուհետ կատարված բարեփոխումները կարող են բացատրվել քաղաքացիական հասարակության, ԶԼՄ-ների և գործարար շրջանակների շարունակական համագործակցությամբ:

3.6.1. Կոռուպցիայի դեմ պայքարը

Սլովակիայում իրականացված բարեփոխումներին անդրադառնալիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև հակակոռուպցիոն միջոցառումներին: Խնդրի կարևորությունից ելնելով՝ 2003 թ. ընդունված օրենքով 2005-ից սկսեց գործել Հատուկ դատարանը, որի իրավասության մեջ էին մտնում կոռուպցիային և կազմակերպված հանցավորությանը, այդ թվում՝ փողի լվացմանն առնչվող գործերը, որոնք քննում էր հատուկ դատախազի գրասենյակը: Դատարանի ստեղծման դրդապատճառներից մեկն այն էր, որ առաջին ատյանի դատավորները համարվում էին տեղական վերնախավերի անդամներ, որոնց նկատմամբ քաղաքական գործիչներն ու գործարար շրջանակներն ազդեցության լծակներ ունեին՝ ծանոթությունների և այլ միջոցներով: Դատարանը գործերը քննում է նույն կերպ, ինչպես առաջին ատյանի դատարանները, սակայն վճիռները ենթակա չեն վերաքննության երկրորդ ատյանի՝ մարզային դատարանների, այլ միմիայն գերագույն դատարանի կողմից:

Քանի որ կազմակերպված հանցագործության գոյության պայմաններում նորաստեղծ դատարանում աշխատել ցանկացողները սկզբնական շրջանում սակավաթիվ էին, որոշվեց սահմանել շատ ավելի բարձր աշխատավարձ, քան այլ դատավորների համար: Դա դարձավ Հատուկ դատարանի սահմանադրականությունը վիճարկելու հիմքերից մեկը: Սակայն երբ 2009 թ. Սահմանադրական դատարանը վճռեց, որ այն ոչ

սահմանադրական է, խորհրդարանն անմիջապես կատարեց որոշակի փոփոխություններ՝ հիմնադրելով Քրեական հատուկ դատարան, որը շարունակեց նախորդի գործունեությունը՝ ստանձնելով նաև կանխամտածված սպանություններ և որոշ այլ ծանր հանցագործություններ քննելու գործառույթը:

Քրեական հատուկ դատարանի՝ կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ առաջին ատյանի համեմատ ավելի քիչ գործեր քննող դատավորներն ավելի արագ են տալիս գաղտնալսման թույլտվություններ: Միևնույն ժամանակ, բարձրաստիճան դերակատարներին առնչվող որոշ գործեր նախաքննության փուլից այդպես էլ դատարան չեն հասնում, ինչը նվազեցնում է նրա արդյունավետությունը, իսկ մանր կոռուպցիոն գործերը, ինչպես, օրինակ, բժշկի կողմից 20 եվրո ստանալը, մեծացնում են ծանրաբեռնվածությունը (Stephenson, 2016):

Կոռուպցիան շարունակում է մնալ միջազգային կազմակերպությունների՝ «Թրանսփերենսի ինթերնեյշնլը»-ի, Համաշխարհային տնտեսական ֆորումի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ուշադրության կենտրոնում: Քաղաքացիական հասարակությունը հաճախ բողոքի ցույցեր է կազմակերպել հենց հակակոռուպցիոն միջոցներն առավել արդյունավետ դարձնելու պահանջով: Վերջին տարիներին հասարակական ընդվզումներ էր առաջացրել, մասնավորապես, այսպես կոչված «Գորիլա» գործը, երբ ներքին գործերի նախարար Ռոբերտ Կալինյակը ձեռք էր բերել շինարարական ընկերություններից մեկի բաժնետոմսերի 17 տոկոսը: Կասկած կար, որ այդ կազմակերպության սեփականատերը հարկերից խուսափում է (Deutsche Welle, 2017): Այդ ժամանակ նախարարի և ոստիկանապետի հրաժարականի պահանջը չբավարարվեց, սակայն Ռ. Կալինյակը հեռացավ 2018 թ. կոռուպցիայի դեմ առավել զանգվածային բողոքի ցույցերի արդյունքում, Յան Կուցիակի սպանությունից հետո: Այս լրագրողը հետաքննում էր Սլովակիայում իտալական «Նդոնալգետա» հանցավոր խմբավորման կապերն ու տնտեսական շահերը: Միաժամանակ հրաժարական տվեց նաև վարչապետ Ռ. Ֆիցոն՝ մնալով կուսակցության ղեկավարի պաշտոնում: Շաբաթներ շարունակ տեղի ունեցած ցույցերի արդյունքում հրաժարականներ ներկայացրին նաև ներքին գործերի նորանշանակ նախարար Տոմաշ Դրուկերը և ոստիկանապետ Տիբոր Գաշպարը (Committee to Protect Journalists, 2020):

Կոռուպցիայի դեմ պայքարը հասարակության կողմից կարևորելու լրացուցիչ վկայություն է 2019 թ. նախագահի պաշտոնում Ջուզանա

Չապուտովայի ընտրվելը: Նա մինչ այդ աշխատում էր ՀԿ ոլորտում և կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով մասնագիտացած իրավաբան է: 2020 թ. խորհրդարանական ընտրություններում հակակոռուպցիոն հռետորաբանությամբ հանդես եկած «Հասարակ մարդիկ և անկախ անձնավորություններ» կուսակցությունը հաղթանակ տարավ:

4. Իշխանության այլ մակարդակներն ու ձևերը Վիճեգրադյան երկրներում

4.1. Տեղական ինքնակառավարման զարգացման կարևորությունը

Անդրադառնալով կառավարման մոդելներին՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, մասնավորապես, տեղական ինքնակառավարմանը: 1985 թ. ընդունված Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, որը Հայաստանը վավերացրել է 2002-ին, սահմանում է. «Տեղական ինքնակառավարում նշանակում է՝ օրենքի շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը և կարողությունը՝ կարգավորելու և կառավարելու հանրային գործերի զգալի մասը սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերից ելնելով» (Council of Europe, 2012, pp. 14-15):

Տեղական ինքնակառավարման հետ սերտորեն փոխկապակցված է *տուբսիդիարության* սկզբունքը, ըստ որի՝ քաղաքական և հասարակական խնդիրները պիտի լուծվեն կառավարման հնարավորինս ցածր մակարդակներում, հնարավորության դեպքում՝ տեղական համայնքներում: Այս առումով կարևորվում է ապակենտրոնացումը՝ որպես իշխանական լծակների և պատասխանատվության փոխանցում երկրի կառավարությունից տեղական մարմիններին: Այն ընդգրկում է քաղաքական ապակենտրոնացումը՝ քաղաքացիների ընտրած ներկայացուցիչներին որոշումների ընդունման լայն լիազորություններով օժտելը, վարչական ապակենտրոնացումը՝ տեղական մարմիններին հանրային ծառայությունների և այլ ոլորտներում պլանավորման ու կազմակերպչական լիազորություններ փոխանցելը, ինչպես նաև ֆիսկալ ապակենտրոնացումը՝ տեղում հավաքված միջոցները (տեղական տուրքերից և այլն) և կառավարության տրամադրած միջոցները տեղական մարմինների կողմից տնօրինելու լիազորությունը:

Մարդկանց մեծամասնությունն իր առօրյա խնդիրների լուծման համար ունի նախևառաջ արդյունավետ տեղական ինքնակառավարման

կարիք: Կենտրոնացման բարձր աստիճանի պայմաններում դրա անարդյունավետությունն ավելորդ կենցաղային բարդություններ է ստեղծում՝ միաժամանակ բնակիչների շրջանում նվազեցնելով սեփական բնակավայրի խնդիրներով զբաղվելու հետաքրքրությունը, ինչի հետևանքով նրանք կարող են պակաս տեղեկացված լինել տեղական բյուջեի միջոցների տնօրինման, ենթակառուցվածքների սպասարկման ու նորոգման, տարածքի բարեկարգման և այլ կենսական խնդիրների մասին:

Երբեմն գերկենտրոնացումը կարող է օգտագործվել քարոզչական նպատակներով. ներկայումս սրա թերևս ամենավառ օրինակը Ռուսաստանն է, որտեղ կա «բարի թագավորին» և «չար բոյարներին» հակադրելու հին ավանդույթ՝ այժմ համալրված «ուժեղ ձեռքի» և «իշխանական ուղղահայացի» քարոզով: Արդյունքում երկրի նախագահի կողմից ուղիղ հեռուստատեսերով որևէ հեռավոր գյուղում ջրիոր փորելու, ուշացված աշխատավարձերը վճարելու կամ նման այլ խնդիրներ լուծելը մատուցվում է որպես աննախադեպ ձեռքբերում՝ առանց ուշադրություն դարձնելու, որ դա ծաղրի է նմանվում: Սա, իհարկե, չի նշանակում, որ Ռուսաստանի բնակիչների մեծամասնությունը չունի համայնքային գործերի նկատմամբ հետաքրքրություն. ստորև դեռ ավելի մանրամասն կանդիդատառնանք նաև քաղաքացիական հասարակության դերին: Առայժմ նշենք, որ Ռուսաստանում գոյություն ունեն զանազան բարեգործական նախաձեռնություններ, բնապահպանական և այլ շարժումներ՝ համայնքների բնակիչների ներգրավմամբ, նախևառաջ խոշոր քաղաքներում: Սակայն հատկապես վերջին տարիներին տեղական ինքնակառավարման գործընթացների վրա դրանց ազդեցությունը սահմանափակվում է իշխանական ճյուղերի ոչ պատշաճ տարանջատման, մասնավորապես՝ անկախ դատարանների բացակայության, և ավտորիտար տենդենցների շարունակական ուժգնացման պատճառով: Այդ տենդենցների արտահայտություններից են ուժայինների չափազանցված լիազորություններն ու անօրինությունները, հավաքներ անցկացնելու արգելքները, համայնքների և իշխանամերձ գործարարների կամ ռուս ուղղափառ եկեղեցու շահերի բախումները, քաղաքացիական հասարակության և անկախ մեդիայի հետապնդումները՝ «օտարերկրյա գործակալ» պիտակավորմամբ, քաղհասարակության և անկախ մեդիայի ներկայացուցիչների ահազնացած արտագաղթը, ընդդիմադիր քաղաքական ուժերի հետապնդումները և այլն:

Թերզարգացած քաղաքական մշակույթի պայմաններում Հայաստանի բնակչության զգալի հատվածը նույնպես զերծ չէ այն մտայնությունից,

որ գործադիրի ղեկավարը՝ նախկինում նախագահը, այժմ՝ վարչապետը, պետք է անձամբ զբաղվի իրենց համայնքների խնդիրներով: Ամբոխավարությանը և քարոզչությանը վարկանիշ ապահովելուն հակված ղեկավարները հաճախ նպաստել են նման մտայնության արմատավորմանը՝ ներգրավվելով կարի կամ պահածոների արտադրամասերի բացմանը, անդրադառնալով առանձին համայնքներում ոռոգման ջրի և այլ խնդիրների լուծմանը, առանց հաշվի առնելու, որ եթե կա նման գործողությունների անհրաժեշտություն՝ բացի զուտ քարոզչականից, ապա դա ոչ միայն տեղական ինքնակառավարման անբավարար զարգացածության, այլև լիազորությունների պատվիրակման հմտության պակասի, անտեղի միկրոմենեջմենթի և ապաշնորհ ու անարդյունավետ կառավարման ցուցիչ է:

4.2. Տեղական ինքնակառավարման որոշ առանձնահատկություններ

Տեղական ինքնակառավարման մոդելները բազմազան են: Դրանք կարող են անմիջական կապ ունենալ տվյալ երկրի քաղաքական համակարգի առաջացման և զարգացման յուրահատկությունների հետ: ԱՄՆ-ը վառ օրինակ է. մինչ այժմ, ի լրումն սովորաբար տեղական ինքնակառավարման ոլորտի հետ ասոցացվող խնդիրների լուծման, 50 նահանգից 46-ում ոստիկանապետերը (շերիֆները) ընտրվում են համայնքների բնակիչների կողմից, իսկ շատ նահանգներում ընտրվում են նաև համայնքների դատախազները:

Եվրոպական երկրներում նույնպես առկա են պատմականորեն պայմանավորված առանձնահատկություններ: Դեռևս ֆեոդալիզմի օրոք, երբ գյուղական բնակչությունը ճորտ էր, Արևմտյան և Հյուսիսային Եվրոպայի քաղաքներում սկսել էին ձևավորվել ինքնակառավարման ավանդույթներ: Միաժամանակ, ֆեոդալական տրոհվածությունը նպաստում էր, որ կառավարման գերկենտրոնացում տեղի չունենա և միապետերի ձեռքում չափազանց շատ լիազորություններ չկուտակվեն: Ճորտատիրության վերացումից և հատկապես արդյունաբերական հեղափոխությունից հետո ինքնակառավարման նշանակությունն ավելի ուժեղացավ:

Պատմական ավանդույթները կարող են իրենց արտացոլումն ունենալ նաև որոշ անվանումներում և տերմինաբանությունում: Այսպես, ինքնակառավարվող ամենափոքր միավոր կարող էր լինել առանձին վերցրած գյուղը, եթե այն բավական մեծ և հարուստ էր բնակիչների հանգանակած միջոցներով եկեղեցի կառուցելու և քահանայի ապրուստն

ապահովելու համար: Մասնավորապես Անգլիայում դրա արտացոլումն է «parish» բառի կրկնակի նշանակությունը. այն նշանակում է թե՛ եկեղեցական ծուխ, թե՛ գյուղական շրջաններում ինքնակառավարման ստորին օղակ:

Արևելյան և Հարավային Եվրոպայում ինքնակառավարման ավանդույթները սովորաբար պակաս զարգացած էին՝ հատկապես եթե պատմականորեն առկա էր կառավարման կենտրոնացման ավելի բարձր աստիճան: Մի շարք երկրներում էլ կենտրոնացումը տեղի է ունեցել արդեն կոմունիստական վարչակարգերի օրոք: Տեղական ինքնակառավարման զարգացմանը նպաստակառուղված բարեփոխումներն անհրաժեշտություն դարձան ժողովրդավարացման և եվրահինտեգրման գործընթացների արդյունքում: Այս ենթաբաժնում հակիրճ ներկայացվում են կառավարման կենտրոնացման բարձր աստիճանից տեղական ինքնակառավարման անցնելու առանձին օրինակներ:

4.2.1. Տեղական ինքնակառավարումը Լեհաստանում

Մինչ 1990 թ. մայիսը երկրի կառավարությունը վերահսկում էր մարզային և այլ կառավարման մարմինների ամբողջ գործունեությունը բոլոր առումներով, սակայն բարեփոխումից հետո այն հետևում է միայն օրինականության պահպանմանը: Տեղական ինքնակառավարման մարմինների՝ ընտրությունների միջոցով ձևավորումն ամրագրվեց 1992 թ., ապա նաև 1997 թ. սահմանադրությամբ: 1999 թ. կոմունիստական ժամանակաշրջանի 49 մարզերի փոխարեն ձևավորվեց 16 խոշոր մարզ՝ ըստ պատմական տարածաշրջանների, վերականգնվեց մինչև 1975 թ. գոյություն ունեցած մարզերի բաժանումն ըստ շրջանների:

Մարզը ղեկավարում է կառավարության նշանակած մարզպետը, որին ենթարկվում են ոստիկանությունը, հրշեջ ծառայությունը և որոշ այլ ստորաբաժանումներ, հինգ (մինչև 2018 թ.՝ չորս) տարով ընտրվող մարզային խորհրդարանը («սեյմիկ» անունով՝ որպես երկրի խորհրդարանի ստորին պալատի փոքր տարբերակ), որն ընդունում է մարզային բյուջեն և նշանակում է գործադիրի ղեկավարին, և վերջինիս աշխատակազմը, որը մշակում է զարգացման ռազմավարությունը, կազմում է բյուջեի նախագծերը և իրականացնում է կառավարման այլ գործառույթներ, այդ թվում՝ ԵՄ-ից ստացված միջոցների տնօրինումը:

Շրջանի կարգավիճակ ունի 314 տարածքային միավոր, որոնք իրենց հերթին բաժանված են համայնքների, ինչպես նաև 66 քաղաք: Քաղաքներում բնակիչներն ընտրում են թե՛ քաղաքապետներին, թե՛ քաղաքային խորհուրդների անդամներին, իսկ մյուս շրջաններում՝

միայն խորհուրդների անդամներին, որոնք էլ շրջանի ղեկավարներին են ընտրում: Շրջանների իրավասության սահմաններում են առողջապահական հաստատությունները, կադաստրը, ավագ դպրոցները, որոշ ավտոճանապարհների շահագործումը, տրանսպորտային միջոցների գրանցումը և օտարերկրացիների աշխատանքային թույլտվությունները:

Շրջանների կազմի մեջ մտնող համայնքների և շրջանի կարգավիճակ ունեցող քաղաքների իրավասությունները բազմազան են: Դրանց իրականացման համար համայնքները որոշ հարկեր և տուրքեր տնօրինելու իրավասություն ունեն: Շրջաններն են զբաղվում կոմունալ ծառայությունների կազմակերպմամբ, ջրային ռեսուրսների կառավարմամբ, կանաչապատմամբ, հանրային տարածքների և ճանապարհների բարեկարգմամբ, սոցիալական ծառայությունների, այդ թվում՝ սուբսիդավորվող բնակարանների տնօրինմամբ, նախնական և միջնակարգ կրթության կազմակերպմամբ, մշակութային հաստատությունների աշխատանքի կազմակերպմամբ, կատարում են այլ գործառույթներ:

4.2.2. Տեղական ինքնակառավարումը Հունգարիայում

Հունգարիայի ամենախոշոր տարածքային միավորները յոթ տարածաշրջաններն են, որոնք տեղական ինքնակառավարման մակարդակով ներկայացված չեն. դրանց գործառույթներն են վիճակագրության վարումը և ենթակառուցվածքային նախագծերի իրականացումը: Տեղական ինքնակառավարումն իրականացվում է 19 մարզի և դրանց հավասարեցված մայրաքաղաք Բուդապեշտի, մարզերի կազմի մեջ մտնող 174 շրջանի և 23 քաղաքի, ինչպես նաև շրջանային ենթակայության համայնքների և Բուդապեշտի 23 թաղամասի մակարդակներում: Բուդապեշտի, նրա թաղամասերի և 23 քաղաքի ղեկավարներն ընտրվում են մեծամասնական եղանակով, քաղաքային և շրջանային խորհուրդների անդամները՝ համամասնական եղանակով, իսկ դրանց ղեկավարները՝ խորհուրդների կողմից:

Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները մեծ մասամբ համընկնում են լեհականների հետ: Սակայն, օրինակ, տնտեսվարողների համար տեղական հարկի սահմանումը համայնքների իրավասությունն է (բացի մի քանի տասնյակ գյուղական համայնքներից, գրեթե ամենուր սահմանված է 2 տոկոս հարկ), իսկ տրանսպորտային միջոցների գրանցումը և դրա համար տուրքեր հավաքելը, ինչպես նաև գույքահարկի սահմանումը՝ համայնքների և Բուդապեշտի թաղամասերի իրավասությունը: Այսպես, Բուդապեշտի որոշ թաղամասերում անշարժ

գույքը գույքահարկով չի հարկվում, որոշներում բնակարանները չեն հարկվում, իսկ կոմերցիոն նշանակության գույքը հարկվում է: Որոշներում էլ չեն հարկվում միայն այն բնակարանները, որոնցում հաշվառված է սեփականատերը: Բացի դրանից՝ վերջին տարիներին Բուդապեշտի կենտրոնում «AirBnB» և նմանատիպ կայքերի միջոցով օրավարձով հանձնվող բնակարանների քանակի կտրուկ աճի պատճառով որոշ թաղամասեր լրացուցիչ լիազորություն են տվել համատիրություններին. բնակիչների ժողովի որոշմամբ օրավարձով հանձնվող բնակարանների սեփականատերերի համար սպասարկման վճարը, որն ընդգրկում է աղբահանությունը, ընթացիկ վերանորոգումը և որոշ այլ ծառայություններ, կարող է կրկնապատկվել:

Հունգարիայի առանձնահատկություններից է այն, որ պետությունը պաշտոնապես ճանաչում է «պատմական փոքրամասնություններին»՝ նրանց, որոնց համայնքները երկրի տարածքում ձևավորվել են ոչ պակաս, քան հարյուր տարի առաջ, և նրանց համար ևս սահմանված է ինքնակառավարման համակարգ: Տասներեք ազգային փոքրամասնություններ՝ հայերը, ռուսիները, սլովենացիները, բուլղարացիները, հույները, լեհերը (որոնցից յուրաքանչյուրի քանակը երկրի բնակչության քանակի 0,1 տոկոսից պակաս է), ուկրաինացիները, սերբերը, խորվաթները, սլովակները, ռումինացիները (0,1-0,4 %), գերմանացիները (1,8 %) և գնչուները (3,2 %), (տվյալները՝ ըստ Central Statistical Office of Hungary, 2016), ունեն համապետական ազգային խորհուրդներ: Տարբեր քաղաքներում, համայնքներում և Բուդապեշտի թաղամասերում ևս կան ընտրովի ազգային խորհուրդներ, որոնք, ֆինանսավորվելով պետական բյուջեից, կարող են բացել մշակութային կենտրոններ, կիրակնօրյա դպրոցներ, հրատարակել գրքեր և պարբերականներ, կազմակերպել ազգային լեզուների ուսուցում, համերգներ, ցուցահանդեսներ և այլ միջոցառումներ: Փոքրամասնություններն իրենց կազմից ընտրում են նաև մեկական խորհրդարանական խոսնակ. վերջիններս մասնակցում են խորհրդարանի աշխատանքին խորհրդակցական ճայնի իրավունքով: Հրեաները, որոնց քանակը բնակչության շուրջ 1 %-ն է կազմում, չեն օգտվել նույն կարգավիճակից՝ նախընտրելով ինքնակազմակերպման այլ եղանակ՝ հասարակական կազմակերպության կարգավիճակով:

4.3. Քաղաքացիական հասարակության դերը

Քաղաքացիական հասարակության դերն ակներև էր կոմունիստական վարչակարգերի դեմ պայքարում. դա նկատելի էր թե՛ վերը նշված լեհական «Համերաշխություն» անկախ արհեստակցական միության, չեխական «Խարտիա-77»-ի, թե՛ այլ օրինակներից: ԽՍՀՄ-ի օրոք Հայաստանում և մյուս միութենական հանրապետություններում ևս եղել են այլախոհության և ընդհատակյա գործունեության դրսևորումներ:

Հանրահայտ է Լեհաստանի կաթոլիկ եկեղեցու՝ հատկապես ազգությամբ լեհ, Հռոմի պապ ընտրվելուց հետո Հովհաննես Պողոս Բ անունը կրող Կարոլ Վոյտիլայի՝ երկրի ժողովրդավարացմանը ուղղված գործունեությունը: Կաթոլիկ, իսկ որոշ երկրներում՝ նաև բողոքական եկեղեցիները ժողովրդավարացման ջատագով քաղաքացիական հասարակության հատված են հանդիսացել արևելաեվրոպական մի շարք երկրներում, ինչպես նաև որոշ լատինամերիկյան՝ ռազմական վարչակարգերի կողմից կառավարվող երկրներում: Աշխարհիկության սկզբունքի պահպանման պայմաններում կրոնական հաստատություններն ու նրանց կողմից կազմակերպվող բարեգործական, ուսումնական և այլ կառույցները քաղաքացիական հասարակության կարևոր բաղադրիչներ են. դա բավական տեսանելի է պայմանական Արևմուտքի մաս հանդիսացող երկրներում:

Իրավիճակը բավական տարբեր է հետխորհրդային մի շարք երկրներում, որտեղ, սկսած 1990-ականներից, եկեղեցին «հոգևոր վերածննդի» անվան տակ տարբեր չափերով սերտաճել է պետական իշխանության հետ՝ վերջինիս քաղաքական շահերը սպասարկելով և փոխարենը նյութական բարիքներ ստանալով: Վերջին տարիներին Լեհաստանում ևս նկատելի է, որ մեծ հեղինակություն վայելող կաթոլիկ եկեղեցին աջակողմյան ամբոխավար կառավարության կողմից ներքաշվում է քարոզչության մեջ՝ հղիության ընդհատման, խտրականության դեմ ուղղված օրենսդրությանն առնչվող հակասությունների և այլ պատրվակներով:

Արժևորելով բռնատիրության դեմ պայքարի ընթացքում քաղաքացիական հասարակության կառույցների դերակատարությունը, պետք է նշել, որ ժողովրդավարական համակարգերում՝ ինքնակազմակերպման և ինքնարտահայտման ազատության պայմաններում, դրանք կատարում են բազմաթիվ գործառույթներ:

Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող, անհրաժեշտության դեպքում՝ նաև դատապաշտպանի անվճար

ծառայություններ մատուցող, բնապահպանական, բարեգործական և այլ կազմակերպությունները կարևոր դերակատարում ունեն կառավարման մարմինների նկատմամբ վերահսկողության, որոշ չափով՝ նրանց զսպման, բարեփոխումների ջատագովության, ոչ ֆորմալ կրթության և այլ ոլորտներում: Քաղաքացիական հասարակության կառույցները հաճախ նաև փոխլրացնում են տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքը: դա կարող է արտահայտվել դպրոցների ու նախադպրոցական հաստատությունների հոգաբարձուների խորհուրդների գործունեությամբ, բարեգործական նախաձեռնություններով, տարածքի բարեկարգմանն ու համայնքային նշանակության այլ խնդիրների լուծմանը նպատակաուղղված կամավորական աշխատանքով և այլն:

Կամավորական միավորումներ կազմելու երկարաժամկետ, արմատավորված ավանդույթ ունեցող երկրներում ինքնակազմակերպվող հասարակական գործունեությունն արտահայտվում է բազմաթիվ այլ ձևերով ևս: Որոշ դեպքերում խոշոր հասարակական կազմակերպությունները կարող են իրենց անդամներին մի շարք ծառայություններ մատուցել՝ փոխլրացնելով այլ կառույցների աշխատանքը: Օրինակ՝ Գերմանիայի ավտոմոբիլային ակումբը (ADAC) ունի 20 միլիոնից ավելի անդամ, որոնց անդամավճարների շնորհիվ տրամադրում է ապահովագրական ծառայություններ, այդ թվում՝ բազմաթիվ այլ երկրներում, ներառյալ՝ անսարք մեքենաների տարահանումը, բժշկական օգնությունը, անհրաժեշտության դեպքում՝ անգամ կազմակերպության սեփական սանիտարական օդանավերով հայրենիք վերադարձը, և այլն:

Առհասարակ, Գերմանիայում մեծ է տարբեր տեսակի ասոցիացիաների (գերմ. Verein) թե՛ գրանցված իրավաբանական անձանց, թե՛ կամավորական խմբերի դերակատարումը: այդպիսիք են բարեգործական, բնապահպանական կազմակերպությունները, ստեղծագործական միավորումները, մարզական ակումբները, փոխօգնության կառույցները, այդ թվում՝ ծնողների կողմից կազմակերպվող մանկապարտեզները, և այլն (Grenier, 2019a): Կան նաև ցանկացած տեսակի, նույնիսկ՝ հումորային կամ տարօրինակ հոբբիների ակումբ-ասոցիացիաներ (Grenier, 2019b): Գերմանացիների մեծ մասը որևէ ասոցիացիայի, առավել հաճախ՝ մի քանիսի անդամ է:

Ինքնակազմակերպվող և կամավորության սկզբունքով գործող միավորումների ավանդույթը կարևոր է ոչ միայն իշխանական մարմինների գործունեությունը վերահսկելու կամ բացերը լրացնելու առումով: Միավորելով տարբեր տարիքի, մասնագիտությունների

և քաղաքական հայացքների մարդկանց՝ այդպիսի կառույցները նպաստում են փոխըմբռնմանն ու սոցիալականացմանը՝ որոշակիորեն կանխելով քաղաքական բևեռացումը, իսկ ավելի լայն իմաստով՝ հասարակության մասնատումը առհասարակ: Այս առումով կարևոր է, որ Հայաստանում ևս վերջին տարիներին, բացի գրանցված հասարակական կազմակերպություններից, ի հայտ են գալիս բավական շատ տարբեր նախաձեռնություններ՝ լինեն դրանք բարեգործական, փոխօգնության, բնապահպանական, մշակութային ժառանգության պահպանման, կամ թեկուզ քայլարշավների կամ որևէ պարատեսակի սիրահարների: Սակայն Հայաստանի հասարակությունը դեռևս չի յուրացրել քաղաքացիական հասարակությանը բնորոշ վարքը և մշակույթը: Դա արտահայտվում է նրանով, որ գործարար շրջանակները շատ քիչ ֆինանսական ռեսուրս են հատկացնում քաղաքացիական նախաձեռնություններին, անդամավճարներ գրեթե չեն հավաքվում, արհմիություններն անմխթիար վիճակում են, կարելի է ասել՝ չկան, և քաղաքացիական հասարակության գործունեության համար ռեսուրսի մեծ մասը գալիս է միջազգային և արևմտյան պետական կամ մասնավոր դոնորներից: Հատկանշական է նաև, որ բարեգործությունը բավական զարգացել է վերջին տարիներին. Հայաստանի քաղաքացիները և սփյուռքը որոշակի ռեսուրս են հատկացնում կամավոր կերպով բարեգործական գործունեության՝ սոցիալական հարցեր հասցեագրելու և հումանիտար օգնության համար, մինչդեռ պետության վերահսկողության կամ իրավունքների պաշտպանության գործունեության համար անհատները ռեսուրսներ չեն հատկացնում, բուն պետությունից էլ եկող դրամաշնորհների քանակը դեռևս նշանակալի չէ, և դրանց բաշխումը սկսել է փոքր-ինչ արդար դառնալ միայն 2018 թ.-ից հետո: Ռուսաստանի ազդեցությունը Հայաստանում և այն, որ այնտեղ քաղաքացիական հասարակության գործունեությունն այժմ սպառնալիքի տակ է, պարարտ հող են ստեղծում, որպեսզի քաղհասարակության գործունեությունը միտված պետության վերահսկողությանը և բարեփոխումներին, Հայաստանում նույնպես որոշ շրջանակներ հայտարարեն վտանգավոր և ընդդեմ «ազգային արժեքների»:

4.4. Մեդիայի իշխանության մասին

Մամուլի ազատությունը ժողովրդավարության հիմնասյուներից է: Թոմաս Զեֆերսոնը, ըստ հայտնի ասույթի, «կառավարություն առանց լրագրերի կամ լրագրեր առանց կառավարության» երկընտրանքի դեպքում կգերադասեր վերջին տարբերակը: Այլ առիթով Զեֆերսոնը նաև նշել էր,

որ ազատությունը կախված է մամուլի ազատությունից, որը չի կարող սահմանափակվել, այլապես առհասարակ կվերանա:

Մամուլի ազատությունը մշտապես սպառնալիք է դիտվել ոչ ժողովրդավարական վարչակարգերի կողմից: Թեև ԽՍՀՄ-ում խոսքի ազատությունը ձևականորեն երաշխավորված էր սահմանադրությամբ, այլընտրանքային լրատվություն չկար, բացի «սամիզդատից», որն առաջացավ մոտ 40-ականների կեսերից. դրա ստեղծողներն էլ դաժանորեն հետապնդվում էին: Բացի պաշտոնապես թույլատրված անխտիր բոլոր հրապարակումների գրաքննությունից, խոչընդոտներ էին ստեղծվում նաև իշխող գաղափարախոսությանը հակասող այլ տեղեկությունների տարածման համար՝ օտարերկրյա ռադիոհաղորդումների խլացմամբ և այլն:

Ժամանակակից ավտորիտար ու «հիբրիդային» վարչակարգերի կողմից անկախ լրատվությունը նույնպես համարվում է սպառնալիք: «Ա1+» և «Նոյյան տապան» հեռուստաընկերություններին 2002 թ. եթերից զրկելը բավական տիպիկ օրինակ է: Յուրօրինակ է Եվրոպայի սրտում գտնվող հունգարական պետության վարչապետ Վիկտոր Օրբանի դեպքը, որն օրինակելի հասարակարգ է համարում Ռուսաստանի և Թուրքիայի «ոչ-լիբերալ ժողովրդավարությունները»: Օրբանի ստեղծած համակարգում կուսակցական մենաշնորհի է հաստատվել հանրային լրատվամիջոցների նկատմամբ, մասնավոր հեռուստաընկերություններին գովազդի լրացուցիչ հարկման ու այլ միջոցների կիրառմամբ պարտադրվել է զերծ մնալ քաղաքական թեմաների պատշաճ լուսաբանումից, ստեղծվել են կուսակցականացված օլիգարխներին պատկանող լրատվամիջոցների ցանցեր, որոշ լրատվամիջոցների սեփականատերեր հարկային ճնշումների և այլ պատճառներով ստիպված են եղել վաճառել դրանք (Magyar, 2016, pp. 209-218): Այլ երկրներում ևս հաճախ առկա են ԶԼՄ-ների նկատմամբ խոշոր բիզնեսի վերահսկողությամբ պայմանավորված խնդիրներ, օրինակ՝ հենց այսօրվա Հայաստանում:

Տեղեկատվությունը արատավոր երևույթները բացահայտելու, միննույն ժամանակ նաև հասարակական կարծիք ձևավորելու և քաղաքական գործընթացների վրա ազդելու հզոր գործիք է: Կարելի է վերհիշել վերջին տասնամյակների հայտնի օրինակներից մի քանիսը. 1974 թ. ԱՄՆ նախագահ Ռիչարդ Նիքսոնի հրաժարականը՝ քաղաքական հակառակորդների ապօրինի գաղտնալսումը լրագրողների կողմից բացահայտելուց հետո, 21-րդ դարի սկզբին ամերիկյան զինծառայողների կողմից Իրաքում և Աֆղանստանում կատարված ապօրինությունների

բացահայտումները, 90-ականների Ռուսաստանում՝ Չեչնիայում պատերազմի օրոք չեչենների մասին ստեղծված բացասական հասարակական կարծիքի տարածումը, 2000 թ. նախագահի թեկնածու Վ. Պուտինի հակառակորդների դեմ քարոզարշավը և այլն:

Վերջին տարիներին ավանդական լրատվամիջոցների՝ հեռուստատեսության, ռադիոյի, տպագիր մամուլի համեմատ ավելի քիչ ծախսեր պահանջող առցանց գործակալությունների, սոցիալական ցանցերի, բլոգների, վիդեոհոսթինգի և այլ հնարավորությունների զարգացումը կարող է նպաստել այլընտրանքային տեղեկատվության ազատ տարածմանը, ինչը կարևոր է ավտորիտար և «հիբրիդային» վարչակարգերի պայմաններում: Սակայն մյուս կողմից, ավտորիտար վարչակարգերն իրենք «հիբրիդային» մարտավարության շրջանակում նույն միջոցներն օգտագործում են կեղծ լուրեր, ապատեղեկատվություն, դավադրության տեսություններ և այլ վնասակար նյութեր տարածելու համար՝ ոչ միայն հասարակություններին մղելով դեպի կեղծիքներին խորապես հավատալը, այլև հարցականացնելով, ընդհանուր առմամբ, լիբերալ ժողովրդավարության նախագիծը:

Փաստորեն ներկա պայմաններում ընթանում է զանգվածային լրատվության դաշտի գլոբալ վերաձևավորում: Հնարավոր չէ պնդել, որ կպահպանվեն 1980-90-ականներին ժողովրդավարացած պետությունների համար ուղենիշ հանդիսացած, իսկ մինչ այդ Արևմտյան երկրների բարօրությանը նպաստած խոսքի ազատության չափանիշները, քանի որ կեղծ տեղեկատվության և ատելության խոսքի համաշխարհային տարափոշատերին տրամադրում է խոսքի ազատությունը սահմանափակելու ուղիներ փնտրել: Ավելին՝ այս խնդիրն էլ ավելի սուր բնույթ է ստանում՝ երբ այսպես կոչված «ինքնության քաղաքականությունը»²¹⁴ միահյուսվում է «հետճշմարտության»²¹⁵ իրադրություններին:

²¹⁴ Ինքնության քաղաքականություն (identity politics) այն քաղաքականությունն է, որը որպես բազային արժեք առաջ է մղում տվյալ սոցիալական կամ այլ խմբի ինքնության որևէ տարբերակիչ հատկանիշ, ինչպես, օրինակ, ռասան, գենդերը, էթնիկ պատկանելությունը և այլն: Այդպիսի քաղաքականության կողմնակիցները հաճախ հանրային ճշմարտության փնտրտույթը զրհարեղում են իրենց ինքնության որոշակի հատկանիշն առաջ մղելուն, կազմաքանդում «իշխանական» և «հեղինակավոր» ճշմարտությունները՝ հայտարարելով, որ դրանք ստեղծվել են ի հաշիվ իրենց ինքնությունները բացասելու կամ դրանք հաշվի չառնելով:

²¹⁵ Հետճշմարտություն (post-truth). վերջին ժամանակները բնութագրող եզր, որը նշանակում է «օբյեկտիվ» հանրային ճշմարտության բացասում, երբ էմոցիոնալ կամ «կարծիքի» «ճշմարտությունը» գերադասվում է դրան, և ինքն է դառնում հանրային քաղաքականության հիմք՝ ընդգրկելով հասարակության խոշոր խմբեր: Հաճախ հանդես է գալիս ինքնության քաղաքականության հետ միահյուսված:

4.5. Բիզնեսի և կորպորացիաների իշխանության մասին

«Հարուստները» և իշխանությունը միշտ էլ փոխկապակցված կամ փոխլրացնող են հանդես եկել պատմականորեն, սակայն բիզնեսի ազդեցությունն իշխանության և հասարակության վրա հատկապես դիտարկելի է արդյունաբերական հեղափոխությունից ի վեր, քանի որ այդ ժամանակ էր, որ ժողովրդավարության գաղափարները ձևավորվեցին և այն հաստատելու փորձերն ակտիվացան Արևմուտքում, իսկ չէ՞ որ իդեալական ժողովրդավարությունը չի ենթադրում անհավասար հնարավորություններ՝ կախված փողի քանակից:

Արդյունաբերական հեղափոխության առաջատար ԱՄՆ-ում զգալի է խոշոր բիզնեսի դերը գրադարանների, համալսարանների և այլ ուսումնական հաստատությունների ստեղծման գործում, տարբեր բարեսիրական նախաձեռնություններում, սակայն, մյուս կողմից, 1890 թ. ի վեր անհրաժեշտ եղավ ընդունել մենաշնորհների ձևավորումը կանխարգելելուն ուղղված օրենքներ, որոնք որոշ լրացումներով գործում են մինչ այժմ: Միաժամանակ, ԱՄՆ-ում առկա է կորպորատիվ շահերն օրենսդրական մակարդակում ջատագովելու՝ լոբբինգի օրինական, հատուկ մշակված օրենսդրությամբ կարգավորվող գործընթաց:

Վերջին տասնամյակներում ևս խոշոր ընկերությունները, մասնավորապես SS ոլորտի հսկաները, աչքի են ընկնում միլիարդավոր դոլարների հասնող բարեգործական ծրագրերի իրականացմամբ: Միևնույն ժամանակ, սոցիալական ցանցերը և տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված այլ կորպորացիաները ձեռք են բերել քաղաքական և հասարակական գործընթացների վրա ազդելու անհամաչափ հնարավորություններ՝ վերահսկողության և կարգավորումների պակասի պայմաններում: Մտահոգիչ է նաև, որ ժողովրդավարական երկրներում ազդեցության լծակներ ունեցող և դրանք օգտագործող ընկերությունները՝ «Գուգլը» և այլք, Չինաստանի և այլ ոչ ժողովրդավարական երկրների վարչակարգերի հետ հարաբերվելիս սովորաբար նախընտրում են հարմարվել նրանց թելադրած պայմաններին՝ հանուն շահույթի:

Չնայած որոշ բացասական երևույթներին՝ կայացած ժողովրդավարական համակարգեր ունեցող երկրներում՝ օրենսդրական կարգավորումների, զսպումների, միաժամանակ նաև բարեգործության ավանդույթների առկայության պայմաններում, բիզնեսն ունի լուրջ դերակատարություն հասարակական զարգացման գործում: Այդ թվում՝ միջին և փոքր բիզնեսները, որոնք, ապահովելով աշխատատեղերի մեծ մասը, անհարկի մասշտաբային քաղաքական ազդեցության

ամբիցիաներ հաճախ չունեն: Դրանք հիմնական ներդրումն են կատարում տեղական բյուջեում, լայնորեն ներգրավված են բնակավայրերի բարեկարգման, կրթական և այլ նախաձեռնություններում, օժանդակում են քաղաքացիական հասարակության կառույցներին և ընդհանրապես փոխկապակցված են համայնքային կյանքի հետ:

Այլ է իրավիճակն ավտորիտար և «հիբրիդային» վարչակարգերի պայմաններում: Քաղաքական իշխանության և խոշոր բիզնեսի սերտաճամամբ առաջացած խնդիրները հայտնի են հենց Հայաստանի օրինակից. հարկերի վճարումից խուսափելը, միջին և փոքր բիզնեսի գործունեությանը խոչընդոտելը, տնտեսական մենաշնորհներ ստեղծելը, բարեգործությունը քաղաքական ազդեցության լծակ դարձնելը և այլ արատավոր երևույթները շարունակաբար նպաստում են ոչ միայն սոցիալական շերտավորմանն ու լարվածության աճին, այլև խորացնում են ժողովրդավարության դեֆիցիտը՝ իշխանական ճյուղերի բաժանումը դարձնելով զուտ ձևական, երբեմն էլ առհասարակ իմաստազրկելով գաղափարական բանավեճերն ու ընտրական գործընթացները:

5. Ամփոփում

Կայուն ժողովրդավարական համակարգերում երկարաժամկետ զարգացման արդյունքում ձևավորվել են ոչ միայն գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների, այլև քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների, բիզնեսի և այլ կառույցների փոխկապակցվածության ու միմյանց վերահսկելու և հակակշռելու մեխանիզմներ, որոնք էլ միասնաբար ապահովում են տարբեր մակարդակներում ժողովրդավարական գործընթացների հարատևությունը: Երբ սահմանադրական և օրենսդրական դաշտում առկա են արդյունավետ կարգավորումներ, օրենքի գերակայություն, միաժամանակ՝ հասարակական համաձայնություն, առանձին անձանց կամ խմբային շահերը չեն կարող սպառնալ կայունությանն ու ինքնակարգավորման ունակությանը: Վիշեգրադյան քառյակի փորձը ցույց է տալիս, որ, չնայած դժվարություններին, ժողովրդավարացող և նույնիսկ նորաստեղծ պետություններն ի վիճակի են կայուն պետականություն ստեղծել՝ եթե կա հասարակական կոնսենսուս, վճռականություն և համայնքային գործողությունների մշակույթ: Մյուս կողմից, համաշխարհային զարգացումները նաև խնդրականացնում են ժողովրդավարացման պարադիգմը, որը գերիշխող էր Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր՝ մինչև վերջին երկու տասնամյակը,

և պահանջում գիտակցել, որ ժողովրդավարության ստեղծումը, զարգացումը և պահպանումն ինքնըստինքյան տեղի ունեցող գործընթաց է, այլ ամեն հասարակությունից, որն ուզում է ժողովրդավարություն կառուցել, պահանջում է դրա կարևորության գիտակցում, դրա կառուցմանը նվիրում և անխոնջ աշխատանք, պայքար հանուն ժողովրդավարության, միևնույն ժամանակ՝ շատ ուշադիր ընկալում համաշխարհային զարգացումների, որոնք և՛ հնարավորությունների, և՛ նոր ռիսկերի անընդհատ աղբյուր են:

6. Օգտագործված աղբյուրներ

- Ágh, A. (1995). The 'comparative revolution' and the transition in Central and Southern Europe. In: G. Pridham, ed., *Transitions to Democracy: Comparative Perspectives from Southern Europe, Latin America and Eastern Europe*, 1st ed. Cambridge: Cambridge University Press, pp. 403-424. Original edition: *Journal of Theoretical Politics*, 5(1993), pp. 231-252.
- Barber, T. (1995). Did Slovak PM plan kidnapping of President's son? *The Independent*, [online]. Available at: <https://www.independent.co.uk/news/world/did-slovak-pm-plan-kidnapping-of-presidents-son-1600357.html> [Accessed 15 Sept. 2020].
- Biuletyn Dolnośląski. (1980). *Katyń, special issue, March-April*. [samizdat magazine] Open Society Archives, collection 300-55-1-3. Budapest.
- Bozóki, A. (2003). *Central European ways to democracy*. Glasgow: Centre for the Study of Public Policy, University of Strathclyde.
- Bratniak. (1980). *Issue 22, March-April*. [samizdat magazine] Open Society Archives, collection 300-55-1-7. Budapest.
- Bruszt, L. and Stark, D. (1992). Remaking the political field in Hungary: From the politics of confrontation to the politics of competition. In I. Banac, ed., *Eastern Europe in Revolution*, 1st ed. Ithaca – London: Cornell University Press, pp. 13-55.
- Central Statistical Office of Hungary, (2016). *Mikrocenzus 2016*. 1st ed. [pdf] Budapest. Available at http://www.ksh.hu/docs/hun/xftp/idoszaki/mikrocenzus2016/mikrocenzus_2016_12.pdf [Accessed 12 Sept. 2020].
- Cienciala, A. M., Lebedeva, N. S. and Materski, W. (2007). *Katyn: A crime without punishment*. New Haven: Yale University Press.
- Committee to Protect Journalists, (2020). *Ján Kuciak*. [online] Available at: <https://cpj.org/data/people/jan-kuciak/> [Accessed 18 Sept. 2020].
- Council of Europe. (2012). Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա [online] Available at: <https://rm.coe.int/168071b62f> [Accessed 29 Jan. 2021].
- Deutsche Welle, (2017). *Thousands Turn Out for Anti-corruption Protest in Slovakia*. [online] Available at: <https://www.dw.com/en/thousands-turn-out-for-anti-corruption-protest-in-slovakia/a-39123092> [Accessed 17 Sept. 2020].
- Dostál, O. (2006). Ethnic minorities. In: M. Bútorá, M. Kollár and G. Mesežnikov, eds., *Slovakia 2005. A Global Report on the State of Society*, 1st ed. Bratislava: Institute for Public Affairs, pp. 130-145.
- Dostál, O. (2007). Ethnic minorities. In: M. Bútorá, G. Mesežnikov and M. Kollár, eds., *Slovakia 2006. A Global Report on the State of Society*, 1st ed. Bratislava: Institute for Public Affairs, pp. 169-183.
- Ekiert, G. (1995). Democratization processes in East Central Europe: A theoretical reconsideration. In: G. Pridham, ed., *Transitions to Democracy: Comparative Perspectives from Southern Europe, Latin America and Eastern Europe*, 1st ed. Cambridge: Cambridge University Press, pp. 329-357. Original edition: *British Journal of Political Science*, 21(1991), pp. 285-313.

- Elster, J., Offe, C., Preuss U. K., Boenker, F., Goetting, U. and Rueb, F. W. (1998). *Institutional design in post-communist societies. Rebuilding the ship at sea*. Cambridge: Cambridge University Press.
- Garton Ash, T. (1983). *The Polish revolution: Solidarity 1980-82*. London: Jonathan Cape.
- Grenier, E. (2019a). *Get to Know the Concept of the German Verein*. [online] Available at: <https://www.dw.com/en/get-to-know-the-concept-of-the-german-verein/a-48306152> [Accessed 17 March 2021].
- Grenier, E. (2019b). *10 Quirky Associations You Can Join in Germany*. [online] Available at: <https://www.dw.com/overlay/media/en/10-quirky-associations-you-can-join-in-germany/48029900/48306152> [Accessed 17 March 2021].
- Grigoryan, A. (2010). Identity building in Hungary and Slovakia and the status of the Hungarian minority in Slovakia. In: R. Rajabov, S. Grigoryan and V. Kolbaya, eds., *History and Identity: The South Caucasus and Other Regions in Transition*, 1st ed. Yerevan: Edit Print, pp. 298-335.
- Grigoryan, A. (2016). The attitudes towards European integration in Eastern Partnership states: the significance of elites' commitment for further engagement, In: G. C. Pascariu, T. L. Moga and L. M. Simionov, eds., *EURINT 2016: The Eastern Partnership under Strain – Time for a Rethink?*, 1st ed. Iași: Centre for European Studies, Alexandru Ioan Cuza University, pp. 131-148.
- Grigoryan, A. (2019). Armenia's path to democratization by recursive mass protests. *Caucasus Survey*, 7(2), pp. 157-175.
- Gyárfášová, O. (2008). National populism in Slovakia: Political attitudes and views of the public. In: G. Mesežnikov and O. Gyárfášová, eds., *National Populism in Slovakia*, 1st ed. Bratislava: Institute for Public Affairs, pp. 35-51.
- Henderson, K. and Robinson, N. (1997). *Post-communist politics: An introduction*. London: Prentice Hall.
- Janos, A. C. (1996). What Was Communism: A Retrospective in Comparative Analysis. *Communist and Post-Communist Studies*, 29(1), pp. 1-24.
- Jasiewicz, K. (2003). Elections and voting behaviour. In: S. White, P. G. Lewis and J. Batt, eds., *Developments in Central and East European Politics*, 5th ed. Durham: Duke University Press, pp. 173-189.
- Judt, T. R. (1992). Metamorphosis: The democratic revolution in Czechoslovakia. In: I. Banac, ed., *Eastern Europe in Revolution*, 1st ed. Ithaca – London: Cornell University Press, pp. 96-116.
- Kis, J. (1989). *Politics in Hungary: For a democratic alternative*. Boulder, Colorado: Social Science Monographs.
- Kitschelt, H., Mansfeldova, Z., Markowski, R. and Tóka, G. (1999). *Post-communist party systems: Competition, representation, and inter-party cooperation*. Cambridge: Cambridge University Press.
- Kornai, J. (1992). *The socialist system: The political economy of communism*. Princeton: Princeton University Press.
- Lijphart, A. (1969). Consociational Democracy. *World Politics*, 21(2), pp. 207-225.
- Lijphart, A. (1992). Democratization and Constitutional Choices in Czecho-Slovakia, Hungary and Poland, 1989-1991. *Journal of Theoretical Politics*, 4(2), pp. 207-223.

- Linz, J. J. (1995). Transitions to democracy. In: G. Pridham, ed., *Transitions to Democracy: Comparative Perspectives from Southern Europe, Latin America and Eastern Europe*, 1st ed. Cambridge: Cambridge University Press, pp. 107-128. Original edition: *The Washington Quarterly*, vol. 13(1990), pp. 143-164.
- Linz, J. J. and Stepan, A. (1996). *Problems of democratic transition and consolidation: Southern Europe, South America, and post-communist Europe*. Baltimore: Johns Hopkins University Press.
- Locke, J. (1884). *Two treatises on civil government*. London: George Routledge and Sons.
- Magyar, B. (2016). *Post-communist mafia state: The case of Hungary*. Budapest: CEU Press.
- Marušiak, J., Duleba, A. and Bates-Melišová, Z. (2003). Foreign policy: Main trends, bilateral relations, regional co-operation. In: G. Mesežnikov, M. Kollár and T. Nicholson, eds., *Slovakia 2002. A Global Report on the State of Society*, 1st ed. Bratislava: Institute for Public Affairs, pp. 261-310.
- Marušiak, J., Bates, Z., Duleba, A., Strážay, T. and Žemlová-Shepperd, J. (2007). Foreign policy: Main trends, bilateral relations, regional cooperation. In: M. Bútora, G. Mesežnikov and M. Kollár, eds., *Slovakia 2006. A Global Report on the State of Society*, 1st ed. Bratislava: Institute for Public Affairs, pp. 247-310.
- Mathernová, K. and Renčko, J. (2006). "Reformology": The Case of Slovakia. *Orbis*, 50(4), pp. 629-640.
- Mesežnikov, G. (2008). National populism in Slovakia: Actors, issues, strategies. In: G. Mesežnikov and O. Gyárfášová, eds., *National Populism in Slovakia*, 1st ed. Bratislava: Institute for Public Affairs, pp. 7-34.
- Mesežnikov, G., Gyárfášová, O., Bútora M. and Kollár, M. (2008). Slovakia. In: G. Mesežnikov, O. Gyárfášová and D. Smilov, eds., *Populist Politics and Liberal Democracy in Central and Eastern Europe*, 1st ed. Bratislava: Institute for Public Affairs, pp. 101-130.
- Montesquieu, C. L. (1777). *Complete works, vol. 1 The spirit of laws*. London: T. Evans and W. Davis.
- Némethová, D. and Öllös, L. (2003). Hungarians in the Slovak government. In: M. Robotin and L. Salat, eds., *A New Balance: Democracy and Minorities in Post-Communist Europe*, 1st ed. Budapest: Open Society Institute, pp. 113-140.
- Pridham, G. (2002). Slovakia's Relations with the European Union 1998-2002: Political Conditionality, Its Effects and Its Limitations. *Slovak Foreign Policy Affairs*, 3(2), pp. 75-89.
- Przeworski, A. (1990). The Choice of Institutions in the Transition to Democracy: A Game Theoretic Approach. In: *The Present and Future of Party/State Apparatus in Peaceful Transitions*. Budapest: Central European University.
- Ruane, K. (1982). *The Polish challenge*. London: British Broadcasting Corporation.
- Slovak Spectator, (2016). *People Rallied in Protest against Kotleba*. [online] Available at: <https://spectator.sme.sk/c/20112473/people-rallied-in-protest-against-kotleba.html> [Accessed 15 Sept. 2020].
- Stephenson, M.C. (2016). *Specialised anti-corruption courts: Slovakia*. 1st ed. [pdf] Bergen, Norway: U4 Anti-corruption Resource Centre. Available at <https://www.u4.no/>

u4.no/publications/specialised-anti-corruption-courts-slovakia/ [Accessed 17 Sept. 2020].

- The Katyn Massacre History. Available at <https://katynpromemoria.pl/the-history-of-katyn-massacre/?lang=en> [Accessed 3 Feb. 2022].
- Urban, J. (1992). *The powerlessness of the powerful*. Unpublished manuscript.
- Weschler, L. (1989). Reporter at large (Poland). *New Yorker*, 13 November.



Նաիրա Մկրտչյան

Նաիրա Մկրտչյանը փիլիսոփայական գիտությունների թեկնածու է, դոցենտ: Դասավանդում է Երևանի պետական համալսարանում: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է անցումային հասարակություններին վերաբերող հիմնախնդիրներ, սոցիալական և հումանիտար գիտությունների իմացաբանական և մեթոդաբանական հարցեր, ինչպես նաև արդարության ժամանակակից և հետևառուցապաշտական մի շարք քաղաքական տեսություններ: DAAD/OSI, ASCN, KAAD, DAAD տրամադրած կրթաթոշակներով հետազոտություն է իրականացրել Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիան համալսարանում (Գերմանիա), Ֆրիբուրգի համալսարանում (Շվեյցարիա): Ավելի քան քսան գիտական հրապարակումների հեղինակ է հայերեն, անգլերեն, ռուսերեն և գերմաներեն, որոնց թվում «Սոցիալական ճանաչողություն» (Եր., 2019), «Կոնֆլիկտների սոցիոմշակութային պայմանավորվածությունը փոխակերպվող հասարակություններում» (Եր., 2009) գրքերը: Խմբագրել է նաև ռուսալեզու «Հետխորհրդայինը. դիսկուրսներ և պրակտիկաներ» (Եր., 2019) միջբնագավառային նշանակության հոդվածների ժողովածուն, թարգմանել է ժամանակակից քաղաքական մտածողներ և փիլիսոփաներ Ջ. Բաթլերի, Գ. Չ. Սպիվակի և Ռ. Բորթիի էսսեներից: Քաղաքական տեսության գծով քսան տեսադասախոսությունից բաղկացած դասընթացի հեղինակն է (ցուցադրված է Բուն TV համացանցային հարթակում): Այս ժողովածուում հեղինակել է «Մարդկային համակեցություն, արդարություն, իշխանություն, կամ ինչպես (հանգուցա)լուծել գոյության պարադոքսը» հոդվածը:

Naira Mkrtchyan

Naira Mkrtchyan holds a PhD in Philosophy, and currently is an Associate Professor at the Yerevan State University. Her academic interests include societies in transition, epistemological and methodological problems of the social sciences and humanities as well as contemporary theories of justice and some poststructuralist political theories. Supported by grants from DAAD/OSI, ASCN, KAAD, DAAD she has been a visiting scholar at Ludwig Maximilian University of Munich (Germany), University of Fribourg (Switzerland). She is an author of more than twenty scientific publications in Armenian, English, Russian, and German among which are *Social Cognition* (Yerevan, 2019) and *The Sociocultural Determination of Conflicts in Transforming Societies* (Yerevan, 2009). She also edited the interdisciplinary collection of articles *The Postsoviet: Discourses and Practices* (Yerevan, 2019) and translated the essays by J. Butler, G.Ch. Spivak and R. Rorty. She is the author of twenty video lectures on Political Theory (broadcast on BOON TV Platform). In this collection of articles, she has authored the article *Human Coexistence, Justice, and Power or How to (Re)Solve the Paradox of Existence?*



Գևորգ Տեր-Գաբրիելյան

Գևորգ Տեր-Գաբրիելյանն արձակագիր է և միջազգային զարգացման հանրագետ: Ունի երեսունհինգ տարվա աշխատանքային փորձ մասնավոր, պետական և հասարակական սեկտորներում: Ապրել և աշխատել է վեց երկրներում, իր աշխատանքն ընդգրկել է Եվրասիա տարածաշրջանը՝ Բալկաններից մինչև Կենտրոնական Ասիա, կենտրոնում միշտ ունենալով Հայաստանը: Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ղեկավարն է 2007 թ.-ից: Հրապարակել է արձակ և հանրամատչելի մի շարք գրքեր: Հեղինակ է բազում հոդվածների և էսսեների հայերեն, անգլերեն, ռուսերեն, գերմաներեն: Հեղինակ կամ համահեղինակ և խմբագիր է ուսումնական ձեռնարկների և ժողովածուների: Անձնական կայք. gtergab.com

Gevorg Ter-Gabrielyan

Dr. Gevorg Ter-Gabrielyan is a writer and an international development leader with 35 years of experience working in public and private spheres in transitional countries across the Balkans and Central Asia with a primary focus on Armenia. He leads Eurasia Partnership Foundation, Armenia since 2007. He has authored many books, both fiction and non-fiction, and has written many articles in Armenia, English, Russian and German. He is a developer and editor of several handbooks and manuals, including on anti-corruption, project management, conflict-sensitive reporting, the concepts of tolerance and violence, education, gender etc. His personal website is gtergab.com



Վարսեր Կարապետյան

Վարսեր Կարապետյանն իրավաբան է՝ քրեական արդարադատության ու մարդու իրավունքների, հետազոտության ու վերապատրաստումների ոլորտում ավելի քան տասնհինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձով: Իրավաբանական գիտությունների թեկնածու է, ներկայումս դասավանդում է Երևանի պետական համալսարանում (Հայաստան): Բացի դրանից՝ ստացել է Հրեական քաղաքակրթությունների մագիստրոսի աստիճան Հայդելբերգի համալսարանում (Գերմանիա): 2017-2018 թթ. ակադեմիական տարվա ընթացքում Ֆուլբրայթ փոխանակման ծրագրի (ԱՄՆ Պետական դեպարտամենտ) շրջանակներում հայտարարված կրթաթոշակային ծրագրով վերապատրաստվել է Մինեսոտայի համալսարանում (Մինեսոտա, Մինեսոտա): 2015-2016 թթ. ակադեմիական տարվա ընթացքում վերապատրաստումներ է անցկացրել Հայաստանի ռազմական ինստիտուտներից մեկում՝ «Մարդու իրավունքները զինված ուժերի անձնակազմի համար» թեմայով: Նաև աշխատել է որպես Եվրոպայի խորհրդի փորձագետ՝ ՀՀ դատական օրենսգրքի նախագծի վրա՝ այն միջազգային և եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով: Ներկայումս աշխատում է որպես Ծրագրերի համակարգող Մարդու իրավունքների տուն Երևանում՝ իրավապաշտպան կազմակերպություն, որի առաքելությունն է տրամադրել ապահով և անվտանգ տարածք հայաստանյան իրավապաշտպաններին: Այս ժողովածուում անդրադարձել է Հայաստանի իրավական համակարգին՝ հանրամատչելի ձևով ընթերցողին ներկայացնելով դրա առավել կարևոր կողմերը, հեղինակել է «Ի՞նչ է պարտադիր իմանալ Հայաստանի օրենսդրական և իրավական համակարգի մասին» հոդվածը:

Varser Karapetyan

Varser Karapetyan is a lawyer with over fifteen years of experience in the field of criminal justice system and human rights, research and training. She holds a PhD in Law degree from Yerevan State University (Armenia), where she currently teaches. Besides, she holds a MA degree in Jewish Civilizations from the University of Heidelberg (Germany). For the academic year 2017–2018, she did her fellowship at the University of Minnesota (Minneapolis, MN) in the scope of Fulbright Exchange Activity (US State Department). For the academic year 2015–2016, she conducted a training on the program “Human rights for armed forces personnel” in one of the military institutions in Armenia. Besides, she worked as a Council of Europe expert providing expert opinion on the draft of Judicial Code of the Republic of Armenia, bringing it in line with the international and European standards. Currently, she works as a Program Coordinator at the Human Rights House Yerevan, a human rights defender organization with a mission to provide a safe and secure space for human rights defenders in Armenia. In this collection of articles, she examines the Armenian legal system, introducing its key aspects to the reader in a more accessible way, and is the author of the article entitled *What is obligatory to know about the legislative system of Armenia?*



Արմեն Գրիգորյան

Արմեն Գրիգորյանը Քաղաքականության հետազոտական կենտրոնի համահիմնադիր փոխնախագահն է և Յենայի համալսարանի սլավոնական լեզուների և կովկասագիտության ինստիտուտի «Դիմակայունությունը Հարավային Կովկասում. ԵՄ-ի արտաքին քաղաքականության նոր մոտեցումների հեռանկարները և մարտահրավերները» նախագծի գիտական խորհրդի անդամ: Քաղաքականության մի շարք ամփոփագրերի հեղինակ է, հայաստանյան և արտերկրյա մամուլում հրապարակել է ավելի քան 380 հոդված և մասնակցել հարցազրույցների: Այս ժողովածուում հեղինակել է «Պետական իշխանության և կառավարման մոդելները Վիշեգրադյան քառյակի քաղաքական էվոլյուցիայի համատեքստում» հոդվածը:

Armen Grigoryan

Armen Grigoryan is the Co-Founder and Vice President of the Yerevan-based Centre for Policy Studies, and a member of the Advisory Board of the “Resilience in the South Caucasus: Prospects and Challenges of a New EU Foreign Policy Concept” Project, implemented by the Institute of Slavic Languages and Caucasus Studies, Friedrich Schiller University Jena. He has published several book chapters, journal articles and policy papers, and over 380 articles and interviews in Armenian and foreign media. In this collection of articles, he has authored the article *State power and governance models in the context of the political evolution of the Visegrad countries*.

«ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրատարակված այլ նյութեր

1. ԵՀՀ կրթություն և ուսուցում, 2021, <https://epfarmenia.am/hy/document/EPF-Education-and-Learning>
2. ԵՀՀ գենդերային քաղաքականությունը. տեսական հիմնահարցեր, 2021, <https://epfarmenia.am/hy/document/EPF-Gender-Policy>
3. Խնամակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովների անդամների համար նախատեսված ձեռնարկ, 2021, <https://epfarmenia.am/hy/document/Handbook-for-Guardianship-and-Trusteeship-bodies-2021>
4. Սոցիալական հետազոտության էթիկական ուղենիշներ. կիրառական ուղեցույց, 2021, <https://epfarmenia.am/hy/document/DATA-research-ethics-manual-societies-2021>
5. Բռնության մշակույթը Հայաստանում, 2020, <https://epfarmenia.am/hy/document/Culture-of-Violence-in-Armenia>
6. Բռնության մշակույթը Հայաստանում. անդրադարձ և առաջարկներ, 2020, <https://epfarmenia.am/hy/document/Roots-of-Violence-in-Armenia-recommendations>
7. Հետազոտություն ՀՀ-ում վեճերի այլընտրանքային լուծման ոլորտի վերաբերյալ, 2020, <https://epfarmenia.am/hy/document/Research-on-Alternative-Dispute-Resolution-in-Armenia>
8. Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության վերաբերյալ հետազոտություն, 2020, <https://epfarmenia.am/hy/document/Research-On-Custody-and-Guardianship-Authorities>
9. Պրորբացիայի ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում. Մաս 1, 2020, <https://epfarmenia.am/hy/document/Baseline-research-on-probation-service-in-RA>
10. Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները, 2020, <https://epfarmenia.am/hy/document/Issues-Related-to-the-Rights-of-and-Opportunities-for-Yezidi-Girls-Residing-in-Armenia>
11. Հարաբերություններ առանց շփումների, 2020, <https://epfarmenia.am/hy/document/Relations-without-Interactions>
12. Արմենիա 3.0. հասկանալ 20-րդ դարի Հայաստանը (անգլերեն), 2020, <https://epfarmenia.am/hy/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia>
13. Կրոնի կամ հավատքի ազատության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանում, Վրաստանում և դրանցից դուրս: Համաժողովի հաշվետվություն (անգլերեն), 2019, <https://epfarmenia.am/document/EPF-FoRB-2019-Report>
14. Հայաստանը և տարածաշրջանը, 2019, https://epfarmenia.am/hy/document/Armenia_and_the_Region
15. Հրատարակչական գործընթացի ուղեցույց, 2019, <https://epfarmenia.am/hy/document/publication-algorithm>
16. Այժմեական գիտելիք շահերի արդյունավետ պաշտպանության համար. ձեռնարկ, 2019, <https://epfarmenia.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs>

17. Քննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառումներ, 2019, <https://epfarmeria.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>
18. Համակարգված մտազործունեության մեթոդաբանություն և կրեատիվ խաղեր, 2018, <https://epfarmeria.am/hy/document/MSTA-Creative-Game>
19. Հասարակություն և տեղական ինքնակառավարում. Կազմակերպագործունեական խաղի արդյունքները, 2018, <https://epfarmeria.am/hy/document/OAS-Highlights-CELoG-2018>
20. ԵՀՀ-ն և մշակույթը, գրականությունն ու արվեստը (անգլերեն), 2018, <https://epfarmeria.am/document/EPF-Culture-Literature-Art>
21. Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ, 2017, <https://epfarmeria.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature>

Նախատեսվում է հրապարակել

1. Ուղեցույց. Հանրային խնդրից մինչև քաղաքականության մշակում, <https://epfarmeria.am/hy/document/DATA-Guide-From-public-issue-to-policy-development>
2. Գենդերային մեյնսթրիմինգը քաղաքականության մեջ. ձեռնարկ դասընթացավարների համար, <https://epfarmeria.am/hy/document/DATA-Manual-for-Trainers-Mainstreaming-Gender-into-Policies>
3. Աջակցություն քաղաքացիական հասարակությանը կամակերպագործունեական խաղի հաշվետվություն, <https://epfarmeria.am/hy/document/Creative-Game-Final-Report-2021>
4. Քաղաքացիական կրթության կարողունակությունները գնահատելու գործիքը մշակելու ճանապարհին, <https://epfarmeria.am/hy/document/Towards-a-Civics-Advancement-Measurement-Tool>
5. ԵՀՀ-ի նորարարական մոտեցումը կազմակերպչական կառավարմանը. Փոփոխությունները ԵՀՀ-ի կառավարման գործընթացում 2007-ից ի վեր, <https://epfarmeria.am/hy/document/Changes-in-EPF-management-processes-since-2007-AR-2020>

Publications under the “EPF University” heading

1. EPF Education and Learning. (2021) <https://epfarmeria.am/document/EPF-Education-and-Learning>
2. EPF Gender Policy. (2021) <https://epfarmeria.am/document/EPF-Gender-Policy>
3. Handbook for Guardianship and Trusteeship Bodies (in Armenian). (2021) <https://epfarmeria.am/hy/document/Handbook-for-Guardianship-and-Trusteeship-bodies-2021>
4. Ethical Guidelines for Social Research (in Armenian). (2021) <https://epfarmeria.am/hy/document/DATA-research-ethics-manual-socies-2021>
5. Culture of Violence in Armenia (in Armenian). (2020) <https://epfarmeria.am/hy/document/Culture-of-Violence-in-Armenia>
6. Culture of Violence in Armenia. Reflection and recommendations (in Armenian). (2020) <https://epfarmeria.am/hy/document/Roots-of-Violence-in-Armenia-recommendations>
7. Research on Alternative Dispute Resolution in Armenia. (2020) <https://epfarmeria.am/document/Research-on-Alternative-Dispute-Resolution-in-Armenia>
8. Research On Custody and Guardianship Authorities in Armenia (in Armenian). (2020) <https://epfarmeria.am/hy/document/Research-On-Custody-and-Guardianship-Authorities>
9. The Probation Service in the Republic of Armenia. Part 1 (in Armenian). (2020) <https://epfarmeria.am/hy/document/Baseline-research-on-probation-service-in-RA>
10. Issues Related to the Rights of and Opportunities for Yezidi Girls Residing in Armenia. (2020) <https://epfarmeria.am/document/Issues-Related-to-the-Rights-of-and-Opportunities-for-Yezidi-Girls-Residing-in-Armenia>
11. Relations Without Interactions. (2020) <https://epfarmeria.am/document/Relations-without-Interactions>
12. Armenia 3.0. Understanding 20th Century Armenia. (2020) <https://epfarmeria.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia>
13. Contemporary Issues of Freedom of Religion or Belief in Armenia, Georgia and Beyond. Conference Report. (2019) <https://epfarmeria.am/document/EPF-FoRB-2019-Report>
14. Armenia and The Region (in Armenian). (2019) https://epfarmeria.am/hy/document/Armenia_and_the_Region
15. Publishing Guide (in Armenian). (2019) <https://epfarmeria.am/hy/document/publication-algorithm>
16. Present-day knowledge for effective advocacy (in Armenian). (2019) <https://epfarmeria.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs>
17. Critical Thinking: Logical Fallacies and Misleading Rhetorical Tricks (in Armenian). (2019) <https://epfarmeria.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>
18. About the Methodology of Systemic Thought Activity (MSTA) and Creative Games. (2018) <https://epfarmeria.am/document/MSTA-Creative-Game>

19. Society and Local Self-Governance. Conclusions and Recommendations from Organizational Activity Seminar. (2018) <https://epfarmeria.am/document/OAS-Highlights-CELoG-2018>
20. Culture, Literature and Art. (2018) <https://epfarmeria.am/document/EPF-Culture-Literature-Art>
21. Manifestations of Tolerance and Intolerance in Armenian Literature (in Armenian). (2018) <https://epfarmeria.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature>

Expected to be published

1. Guide: From public issue to policy development (in Armenian). <https://epfarmeria.am/hy/document/DATA-Guide-From-public-issue-to-policy-development>
2. Manual for Trainers Mainstreaming Gender into Policies (in Armenian). <https://epfarmeria.am/hy/document/DATA-Manual-for-Trainers-Mainstreaming-Gender-into-Policies>
3. “Support to Civil Society” Creative Game Report (in Armenian). <https://epfarmeria.am/hy/document/Creative-Game-Final-Report-2021>
4. Towards a Civics Advancement Measurement Tool. <https://epfarmeria.am/document/Towards-a-Civics-Advancement-Measurement-Tool>
5. Changes in EPF management processes since 2007. EPF innovative approach to management. <https://epfarmeria.am/document/Changes-in-EPF-management-processes-since-2007-AR-2020>

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) տեսլականն է նպաստել նրան, որ Հարավային Կովկասը կայանա որպես խաղաղ, հակամարտություններից զերծ և համագործակցող տարածաշրջան և աչքի ընկնի քաղաքացիների ներգրավման բարձր մակարդակով, սոցիալապես պատասխանատու ձեռներեցությամբ ու կայուն, պատասխանատու և արդյունավետ քաղաքացիական հասարակությամբ: ԵՀՀ-ն տարիներ շարունակ աշխատում է քննադատական մտածողության և այլընտրանքային կրթության մեթոդների ասպարեզում: Այն համախմբում է մտածողության առաջնորդների, հասարակական ոլորտի գործիչների, որոնք ունեն բարձր մոտիվացիա և իրենց ամենօրյա գործունեության մեջ կոտորում են կարծրատիպերը և նպաստում հայաստանյան հասարակության համար զարգացման ճիշտ ուղիներ մշակելուն: Որպես «մտագործող» («think and do tank») կառույց, որն աշխատում է քաղաքականությունների մշակումից մինչև դրանց իրագործում, և որի առաքելությունն ու գործունեությունը ծածկում է քաղաքացիական հասարակության գործունեության և պետական բարեփոխումների շատ կարևոր հատվածը, ԵՀՀ-ն առաջնահերթություն է համարում հասարակության մեջ խթանել քննադատական մտածողության օրակարգը:

Eurasia Partnership Foundation's (EPF) guiding vision is a South Caucasus that is peaceful, conflict free and cooperative with civically engaged citizens, socially responsible businesses, and sustainable, accountable and effective third sector organizations. EPF works on critical thinking issues and alternative education methods for many years. EPF unites a team of highly motivated civil society and thought leaders and public figures, who dismantle stereotypes in their daily activities and participate in building the correct development path for Armenia. As a 'think and do tank', which works the full circle, from policy advice to implementation, and whose remit covers a very significant part of civil society and state reform, EPF considers it a priority to boost the critical thinking agenda in Armenia.



Four Stories about Power / *Naira Mkrtchyan, Gevorg Ter-Gabrielyan, Varser Karapetyan, Armen Grigoryan*
Eurasia Partnership Foundation, 2022.– 224 pages

Layout and design by: *Narine Hovhannisyan*

Proofreader: *Anzhela Avagyan*

Cover design by: *Tatev Yesayan*

Editorial Board: *Gevorg Ter-Gabrielyan, Vahram Martirosyan, Naira Mkrtchyan, Tatevik Gharibyan, Isabella Sargsyan, Diana Shahbazyan*

The collection was compiled by Eurasia Partnership Foundation (EPF) within the framework of the “Support to Judicial Reform” program. The project is implemented by EPF in cooperation with Helsinki Association NGO and Human Rights Power NGO. The book examines the nature and development of power, the process of developing ideas about state power, transitioning from the idea of exercising power over human to human rights-based modern governance models. The issues discussed include the concept and features of the state, the principles of organization and activity of the state system, the sources of law and the issues of legal responsibility and the fairness of the public-state order. Each article outlines various manifestations and types of power. The content of the articles and the views expressed are those of the authors and may not necessarily reflect the views of Eurasia Partnership Foundation, the Helsinki Association NGO or Human Rights Power NGO.



This publication is a part of the series of manuals published under the “EPF University” heading. This publication is a part of Education, methodology of history, culture and values (EMHCV) direction. The series include texts, which belong to four large thematic directions:

Critical Thinking (CT)

War and Peace (WP)

Civil Society (CS)

Education, methodology of history, culture and values (EMHCV)

© Eurasia Partnership Foundation, 2022

ԶՈՐՍ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



Անտարես

Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը
ՀՀ, Երևան 0009, Մաշտոցի պող. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69

antares@antares.am

www.antares.am

